Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported** (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

9(47.925)
Г-16

60 — 12/11/76

N 6938.

ԵՐՈՒԱՆԴ ՇԻՀԱԶԻԶ

# ՊԱՏՄԱԿԱՆ ՊԱՏԿԵՐՆԵՐ

I Ն. Նախիջևանի հայկական մագիստրատը
II Ն. Նախիջևանցոց կայսերաշնորհ հրովարտակը և նոցա դատաստանագիրքը.
III Ն. Նախիջևանի ձեռագրերը.
IV Ն. Նախիջևանի հայոց հոգևոր դատարանը.
V Ցովսէփ արքեպս. Արզումեան և Ն. Նախիջևանի հիմնարկութիւնը.

(Արտատպած «Լումայ» երկամսեայ հանդիսից)

ТИФЛИССКАГО СОБРАНІЯ БИБЛІОТЕКА

ԹԻՖԼԻՍ
Տպարան Տ. Մ. Ռօտինեանցի
1903

13 X 26

05 OCT 2011

9(47.925)
Շ-16

ԵՐՈՒԱՆԴ ՇԱՀԱԶԻԶ

# ՊԱՏՄԱԿԱՆ ՊԱՏԿԵՐՆԵՐ

I Ն. Նախիջևանի հայկական մայիստրատը
II Ն. Նախիջևանցոց կայսերաշնորհ հրովարակը և նոցա դատաստանագիրքը.
III Ն. Նախիջևանի ձեռագրերը.
IV Ն. Նախիջևանի հայոց հոգևոր դատարանը.
V Յովսէփ արքեպս. Արղութեան և Ն. Նախիջևանի հիմնարկութիւնը։

1004
Ш-295

(Արտատպած «Լումայ» երկամսեայ հանդիսից)

ԹԻՓԼԻՍ
Տպարան Տ. Մ. Ռօտինեանցի
1903

12.07.2013

Дозволено цензурою. Тифлисъ, 4-го Марта 1903 г.

## ՆՈՐ-ՆԱԽԻՋԵՎԱՆԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՄԱԳԻՍՏՐԱՏԸ



Ա.

Նոր-Նախիջևանի Հայկական Մագիստրատը, որ բացուել էր 1780 թուին արտօնութեան հրովարտակի հինգերորդ յօդուածի հիման վերայ, պարունակում էր իւր մէջ թէ քաղաքի և թէ գիւղերի բոլոր կառավարչական հաստատութիւնները. նա գաղթականների և դատաստանատունը և ոստիկանատունը և քաղաքային խորհրդարանն էր։ Հայկական մագիստրատի դատաստանական մասը բաժանուում էր երկու տառանձին մասերի՝ Հայկականի և Ռուսականի։ Հայկականում վճռուում էին, բացի քրէական և ընթացիկ գործերից, միւս բոլոր տեսակ գործերը։ Քրէականի Ռուսաց մասում վճռուելու պատճառն այն էր, որ Հայերին իրաւունք չէր

տրուած կատարել Հայոց դատաստանագրքի պահանջած արեան դատաստանը, իսկ ընթացիկ գործերն այդ մասում վճռուում էին նորա համար, որ ընթացիկ գործեր ասելով, հասկացուում էին Հայի և օտարի մէջ եղած դատաստանը և արտաքին կամ տէրութեան զանազան ատեանների հետ եղած գրագրութիւնները, որ, յայտնի բան է, պէտք է կատարուէին Ռուսաց լեզուով: Հայկական դատաստանը կատարուում էր Հայոց լեզուով, Հայոց ծիսով և սովորութեամբ և կազմակերպուած էր Հայոց դատաստանագրքի հիման վերայ, իսկ Ռուսականը կատարուում էր Ռուսաց լեզուով և կազմակերպուած էր տէրութեան ընդհանուր օրէնսդրութեան հիման վերայ:

Մագիստրատի Հայոց դատաստանական մասի պաշտօնական անձինքն էին՝ Դատաւորներ, Ատենադպիր, Թարգմանիչ, Օրինակող, Ստարոստա, Ատենապետ և Բանտապետ: Դատաւորների թիւը երեք էր. նոցանից մէկը համարուում էր նախագահ և կոչուում էր «Առաջին Դատաւոր», իսկ միւս երկուսը նորա դատակից ընկերներն էին և կոչուում էին «Երկրորդ Դատաւոր»: Առաջին դատաւորը, որ միևնոյն ժամանակ և Ռուսաց դատաստանական մասի նախագահն էր, բացի հիւանդութեան և ուրիշ յարգելի դէպքերից, միշտ պէտք է ներկայ գտնուէր ատեանում, որովհետև առանց նորա ներկայութեան ոչ Ռուսաց և ոչ Հայոց մասում կարող էր ատեան կազմուել: Երկրորդ դատաւորներից մէկին յանձնուած էր խնամակալութեան գործերը, որոնք պահանջում էին նորա մշտական ներկայութիւնը զանազան իրեղէնների ցուցակագրելու, գնահատելու և ուրիշ այսպիսի գործողութիւնների ժամանակ, իսկ միւսը պարտական էր փոխանակել նախագահին, եթէ նա բացակայ լինէր, և կատարէր բանաւոր կերպով առաջարկուած գործերի դատաստանը. այդ դատաստանն էր, որ կոչուում էր «Բանաւոր իրաւարան»:



Դատաւորները ընտրուում էին քաղաքացիներից և ստանձնում էին իւրեանց պաշտօնը տէրութեան հաստատութեամբ. նոքա պէտք է լինէին արդարադատ, անաչառ, իմաստուն, օրէնսգէտ, համբերող և ճշմարտասէր մարդիկ, որ կարողանային գրաւել ժողովրդի սէրը, համակրութիւնը և հաւատը: Դատաւոր չէին կարող լինել՝ խելագարները, հրապարակաւ պատժուածները, օրէնքով արգելուածները, բանադրուածները, դատաստանական պաշտօնից արձակուածները և անչափահասները: Դատաւորներն իրաւունք չունէին դատելու իւրեանց ազգականներին, չէին կարող վկայ լինել, չէին կարող դատաստան կտրել իւրեանց սեփական գործերի վերաբերութեամբ: Ամեն մի դատախնդիր իրաւունք ունէր պահանջելու, որ իւր դատին չ՝խառնուի այն դատաւորը, որ իւր հետ կռիւ կամ մի որ և է անքաւականութիւն էր ունեցել, միայն որ նա այդ պէտք է անէր ատեանի բացուելուց առաջ: Դատաւորները պէտք է դատէին առանց բարկանալու, հայհոյելու և նամանաւանդ ծեծի: Նոքա պէտք է աշխատէին վերահասու լինել գործի մանրամասնութիւններին, ուշ դնէին դատախազի ապացոյցներին, պատասխանողի ջատագովութիւններին, վկաների ցուցմունքներին և յետոյ արդէն վճիռ կտրէին: Դատաւորները պէտք է գաղտնապահ լինէին. նոքա իրաւունք չունէին դատախնդիրներին մասնաւոր կերպով ոչ խրատ տալ, ոչ խնդիր գրել նոցա համար, ոչ դատարանի որոշումները յայտնել նոցա և ոչ նոցանից խնդիր ընդունել: Թէ դատը և թէ դատախնդիրներից խնդիր ընդունելը պէտք է լինէր Մագիստրատում, որովհետև դատաւորներն առանձին-առանձին, ատեանից դուրս ոչ մի իրաւունք ու իշխանութիւն չու-

նէին ոչ միմեանց վերայ, ոչ էլ դատախնդիրների վերայ։

Դատաւորների իշխանութեան տակ գտնուում էր Ատենադպիրը, որ դատարանի դիւանատան գլխաւորն էր։ Նա ընտրուում էր դատաւորների ձեռքով գիտնական, հայերէն իմացող և լաւ շարադրող մարդկանցից։ Ատենադպրի ձեռքով էին կատարուում դատարանի բոլոր գրագրութիւնները, նա էր դատաստանագիրքը գործածողը, օրէնքը դատաւորներին ցոյց տուողը, հասկացնողը, օրէնքը պահպանողը և գործերի կանոնաւորութեան և օրինաւորութեան վերայ հսկողը։

Ատենադպիրը ընթացիկ գործերի համար պահում էր երեք գիրք՝ դատարան մտած թղթերի, դատարանից արձակուած թղթերի և աւուրց գիրքը կամ աւուրական ժուռնալը։ Առաջին գրքի մէջ էջերի ձախ կողմում նա նշանակում էր դատարան մտած թղթերի համառօտ բովանդակութիւնը, իսկ աջ կողմում ամեն մի թղթի դէմուդէմ – նորա ստացած լուծումն դարձեալ համառօտ կերպով. երկրորդի մէջ գրում էր դատարանից արձակուած բոլոր թղթերի համառօտ բովանդակութիւնը, իսկ աւուրական ժուռնալում արձանագրում էր եղած դատերի բովանդակութիւնը և դատաւորների վճիռները։ Այդ գրքերը, որոնք ամեն տարուայ համար լինում էին առանձին-առանձին, ատենադպիրը դատաստանագրքի հետ միասին պահում էր մի արկղում, որի բանալին գտնուում էր միայն իւր մօտ։ Տարին վերջանալուց յետոյ, նա առնում էր հին գրքերի պատճէնները, որ նոցա միշտ առ ձեռն պատրաստի ունենայ իւր մօտ, իսկ բնագրերը դնում էր դատարանի գրքատունը, որ նոյնպէս անմիջապէս իւր իշխանութեան տակ էր գտնուում։ Ատենադպիրը, բացի իւր այդ բոլոր պարտականութիւններից, իբրև դատարանի դիւանատան գլխաւոր, պէտք է հսկէր և դիւանատան միւս ծառայողների վերայ, պէտք է հսկէր, որ թարգմանիչը կանոնաւոր կերպով թարգմանէր յանձնուած թղթերը, օրինակողը կամ գրագիրը կանոնաւոր կերպով ընդօրինակէր, և այլն։



Դատաւորների իշխանութեան տակ, բացի ատենադպրից, գտնուում էին «ստարոստան», ատենապետը և բանտապետը։ Ստարոստայի ձեռքին կենտրոնացած էր դատարանի բոլոր դրամական մասը. նա էր տուգանքները ժողովողը, հարկեր հաւաքողը։ Դրամական հաշիւների համար ստարոստան պահում էր երկու գիրք՝ օրացոյց կամ գիրք աւուրց և գիրք յատկական հաշուոյ։ Առաջին գրքի մէջ նա կարգով գրում էր դատարանի դրամների՝ տուգանքի, հարկերի և ծախսերի մանրամասն ելևմուտքը, իսկ երկրորդի մէջ նա գրում էր ամեն մի դրամի հաշիւ առանձին՝ տուգանքինն առանձին, հարկերինն առանձին, ծախսերինն առանձին, և այդ գրքերի մէջ նշանակուած հաշուով նա պատասխանատու էր դատաւորների առաջ բոլոր փողերի համար։

Հայոց դատարանի ատեանում դրուած էր երկու սեղան. նոցանից մէկը նշանակուած էր դատաւորների համար, իսկ միւսը, որ գետեղուած էր առաջնի աջ կողմը, յատկացրած էր ատենադպրի համար։ Թարգմանչի, օրինակողի և առհասարակ դիւանատան սեղանները գտնուում էին ատեանից դուրս։ Ատեան լինում էր, բացի կիւրակի և տօն օրերից, ամեն օր, իսկ եթէ շատ կարևոր գործ պատահէր, մինչև անգամ և տօն օրերը։ Առաջին դատաւորը դատավարութեան ժամանակ նստում էր մէջ տեղը, միւս երկու դատաւորները բռնում էին նորա աջ ու ձախ կողմը, ատենադպիրն իւր սեղանի մօտ, իսկ ատենապետը կամ պահապանը կանգնում էր դրան մօտ, որ պահպանէ դատարանը և ատեան հրաւիրէ դատախնդիրներին։

Դատը լինում էր երկու տեսակ՝ բանաւոր և գրա-

ւոր։ Բանաւորն իսկոյն և եթէ վերջանում էր, որովհետև դատը բերանացի էր յայտնուում և իսկոյն էլ լուծումն էր ստանում, իսկ գրաւորը կամ դարձեալ իսկոյն վերջանում էր, կամ յետաձգուում էր։ Գրաւորներից իսկոյն լուծումն էին ստանում այն գործերը, որոնք շատ պարզ էին և մանրամասն քննութիւն կամ հետազօտութիւն չէին պահանջում։ Ատենադպիրը կարդում էր կողմերի ներկայացրած թղթերը՝ դատախազի բողոքագիրը և ապացուցագիրը և պատասխանատուի պատասխանը և ապացոյցները, իսկ դատաւորները հարց ու փորձ անելով, շուտով վերահասու էին լինում ճշմարտութեան և տալիս էին իւրեանց վճիռը. նոքա մեծաւ մասամբ աշխատում էին դատախնդիրներին հաշտեցնել։ Իսկ եթէ գրաւոր գործերը բարդ էին լինում ու կնճռոտ, ինչպէս, օրինակի համար, առևտրական գործերը, որոնք պահանջում էին հաշիւների և գրքերի մանրամասն քննութիւն, դատաւորները նոցա վճռելու համար երկու միջոցի էին դիմում. նոքա կամ առաջարկում էին վիճող կողմերին կազմել վճռահատական կամ մեդիատորական դատաստան և այդպիսով վերջացնել գործը և կամ գործի քննութիւնը յանձնում էին ժողովրդի այն դասակարգի պետին ու նորա օգնականին, որ դասակարգին պատկանում էր դատախնդիրը։ Դասակարգապետն այդպիսի դէպքերում հրաւիրում էր դատախնդիր կողմերի ցուցմունքով և ցանկութեամբ երկու արժանահաւատ, պատուաւոր և գործին տեղեակ մարդ և նոցա հետ միասին քննելով գործը, ներկայացնում էր դատարանին իւր քննութեան արդիւնքը, որ և հիմնուելով նորա վերայ, տալիս էր իւր վճիռը։

Եթէ պատահում էր այնպէս, որ դատախնդիր կողմերից մէկն անբաւական էր մնում դատաւորների վճռից, նա իրաւունք էր ստանում իսկոյն առնել վճռի պատ-



ճէնը և ներկայացնել իւր բողոքի հետ միասին հետեւեալ դատաստանական ինստանցիային, որ կազմուած էր ինը հոգու ատեանից։ Այդ ինը հոգին ընտրուած էին ժողովրդի ամենապատուաւոր, հասկացող և օրէնսդէտ մարդկանցից, նոքա պարտական էին հսկել, որ դատաւորները կանոնաւոր կերպով կատարեն իւրեանց պաշտօնը, պարտական էին հարկաւոր դէպքերում բռնելու դատաւորների տեղը և ջնջելու, քանդելու կամ բեկանելու նոցա անարդար կերպով տուած վճիռները։ Իսկ եթէ դատախնդիրն այդ ինը հոգու վճռից էլ անբաւական էր մնում, որ շատ սակաւ և կարելի է ասել, գոնէ, առաջին ժամանակները համարեա թէ չէր պատահում, այն ժամանակ նա իրաւունք էր ստանում դիմել «Նամէստնիկական» կառավարութեան կամ նորա տեղը բռնող Դատաստանական պալատը, որովհետև հրովարտակով Հայոց դատարանը դրուած էր Նամէստնիկական կառավարութեան իշխանութեան ներքոյ իբրև վճռաջինջ ատեանի։ Թէ բանաւոր և թէ գրաւոր դատի վճիռներն իսկոյն արձանագրուում էին Աւուրական ժուռնալում և ստանում էին իւրեանց զօրութիւնը հէնց նոյն օրը։

Հայոց դատարանի առաւելութիւնն այն էր, որ գործը հեշտութեամբ, առանց երկար ու բարակ գրագրութեան և ձևապաշտութեան և, որ գլխաւորն է, շատ կարճ միջոցում էր վերջանում. գործի դատաւորների քննութեան տակ մնալու ամենաերկար ժամանակամիջոցն էր երեք ամիս։ Մեր ձեռքին գտնուում են Առաջին դատաւոր Թումաս Ալաճալեանի դատաւորութեան ժամանակ կազմուած երեք տարուայ՝ 1803, 1804 և 1805 թուականների աւուրական ժուռնալները, որոնք պարունակում են իւրեանց մէջ բազմաթիւ վճիռներ բազմատեսակ գործերի մասին, որոնցից մի քանիսը

բաւականին բարդ են և դժուար լուծելի, բայց և այնպէս նոցանից շատ քչերն են յետաձգուած, իսկ ահագին մեծամասնութիւնը ստացել են իւրեանց վճիռը հէնց նոյն օրը։

Մեր ձեռքին գտնուած աւուրական ժուռնալները գրուած են հին, կապոյտ, հաստ թղթի վերայ տգեղ և անկանոն ձեռագրութեամբ և տեղական ժողովրդական բարբառով խառն գրաբառի հետ։ Ժուռնալների էջերի գլխին գրուած է՝ «Աւուրական ժուռնալ», իսկ ձախակողմեան լուսանցքում, որ երեք գծով երկու մասի է բաժանուած, գրուած է վճռի կամ արձանագրութեան համարը և ամսաթիւը այսպէս.

## 1805 թ.

### ԱՒՈՒՐԱԿԱՆ ԺՈՒՌՆԱԼ.

Համ. Դեկ.

100. 6. Նախիջևանցի պէտրոս տէր օվանէսովն դարէխէս առաջ 1795։ թվումն մաքլէրի ժուռնալումն համար 28 ձէռք դնելով կու ծախէ իւր մէկ խանէ տեղիցն տունին յետևի սէմթէն էռէսուն ինը կազ ռուստ կազով և լանքն խանէի լանքով տեղ Կարապետ Նիկողոսովին քսանը հինգ ռուպլի։ և նայ ևս կու ծախէ քաղաքս բնակող աստաւնոյ պարոն սօթնիկ աստատուր էթմէկճի օղլուին անցեալ 1804 թուումն յուլիսի 7։ին ամրացուցանելով սաալօվոյ ժուռնալովն 124 համարոյն ձէռնարկութեամբ դատաւորաց ամրագիր կուտայ այս Պէտրոսը։ ի ներքոյ ինքն ձէռք դնելով ասելով թէ տունիս յետևէն մէկ կտոր տէղ ծախեալ էի էռէսունը ինը կազ ռուստի կազով և լանքն խանէի լանքով։ որ ամրագիրն այն էթմէկճի օղլու ասատուրի կինն ինձ տվիլ էր պահելու ես կորուցի անոր համար այս ամրագիրս վերստին կուտամ այսուչետև մէկ մը մասն չունի տէղի ձէռք կու դնէ։ դարձեալ վերոյ յիշեալ Կարապետ Նիկողոսովն ծախէլուն յետոյ տունին հարաքայի կողմիցն տէղ կու ծախէ կոմէչին մկրտիչ։ին թէ խանէիս պօյեօվն տէղի այժմս այսպէս տավա հանելով կուզէր բօխօխէր վասն այն յիշեալ ասվատուր էթմէկճի օղլուի որդին եկեալ հանձերց ամրագրովն խնդրեանց իւր ամրագրի զօրութեամբն տէղն։ և մեք վերահասու ըլալով հրամայեցինք որ չարվի իւր տված երկու տապրա ամրցուցած ձեռագրի զօրութեամբն տրվի նմա էթմէկճի օղլուին այսպէս վերջ արինք հրամայեցանք մենք դատաւորքս։



## 1804 թ.

### ԱՒՈՒՐԱԿԱՆ ԺՈՒՌՆԱԼ.

Համ. Փետ.

3. 15. 1803 ամին յուլիսի ամսոյն մէջն Նախիջևանցի ճինճի էղիեալովի որդին հինգ տարէկան տղայ Նախիջևանցի մէչչանին խազար օվանէսով տապախին ղըստէրն հէտ խաղալով Նորայ Մկրտչի տղայն տանակով զարկիլ է խազարի աղջիկանը սօլ աչկն հանիլ է և յէտ քան մի աւուր նա մկրտիչն կիսմի գնացիլ է ապայ էրկուսն ալ սապի ըլալովն և քօվէրն մարդ ոչ գտանելով ոչ էն իմացեալ թէ ինչ կերպիւ աչկն էյած վասն այն մտածիլ ին թէ մկրտչի տղան զարկիլ է տէյին հապայ այտնի չէ այս թվումս աղջիկանը հայրը տապախ խազար օվանէսովն եկ մագիստրաթս խնդրեաց թէ իմ աղջիկս քօռ էղաւ ինձ մէղք էղաւ տէյի և մագիստրաթս նորա խազարի խէղճալով և մկրտիչ ճենճիօվէն քսանը հինգ ռուբլի առաւ էրիթ հէքիմի ըստակ ապայ օրինօք ոչինչ չէր հանէր ուրվէտան սապի էյին էրկուսնալ և երկրորդումն զարկածս մարդ տէսնող չիքար իւրեանց մտածելովն այնպէս համարիլ ին թէ մկրտչի տղան զարկիլ է տէյին վասն այն նայ սապի աղջիկանը հայրը խազար օվանէսովն ըսկն այն քսանը հինգ ռուբլին ստացաւ և բաւական եղև որ այսու յէտև նորայ մկրտչի կամ որդոյն հէտ վասն այն պանի համար տաւայ տայպայ չունէծային ձէռագրեաց ժուռնալս այս։

## 1803 թ.

Համ. Ցուն.

### ԱՒՈՒՐԱԿԱՆ ԺՈՒՌՆԱԼ

2. 12. Նախիջևանցի մէչչանին բախալ անանիեասօվն եկ մագիստրաթս խնդրեաց ի վէրայ եղպօրն Թումասին։ որ այս երեկոյի եկաւ գիշէրն իմ տունս հարբած նէրհակ գոլով որքան առասպէլ խոսկէն ետկն զիս անողորմաբար ծէծից և մագիստրաթս տէսաւ որ նորա աննեալին երէսն նշանն կար վասն այն մագիստրաթս նորա Թումասին պատժէլու էր։ և նայ Թումաս խընդրեաց և վօտքն ընկաւ իւր եղպօրն անանեալին մէղա կոչից և նայ եալ թողութին չնորհից պարըշվէցան որ եթէ մէկ անգամը տահա այնմ կէրպիւ հարբածութիւով նորա անանեալի տունն երդայ ավէլի պակաս կալաճնէր ասէ և մէմալ չիքահէթի քանը այնժամ մագիստրաթս ինձ Թումասիս անողորմաբար պատիժս տայ և ես հնազանդելով ձէռագրէցի ժուռնալս այսու լէտև մէմալ նորա տունն վօտք կոդէլու չիմ։

Մագիստրատի Ռուսաց դատաստանական մասը կազմակերպուած էր, ինչպէս որ ասացինք, տէրութեան ընդհանուր օրէնքների հիման վերայ։ Նա բաժանուում էր երկու գլխաւոր մասի՝ քրէական և քաղաքացիական մասերի և կառավարուում էր առանձին ատենադպրի և նորա իշխանութեան տակ գտնուած գիւանատան ձեռքով։ Այդ ատենադպիրը նշանակուում էր տէրութեան ռուս աստիճանաւորներից, նա, բացի իւր ատենադպրական պարտականութիւններից, կատարում էր և մի տեսակ պրոկուրորի, տէրութեան աչքի, հսկողութեան դերը Հայոց Մագիստրատում և կոչուում էր «Ստրեապչի». նորա իշխանութեան տակ, բացի իւր գիւանատան ծառայողներից, գտնուում էին և գիւղերի ռուս տեսուչները։ Քաղաքի ստրեապչին և գիւղերի տեսուչներն այն «պահպանիչքն» և «այցելուքն» էին, որոնք հրո-



վարտակի հինգերորդ յօդուածի զօրութեամբ պէտք է նշանակուէին պաշտպանելու Հայերին, չ'խառնուելով, մասնակից չ'լինելով նոցա դատաստանական և առհասարակ կառավարութեան գործերին։ «Ի քաղաքոջ և 'ի գեղօրայս սակս պահպանութեան հարկաւոր պատահմանց՝ կարգեսցի յատուկ անձինս 'ի ռուստաց, ասուած է հրովարտակի հինգերորդ յօդուածի մէջ, որք և ոչ ունիցին մասնակցութիւն դատաստանական գործոց սոյն բնակչացն՝ այլ եղիցին միայն պահպանիչք և այցելուք նոցին»։

Ոստիկանութեան ծառայութեան համար ընտրուում էին երկու արժանաւոր մարդիկ, որոնք նոյնպէս կոչուում էին «դատաւոր» և Մագիստրատում իւրեանց ներկայ գտնուած ժամանակ մասնակցում էին Հայոց դատարանի ատենական գործերին և դատավարութեան իբրև երկրորդ դատաւոր։ Այդ ոստիկան-դատաւորներից մէկը կատարում էր իւր ոստիկանութեան պաշտօնը քաղաքում, միւսը — Հայկական շրջանում (Армянскій округъ)՝ հինգ գիւղերում, 18 Պօլուդենկա աւանի մօտ և Սամբէկ ու Զուլեկ գետերի ափերում ձգուած ագարակներում (хуторъ) և Դոնի միւս երեսում։ Թէ քաղաքի և թէ Հայկական շրջանի դատաւոր-ոստիկանները իւրեանց ձեռքի տակ ունէին հասարակ ոստիկաններ։ Շրջանի ոստիկան-դատաւորի ձեռքի տակ գտնուած հասարակ ոստիկանները ձիաւոր էին և այդ պատճառով կոչուում էին «Ախլը-կարաուլ», իսկ քաղաքի ոստիկան-դատաւորինը հետևակ էին և կոչուում էին «Բէշլը», այսինքն հնգապետ։ Բէշլիները, բացի իւրեանց համար որոշուած ռոճկից, ստանում էին և տաս-տաս կոպէկ վարձատրութիւն այն մարդկանցից, որոնց մէկի մասնաւոր խնդիրքով դատարան էին տանում։ Նոքա ընդամենը վեց հոգի էին. նոցա պաշտօնի նշանը մի-մի կար-

մէր-կանաչ շերտերով ներկած փայտ կամ գաւազան էր, որ կրում էին նոքա քաղաքում շրջելու և իւրեանց պաշտօնը կատարելու ժամանակ։

Թէ առաջին և երկրորդ դատաւորները և թէ ոստիկան-դատաւորներն ընտրուում էին երեք տարի ժամանակով ժողովրդի բոլոր դասակարգերից՝ աստիճանաւորներից, վաճառականներից, մեշչաններից և արհեստաւորներից։ Ընտրուածները պէտք է լինէին, նախ, ազնիւ, հասկացող մարդիկ, որ կարողանային իւրեանց վերայ դրած ծանր ու բարդ պարտականութիւններն անկաշառք և անաչառ կերպով կատարել, երկրորդ, նիւթական կարողութեան տէր, որ կարողանային, առանց վնասելու իւրեանց անձնական գործերին, առանց քայքայելու իւրեանց տնտեսական և նիւթական դրութիւնը, անձնատուր լինել հասարակաց գործերին։ Ահա այդ դատաւորներն էին այն «պետերը», որոնք հրովարտակի դարձեալ նոյն հինգերորդ յօդուածի զօրութեամբ պէտք է ընտրուէին վիճակահանութեամբ և կառավարէին ամբողջ հայ հասարակութեան գործերը։ «Զկնի բնակութեան ձերոյ 'ի յատուկ քաղաքոջ յանուանեցեալ Նախիջևան 'ի կողմն Պոլուդենկին, ասուած է այդ մասին հինգերորդ յօդուածում, հրամայեմք հաստատել անդ մագիստրատ, և անդ ըստ ձերոյ օրինաց և սովորութեանց վարել դատաստանս և զիրաւունս, ընտրելով 'ի ձէնջ զդատաւորս վիճակաձգութեամբ»։

Բ։

Քաղաքի կառավարութեան ձևն էլ, ինչպէս դատարանի և ոստիկանատան, այնպէս չէր, ինչպէս բոլոր Ռուսաստանում։ Ճիշտ է, 1785 թուին, երբ հրատարակուեց քաղաքային կառավարութեան ընդհանուր կանոնադրութիւնը, Նախիջևան ևս ուղարկուեց այդ կանոնադրութիւնից մի օրինակ և կարգադրուեց նորա հիման վերայ քաղաքագլուխ ընտրել և կազմակերպել քաղաքային խորհրդարանը կամ «Դումը», բայց տէրութեան այդ կարգադրութիւնն անհնարին եղաւ իրագործել, որովհետև թէ այդ կանոնադրութեան հիման վերայ ընտրուած քաղաքագլուխը և թէ նորա նախագահութեամբ կազմակերպուած վեց իրաւասուներից բաղկացած խորհրդարանը, ժողովրդի դեռ Ռուսաստանի ընդհանուր կարգ ու կանոնին, լեզուին և օրէնքներին ընտելացած չ'լինելու պատճառով, անկարող եղան հասկանալ օրէնքի հոգին։ Քաղաքային կառավարութեան գործերին կանոնաւոր ընթացք տալու համար և օրէնքի իմաստը չմբռնելուց առաջ եկած խառնակութիւնները, խռովութիւնները և երկպառակութիւնները դադարեցնելու համար, ինչպէս ուրիշ այսպիսի դէպքերում, այս անգամ էլ ժողովուրդն իւր առաջաւորների բերանով դիմում է իւր առաջնորդին և խնդրում է նորա խորհուրդը և աջակցութիւնը։ Յովսէփ արքեպիսկոպոսը, իբրև աչալուրջ և կարօտեալ հօտի շահերին նախանձախնդիր հովիւ, այս դէպքում ևս կարողանում է օգնել գաղթականներին։ Նա լաւ հասկանալով, որ բոլոր անյաջողութիւնների պատճառը քաղաքային նոր կանոնադրութիւնն է, որ ժողովուրդը պատրաստուած չէր ըմբռնելու և իրագործելու, գործ է դնում իշխանութեան առաջ իւր մեծ հեղինակութիւնը և ազդեցութիւնը և խափանում է նորա գործադրութիւնը Նախիջևանում, հիմնուելով կայսերաշնորհ հրովարտակի վերայ։ Բայց որովհետև եղածը խափանելուց յետոյ, պէտք էր նորա տեղ մէկ ուրիշը դնել, որ միևնոյն ժամանակ համապատասխան լինէր և ժողովրդի ըմբռնողութեան կարողութեան և չ'հակասէր տէրութեան

օրէնքերին, նա ձեռնարկում է գրելու իւր «Դաշնադրութիւն միաբանութեան» կոչուած թուղթը, նորա հիման վերայ 1795 թուի մայիսի 26-ին կազմակերպում է «Քաղաքական Դումը» և յանձնում է նորան քաղաքի կառավարութեան գործը:

Այդ թուղթը կամ կանոնադրութիւնը, որ սրբազանը 1795 թուականի օգոստոսի 8-ին տպագրելով Ս. Խաչի տպարանում, բազմաթիւ օրինակներով 'ցրուել է ժողովրդի մէջ, կազմուած է մի յառաջաբանից և 13 յօդուած կանոններից: Յառաջաբանում յայտնուում են թղթի կազմուելու պատճառները, իսկ յօդուածներում միայն կանոնադրութեան նախագիծը կամ հիմնական կէտերը: Կանոնաւոր և մանրամասն հրահանգ կամ կանոնադրութիւն Նախիջևանի հայկական քաղաքային խորհրդարանը երբէք չէ ունենում. նա իւր երկարատև գոյութեան ընթացքում ղեկավարուում է միայն Յովսէփ արքեպիսկոպոսի տուած բանաւոր հրահանգներով և կեանքում մշակուած և օրէնքի զօրութիւն ստացած զանազան կանոններով: Տասներեք նախագիծ յօդուածները մի տեսակ երդմնագրի ձև են կրում, որովհետև նոքա կարդացուել, արտագրուել, կնքուել ու վաւերացուել են նոյն իսկ 1795 թուականի Մայիսի 26-ին քաղաքային խորհրդարանի բացման ժամանակ: Հայկական խորհրդարանի նորընտիր անդամներն այդ ժամանակ Յովսէփ արքեպիսկոպոսի ներկայութեամբ երդուել են խաչի և աւետարանի վերայ սրբութեամբ պահպանել այդ կանոնադրութեան ամեն մի յօդուածը և սերնդէ սերունդ հաւատարիմ մնալ նորա գլխաւոր սկզբունքին:

Յօդուածների բովանդակութիւնը հետևեալն է. Անուամբ Աստուծոյ և Նորին սրբազնութեան Յովսէփ արքեպիսկոպոսի հաճութեամբ մենք ներքոյ ստորագրուած 24 հոգիս յօժարակամ յանձնառու եղանք լինել մեր Նախիջևան քաղաքի հոգաբարձու այս պայմաններով՝ ա) Համաձայն լինել միմեանց հետ և միաբանութեամբ աշխատել և նպաստել մեր քաղաքի բարեկարգութեան, կատարելով ստանձնած պարտականութիւններս հաւատարմութեամբ, առանց կրքերի, ինքնասիրութեան և կեղծաւորութեան. բ) Մեզ հոգաբարձուներիս սիրով լինել քաղաքագլխի և դատաւորների հետ, ինչպէս որ վայել է պատուաւոր մարդկանց, հեռացնելով մեր միջից հեռն ու նախանձը, չարն ու ատելութիւնը նորաշէն քաղաքիս արդիւնաւորութեան համար. գ) Անհետ անել այն բոլորը, որ սորանից մի փոքր առաջ նսեմացրին մեր քաղաքի պայծառութիւնը, հալածել այսուհետև մեր միջից սինլքորներին և ընկերութիւն չանել ապստամբների և խռովարարների հետ, ազնուութեամբ հոգալ քաղաքի բարեկարգութեան վերայ, որպէս զի ամօթով չ'մնանք. դ) Միաբան խոստանում ենք հնազանդել Աստուծոյ կամքին և Նորա սուրբ պատուէրներին, հաւատարմութեամբ ծառայել մեր ամենաողորմած թագուհուն և նորա տուած վրկարար օրէնքներին, պատուել մեր սուրբ եկեղեցու կանոնները, խոնարհել մեր Հոգևոր հօրը, ինչպէս մեր եղբայրութեան գլխաւոր անդամին և մեր քաղաքի ու հասարակութեան հիմնադրին. խոստանում ենք միակամ դէմ դնել նոցա, որոնք կ'ձգտեն խլել մեր օրէնքները և իրաւունքները, խնամք տանել մեր եկեղեցիների, վանքի վերայ սերնդէ սերունդ մինչև վերջը. ե) Դատաստանական կարգը մեր քաղաքում հաստատելուց և հասարակութեանս դրամական ելումուտքը կանոնաւորելուց յետոյ, մենք Աստուծոյ առաջ խոստանում ենք վերահասու լինել գործերին և, առանց կրքերի ու կեղծաւորութեան, կառավարել նոցա: Եթէ մեր մէջ մի որ և իցէ առարկայի մասին անհամաձայնութիւն, տարա-

ձայնութիւն կամ թիւրիմացութիւն պատահի, խոստանում ենք նորա լուծումն թողնել մեր Սրբազան Հօր բարեհայեցողութեան, որպէս զի նա հաստատէ մեր վճիռներից կամ կարգադրութիւններից ամենաարդարը, ամենաօրինաւորը. իսկ եթէ այդ պատահի նորա բացակայութեան ժամանակ, խոստանում ենք գործն այնպէս վճռել, ինչպէս որ ցանկանում է մեծամասնութիւնը և ոչ թէ ղեկավարուել ինքնասիրութեամբ և դատարկ երկպառակութեամբ [1]. ը) Սրբազան Հօր հաճութեամբ դպրոց հաստատենք այն տան մէջ, որ շինուած էր նախկին ատենադպիր-ստրեապչի Յովսէփ Անդրէիչի համար, մինչև որ նորին սրբազնութիւնը դորա համար առանձին տուն շինէ, ինչպէս որ արդէն առաջարկել է: Այդ փոքրիկ դպրոցում երկու ուսուցիչ ռուսերէն և հայերէն գրել-կարդալ սովորեցնեն: Հայոց լեզուի ուսուցչի տարեկան ռոճիկը սրբազան հայրը թոյլ է տալիս եկեղեցական փողերից հատուցանել, իսկ Ռուսաց լեզուի ուսուցչին մենք պարտաւորուում ենք վարձատրել մեր ունեցածից: Սորա հետ միասին խոստանում ենք նորին սրբազնութեան ցանկութեան համաձայն հոգ տանել որքան ուսումնարանի, այնքան էլ մեր քաղաքի

[1]) Ցաւում ենք, որ մենք, չ'նայելով մեր գործ դրած բոլոր ջանքին, չ'կարողացանք ձեռք բերել Դաշնադրութեան թղթի բնագիրը, ուստի և ստիպուեցանք յօդուածների բովանդակութիւնն այստեղից-այնտեղից քաղել, ժողովել: Այդպիսի հանգամանքներում, յայտնի բան է, մենք չէինք կարող ներկայացնել բոլոր յօդուածների լիակատար բովանդակութիւնը. մանաւանդ պակասաւոր և թերի մնացին Զ և Է յօդուածները, որ և մենք բաց թողինք, հինգերորդ յօդուածից ուղղակի անցնելով ութերորդին: Մենք այդ երկու յօդուածի մասին միայն կարողացանք իմանալ այն, որ դոքա վերաբերում էին գաղթականներին շնորհած հողերին և նոցա մատակարարութեան խնդրին:



չքաւորների, աղքատների և կարօտեալների վերայ. թ) Խոստանում ենք ընդհանուր ոյժերով պահել մեր Մագիստրատը նորա գործերին կանոնաւոր ընթացք տալ, յարգանք տածել դէպի նորա այն իրաւունքները, որ արտայայտուած են Բարձրագոյն շնորհած ամենաողորմած թագուհու արտօնութեան հրովարտակում, խոստանում ենք չ'պակսեցնել, չ'թուլացնել դատաւորների և քաղաքագլխի արժանաւորութիւնը, վիճաբանելով նորա ունեցած իրաւունքների մասին, այլ անկեղծութեամբ հետևելով մեր ամենաողորմած թագուհու բարի դիտումներին, աշխատենք մեր իրաւունքներն անխախտ և անդրդուելի պահել և չ'խնայենք դորա համար մինչև անգամ մեր կեանքը. ժ) Եթէ սրբազան հօր բացակայութեան ժամանակ պատահի մեզ խորհրդակցութիւն ունենալ հոգևոր գործերի մասին, մենք պարտական ենք հրաւիրել խորհրդին նորա փոխանորդին կամ յաջորդին և նոցա հետ միասին վճռենք խնդիրը, որպէս զի դորանով հոգևոր և մարմնաւոր կառավարութեան մէջ խռովութիւններ ծագելու առիթ չ'տանք, ինչպէս որ մինչև ցայժմ պատահել է գաղտնի ժողովներում. ժա) Խորհրդարանի կամ դումի համար ատենական օր նշանակենք շաբաթ օրերը և ժամադիր լինենք խորհրդարանում քաղաքագլխի և դատաւորների հետ միասին առաւօտեան 8 ժամից մինչև 12-ը. խորհրդակցենք ամեն բանի մասին, որ օգտաւէտ և շահաւէտ է քաղաքին և մեր հասարակութեան: Քաղաքից կարևոր գործերով բացակայողները պարտական լինին յայտնել այդ մասին, իսկ քաղաքում գտնուողները, եթէ միայն հիւանդ չեն կամ մի որ և իցէ ուրիշ յարգելի պատճառ չունեն, նշանակուած ժամին անպատճառ գտնուեն դումում հասարակաց օգտի համար: Իւրեանց պարտականութիւնները կանոնաւոր կերպով չ'կա-

տարող և գործերին անհոգութեամբ վերաբերող հոգաբարձուներն երկու-երեք նախազգուշութիւններից յետոյ, արտաքսուեն մեր միջից և նոցա տեղն աւելի բարեխիղճները ընտրուեն. ժբ) Եթէ մեր հասարակութիւնից մէկը կամենայ փոփոխել մեր հասարակութեան բարեկարգութիւնը, անհնազանդ գտնուելով մեր տուած խրատներին, արտաքսուի մեր հասարակութիւնից իբրև քաղաքի կարգերը խանգարող և ապստամբ անձն և, Յիսուս Քրիստոսի խօսքին համաձայն, ճանաչուի անբարիշտ և անօրէն. ժգ) Խնդրել, որ նորին սրբազնութիւնն այս կարգաւորութիւնը տպագրել տայ, որպէսզի ամենեքեան իմանան սորա մասին։

Նախիջևանի հայկական քաղաքային խորհրդարանը կամ դումը, ինչպէս երևում է այս երդմնաձև կանոններից, կազմուած էր 24 հոգաբարձուներից և Մագիստրատի հինգ դատաւորներից։ Այդ 24 հոգաբարձուները, որոնք ընտրուում էին ժողովրդի ամենապատուաւոր անդամներից եռամեայ ժամանակով, ամեն շաբաթ օր հաւաքուում էին Մագիստրատ և կազմում էին դատաւորների հետ միասին իւրեանց նիստերը քաղաքագլխի նախագահութեամբ։ Նորընտիր հոգաբարձուներն երդուում էին ս. խաչի և աւետարանի վերայ խղճի մտօք կատարել իւրեանց ստանձնած պարտականութիւնները, հոգալ հասարակութեան գործերն այնպէս, ինչպէս հայրերը հոգում են իւրեանց ընտանեաց գործերը, խնամք տանել հասարակութեան ամեն մի անդամի վերայ, ինչպէս գերդաստանի գլուխները խնամք են տանում իւրեանց գերդաստանի անդամների վերայ. նոքա սկսում էին իւրեանց գործունէութիւնը, կարդալով Դաշնագրութիւն միաբանութեան թուղթը. այդ նոցա երդմնագիրն էր։

Դումի նիստերը տևում էին առաւօտեան 8 ժամից մինչև 12-ը։ Նիստերին պարտական էին ներկայ գտնուել անպայման բոլոր հոգաբարձուները. բացակայութեան յարգելի պատճառ համարուում էին միայն հիւանդութիւնը և կարևոր գործերը։ Բացակայ հոգաբարձուն նախօրօք պարտական էր իմաց տալ իր բացակայութեան պատճառների մասին, հակառակ դէպքում մի երկու-երեք նախազգուշութիւններից յետոյ, նա հանուում էր 24-ի միջից իբրև իւր պարտականութիւնները չ'կատարող, և նորա տեղն ընտրուում էր նորը։ Հոգաբարձութեան պաշտօնից մերժուում էին և նոքա, որոնք թէև կանոնաւոր կերպով էին յաճախում դումի նիստերին, բայց անտարբերութեամբ և անհոգութեամբ էին վերաբերում իւրեանց ստանձնած պաշտօնին։

Դումի խորհրդակցութեան առարկայ լինում էին՝ քաղաքի բարեկարգութիւնն ընդհանրապէս, քաղաքի բնակիչների դրութեան և կենցաղավարութեան բարելաւութիւնը, ուսումնարանների և ուրիշ օգտաւէտ հաստատութիւնների հիմնարկութիւնը, քաղաքի ելումուտքը և տնտեսական դրութիւնը, ճանապարհների և կամուրջների շինութիւնը, քաղաքագլխի եռամեայ դրամական հաշիւների ստուգութիւնը և ժողովրդի բարոյականութեան վերաբերեալ խնդիրները։ Խորհրդարանում խնդիրները վճռուում էին ձայնի բազմութեամբ և իսկոյն և եթ իրագործուում էին. իսկ այն խնդիրները, որոնք պահանջում էին մանրամասն ծանօթութիւններ և մասնագիտական տեղեկութիւններ, արձանագրուելուց և խորհրդին մասնակցող հոգաբարձուների ստորագրութեամբ վաւերացուելուց յետոյ, ենթարկուում էին ամբողջ հասարակութեան դատողութեան և քննութեան։

Այդ հասարակութեան ժողովները, որոնք տեղի

էին ունենում խորհրդարանի նստին յաջորդող տօն օրերին, կազմակերպուած էին լինում ոչ թէ ամբողջ հասարակութեան անդամներից, այլ հոգաբարձուներից, դասակարգապետներից և նոցա օգնականներից, արհեստապետներից և նոցա օգնականներից, իսկ աւելի կարևոր գործերում և ուրիշ ամեն դասակարգերից հրաւիրուած գործին տեղեակ անձնաւորութիւններից։ Հասարակութեան ժողովները կազմուում էին քաղաքագլխի հրաւիրանքով և նորա նախագահութեամբ։ Այդ ժողովներում քննուելիք խնդիրները, եթէ ընտանեկան բնաւորութիւն էին կրում և չէին շօշափում կամ փոփոխում արդէն ընդունուած և հաստատուած կարգերը և օրէնքները, ինչպէս, օրինակի համար, զանազան ժողովարարութիւններ և յօժարակամ դրամական զոհաբերութիւններ, իսկոյն և եթ քննուում, վճռուում և արձանագրուում էին մի առանձին համախօսականի մէջ և իրագործուում էին կամ նոյն իսկ հոգաբարձուների կամ դորա համար ընտրուած առանձին մարդկանց ձեռքով։ Իսկ եթէ խորհրդարանի արձանագրած և հասարակութեան ժողովի քննութեան ենթարկած խնդիրներն այն տեսակից էին, որոնք չէին կարող վճռուել առանց թոյլատուութեան կամ հաստատութեան բարձրագոյն իշխանութեան, լիազօրութիւն էր տրուում քաղաքագլխին, իբրև ամբողջ հասարակութեան ներկայացուցչի, իրաւունք ստանալու համար, միջնորդել ուր հարկն է։

Դումն իւր ժողովրդի բարոյականութեան վերայ հսկելու ստանձնած պարտականութիւնը կատարում էր, ղեկավարուելով այն սկզբունքներով ու կանոններով, որոնք յատուկ են ամեն մի նահապետական, պարզ կեանքով ապրող ժողովրդի։ Այդ սկզբունքները և կանոնները, որոնք ի սկզբանէ անտի կատարուում էին բերանացի, աւանդաբար, 1817 թուականին ամփոփուում են մի առանձին կանոնադրութեան մէջ, որ կոչուում է «Կանոն անքակտելի և պայման յաւիտենական»։ «Անքակտելի և յաւիտենական» կոչուում են կանոնները նորա համար, որ Նախիջևանի հասարակութիւնը կազմելով նոցա և յանձնելով Դումին գործադրելու, գործ է դրել իւր ձեռքից եկած բոլոր միջոցները, որ նոցա օրէնքի զօրութիւն տայ, անքակտելի կանոն և յաւիտենական պայման դարձնէ ժողովրդի համար։ Նա այդ նպատակին հասնելու համար, չէ բաւականացել միայն նորանով, որ վաւերացրել է նոցա իւր ներկայացուցիչների՝ քաղաքագլխի, հոգաբարձուների և պատուաւոր քաղաքացիների ստորագրութեամբ, այլ և հաստատել է տուել նոցա առաջնորդական մեծ կնքով և իրաւունք է ստացել առաջնորդից կարդալու և զեկուցում անելու նոցա մասին եկեղեցիներում [2]։

---

[2]) Մենք Հոգևոր կառավարութեան հին թղթերի մէջ գտանք այդ «Կանոն անքակտելի և պայման յաւիտենական» կոչուած թղթի իսկական պատճէնը։ Դա մի հին, կապտագոյն թղթի վերայ գրուած տետրակ է, որ պարունակում է իւր մէջ, բացի 39 հատուածից, և մի յառաջաբան ու վերջաբան։ Որ դա կանոնների իսկական պատճէնն է—, կասկած չէ կարող լինել, որովհետև նորա վերջում գտնուում է 63 պատուաւոր քաղաքացիների ստորագրութիւն և քաղաքագլուխ Դանիէլ Կարակաշեանի հետեւեալ վաւերացուցիչ գրութիւնը. «Իսկըն և հաստատն ընդ քօքիալիս համեմատ է»։ Հետաքրքիր է նամանաւանդ այդ թղթի յառաջաբանը. նորա մէջ յայտնուած են այն շարժառիթները, որոնք բռնադատել են Նախիջևանցիներին մինչև 1817 թուականը բերանացի, աւանդաբար գործադրուած կանոնները ի մի հաւաքել և ամփոփել մի կանոնադրութեան մէջ։ «Որպէս զի մէք ի բնէ անտի մինչ ելանելոյն մէրում ի զրիմու, ամենայն ոք ըստ կարի և արժանեաց իրում կուկառաւարվեր, ասուած է այդ յառաջաբանում, որպէս զգենուլն, նոյնպէս և ուտէլ ըմպէլն չափաւորապէս, որ էր յոյժ գովելի և անպարսաւելի։ Այլ յետ ելանելն մէր ի զրիմու և ի բնակ-

Կանոնները բաղկացած են 39 յօդուածից կամ հատուածից, որոնցից իւրաքանչիւրը պարունակում է

---

չիլն աստ ի քաղաքս Նոր Նախիջևան, ամ յամէ զամենայն վերասացեալ բարեկարգութիւնսն ի բաց թողեցեալ էր ի մէնջ. և ամենայն ոք յինքն անձն իշխան կոչելով որպէս և կամէին զայնու պճնեին. և զգեցուցանեին զկանայս զորդիս և զդստերս իւրեանց։ և մանաւանդ անպատկան պարգևս յաւելոյին ի զարդարանս, նաև զանազան ուտէլեօք և ըմպելեօք անպատշաճ տեղիս ընդանային և այլն։ Եւ որպէս զքաղաքս մեր կայ ենդ վերահալեցողութեան բարեկարգ մագիստրատին մէրում և ի նմա եղեալ արժանապատիւ գլուխի և յարգելի դատաւորաց, նաև համախոհից նոցին ընտրեալ հոգաբարձուաց, որք միշտ տեսանեին ի վաղ ժամանակաց հետէ զայս աւելորդ արարողութիւնն և յետնելով խոկային բառնալոյ ի քաղաքէս մերմէ զայնպիսի անպատշաճ արարողութիւն հասարակութեանց, որպէս վասն ըզենուլոյ հանդերձիցն կամ ի ժամանակ ամուսնացուցանելոյն զորդիս և զդստերս իւրեանց, առնեին վասն դստերացն զմնծածախս պռոյզս, և կամ որդոցն հարսանեաց աւելորդ զարդս, և այլն որք կուպատանին առ հարսանիսն, և կամ յետ նշանին մինչ հարսանիքն տարուքերից բաղանեաց պանաց, ուստայից, աշճիից, քեմանեճիից և այլոցն սոյն նմանեաց առնեին պարգևս, և ի այն պիսեաց որք կու գործածին ի հարսանիս և ի ընդրեաց որոց բազումքն ելին անգոստեղիք և բառնալիք, նաև յստ կռուոյ պատճառք, որոյ արարողութեանցն յաղագաւ քանիցս անքւմ հասարակութեան տումիս և բարեկարք մագիստրաթիւ սաստիկ պատուէրս եղեալ, և տուքանիւք կապաքցեցեալ էր, բայց ի դուլատրութենէ վերատեսչաց, օր յաւուր աւէլանալոյ զանպատշաճ արարմունքս, մինչ զմիմեանց օրինակ լինելով պատճառ լինեին տապալման զմիմեանս, և զչափս իւրեան չի ճանաչելով պարտականս ճնային, որով զրկէին զայլս, և ինքեանք հասանեին, որ և իսկ բազումք հասին ի յետին և ի վատթար թշվառութիւն։ Վասնորոյ մեք ամենեքեանքս միաձուն և միախորհուրդ լինելով արարաք զայս յաւիտենական և անքակտելի կարգադրութիւնս, զի ի ներքոյ գրեցեալ 39 հատուածովս շարադասելոցն զբառնալիս բարձաք և զպատշաճաւորն նախ գրեցաք,



իւր մէջ զանազան բարոյական խրատներ և հայրական պատուէրներ։ Այդ խրատների ու պատուէրների զօրութեամբ ժողովուրդը թէ իւր առօրեայ կեանքում և թէ բացառակի դէպքերում ու հանդիսաւոր օրերում՝ նշանդրէքի, հարսանիքի, կնունքի, ուխտագնացութեան և հրաւէրքների ժամանակ պէտք է խոյս տար ամեն տեսակ շռայլութիւնից, վատնողութիւնից, զեղխութիւնից և նորամուտ ու վնասակար սովորութիւններից և պահպանէր միայն կեանքի այն եղանակը, այն վարքն ու բարքը, այն սովորութիւնները, այն հագնուելու և զարդարուելու տարազը, որ նոքա իւրեանց հետ բերել էին Ղրիմից։

Դումը խստութեամբ հետևում էր, որ կանոնների ամեն մի յօդուածը ճշտութեամբ կատարուի և ծանր տուգանքի ու պատժի էր ենթարկում անհնազանդ

---

և եթէ ոք ընդդէմ այսմ կարգաւորութեանս յանդգնիցի առնել ինչ, յայնժամ այնպիսի անհնազանդ անձն, հատուսցէ հասատատեցեալ է մէնջ յաւարտ քանտիցի այս գրեցեալ չորացն առանց ներելոյ, և յետ այնմ ըստ արժանեացն ևս ընկալցի ի հասարակութենէս մերմէ, անպատուութիւնս, վասնորոյ կըրկնակի հաստատութեան յաղագաւ խնդրեցաք մէք ի նորին բարձր սրբազնութենէ Տեառն Տեառն Յովհաննէս արքեպիսկոպոս և կաւալէր առաջնորդեն մերմէ, զի և նայ վերչաւորութեան հատուածոց, և ստորագրութեանց մերոց, վերատին հաստատեսցէ զիւր ստորագրութեամբն և մէջ կնքօվն ամրացուսցէ զայս յաւիտենական և անքակտելի պայմանս, և ի յեկեղեցիսն ևս քարոզելով ընդ բանիւ և նզովիւք պատուիրեսցէ առհասարակ ժողովրդականացն մերոց, որ և ընդիմացողքն նախ սրբազան առաջնորդեն մերում ըստ հոգւոյ ընկալցին զպատիժս և ապա մարմնաւորապէս ընդունիցին ի Մագիստրաթէս մէրում ըստ ժամանակնն եղեալ գլուխի և դատաւորաց, յոյր աղագաւ և ստորագրեմք որ եղև ի յունվարի 1-ին 1817-ին թուոյ»։

գտնուողներին ու ընդդիմացողներին։ Տուգանքի վերաբերութեամբ ժողովուրդը բաժանուած էր չորս կարգի՝ հարստների, միջին կարողութեան տէրերի, չքաւորների և աղքատների։ Կանոնների մի որ և է հատուածը չ'կատարելու համար, հարուստները պարտական էին վճարել հարիւր ռուբլի, միջին կարողութեան տէր մարդիկ—եօթանասուն և հինգ ռուբլի, չքաւորները - յիսուն ռուբլի, աղքատները — քսան և հինգ ռուբլի։ Անհնազանդութեան և ընդդիմութեան կրկնուելու դէպքերում տուգանքի քանակութիւնն էլ կրկնուում, երբեքկնուում էր և վերջ ի վերջոյ փոխուում էր սաստիկ պատժի։

Տուգանքներից հաւաքուած գումարն երկու մասի էր բաժանուում՝ մէկ մասը տրուում էր քաղաքում գոյութիւն ունեցող «Աղքատաց գանձանակին», միւսը բաշխուում էր այն մարդկանց, որոնք յայտնում էին Դումին այս ինչ կամ այն ինչ մարդու կանոնների հատուածների դէմ կատարած զեղծումները։ Զեղծումներն երևան հանողներին վարձատրութիւնը բաշխուում էր համեմատաբար, նայելով թէ որ դասակարգին էր պատկանում զեղծում գործողը։ Հարիւր ռուբլի տուգանք տուող յանցաւորից յանցանքը յայտնողին բաժին էր հանուում 20 ռուբլի, 75 ռուբլի տուողից - 15 ռուբլի, 50 տուողից—10 և 25-ից - 5 ռուբլի։ Եթէ պատահում էր այնպէս, որ կրկնապատկուած ու եռապատկուած տուգանքները և գործ դրուած խիստ պատիժներն անգամ չէին օգնում և զեղծումների ու զեղծում գործողների թիւը գնալով բազմանում էր, Դումը խնդրում էր յաջորդից կամ հոգևոր կառավարութիւնից ծանուցում անել եկեղեցիներում, զգուշացնել ժողովրդին և յիշեցնել նորան անքակտելի կանոնը և յաւիտենական պայմանը։



Մեր ձեռքին գտնուում է «Քաղաքական տումի» 37 թուին «աստուածաբան» Թադէոս վարդապետ Բեկ-Նազարեանին գրած թղթերից մէկը, որ պարզ կերպով ցոյց է տալիս, թէ Դումը ինչ միջոցների էր դիմում և ինչպիսի եռանդ ու գործունէութիւն էր ցոյց տալիս 1817 թուի կանոնները ժողովրդի մէջ ամուր պահելու համար։ «Ի վաղնջուց ամաց անտի, գրուած է այդ թղթի մէջ, ըստ համախումբ խորհրդոյ հոգաբարձուաց յաղագս քաղաքիս կանանց և աղջկանց ոսկեղէն և ականակուռ զարդարանօք արգելումն եղեալ էր, յեկեղեցիս, ի խորելէզի տօնավաճառն [3]), ի փողոց և ի հրապարակս շրջելոյ, իսկ ոմանք զայն արգելումն ի մոռացումն թողեալ լինելոյն, արդ նոյն իսկ կարգաւորութիւն վերստին վերանորոգեցաւ, ուրեմն բարեհաճեսցի ձերդ սրբութիւն յայնր մասանց ի վաղիւն ի տօնի ծաղկազարդի, ըստ քաջ հմտութեան ձերում ծանուցանել ժողովրդեանցն։ այնու մտաց, զի եթէ ոք զկնի քարոզի յիշեալ արգելմանցն ընդդէմ գտանիցի, այնպիսին տուժեցեալ լինելոց է անպատութեամբ, զայսմանէ և առ յիւրաքանչիւր եկեղեցեաց քահանայիցն ևս առաջագրել զի նոքա ևս ծանուսցեն ժողովրդոցն իւրեանց»։

Մագիստրատի գրագրութիւնների լեզուն ներքին գործերում՝ հաշուեգրքերում, արձանագրութիւններում

---

[3]) «Խորելէզ» կոչուում է Նոր Նախիջևանի Ս. Գէորգ եկեղեցու ուխտը, որ նախիջևանցիք կատարում են Յունաց Ս. Գէորգայ տօնին, այսինքն Ապրիլի 23-ին։ Այդ ուխտը, որ շարունակուում է երեք օր, բազմաթիւ ուխտաւորներ է հաւաքում թէ քաղաքից և թէ շրջակայ հայ գիւղերից։ Դոյն իսկ ուխտի օրերը մեծ տօնավաճառ է կազմուում եկեղեցու բակում, որ մի կողմից մեծ եկամուտ է տալիս եկեղեցուն, միւս կողմից էլ միջոց է տալիս վաճառականներին արդիւնաւոր կերպով առուտուր անելու։

և համախօսականներում կամ տեղական բարբառն էր կամ գրաբառախառն տեղական բարբառը, ինչպէս վերոյիշեալ Աւուրական ժուռնալի լեզուն, իսկ արտաքին թղթակցութիւնների կամ գրագրութիւնների մէջ — աղաւաղուած գրաբառը։ Երևում է, որ գաղթականների գիտութիւնը Հայոց լեզուի վերաբերութեամբ Ղրիմում շատ սահմանափակ է եղել, նոքա ընդհանուր նեղութեան մէջ ժամանակ չեն ունեցել հոգ տանել իւրեանց մատաղ սերնդի կրթութեան վերայ և բաւականացել են միայն նորանով, որ կարողացել են պաշտպանել իւրեանց ս. եկեղեցին և ժողովրդական բարբառը [4]։ Այդ է պատճառը, որ թէ հոգևորականութիւնը և թէ աշխարհականներից գիտնական համարուածները, ինչպէս, օրինակներից գիտնական համարուածները, ինչպէս, օրինակի համար, Հոգևոր դատարանի և Մագիստրատի ա-

[4]) Հայոց լեզուի գիտութիւնը Ղրիմի գաղթականների մէջ անկասկած սկսել է պակասել 1475 թուականից յետոյ, երբ Ղրիմը ընկել է Տաճիկների ձեռքը և Հայերը չ'դիմանալով մահմեդականների յարուցած հալածանքներին, թողել են իւրեանց այդ երկրորդ հայրենիքը—«Մովսէին Հայաստանը» և խումբ-խումբ ցրուել են զանազան կողմեր, իսկ մնացածները կորցրել են նիւթական կարողութեան հետ միասին և իւրեանց մտաւոր զարգացումը։ Այդպէս չէ եղել սակայն 1475 թուականից առաջ։ 1330—1475 թուականները, որոնք համարում են Ղրիմի հայ գաղթականութեան ամենաձգկած ժամանակամիջոցը, ամեն բան գաղթականների կեանքում ծաղկած դրութեան մէջ է եղել և՛ նիւթականը և՛ մտաւորը։ Այդ միջոցներում են կառուցուել բազմաթիւ մատուռները, եկեղեցիները և վանքերը, որոնց կիսականգուն աւերակները մինչև յայսօր դեռ կան, այդ միջոցներում են կոփուել և ընտիր փորագրութեամբ զարդարուել բազմաթիւ խաչքարերը, որոնցից մի քանիսը գաղթականները բերել են իւրեանց հետ և Նախիջևան և, վերջապէս, այդ միջոցներում են վանքերի և եկեղեցիների հովանաւորութեան ներքոյ գրուել և Կաֆայի բազմաթիւ ձեռագիր մատեանները։



տենադպիրները, հազիւ կարողացել են գրաւոր կերպով իւրեանց միտքն արտայայտել։ Ով որ կարդացել է Հոգևոր դատարանի հին գրագրութիւնները, Մագիստրատի «ժուռնալները» և բազմաթիւ արտաքին թղթակցութիւնները և գրագրութիւնները, նա անկասկած համոզուած կ'լինի, որ նոցա մէջ գործածուած լեզուն իսկապէս լեզու չէ, այլ մանկական թոթովանք, որ կարելի է հասկանալ միայն իմաստով և ոչ թէ լեզուի տրամաբանական շարադասութեամբ։ Ուշիմ ընթերցողը նոցա մէջ ամեն քայլափոխում պատահում է անկապ նախադասութիւնների, անհասկանալի և խառնուած ոճաբանութեան, գլխաւոր և երկրորդական իմաստների խառնափնդորութեան և դժուար ըմբռնելի հասկացողութիւնների և դատողութիւնների. նոցա մէջ բացակայում են քերականական ամենատարրական կանոնները, մտքի կանոնաւոր շարամանութիւնը, չենք ասում արդէն կէտադրութեան մասին, որ կամ միանգամայն չը-կայ և կամ բոլորովին անկանոն է դրուած։

Հայկական Մագիստրատի Հայոց մասի դատարանից արձակուած թղթերը կրում էին «Ի Նախիջևանու Հայոց Մագիստրաթէս» վերնագիրը և գրուում էին այսպէս.

«Ի Նախիջևանու հայոց մագիստրաթէս
առ հոգևոր կառաւարութիւնդ
միլաւորութիւն

Թէպէտ կառաւարութիւնդ միլաւորականաւ իւրով ի մասին Պըլխը սարգսի որդւոյ ասվադուրին և կնոջն ան հաշտութեանն թողուցեալ ըստ ամենայնի դատողութեան մագիստրաթիս, բայց որով հետև չէ գործ մարմնաւոր կառաւարութեանս միշտ առաջի լինին նանանջմունք, բայց այսու ամենայնիւ ըստ քրիստոսեան պատուիրանի վասն բառնալոյ զանհաշտութիւնս նոցին (որոյ վասն արեգակն ոչ է պարտ մտանել) հոգացեալ գոչեաց մագիստրաթս զոգանջն որոյ ընդդիմանալն ըստ չարութեան բարուցն իւրոյ արկելաւ ի բանտ ուստի և այսու կարգաւորեցաւ միլաւորիլ առ այդ կառավա-

րութիւնդ և պահանջել զի բարեհաճէսցի առաքել քահանայ տեղեակ աստուածային օրինաց որ կարասցի գնալ առ կին նորին և խրատել զի հաշտէսցի և հնազանդեսցի առն ըստ օրինաց, իսկ եթէ ոչ լուիցէ յայնժամ արքելուլ զնա ի տան քահանայի միոյ մինչև հնազանդէսցի տալով նմա ի կերակուր միայն հաց և սոսկ ջուր, փետրվարի 28. 1828 թուոյ—

աչի դտոր մարտիրոս խօճվ
եկդ դտոր պետրոս պապայսինով
եկդ դտոր ադամ յարութինով
եկդ դտոր խաչիկ ալինով
եկդ դտոր զաքարոս լազրով»։

Սոյն վերնագրով և սոյն իսկ ձևով գրուում էին և Մագիստրատի Ռուսաց մասի թղթերը։ Միայն մի զանազանութիւն կար. երբ որ թուղթը արձակուում էր տէրութեան մի որ և է հաստատութեան կամ պաշտօնական անձի, գրուում էր ամբողջապէս ռուսերէն, իսկ եթէ Հայոց հաստատութեան կամ պաշտօնական անձի —, մի կողմը ռուսերէն, միւս կողմը հայերէն։

Բանաւոր իրաւարանից արձակուած թղթերը կրում էին «ի բանաւոր իրաւարանէս» վերնագիրը և գրուում էին այսպէս.

«ի բանաւոր իրաւարանէս
առ Նախիջևանու հոգևոր կառաւարութիւնդ
վերաբերութիւն.

Ընդ սոյն վերաբերականիս ուղղևորեցեալ, մեծ սալացի Սարգիս պօշտան յովհաննէսովն, ումեմն ապօրէն ծնունդ զաւակն, ընդ վաթսուն ռուպլի դրամօքն, ի որդեգրութիւն առնելով, և յաստուստ ի գիւղն տարեալ ժամանակին, ի անցանելն սուրբ խաչ վանից յայնկոյս, նոյն երեխայն կու մեռանի, և սալ սարգիսն առանց քահանայի, անձամբ անձին կութաղէ։ և թէպէտ հանդամանք բաղումք զոն, որոյ ասութեանց հարցմանց գիրն կայ ի մագիստրատն մեր. սակայն զնամառօտն ասացաք։ և մագիստրատս մեր տեսանելով զայս արարմունս սորայ ընդդէմ հոգևոր կանոնի զոյ, վասն այն և առաքեցաւ, առ նոյն կառաւարութիւնդ, ի վերադատողութիւն և ի վճռահատութիւն, թէ ապաշխարութեամբ, և թէ պատժօք, և զորս



և իցէ ի կառաւարութիւննէդ կախեցեալ լինելոց է։ ուրեմն և կառաւարութիւնդ բարեհաճեսցի, յընկալնուլ զսայ ի վերադատողութիւն, և ի վճռահատութիւն, և զկնի այնորիկ յորպիսութիւննէ վճռահատութեանն, ծանուցանել ի դիտութիւն մագիստրատի մերում. եղև 1824 մայիսի 3 ումն. բօլիցէիսկօ չինովնիք՝ պաղտասար պառօնով»։

Քաղաքային դումից արձակուած թղթերը կրում էին «ի քաղաքական տումէս» վերնագիրը և գրուում էին հետևեալ կերպով.

«ի քաղաքական տումէս
առ Նախիջևանու հայոց հոգևոր կառավարութիւնդ
միաւորութիւն.

Գիտելի է որ զբաղում միջոցս երաշտութեամբ անցանի և երկիրս ծարաւեալ կայ։ և մօրեխքն յարկանէն բոլոր բուսն յերկրիս, վասնորոյ հասարակութիւնս մեր խորհելով պատշաճ և յոյժ հարկաւոր դատեցաք վասն անձրևոյ և վասն մորեխոյն ըստ սովորութեան և կանոնի նախնեաց մերոց, ի սուրբ լուսաւորիչ աւագ եկեղեցւոյ առաջիկայ կիրակիս որ ի ամսոյս 10նում յաւուրն զպաղատանս վեր երգել առ ամենաբարձրեալն աստուած և խնդրել զքաղցր ցողն երկնային առ ի զովացուցանել զերկիրս ի ծարաւուտ, ուրեմն հարկ է որ նախագուշակս լինել և պատրաստել լինելիս, որոյ վասն վերակարգել զմի ոմն հաւատարիմ անձն ի աշխարականաց, զի ընդ միոյ քահանայի ըստ պատշաճի չրջելով զդրամս ժողովեսցէ, յորդորելով վասն առատրելոյ, և ծանուցանելն հրաւիրմամբ առ նոյն աղօթս ի սուրբ եկեղեցին ծում և մաքուր սրտիւ նաև բարեհաճեսցի կառավարութիւնդ, նախ գրել և հրաւիրել ի սուրբ խաչ վանիցն միմիայն զՅովհաննէս վարդապետն և ապա առ իւրաքանչիւր եկեղեցեաց դասագլուխ քահանայից ևս հրամայել, զի և նոքայ առ ժողովուրդս իւրեանց ծանուցցէն և յորդորեսցէն ի նոյն պաշտօն աղօթս, և նուիրեսցէն առատօրէն, վասն ողջակիզին, և ըստ այնմ համայն սպասաւորք եկեղեցեաց, հանդերձ ժողովրդովք, գումարեսցեն յիշեալ աւագ եկեղեցիս ի հանդէս պաղատանացն. ի 8 յունիսի որ ի 1823. քաղաքական գլուխ, վ. հայաճով»։

## Գ.

Հայոց դատարանն անաղարտ կերպով շարունակում է իւր գոյութիւնը միայն 45 տարի՝ 1780-ից մինչև 1825 թուականը։ Անցեալ տարի առաջին քառորդից յետոյ Հայոց դատարանը սկսում է հետզհետէ կորցնել իւր նշանակութիւնը, թուլանալ, ջլատուել և ընկնել, մինչև որ վերջնականապէս փակւում է 69 թուին։ Նորա ընկնելու պատճառը լինում է, նախ, իշխանութիւնը, որ կամաց-կամաց հանելով Հայոց դատարանի իրաւասութեան պատկանած դատերի զանազան մասերը, թուլացնում է նորան և զրօյի հաւասարեցնում նորա նշանակութիւնը, երկրորդ, ինքը հայ ժողովուրդը, որ տեսնելով Հայոց դատարանի իրաւասութեան և հեղինակութեան աստիճանաբար թուլանալը, փոխանակ նեցուկ լինելու նորան և աշխատելու բարձրացնել նորա ընկած նշանակութիւնը, ինքն էլ սկսում է անտարբերութեամբ վերաբերիլ դէպի իւր թանկագին սեփականութիւնը, նշանակութիւն չ՝տալով հայ դատաւորների վճիռներին և ամենաչնչին գործերի համար ևս դառնալով Մագիստրատի տէրութեան դատարանին։

Նախ և առաջ Հայոց դատաւորներից առնուում է ինը հոգու վճռաջինջ ատեան ունենալու իրաւունքը, յետոյ նոցա իշխանութիւնից հանում են պարտապանութեան վերաբերեալ բոլոր գործերը (Долговыя дѣла)։ Առաջին իրաւունքը տէրութիւնը յատկացնում է Նահանգի դատաստանական պալատի իրաւասութեան, երկրորդը—Տագանրոգ քաղաքում հաստատուած վաճառականութեան ատենին։

Իշխանութեան Հայոց դատարանի գործերին խառնուելու պատճառը լինում է Նախիջևանցւոց յայտնի Քայալեանի և Բաբիկեանի գործը։ Քայալեանը և Բաբիկեանն անբաւական մնալով իւրեանց գործի համար արձակած հայ դատաւորների և ինը հոգու ատեանի վճիռներից, դիմում են բողոքով նահանգական իշխանութեան, որ առիթ բռնելով այդ հանգամանքը և նոյն ժամանակ հիմնուելով կայսերաշնորհ հրովարտակի հինգերորդ յօդուածի «և եղիցի ենթ իշխանութեան նամէստնիկական կառավարութեան» (и быть магистрату подъ апеляціею намѣстническаго правленія) խօսքերի բառացի նշանակութեան վերայ, հրամայում է դադարեցնել ինը հոգու վճռաջինջ ատեանը և ամեն մի բողոք դատաւորների վճռի դէմ այնուհետև մատուցանել Եկատերինէսլաւի դատարանական պալատին։ Նախիջևանցիք չեն բողոքում Բարձրագոյն իշխանութեան նահանգական իշխանութեան վերայ և նորա արած այդ տեղական կարգադրութիւնը զօրութիւն է ստանում։ Սակայն շատ հաւանական է, որ, եթէ հայերը բողոքէին, Բարձրագոյն իշխանութիւնը յարգէր նոցա ցանկութիւնը և Հայոց դատարանի գործը թողնէր նախկին դրութեան մէջ, որովհետև բացի նորանից, որ ինը հոգու վճռաջինջ ատեանի ինստիտուտը գտնուում էր տէրութիւնից Հայոց դատարանների գործածութեան համար հաստատուած դատաստանագրքի մէջ, այլ և շատ օգտաւէտ էր ընդհանրապէս և դատաստանական գործի համար։ Նա շատ հեշտացնում էր թէ հայկական Մագիստրատի դատավարական գործունէութիւնը, հաշտեցնելով դատաւորների վճիռներից անբաւական մնացած կողմերին, և թէ նահանգի դատաստանական պալատի գործը, բողոքաւորների գործը հէնց քաղաքում վերջացնելով և նորանոր գործերով չ՝ծանրաբեռնելով առանց այն էլ արդէն ծանրաբեռնուած դատաստանական պալատը։ Պատմում են, որ մէկ անգամ Տագանրոգի քաղաքապետը, որի իշխանութեան տակ գը-

տընուում էր մինչև 1859 թուականը Նախիջևանն իւր հայկական շրջանով, Մագիստրատի գործերը քննելու ժամանակ նկատում է, որ Հայոց դատարանի մասում համեմատաբար խիստ սակաւ գրաւոր գործ կայ և եղածներից շատերն էլ հաշտութեամբ են վերջացած։ Դատաւորները և ատենադպիրն այդ հանգամանքը մեկնում են Հայոց դատարանի առանձին կազմակերպութեամբ և գլխաւորապէս ինը հոգու հաշտեցուցիչ և խաղաղարար ներգործութեամբ։ Քաղաքապետը լսելով այդ մեկնութիւնը, ասում են, շատ բաւական է մնում և կատակելով ասում է. «խնդրում եմ, պարոններ, որ այսուհետև էլ շարունակէք գործերն այդ ուղղութեամբ վարել, միայն որ դրացիներիդ այդ մասին բան չ՝ասէք, մի գուցէ նոքա իմանալով ձեր դատարանի յաջողութեան գաղտնի խորհուրդը, ինքեանք ևս ցանկանան ձեր օրինակին հետևել, այն ժամանակ ատիճանաւորները ձեռնունայն ու խեղճ կ՝մնան և ձեր հոգուն մեղք կ՝լինի»։ Ինը հոգու վճռաջինջ ատեանի ինստիտուտը հակառակ չէր ոչ տէրութեան օրէնքներին և ոչ գաղթականներին շնորհած կայսերական հրովարտակի իմաստին. նա բոլորովին համապատասխանում էր երջանկայիշատակ Եկատերինէ կայսրուհու «ըստ ձերոյ օրինաց և սովորութեանց վարել դատաստանս և զիրաւունս» խօսքերին։ Ինը հոգու ատեանի փակուելուց յետոյ, Հայոց դատարանի բոլորովին փակուիլը միայն ժամանակի խնդիր է դառնում։

Դատարանի վիճակին ենթարկուում է և «քաղաքական տումը»։ Ժամանակի ընթացքում իշխանութիւնը նորանից խլում է քաղաքագլխից և քաղաքի տնտեսական մասի միւս պաշտօնեաներից հաշիւ պահանջելու իրաւունքը և առհասարակ քաղաքի տնտեսական մասի հաշուետեսութեան գործն ենթարկում է նահանգական



կառավարութեան իրաւասութեան, խլում է նորանից և ներգործական դեր խաղալու, գործերին ընթացք և ուղղութիւն տալու հեղինակութիւնը և յատկացնում է նորան միայն քաղաքագլխին խորհրդակից լինելու իրաւունքը։ Քաղաքագլուխներն էլ օգտուելով հանգամանքից, աշխատում են դուրս գալ 24-ի հսկողութեան տակից և բոլորովին ինքնագլուխ լինել։ Նոքա սկսում են ամեն գործում ինքնագլուխ վարուել, գործել իւրեանց սեփական պատասխանատուութեամբ, առանց նշանակութիւն տալու հոգաբարձուների կարծիքներին, մինչև անգամ խորհրդի ևս չ՝հրաւիրելով նոցա, շատ անգամ էլ միայն ձևականութիւնը պահպանած լինելու համար խորհրդակցելով նոցա հետ։ Միւս կողմից ժողովուրդն էլ իւր դատապարտելի անտարբերութեամբ նպաստում է Դումի փակուելու գործին։ Նա սկսում է անխտիր ամեն մէկին հոգաբարձու ընտրել, շատ անգամ էլ անտարբեր գտնուելով, բոլորովին ընտրութիւն չէ անում, որով մէկ կողմից ձգում է Յովսէփ արքեպիսկոպոսի այնքան մեծ աշխատութեամբ կազմակերպած և սրբագործած «Դումը», միւս կողմից չամբողջացնելով նորան, զրկում է նորան կանոնաւոր կերպով գործելու իրաւունքից։ Մոռացուում է Սրբազանի «Դաշնագրութիւնը» և այն երդումը, որ հասարակութիւնն իւր ներկայացուցիչների բերանով արել էր ս. խաչի և աւետարանի վերայ՝ անխախտ պահել իւր իրաւունքները և շնորհած արտօնութիւնները։ Մեռնում, ոչնչանում է հին սերունդ իւր հին ուղղութեամբ, իւր ազգային աւանդութիւններով, առաջ է գալիս նոր սերունդ նոր ուղղութեամբ, նոր ձգտումներով, նոր շահերով և անհետանում է այն սրբազան աւանդը, որ առաջինն այնքան գուրգուրանքով կտակել էր երկրորդին։

Թէ որտեղ է հասած լինում հայկական հասա-

տութիւնների աղաւաղուելը, խանգարուելը—, այդ երևում է նորանից, որ վերջին ժամանակներում ոչ ոք այլ ևս չէ կամենում եղել ոչ հոգաբարձու, դատաւոր, ոչ մինչև անգամ քաղաքագլուխ ընտրուել, հոգաբարձու, դատաւոր, որ առաջին ժամանակներն այնքան յարգելի, այնքան պատուաւոր են եղել։ Քաղաքի ծերունիներից շատերը մեզ պատմել են, որ ինքեանք ընտրուած լինելով մի որ և է հասարակաց գործի պաշտօնատար, ամեն ձեռքից եկած միջոցներով աշխատել են, որ չ'հաստատուեն իշխանութիւնից, որ բեկանուի իւրեանց ընտրութիւնը. այդքան ընկած, անարգուած են եղել վերջերումս դատաւորների, հոգաբարձուների և հասարակաց միւս պաշտօնները։ Քաղաքային խորհրդարանի այդպէս քայքայուելու և ընկնելու պատճառով վերջին ժամանակներում արդէն քաղաքային գործերը բոլորովին կենտրոնանում են քաղաքագլխի ձեռքին, որ միահեծան իշխանութեամբ կառավարում է բոլոր գործերը, անհրաժեշտ դէպքերում միայն դիմելով հասարակութեան ժողովների օգնութեանը։

Հասարակութեան ժողովներն էլ հետզհետէ փոխում են իւրեանց առաջուայ կազմակերպութիւնը և բնաւորութիւնը։ Առաջ այդ ժողովները հրաւիրուում էին խորհրդարանի որոշումով և արձանագրութեամբ և կազմուում էին դատաւորներից, հոգաբարձուներից, դասակարգապետներից ու նոցա օգնականներից և քաղաքի այն պատուաւոր մարդկանցից, որոնց հոգաբարձուները վճռելիք գործի համար անհրաժեշտ կ'համարէին հրաւիրելու, իսկ վերջերում նոքա հրաւիրուում էին միայն քաղաքագլխի ցանկութեամբ, որոշումով և կազմուում էին քաղաքի միայն հարուստ տանուտէրերից, աղաներից և դասակարգապետներից։ Հինը ճշտութեամբ պատկերացնում էր հասարակութեան կարծիքը,



որովհետև թէ դատաւորներն ու հոգաբարձուները և թէ դասակարգապետներն ու նոցա օգնականները հասարակութեան քուէարկութեամբ էին ընտրուում, իսկ նորը ներկայացնում էր հասարակութեան միայն հարուստ դասակարգի կարծիքները, որովհետև, բացի դասակարգապետներից ու նոցա օգնականներից, որ հնի պէս հասարակութեան քուէով էին ընտրուում, նորա միւս բոլոր անդամները չէին ընտրուում, այլ իբրև տանուտէրեր արդէն իւրեանց դրութեամբ էին անդամ համարուում հասարակաց ժողովներին։

Հայկական Մագիստրատի վերջնականապէս փակուելու խնդիրն առաջին անգամ բարձրանում է 66 թուին։ Այդ ժամանակներն արդէն մշակուել ու հրատարակուել էին երջանկայիշատակ Աղեքսանդր Բ-ի նոր դատարանական օրէնքները և սկսուել էր նոցա գործադրութիւնը։ 66 թուականի Ապրիլի 13-ին հրատարակուած Բարձրագոյն հրամանի հիման վերայ ամեն տեղ ձեռնարկել էին փակել Մագիստրատները, դատաստանական «ռատուշները» և կարգադրութիւն էր եղել նոցա տեղ հետզհետէ նոր կարգերը հաստատել։ Յայտնի բան է, այդ ընդհանուր յեղափոխութեան ժամանակ, երբ բոլոր հինը, մասնաւորը վերանում էր և տեղը բռնում էր նորը, բոլորի համար հաւասարապէս պարտականացուցիչը, Նախիջևանն իւր գիւղերով չէր կարող ընդհանուրից բացառութիւն կազմել. նա պէտք է ենթարկուէր ընդհանուր հոսանքին, ընդունէր տէրութեան ընդհանուր օրէնքները և կարգերը և կորցնէր իւր բացառակի դրութիւնը, իւր արտօնութիւնները, իւր հայկական բնաւորութիւնը։

Երբ առաջին անգամ ստացուում է Եկատերինասլաւի նահանգական կառավարութիւնից հրաման Հայկական Մագիստրատը փակելու, Նախիջևանի քաղաքա-

գլխի պաշտօնակատար Սաղաթիէլ Քայեալեանը հասարակութեան ժողով գումարելով և ներկայացնելով նորան իշխանութեան կարգադրութիւնը, առաջարկում է խորհրդակցել, թէ արդեօք ո՞րքան յարմար են նոր դրուելիք կարգերը Նախիջևանի հասարակութեան և ո՞րքան նոքա համապատասխանում են 1779 թուին Հայերին շնորհած կայսերական հրովարտակին [5]։ Հա-

[5]) Քաղաքի հասարակութեան ժողովներին մասնակցում էին և այն 115 հոգի գիւղացիները, որոնք, իւրեանց թուի քչութեան պատճառով, ի սկզբանէ անտի առանձին գիւղ չէին կազմել, այլ քաղաքացիների հետ միասին բնակութիւն էին հաստատել քաղաքում։ Այդ գիւղացիները, թէև օրէնքով պահել էին իւրեանց իրաւունքներն իրանց յատկացրած հողերի վերայ, թէև նոքա քաղաքի ցուցակների մէջ գիւղացի էին յիշուում և կոչուում էին «Սաբանչի», բայց երկրագործութեամբ չէին պարապում, այլ երկար ժամանակ բնակուելով քաղաքում, ընդունել էին քաղաքացւոց վարքն ու բարքը, ապրելու եղանակը, պարապմունքը և բարձի թողի էին արել իւրեանց հողերը։ Միւս հայ գիւղացիներն էլ օգտուելով այդ հանգամանքից, սկսել էին վարել, ցանել սաբանչիների պարապ թողած հողերը և վայելել նոցա արդիւնքը, ինչպէս իւրեանց սեփականութեան։ Քաղաքում ապրող գիւղացիներն արդէլք չէին եղել, չէին բողոքել իւրեանց սեփականութեան ուրիշների ձեռքն անցնելու համար և կամաց-կամաց կազմուել էր մի այնպիսի դրութիւն, որ հայ գիւղերը սկսել էին այդ հողերն իւրեանց սեփականութիւնը համարել. ժամանակը, սովորութիւնն էլ, կարծես, սրբագործել էին նոցա այդ իրաւունքը։ Սակայն ժամանակի ընթացքում հանգամանքները փոխուում են. հողերի գինը բարձրանում է, քաղաքի ապրուստն էլ հետզհետէ թանդանում ու դժուարանում է։ Ահա հէնց այդ ժամանակները Սաբանչիները յիշում են իւրեանց հողերի մասին և կամենում են տիրութիւն անել նոցա, բայց պատահում են արգելքի։ Հայ գիւղացիներն երկար ժամանակ վայելած լինելով նոցա հողերի արդիւնքը, յայտնի բան է, չեն ուզում զրկուել իւրեանց այդ աւելորդ արդիւնքից և բա-



սարակութիւնը, որ մինչև այդ ժամանակ չ՚հասկանալով իւր ունեցածի նշանակութիւնը և չ՚գնահատելով նորան, այնքան անտարբեր էր գտնուել, որ թոյլ էր տուել համարեա թէ ոչնչանալու, այժմ, կարծես թէ, զարթնում է խոր քնից և սկսում է ճիգ թափել ազատելու նորան իսպառ կորչելուց։ Նա հարիւր ութ մարդու ստորագրութեամբ հետևեալ համախօսականն է կազմում. «1866 թուի Յունիսի 27-ին Նախիջ՚ան քաղաքի բոլոր դասակարգերից կազմուած հասարակութիւնը քաղաքում գտնուած բոլոր տանուտէրերի ոչ պակաս քան երկու երրորդի ներկայութեամբ և քաղաքագլխի պաշտօնակատար Պարոն Սաղաթիէլ Քայեալեանի նախագահութեամբ կայացած ժողովում զանազան հասարակային խնդիրների շարքում խորհրդակցութիւն ունեցաւ և հետևեալի մասին՝ որովհետև համաձայն Բարձրագոյն կամաց բոլոր տէրութեան սահմաններում կատարուում են դատաստանական վերանորոգումներ, որ, ինչպէս երևում է իշխանութեան կարգադրութիւնից, հաւասարապէս տարածուում է և մեր վերայ, ուստի և հասարակութիւնս կ՚կամենար խորհրդակցել, թէ արդեօք նոր դատաստանական կարգերն որքան կարող են

ցէ ի բաց մերժում են ճանաչել նոցա իրաւունքը հողերի վերայ։ Դատ է բացուում. երկու վիճաբանող կողմերն էլ մեծ նիւթական զոհողութիւններ անելով, բաւական երկար ժամանակ չափում են դատարանի չէմքը, մինչև որ վերջ ի վերջոյ օրէնքն ու արդարութիւնը յաղթում են և դատը վճռուում է յօգուտ «Սաբանչիների»։

Քաղաքում ապրող գիւղացիները հարիւր տարի քաղաքում ապրելուց յետոյ, թողնում են քաղաքը և 30 տուն ժողովրդով տեղափոխուում են Սամբէկ գետի ափը, որտեղ գտնուում էին նոցա հողերը (6080 օրավարաչափ) և կազմում են վեցերորդ հայկական գիւղը, որ կոչուում է «Ցկատերինաւան» կամ գետի անունով՝ «Սամբէկ»։

վերաբերել և մեր հասարակութեան, որ մինչև ցայսօր առանձին Բարձրագոյն շնորհած արտօնութիւններ ունէր։ Կարգաւորուեց՝ խնդրել պ. քաղաքագլխի պաշտօնակատարից, որ նա այդ խնդիրը նախ և առաջ ենթարկէ քաղաքային խորհրդարանի հոգաբարձուների, իբրև քաղաքի առաջաւոր մարդկանց, քննութեան և նոցա այդ մասին յայտնած կարծիքը նորից առաջարկէ հասարակաց ժողովին։ Հոգաբարձուները համաձայնում են իւրեանց կարծիքը յայտնել այդ մասին ոչ պաշտօնապէս, իբրև քաղաքի հոգաբարձուներ, այլ իբրև մասնաւոր մարդիկ. և խնդրում են հրաւիրել իւրեանց այդ մասին կայանալիք նիստերին այլ ևս ուրիշ պատուաւոր քաղաքացիներ։

Սակայն ոչ հասարակութեան և ոչ առաջաւոր մարդկանց ժողովների վճիռներն են հետևանք ունենում։ Ճիշտ է, մի առ ժամանակ թէ Հայոց դատարանի և թէ Դումի փակումը յետաձգուում է, բայց 69—70 թուականներին վերջնականապէս Հայկական Մագիստրատը փակուում է և հայ հասարակութիւնն ենթարկուում է տէրութեան ընդհանուր օրէնքների իրաւասութեան և կառավարութեան ընդհանուր օրէնքների եղանակին ու ձևին։

Մագիստրատի փակուելովը, վերջապէս, դադարում են այն անվերջ գանգատները և զրպարտութիւնները, որ ի սկզբանէ անտի դրացի քաղաքների տեղական իշխանութիւնը սովորութիւն էր արել անել Նախիջևանի կառավարութեան վերայ։ Այդ գանգատներն ու զրպարտութիւններն առաջ էին գալիս երկու պատճառից՝ մէկ որ տեղական իշխանութեան շատ էլ ախորժելի չէր, որ Նախիջևանն ունենալով իւր առանձին կառավարութիւնը, չէր ենթարկուում նորա իշխանութեան, երկրորդ, որ դորանով տեղական պաշտօնեաները և աստիճանաւորները շատ անգամ արդարացնում էին իւրեանց ծուլութիւնն, անգործութիւնը և գործ կատարելու անընդունակութիւնը։ Պատահում էր, օրինակի համար, որ Նախիջևանի մօտ գտնուած տեղերից մէկում տեղի էր ունենում մի որ և իցէ գողութիւն կամ աւազակութիւն, որի հեղինակներին տեղական ոստիկանութեան չէր յաջողում գտնել, բռնել —, և ահա Տագանրօգի քաղաքապետին կամ նահանգական իշխանութեան այդ մասին մօտաւորապէս հետևեալ բովանդակութեամբ զեկուցագիր էր ուղարկուում. «գողին կամ աւազակին ձեռք ձգելու համար մենք մեր ձեռքից եկած բոլոր միջոցները գործ դրինք և անպատճառ մենք կ'հասնէինք մեր նպատակին, եթէ միայն չ'լինէր Նախիջևանն իւր առանձին կառավարութեամբ, որ չէ ենթարկուում մեր իշխանութեան և որ նպաստում է գողերի և աւազակների իշխանութեան հսկողութիւնից թաքնուելուն». կամ թէ պատահում էր, դիցուք, մի սպանութիւն, մի յանդուգն ոճրագործութիւն, որի հեղինակները նոյնպէս խուսափում էին տեղական ոստիկանութեան հսկողութիւնից։ Բարձր իշխանութիւնը մեկնութիւն էր պահանջում, յանդիմանում էր —, և ահա նորից մի արդարացուցիչ զեկուցումն էր ուղարկուում, որի մէջ բոլոր մեղքը բարձուում էր Նախիջևանի Հայկական Մագիստրատի վերայ։

Բոլոր շրջակայ տեղերից աւելի այդ ուղղութեամբ նամանաւանդ աշխատում էր Ռոստով քաղաքը, որ ամենամօտն էր Նախիջևանին և մի տեսակ նորա մրցակից ընկերն էր համարուում։ Ռոստովն առաջ էր եկել այն փոքրիկ ամրոցից, որ կոչուում էր Ռոստով սրբոյն Դեմետրի և որի հողերի մի մասը տէրութեան կարգադրութեամբ անցել էր Նախիջևանի Հայերին։ Ռոստովը թէև իւր աշխարհագրական դիրքի յարմարութեան պատ-

ճառով լցուել էր զանազան կողմերից եկած մարդկանցով, մեծացել և քաղաք էր դառել, թէև նորա առևտրական գործունէութիւնը ևս, ինչպէս Նախիջևանինը, հետզհետէ սկսել էր առաջ գնալ, բայց դեռ չէր կարողացել հասնել Նախիջևանին, ուստի և անբաւական էր և նախանձում էր նորա փառքին: Նա նախանձում էր գաղթականների յառաջադիմութեան, բարեկեցութեան, նա անբաւական էր, որ տերութիւնը Հայերին այնքան հող էր յատկացրել, և ամեն բանից օգտուում էր իւր այդ նախանձն, անբաւականութիւնն արտայայտելու: Էլ սուտ և բամբասանք չէր մնում, որ ռոստովցիք չ'տարածէին Նախիջևանի մասին, էլ քսութիւն, զրպարտութիւն չէր մնում, որ նոքա չուղղէին Նախիջևանցւոց հասցէին:

Շրջակայ տեղերի Նախիջևանի վերաբերութեամբ բռնած այդ ուղղութիւնից ընդհանրապէս և Ռոստովի Նախիջևանի հետ ունեցած այդ յարաբերութիւնից մասնաւորապէս առաջ էր գալիս այն հանգամանքը, որ մէկ կողմից Նախիջևանի և հայ հասարակութեան անունը վատաբանուում և առակուում էր, իսկ միւս կողմից էլ Բարձրագոյն իշխանութեան սիրտը կասկած էր ընկնում Նախիջևանի առանձին կառավարութեան օգտաւէտութեան մասին: Ճիշտ է, Բարձրագոյն իշխանութիւնը լսելով Նախիջևանի մասին եղած բոլոր առարկութիւնները, շատ բանի ամենևին չէր հաւատում, շատ բան էլ քննելով հերքում էր, բայց կային այնպիսի բաներ, որ ինքն էլ ընդունում էր, որին ինքն էլ էր հաւատում, և աշխատում էր սահմանափակել Հայերի արտօնութիւնները և չլատել հայկական հաստատութիւնների զօրութիւնը: Ի միջի այլոց, Նախիջևանն իւր կեղծ դրամ շինելու կենդրոն լինելու համբաւը, որ այնքան տարածուած էր անցեալում և որ այժմ ևս երբեմն լի-



շուում է [6]), ստացել է Ռոստովի և շրջակայ ժողովրդի «ասէ-կասէից»: Այդ մասին կատարեալ առասպելներ էին պատմուում: Ոմանք ասում էին, որ Նախիջևանցիք իւրեանց հարստութիւնը ձեռք են բերել միայն կեղծ դրամ կտրելով, ուստի և երբ Նախիջևանցւոց ձեռքին թուղթ փող էին տեսնում, հեգնելով բացականչում էին. «Այդ Նախիջևանի փող է»: Ոմանք էլ—«թէ Նախիջևանցիք իւրեանց սուտ փող շինելու գործողութիւնը կարողանում են ծածկել իշխանութեան հսկողութիւնից, որովհետև իւրեանց դրամ կտրելու տան դռներին արջ են կապում», ուստի և Նախիջևանցւոց պատահելիս, արջի քէֆն էին հարցնում, որով ուզում էին ցոյց տալ, թէ նոքա սուտ փող են կտրում, և այլն և այլն:

Ամենքը գիտեն, որ մօտ անցեալում կեղծ դրամ կտրելու ախտը շատ տարածուած էր Ռուսաստանի քաղաքներում. այժմ էլ, ինչպէս յայտնի է, այդ ախտը դեռ իսպառ արմատախիլ եղած, ոչնչացած չէ: Սակայն ոչ ոքի մտքով չանգամ անցած չէ կեղծ դրամաշինութեան կենդրոն համարել այն բոլոր քաղաքները, որոնց

---

[6]) Ներկայումս բոլոր միջնակարգ դպրոցներում գործածուող Ռուսաստանի աշխարհագրութեան ձեռնարկներում մենք պատահում ենք, օրինակի համար, հետևեալ նկատողութեան Հայերի մասին ընդհանրապէս և Նախիջևանի Հայերի մասին մասնաւորապէս. «Ցոյները և Հայերը ապրում են գլխաւորապէս քաղաքներում և պարապում են վաճառականութեամբ. Նոքա ի բնէ խորամանկ են, հնարագէտ և ճարպիկ. նոքա ի ներքուստ հպարտ են, իսկ արտաքուստ փափկաբարոյ և սիրելի: Այդ երկու ազգերը ևս նպատակ են դրել իւրեանց համար հարստանալու. երկուսին էլ առհասարակ նիւթականին վերաբերեալ գործերում հաւատ չեն ընծայում, նա մանաւանդ Հայերին, որոնք յաճախակի ամեն տեսակ միջոցներ գործ դնելով, աշխատում են փող ձեռք բերել, որին իբրև օրինակ կարող է ծառայել Նախիջևան քաղաքը, որ հռչակուած է

մէջ այդպիսի դէպքեր են պատահել, ոչ ոքի մտքով անցած չէ գրամանենգութեան այդ զազիր կեղտը քսելու այն բոլոր քաղաքացիների երեսին, որոնց անդամներից մէկը յանցաւոր է գտնուել այդ գործում։ Բայց Նախիջևանի վերաբերութեամբ այդ այդպէս է եղել. նաուրիշների մեղքերի համար քաւութեան նոխազ է եղել։

Նախիջևանի կեղծ դրամի կենդրոն լինելու վատ համբաւին առիթ է տուել հետևեալ դէպքը, որ պատահել է յիսնական թուականներին։ Քառասնական թուականներին Դօնի նահանգում բռնուում է մի ռոստովցի Կրուտիկով ազգանունով մարդ, որ 50 ռուբլիանոց կեղծ թղթադրամներ կտրելիս և գիւղացիների մէջ ցրուելիս է լինում, բայց տրդեօք ապացոյցների պակասութեան կամ մի որ և իցէ ուրիշ պատճառով նա իւր արժանի պատիժը չէ ստանում, այլ արձակուում է և միայն ոստիկանութեան հսկողութեան է ենթարկուում։ Այս դէպքից մի քանի տարի յետոյ, 1850 թուականին Նախիջևանի Հայկական Մագիստրատը տեղեկութիւն է ստանում, որ մի քանի մարդ Նախիջևանում կեղծ դրամ են կտրում։ Իսկոյն և եթ ժամանակիս դատաւոր-ոստիկանները՝ Կրասիլնիկովը և Մասլինիկովը հրաման են ստանում Մագիստրատից խիստ խուզարկութիւններ ա-

մաքսանենգութեամբ և ամեն տեսակ խարդախութիւններով»։ Սկզբում զանազան ասէ-կոսէներից հաւաքած, յետոյ աւանդաբար և փոխառութեամբ ընդհանրացած այս տեղեկութիւնները մտցնելով իւրեանց ձեռնարկների մէջ, մենք չենք հասկանում դորանով ինչ են կամենում ուսուցանել իւրեանց սաներին Ե. Ա. Լեբեդևը (Е. А. Лебедевъ) և նորա ընկերակից մանկավարժները—որ Հայերը խաբեբայ են, մաքսանենգ են, խարդախ են։ Ո՞րքան համապատասխան է մանկավարժութեան կանոններին արմատացնելը մանուկների սրտում ատելութեան, թշնամութեան սերմեր դէպի մի ազգ, որի հետ ապագայում նոքա պէտք է ապրեն, պէտք է գործ ունենան։



նել և անպատճառ գտնել ու կալանաւորել չարագործներին։ Դատաւորները ճշտութեամբ կատարելով Մագիստրատի հրամանը, ստրեապչու պաշտօնակատար Գրախոլսկու ընկերակցութեամբ գնում, գտնում են չարագործների որջը և ամեն բան տեղն ու տեղը բռնում են՝ մեքենաները, կիսապատրաստի դրամները և կալանաւորում են չարագործներին նոցա Նախիջևան գալու չորրորդ օրը։

Գործ է բացուում, քննութիւն սկսուում Մագիստրատի դատաւորների, գեներալ-նահանգապետի և Տագանրոգի քաղաքապետի աստիճանաւորների և գաղտնի ոստիկանութեան մասնակցութեամբ և պարզուում է հետևեալը։ Ռոստովի վաճառական Գոլուբինցեան իւր օգնական ռոստովցի երկու եղբայր Պոնոմարեւների հետ միասին գալիս է Նախիջևան, վարձում է Զեռնեանի տունը, ուր և, առանց նորան յայտնելու իւր նպատակը, տեղափոխում է իւր նոր բնակարանը։ Նախիջևանում նա գտնում է մի Մահտեսեան ազգանունով մարդ, որ հմուտ փականագործ է լինում, հրաւիրում է նորան մասնակից լինել իւր ձեռնարկած գործին և սկսում է սուտ դրամ կտրել։ Մահտեսեանը հրաւիրուում է նորա համար, որ նա իբրև հմուտ փականագործ կատարելագործէ մեքենան և վերացնէ այն պակասութիւնը, որ կասկած էր յարուցանում. կեղծ թղթադրամների գրերի մէջ երկու տառ միմեանցից աւելի հեռու են լինում տպուած, քան թէ էր իսկականի վերայ։ Մեքենաներն արդէն բանեցրած են լինում և նման Կրուտիկովի մեքենաներին, 50 ռուբլիանոց դրամներն իւրեանց պակասութեամբ դարձեալ նման Կրուտիկովի կտրածներին, ինքը Գոլուբինցեան էլ - ազգական Կրուտիկովին։ Հաստատուում է, որ այդ մեքենաները Կրուտիկովինն են և Գոլուբինցեան ու Պոնոմարեւներն էլ—նորա գործի շա-

ունակողները։ Գործի քննութեան այս հետևանքից երևում է, որ եթէ կեղծ դրամ կտրելու տեղը լինում է Նախիջևանը և մասնակցողներից մէկն էլ հայ, գլխաւոր գործիչները, սակայն, գործի բուն տէրերը լինում են ռոստովցի, ուստի և մենք չենք հասկանում, թէ ինչու այդ դէպքում կեղծ դրամ կտրելու չար համբաւը պէտք է կպչէր Նախիջևանին և ոչ թէ Ռոստովին։

Մագիստրատի փակուելը, Հայերի Իրեանց արտօնութիւններից զրկուելը և Նախիջևանի անկումը զարմանալի զուգադիպութեամբ հանդիպում են միմեանց։ Շատերն 'ի նկատի առնելով այդ զուգադիպութիւնը, կարծում են, թէ արտօնութիւնները մեծ նշանակութիւն են ունեցել Նախիջևանցւոց համար, նոցա օգնութեամբ է եղել, որ հայերը կարողացել են ծաղկեցնել Իրեանց քաղաքը և բարեկեցիկ դրութեան հասնել, հէնց որ նոքա դադարել են, վերջացել են, Հայերն էլ թուլացել են, քաղաքն էլ օրըստօրէ աղքատացել ու ընկել է (7)։

---

7) Անտեղի չենք համարում դնել այստեղ հանգուցեալ Ս. Նազարեանի կարծիքը Նախիջևանցոց արտօնութիւնների մասին, որ մենք գտնում ենք նորա նամակներից մէկում։ «Ձեր քաղաքի և Ռոստովի միաւորութեան մասին, գրում է հանգուցեալն այդ նամակում իւր բարեկամ Գրիգոր Սալտիկեանին 67 թուի Հոկտեմբերի 12-ին, Դազմարա անուամբ, կարծեմ, յայտնած եմ իմ կարծիքը, որ և այժմ կը կրկնեմ, թէ այդմէ պիտի Ձեզ մեծ օգուտ յառաջանայ, որովհետև դուք Նախիջևանցիքդ Ձեր առանձնութեան մէջ, առանց լուսաւոր մարդերի հետ հաղորդակցութեան, պիտի միշտ անկեանք մնայիք, փտէիք և ամենեին բնաջինջ լինէիք. այս մի տիեզերական օրէնք է ամենայն մարդու, ամենայն մարդկային հասարակութեան համար. մանաւանդ որ Դուք Հայերդ Ձեր բոլոր մինչև այժմ եղած քաղաքային կառավարութեան կարգերով ցոյց տուած չէք ոչ մի ձգտողութիւն դէպի յառաջադիմու-



Ընդունելով այն փաստը, որ արտօնութիւններն օգնել են Հայերին առաջին անգամները ոտքի կանգնելու, մենք այնու ամենայնիւ 70 թուականից քաղաքի անկման և Մագիստրատի փակուելու զուգադիպութիւնը միանգամայն պատահական ենք համարում։ Նախ և առաջ, երբ մենք այստեղ խօսում ենք Նախիջևանի անկման մասին, հասկանում ենք միայն քաղաքի անկումը, որովհետև գիւղերը չեն ընկնում, այլ 70 թուականից յետոյ էլ շարունակում են նոքա Իրեանց բնական ճանապարհով զարգանալ և առաջ գնալ, երկ-

---

թիւն (никакого стремленія къ прогрессу, къ движенію впередъ). բայց անցած գնացած խաւար օրերի կարգերով կարելի չէ մեր օրերում գործ յառաջ տանել։ Ով որ չկամի ճանաչել իւր ժամանակը և հետևել դորա յառաջաշարժ ընթացքին, զնա կուտէ ժամանակը իբրև իւր անպիտանացած որդիքը։ Այստեղ գանգատի տեղիք չկայ, որովհետև աշխարհի և ժամանակի դատաստանը արդար է, այդ տեղ անօգուտ և երեխայական բան է ցաւելը կամ արտասուելը։ Դու գիտես, ես բաւական կեցայ Ձեր Նախիջևանում, բաւական լաւ հասկացայ Ձեր կեանքը, որ ունէի իրաւունք այսպէս խօսելու Ձեր հետ։ Այն ինչ մարդիկ են Ձեր Նախիջևանցիք. խօսքը հիւրասիրութեան վերայ չէ, այլ Ձեր հասկացողութեան վերայ։ Դուք կը ցաւիք, որ Նախիջևանցիք Ռուսերի բերանով կը վատաբանուին իբրև կռուարար, անմիաբան, անխաղաղ և անհանգիստ մարդիկ։ Ռուսաց դատողութիւնը շատ արդար և հիմնաւոր է. ուրեմն պիտոյ էր միայն նորա վերայ ցաւել, որ Նախիջևանցիք այդպիսի մարդիկ էին և այդպէս իրեանց հասարակութեան տունը աւեր ու անապատ դարձուցին։ Ես չգիտեմ ինչ գովելի բան կը տեսանէ Ռուսը Հայերի մէջ առհասարակ, և այդ գովելի բանը կը դատապարտէ. բայց դատապարտելին արժանի է դատապարտութեան և ոչ թէ գովասանութեան։ Բայց մի մարդ, մի ժողովուրդ ունենայ վատթար բարք և պահանջէ իւր ընկերէն դորան գովասանութիւն — այդ այժմեան օրերի խելքից դուրս բան է»։

ղորդ, անկումն ասելով, հասկանում ենք քաղաքի միայն նիւթականապէս ընկնիլը, աղքատանալը, որովհետև քաղաքի բարոյական և մտաւոր զարգացումը նորա արտօնութիւններ ունեցած ժամանակն էլ շատ բարձր աստիճանի վերայ կանգնած չէ եղել։ Մեր կարծիքով Նախիջևանի նիւթականապէս ընկնիլը, աղքատանալը, ոչ մի կապ չունի նորա արտօնութիւնների հետ։ Նախիջևանը նիւթականապէս պէտք է ընկնէր, եթէ մինչև անգամ նա պահպանած ևս լինէր իւր առաջուայ դրութիւնը, իւր արտօնութիւնները։ Նախիջևանի նիւթականապէս ընկնելու գլխաւոր պատճառները պէտք է որոնել ոչ թէ նորա իւր ունեցած արտօնութիւններից զրկուելու մէջ, այլ այն աննպաստ հանգամանքների և պայմանների մէջ, որոնք վաթսունական թուականներից սկսած շրջապատում էին նորան։ Նա այդ ժամանակներն արդէն համարեա թէ կորցրել էր իւր Ղռիմից բերած արհեստները և անՀնատուր էր եղել միայն վաճառականական գործերի, իսկ քաղաքի վաճառականութիւնը լաւ նաւահանգստի բացակայութեան, երկաթուղու գլխաւոր կայարանի, մաքսատան, տէրութեան զանազան հաստատութիւնների և ցորենավաճառութեան արտասահմանեան գրասենեակների շրջակայ քաղաքներում շինուելու ու հաստատուելու պատճառով անցել էր շրջակայ քաղաքներին և գլխաւորապէս Ռոստովին։ Նախիջևանցիք, որոնց նիւթական բարեկեցիկ դրութիւնը կախեալ էր նոցա վաճառականական գործերից յայտնի բան է, չէին կարող անտարբեր մնալ դէպի քաղաքում և նորա շրջակայքում կատարուած այդ փոփոխութիւնը. բնական է, որ նոքա տեղափոխուէին այն տեղերը, որտեղ տեղափոխուել էր վաճառականութիւնը, որտեղ կենտրոնացել էր նոցա առևտրական գործունէութիւնը։ Եւ հէնց այդպէս էլ լինում է։ Վաթսնական թուականներից սկսում է մի գաղթականութեան հոսանք Նախիջևանից դէպի շրջակայ քաղաքներն ու գիւղերը, որից և առաջ է գալիս այն հանգամանքը, որ մի կողմից քաղաքը զրկուում է իւր հայ բնակիչներից, միւս կողմից նա բոլորովին դադարում է առևտրական կենտրոն լինելուց, առևտրական կենտրոն, որ նորա առաջուայ նիւթական ծաղկեալ դրութեան գլխաւոր պատճառն էր։

Բացի այս մասնաւոր պատճառներից, որոնք նըպաստում են քաղաքի նիւթականապէս աղքատանալու և ընկնելու գործին, Նախիջևանի գաղթականութեան վերայ ներգործում է և այն ընդհանուր աւերիչ օրէնքը, որ միշտ ներգործել է Հայոց բոլոր գաղթականութիւնների վերայ։ Մի ընդհանուր պատմական ճշմարտութիւն է, որ հայ գաղթականներն ուր որ գնացել են, առաջին ժամանակները միշտ յաջողութիւն են ունեցել, շուտով ծաղկել, բարգաւաճել են, իսկ յետոյ կամաց-կամաց թուլացել, ընկել են։ Անկասկած այդ դէպքում ուժգին կերպով ազդում է գաղթականների վերայ նոցա նոր բնակութեան տեղերի բնութիւնը՝ ջուրը, կլիման և կեանքի փոփոխութիւններն ու նոր պայմանները։ Գաղթականների առաջին սերունդը հզօր իւր հայրենիքից բերած տոկունութեամբ, աչքաբացութեամբ և ճարպիկութեամբ, կարողանում է իւր նոր բնակութեան տեղում ևս յաղթել ամեն տեսակ արգելքների և մի յայտնի աստիճանի բարօրութեան հասնել, իսկ յետագայ սերունդները մեծանալով ու սնուելով նոր կեանքի պայմանների մէջ, համեմատաբար աւելի տպահով կեանք ունենալով, կամաց-կամաց փափկանում, մեղկանում և կորցնում են իւրեանց հայրերի բնածին հայկական լաւ յատկութիւնները. այլասերութեան և սերհատութեան օրէնքների ներգործութիւնն իւր բո-

լոր կորստաբեր հետևանքներով շատ շուտով է երևան գալիս հայ գաղթականների մէջ [8]։

ТИФЛИССКАГО СОБРАНІЯ БИБЛІОТЕКА

[8]) Քաղաքի ընկնելուն ոչ սակաւ նպաստում են և այն մշտական խռովութիւնները, երկպառակութիւնները և կուսակցական կռիւները, որ ի սկզբանէ անտի մինչև մեր օրերը տեղի են ունենում քաղաքի հայ հասարակութեան մէջ։ Անցեալ դարի վերջերում, երբ դեռ նոր էր միայն հիմնարկուել քաղաքը, հայ հասարակութիւնը պառակտում են «Սբբ-բազանական և Աբրահամեան» կոչուած կուսակցութիւնների կռիւները, քառասնական և չիանական թուականներին— «Խալիբեան և Հայրապետեան» կռիւները և մեր օրերում— «Բալաբանեան և Հակաբալաբանեան» անընդհատ մրցողութիւնները։



# ՆՈՐ ՆԱԽԻՋԵՒԱՆՅԻՈՅ ԿԱՅՍԵՐԱԶՆՈՐՀ ՀՐՈՎԱՐՏԱԿԸ ԵՒ ՆՈՅՆ ԴԱՏԱՍՏԱՆԱԳԻՐՔԸ

*(Պատմական պատկերները)*

## Ա.

Ինչ Նախիջևանի հիմնադիր Յովսէփ արքեպիսկոպոս Արղութեանն իւր բոլոր գործողութիւնների մէջ թէ քաղաքի շինութեան և թէ կառավարութեան գործերում ղեկավարում է երկու գլխաւոր սկզբունքով։ Նախ, նա աշխատում է ընտելացնել ժողովրդին այն նոր կարգ ու կանոնին, այն նոր պայմաններին, որոնց մէջ նա ստիպուած էր ապրել, և այն իրաւունքներին և արտօնեալ դրութեանը, որ տուել էր նորան Ռուսաց տէրութիւնը, երկրորդ, նա ամեն ձեռքից եկած միջոցներով ճգնում է ամուր կապերով կապել նորան Մայր-Աթոռի հետ, սէր և համակրութիւն ներշնչել նորա մէջ դէպի Ս. Լուսաւորչի Աթոռակալը։ Առաջին դէպքում նորան իբրև առաջնորդի ղեկավարում է կայսերաշնորհ հրովարտակը, որի մէջ յիշուած էին գաղթականներին շնորհուած իրաւունքներն ու արտօնութիւնները, երկրորդ դէպքում նորան առաջնորդում են դարձեալ նոյն հրովարտակը, որի զօրութեամբ գաղթականները դրուում էին Այրարատեան Մայր Աթոռի իրաւասութեան ներքոյ, իւր եպիսկոպոսական ուխտը, որ պարտականութիւն էր դնում նորա վերայ իբրև Ս. Էջմիածնի միաբանի ամեն տեղ պաշտպանել Ս. Աթոռի շահերը և, վերջապէս, այն ընդհանուր ազգային կացութեան շաղկապը, որ ձգտում էին պահպանել

ազգի մէջ ինքն երջանկայիշատակ Սիմէօն կաթուղի-
կոսը և նորա բոլոր ձեռնասուն աշակերտները։

Նախիջևանցոց արտօնութիւնների հրովարտակը
շնորհուած է գաղթականներին նոցա 1778 թուի Յու-
լիսի 16 ին Բաղչիսարայից ուղարկած խնդիրքի հիման
վերայ և գրուած է Պրուսայեցի Պետրոս Մարկոսեան
վարդապետի անունով իբրև նոցա հոգևոր առաջնորդի
և ներկայացուցչի։ Նորա մէջ արտայայտուած է այն
ձգտումը, որով 'ի սկզբանէ անտի առաջնորդուել է
Ռուսաց Տէրութիւնը Հայերի հետ ունեցած յարաբե-
րութիւնների ժամանակ—ամեն տեսակ արտօնութիւն-
ներ շնորհելով, գրաւել Հայերի համակրութիւնը և
գաղթեցնել նոցա Ռուսաստանի սահմանները։ Այդ ձգ-
տումը, որ մօտ անցեալում Ռուսաց տէրութիւնն երկու
գլխաւոր նպատակի էր հասցրել՝ նախ, թուլացրել էր
թշնամի մահմեդական տէրութիւնները, խլելով նոցա-
նից նոցա երկրի աշխատաւոր ոյժը, և երկրորդ, ձեռք
էր բերել մի խաղաղ, աշխարհաշէն, կուլտուրական ժո-
ղովուրդ և նոցա միջոցով մարդաբնակ անելով տէրու-
թեան ամայի տեղերը, շէնացրել, ծաղկեցրել էր երկիրը
առևտրով, զանազան արդիւնաբերութիւններով ընդհան-
րապէս և մասնաւորապէս այգեգործութեամբ և շերա-
մապահութեամբ, այս անգամ Նախիջևանցիների վերա-
բերութեամբ ևս ապարդիւն չի մնում։ Ճիշդ է, նոցա,
ինչպէս Հաշտարխանցւոց, Ղզլարցւոց և Մոզդոկցւոց,
չի յաջողում Դօնի ափում ծաղկեցնել այգեգործութիւնն
ու շերամապահութիւնը, որոնց մասին ակնարկւում է
հրովարտակում, բայց առևտրի և միւս արդիւնաբերու-
թիւնների կողմից նոքա բոլորովին արդարացնում են
տէրութեան նոցա վերայ դրած յոյսերը։ Այգեգործու-
թեան և շերամապահութեան գործի անյաջողութիւնն
էլ չ'պէտք է վերագրել գաղթականների ծուլութեան,
տգիտութեան, կամ մի որ և իցէ այլ այդպիսի յատկու-
թեան, այլ Դօնի երկրի կլիմայական պայմաններին և
հողի յատկութեան։ Նոքա գործ են դնում ամեն տե-
սակ միջոցներ, որ այդ կողմից ևս արդարացնեն յոյսե-
րը։ Նոքա իսկոյն գետափում փոքրիկ այգիներ ձգելու
փորձեր են անում, կամաւոր պարտականութիւն են



յանձն առնում իւրեանց տների բակերում թթենի տընկել և քաղաքից դուրս առանձին հողաբաժիններ սահմանելով, տգարակներ են շինում, ընդարձակ տարածութեամբ թթենու պարտէզներ են տնկում, բայց ոչ մի կողմից նոցա աշխատանքը յաջողութեամբ չի պսակւում։ Թթենիները թէև արմատ են բռնում և մեծանում, բայց նոքա, նախ, խիստ շուտ ցրտահար են լինում և չորանում, երկրորդ, խիստ մանր տերևներ են արձակում, որով և բաւականին կեր չեն կարողանում մատակարարել շերամի որդերին։ Իսկ այգիները համարեա թէ գլուխ չեն գալիս. գլուխ եկածներն էլ այնպիսի թթու և անհամ կութ են տալիս, որ չեն արժենում այն մեծ աշխատանքին և նիւթական զոհողութիւններին, որ գործ էին դրւում նոցա վերայ։

Հրովարտակը բաղկացած է երկու մասից՝ ընդհանուր դրութիւնից, որի մէջ արտայայտւում է երջանկայիշատակ Եկատերինէ կայսերուհու վեհանձն ցանկութիւնը և կամքը ազատելու Ղրիմի Հայերին թաթար մահմեդականների բռնութիւնից, վերաբնակեցնելու նոցա Ռուսաստանում և տալու նոցա այն խաղաղութիւնն ու ապահովութիւնը, որ վայելում էին Ռուսիաբնակները, և արտօնութեան մասից, որի մէջ յիշւում ու շեշտւում են այն բոլոր արտաքոյ կարգի արտօնութիւնները, որ պէտք է վայելէին գաղթականները Ռուսաստանում։

Հրովարտակի բնագիրը գրուած է երեք մեծածաւալ մագաղաթեայ թերթի վերայ. թերթերը մէջտեղից բաժանուած են երկու մասի՝ ձախ կողմը գրուած է ռուսերէն բնագիրը, աջ կողմը—հայերէն թարգմանութիւնը։ Մագաղաթի եզերքը, գրուածքի չորս կողմում զարդարուած է զանազան խորհրդաւոր, գեղեցիկ պատկերներով, գոյնզգոյն զարդերով և նկարներով, որոնք համապատասխանում են բնագրի բովանդակութեան։ Առաջին երեսի վերայ, որտեղ ամփոփուած է Ռուսաց կայսրների ընդարձակ տիտղոսը, նկարուած է իւր՝ Եկատերինէի պատկերը. նորան շրջապատում են մի քանի գեղեցիկ, հրեշտականման կանայք, աղջիկներ և մանուկներ, որոնցից մէկը մի ձեռքով գրկել է խաչը,

միւսով կայսրուհու գլխին մի սկիհաձև բաժակ է բռնել, իսկ միւսները աչքերը յառած նայում են դէպի կայսրուհին, կարծես ողորմութիւն են խնդրում նորանից։ Երկրորդ երեսի վերայ, որտեղ խօսւում է Պետրոս Մարկոսեան վարդապետի և Արարատեան Մայր-Աթոռի մասին, նկարուած են կաթուղիկոսական խոյր, երկգլխանի և մի գլխանի գաւազաններ։ Երկրորդ երեսի վերայ, որտեղ յիշւում է, թէ ինչ գործերով կարող են պարապել գաղթականները, նկարուած են ցորենի հասկեր, նաւակ և ձկնորսական գործիքներ և վերջապէս, չորրորդ երեսի վերայ, որտեղ խօսք է լինում այն պաշտպանութեան մասին, որ պէտք է գտնեն գաղթականները կայսերական կառավարութիւնից, նկարուած են սուր, վահան, հրացան և այլն [1]։

Այդ մագաղաթեայ նուրբ ճաշակով զարդարուած ու գրուած թերթերի ամեն մի երեսը ծածկուած է նոսր, թափանցիկ մետաքսեայ գործուածքով, իսկ բոլորը միասին ամփոփուած է մի շքեղ կազմի մէջ, որի մի երեսին թաւշանման տեղի վերայ ճառագայթների ու ճաճանչների մէջ ոսկեթել և արծաթաթել հիւսկէն նկարներով ասղնագործած է Ռուսաց կայսերութեան նշանները՝ թագ, գայիսոն և գունտ, միւս երեսի վերայ դարձեալ ճառագայթների և ճաճանչների մէջ ձևացրած է տերութեան զինանշանը։ Կազմից կախուած է մեծ արքունի կնիքը, որ զարդարուած է մի զոյգ արծաթաթել և ոսկեթել ծոպերով և ամփոփուած է մի կնքաձև պղնձեայ պահարանի մէջ [2]։

Հրովարտակի հայկական թարգմանութիւնը հետևեալ կերպով է ներկայացնում մեզ գաղթականներին շնորհած արտօնութիւնները։ «Հաւատարմին մերոյ Մարկոսեան Պետրոս վարդապետի ամից հասարակութեանց Խրիմոյ քրիստոնէիցն Հայոց գաւանութեամբ ամենից կոչմանցն առհասարակ և իւրաքանչիւրոց յատուկ անձանցն Մեր Կայսերական Ողորմածագունեղ Բանն.

Առհասարակ կամեցողութեամբ առաջադրութիւն ձեր՝ յաջողեսցէ աջն Բարձրելոյն Մեք վերահասու եղաք 'ի ձէնջ առաքեցեալ առ Մեզ 'ի Բաղչասարայոյ անցեալ յօժամի 16-րդ յուլիսի ամսոյն հասարակութեամբ և յօժարակամ հիմնաւորեալ խնդրոյն՝ սակս ազատութեան ձեր ամենեցուն 'ի սպառնալի լծոյ և տառապանացն՝ ընդունմամբ 'ի յաւիտենական բնակութիւն 'ի կայսերութեանս ամենայն Ռուսաց, շնորհելով հրամայեմք Մեք ոչ միայն ընկալնուլ զձեզ ամբն ենթ ամենաողորմածագունեղի հովանաւորութեան Մերոյ և որպէս զսիրելագունեղ զաւակք հանգստացուցանել 'ի ներքոյ նորին, առաջադրել զկեանս այնքան բարեկենցաղս՝ որքան ցանկութիւն մահկանացուաց, և անդադար ջանացողութիւն Մեր առ նոյնն հասուցանել կարէ։ Հետևելով սորին շնորհեմք ձեզ արդիւնաւորիլ 'ի տերութեան Մերում ոչ միայն այնոքիւք ամենիւք իրաւամբք և առաւելութեամբք որպիսեօք ամենայն ժողովուրդք Մեր ի Մէնջ և ի նախնեաց Մերոց ի վաղնջուց ժամանակաց վայելեն, այլ և բաց ի յայսցանէ հրամայեմք Մեք.

Նախ։ Առ ի ներկայական անդրաբնակութեան ձերոյ ի գաւառին ազովոյ, Մերիւք ծախիւք բերել ի Խրիմոյ զայն ամենայն ինչս ձեր զորս միայն բերելն կարելի իցէ։ որ և կարգաւորեցեալ ի Մէնջ դրամոցն՝ արդէն կատարումն եղեալ է.

---

[1]) Հրովարտակի նկարների մեկնութիւնը կարելի է գտնել «Թարգմանութիւն Պրիվէլէկացն Հայոց» կոչուած գրքում, որ տպագրուած է Հաշտարխանում 1800 թուին Յովսէփ արքեպիսկոպոսի հրամանով։ Այդ գրքի լիակատար վերնագիրն է՝ «Թարգմանութիւն Պրիվէլէկացն Հայոց։ Բնակեցելոցն ի զանազան գաւառս մեծին Ռուսաստանու, շնորհեցելոցն Աստուածարար խնամովք՝ ի մեծէն ի կաճառս Օծելոց՝ յԱստուածափառ Կայսերէն և Ինքնակալէն ամենայն Ռուսաց. Տպագրեցեալ հրամանաւ՝ բազմարդիւն բարեացապարտ երախտաւորութեամբ ընկալնողի պարգևացս՝ Հոգէբնոր Հայրապետի Տեառն Տեառն Յովսէփայ Սրբազնակատար Կաթուղիկոսի Սրբոյ դերագահ Աթոռոյն Էջմիածնայ, և ծայրագոյն Պատրիարգի ամենայն Հայոց։ Յամի Տեառն 1800, Հոկտեմբերի 29. ի Հաշտարխանու։

[2]) Այս շքեղ հրովարտակն այժմ պահպանւում է Նոր Նախիջևանի քաղաքային վարչութեան դիւանում։ Դոյն հրովարտակի մեծադիր պատկերը հին ժամանակներից ընդօրինակուած է իւր բոլոր զարդերով, շրջանակի մէջ է առնուած և կախուած քաղաքային խորհրդարանի դահլիճում։

Երկրորդ։ Վասն յարմարագոյն բնակութեան ձերոյ ի գաւառին ազօվոյ զատեալ այլոց բնակչացն՝ տալ ձեզ ի շրջանակին ամրոցի սրբոյն դիմիտրեայ ռօստովսկուն, ըստ սահմանակարգութեան դօնոյ զօրացն՝ Թողլով ի տեղեացն վասն խոտաճարակութեան ամրոցականացն երիս հազար դսեաթինս, և վասն բնակչացն չորրորդ մասրն ձկնորսութեան դօնոյ գետոյն, բաց յայսցանէ որքան նոյն գետովն տեղիք գոն ի նոյն շրջանակոջն ի վերուստ բերանոյ գետոյն տեմերնիկայ, և եթէ անբաւական լիցի տեղիսն վասն բնակութեան ձերոյ և ի շրջանակի ամրոցին ազօվոյ ուր յանդիման բնակութեանց ձերոց ձկնորսութիւնքս ամենառողորմածաբար շնորհեմք ձեզ յաւիտենականաբար ի յարդիւնս և ի շահաւէտութիւնս ամենից հասարակութեանց ձերոց թարց ամենայնի պահանջողութեան զհարկս ի գանձարանս Մեր.

Երրորդ։ Յետ յատկացուցանելոյ զզանազանութիւն ժողովրդական կացութեան ամենառողորմածաբար տամք ազատութիւն ամենից արքայական հարկաց և սպասաւորութեանց որպիսի անուամբ և իցեն մինչև ի տասն տարի։ այլ ի անցանիլ նոյնոյ ժամանակին պարտաւորին վճարել Մերոյս գանձարանին իւրաքանչիւր տարւոջ՝ վաճառականքն ի յընչից իւրեանց հարիւրին մին, արհեստաւորք և մեշչանիք իւրաքանչիւր տանց երկու ռուբլի, իսկ գեղական հողագործք՝ ոչ ի անձանց այլ ի գետնոյ համարելով իւրաքանչիւրոջն երեսուն դեսեթին, պարաւանդին տալ իւրաքանչիւր դեսեթինից ի տարւոջն հինգ կոպէյկ, չքաւոր գիւղականին օգնեցեալք լինելոց են ի գանձարանէ Մերմէ ոչ միայն բաւականացուցմամբ առաջին տարւոջ՝ այլ և վասն երկրագործութեան զանազան սերմամբ ցորենեաց, անառնովք և ամենիւք որք առ տնաշինութիւնս պստականին, որք և պարտաւորին առնել զվճարումն զամենայն զայնոսիկ ի գանձարանս՝ զկնի տասն ամաց։ և վասն շինելոյ տանց նոցին՝ փայտ և այլ նիւթքն տացի ի գանձարանէ թարց պահանջելոյ զգինս նոցին։ Հարուստքն ի նոցանէ զնոցա տրեցեալ տեղւոջն՝ կարեն շինել տունք, խանութք, ամբարանք, ֆաբրիկք, և այլ ամենայն զոր ինչ ինքեանք կամեցեն՝ յատուկ և սեպհական ծախիւք իւրեանց, և եղիցին ամենեքեան հասարակօրէն միշտ ազատք յամենից պօստօյեանց՝ բաց ի յայնցանէ պատահմանց, մինչ պատերազմական զինուորք առ բնակութեամբ ձերով անցանիցեն։ յաւիտեան եղիցին ազատք ի տալոյ զպատերազմական զինուորս, բայց եթէ ոք ըստ ինքեան ծառայել Մեզ յօժարիցէ.

Չորրորդ։ Ամենառողորմածաբար յանձնեմք Մարկոսեան Պետրոս վարդապետին մինչև ցմահ նորին զհովուութիւն ամենից այսոց ելանողացն ընդ նմայ ի Խրիմոյ հայոց. և հրամայեմք նոցա շինել զեկեղեցիս և զանգակատունս ըստ ծիսի և օրինաց նոցին ազատօրէն գործ ածել զամենայն եկեղեցական պաշտամունս և հոգևորական արարողութիւնս, և որպէս յիշեալ վարդապետն՝ նոյնպէս և հայոց քահանայքն եղիցին միայն ընդ իշխանութեամբ հայոց հայրապետին՝ որ ի արարատեան հայրապետական ամրոցն իցէ։

Հինգերորդ։ Զկնի բնակութեան ձերոյ ի յատուկ քաղաքոջ յանուանեցեալ Նախիջևան ի կողմն պօլուդենկին՝ տալով վասն խոտաճարակութեան նոյնոյ քաղաքին երկոտասան հազար դեսեթինս գետնոյ, հրամայեմք հաստատել անդ մագիստրատ, և անդ ըստ ձերոյ օրինաց և սովորութեանց վարել դատաստանս և զիրաւունս, ընտրելով ի ձէնջ զդատաւորս վիճակաձգութեամբ, որք և արդիւնաւորեցեալք լիցին աստիճանօք և վարձիւք ըստ կարգադրութեան ազօվոյ գաւառին, և եղիցին ենթ իշխանութեան նամէստնիկական կառավարութեան։ ի քաղաքոջ և ի գիւղօրայս սակս պահպանութեան յամենայն հարկաւոր պատահմանց՝ կարգեսցի յատուկ անձինս ի ռուսաց, որք և ոչ ունիցին մասնակցութիւն դատաստանական գործոց սոյն բնակչացն՝ այլ եղիցին միայն պահպանիչք և այցելուք նոցին։ Դարձեալ՝ յետ մտանելոյ իւրաքանչիւրոց և ընտրելոյ վասն ինքեանց զորպիսի և իցէ ցեղ կացութիւնս ի տերութեանս։ այսպիսեացն շնորհեմք արդիւնաւորել ի յաւիտեան մշտնջենաբար յետագայիւք իւրեանց այնոքիւք ամենայնք՝ զորս ըստ հասարակ կանոնադրութեան Մերոյ իւրաքանչիւր ցեղ բնակչաց տերութեանս

արդիւնաւորեն, որպիսիք են. ազատօրէն գործածումն առաջոյ և վաճառաց՝ որպէս արտաքոյ նոյնպէս և ի միջի տէրութեան Մերոյ, և վասն առաւել շահաւէտութեան ի նոյնս թոյլատրեմք ձեզ ձերով ծախիւք շինել զծովային նաւս վաճառականական, յօրինել զպիտանի և արդիւնաւորել ֆաբրիկք, զաւօդք, մրգային այգիք որ ընդ աճելն նոյնոց ամենայն կերպ գինի ի խաղողոյ շինել, ներ բնակութեան ձերոյ մանր մանր չափիւք և այլ ուրեք ի մէջ յերկրին ռուսաց տանել և բօչկով վաճառելն կարէք։ Ֆրակնսուզի արաղ շինեսցէ իւրաքանչիւր ոք, ոակայն ոչ տարցէ ի մէջ երկրեացս ռուսաց։ միով բանիւ ամենայն արհեստս բազմացուցանել զայն ամենայն ըստ յօժարութեան և կարողութեան իւրաքանչիւրոց, և վայելել ամենիւք նոքօք ենթ ամենաողորմածագունեղի Մերոյ հովանաւորութեան և պահպանութեան օրինաց արդիւնաւորել։

Զայս ամենայն մանաւանդ ակնութիւնս շնորհելով Մեք հանդիսօրէն ամենայն հասարակութեան և յեսուզայիցն ի յաւիտեանս ժամանակաց՝ վասն առաւել հաստատութեան ստորագրեցաք ձեռօք Մերօք և թագաւորական կնքով ամրացուցանել հրամայեցաք. տուեալ եղև ի արքայանիստ քաղաքոյ Մերում Սանկթ Պետերբուրգ յամին ի ծննդենէ Քրիստոսի հազար եօթն հարիւր եօթանասուն ինն Նոյեմբերի 14=և ի թագաւորութենէ Մերոյ տասնութն յամի» [3]։

[3]) Այդ հրովարտակում յիշուած արտօնութիւնները լեռագալում հաստատուել է և Եկատերինէ կայսերուհու բարեյիշատակ յաջորդ Պօղոս կայսրից։ Աւելորդ չենք համարում դնել այստեղ այդ մասին ծերակուտին տուած բարձրագոյն հրամանի պատճէնը. «Указъ Нашему Сенату. Права и преимущества Нахичеванскому Армянскому обществу, Нашею Любезнѣйшею Родительницею, блаженной памяти Императрицею Екатериною II., въ 1779 году дарованныя и въ грамотѣ изображенныя Всемилостивѣйше всему Нахичеванскому Армянскому обществу на вѣчныя времена утверждаемъ. Данъ 4 Генваря 1799 года»։ Նոյն հրովարտակը լեռալ 1802 թ. Նախիջևանի հասարակութեան խնդիրքով վերահաստատում է և Աղէքսանդր Առաջին կայսրը առանձին հրովարտակով, որի հայկական թարգմանութեան պատճէնը աւելորդ



Հրովարտակի այս թարգմանութիւնը թէև ճիշտ չէ ոչ լեզուի, ոչ բովանդակութեան ոչ էլ մտքի կողմից, թէև նա լիքն է քերականական և կէտադրական սխալներով և առհասարակ գրաբառ լեզուին անտեղեակ մարդու գործ է, բայց գրուած է շատ գեղեցիկ ձեռքով. երևում է, որ թարգմանիչը կամ արտագրողը գեղեցիկ ճաշակի տէր է եղել և հմուտ հայկական հին գրչագրութեան արուեստին։ Նա գրուած է մաքուր, խոշոր բոլորագրով և ծաղկեայ գլխագրերով. թարգմանիչը, ինչպէս երևում է, աշխատել է բառացի թարգմանութիւն անել և հենց այդ պատճառով, գուցէ, բազմիցս մեղանչել է թէ ոճի հարթութեան և թէ

չենք համարում դնել այստեղ։ «Նովոբասիսկու զուպեռնի քաղաքէն Նախիջևանու, Հայոց Հասարակութիւնն ի դիմաց իւրեանց առաքեալ էին զփթս զԿարապետն Սահակեան և Մկրտիչն Նազրովեան, որովք և մատուցին Մեզ ամենախոնարհական իւրեանց խնդիր՝ վասն վերահաստատելոյ զիրաւունս նոցա և զառաւելութիւնս՝ շնորհեցեալսն ի յերանելի հանգուցելոց Մեծի կայսերաց նախնեաց Մերոց։ Եւ մեք Ամենաողորմարար զիջեալ ի սոյն խնդիր և ի նչան մշտագոյն բարեհաճութեան Մերոց, որ առ անխախտ հաւատարմութիւն և ջերմեռանդութիւն Նախիջևանու Հայոց հասարակութեանն, ամենայն իրաւունս՝ և զառաւելութիւնս՝ նոցա յատկացուցեալս, —և մինչև ցայժմ անվտանգ կայուն պահեցեալսն, որովհետև համեմատաք են ընդհանուր թագաւորական օրինաց բարոք համարեցաք հաստատել և մշտապէս արժանահաւատ առնել, որպէս և սովաւ հաստատեմք և հաւատարիմս առնեմք ըստ բոլորի զօրութեան իւրեանց, և թարց ուրուք ձեռնամխութեան։ Որոց ի հաստատութիւն, զայս մեր վերահաստատեալ շնորհեցեալ զրամատս՝ սեպհական ձեռամբ ստորագրեցաք, և թագաւորական կնքով ամրացուցանել հրամայեցաք։ Տրեցաւ ի Սանկտպետերբուրգ ի հազար ութն հարիւր երկրորդ ամի և ի Դեկտեմբերի քսան և մէկ երրորդ աւուր։ Եւ թագաւորութեան Մերոյ յերկրորդ ամի»։ Այդ հրովարտակներն առաջին հետ միասին այժմ պահւում են քաղաքի դիւանում։ Երկանկալիչատակ Աղէքսանդր կայսեր հրովարտակի պատճէնն էլ ընդօրինակուած, շրջանակի մէջ է առնուած և կախուած է քաղաքային խորհրդարանի դահլիճում։ Այդ ընդօրինակութեան մէջ հետաքրքրական են Կարապետ Սահակեանի և Մկրտիչ Նազրովեանի պատկերները, որոնք նկարուած են կանգնած և երկու կողմից բռնած հրովարտակը։

մտքի կանոնաւորութեան, հետևողութեան և պարզութեան դէմ։

Յովսէփ արքեպիսկոպոսի սկզբունքները, որոնցով նա ղեկավարում էր իւր գործունէութեան մէջ և որոնց մասին մենք վերը յիշեցինք, արտայայտւում են գլխաւորապէս Հայկական Մագիստրատի և Հոգևոր դատարանի մէջ, որոնք հաստատուել ու գործում էին նորա հսկողութեան տակ անմիջապէս։ Հայկական Մագիստրատը պարունակում էր իւր մէջ թէ քաղաքի և թէ գիւղերի բոլոր կառավարչական հաստատութիւնները. նա գաղթականների և՛ դատաստանատունը և՛ ոստիկանատունը և քաղաքային խորհրդարանն էր։ Հայկական Մագիստրատի դատաստանական մասը բաժանւում էր երկու առանձին մասերի՝ Հայկականի և Ռուսականի։ Հայկական դատաստանը կատարւում էր Հայոց լեզուով, Հայոց ծիսով և սովորութեամբ և կազմակերպուած էր Հայոց դատաստանագրքի հիման վերայ, իսկ Ռուսականը կատարւում էր Ռուսաց լեզուով և կազմակերպուած էր տէրութեան ընդհանուր օրէնսգրութեան հիման վերայ *)։

## Բ.

Հայկական դատաստանագիրքը մի մեծ, կապտագոյն թաւշեայ կազմով ձեռագիր մատեան է, որ գրուած է մօտաւորապէս 1749—50 թուականներին Հաշտարխանում և բերուած է Նախիջևան Յովսէփ արքեպիսկոպոսի ձեռքով։ Որ նա գրուած է Հաշտարխանում—, այդ երևում է գրքի յիշատակարանից, որ պատմում է գրքի ուրիշ հին օրինակներից դաղափարուելու և պաշտօնական անձերից ձեռագրի ճիշտ դաղափարած լինելը հաստատելու մասին։ «Շնորհիւ տն այս. Ստեփաննոս արքեպիսկոպոս և առաջնորդ ազգին Հայոց, ասուած է յիշատակարանում, որք բնակեցեալք են ի կողմն և ի բևեռն հիւսիսայնոյ ի քաղաքն Աստարխան վերա-

*) Տես մեր «Նոր Նախիջևանի Հայկական Մագիստրատը»։ Լումայ, 1901 թ., գիրք Բ., էջ 1—2.



հասու եղեալ տեսի զսոյն դատաւորական մատեանս որ և գտի զոս ըստ ամենայնի ուղիղ և թարց սղալանաց, և մանաւանդ համեմատ նախագաղափարի գրբելոյ դատաստանական մատենին, որ կարգեցեալ էր ի բարեսլաշտ կայսերն. Յուստինեանոսէ՝ որ և սակս հաւատարմութեան և հաստատութեան ստորագրեցի աստ ձեռամբ իմով և կնքեցի. Ստեփաննոս արքեպիսկոպոս [4])»։

[4]) Դատաստանագրքի այս նոր ընդօրինակութիւնը, բացի Ստեփաննոս արքեպիսկոպոսից, վաւերացրել են և աւադերէց Տէր-Եսային և Աստարխանայ կաթուղիկէ եկեղեցւոյ մեծաւոր Պատրի Ռօմուլթուսը։

Այդ վերջին հանգամանքից երևում է, որ Հաշտարխան քաղաքում այդ ժամանակները գոյութիւն է ունեցել և մի կաթոլիկ հայ համայնք, որ ժամանակի ընթացքում ձուլուել, միացել է իշխող տարրի հետ։ Այդ մասին մենք տեղեկութիւն ունինք և հ. Սուքիաս Եփրիկեանի «Բնաշխարհիկ բառարանից», որ մաս-մաս տպագրւում է «Բազմավէպի» համարներում, (Տես 1900 թուականի «Բազմավէպի» 5 թիւը, էջ 212)։

Աստրախանի մէջ կանխաւ կային, ասում է հ. Եփրիկեանը, նաև կաթուղիկէ Հայեր, որոց թիւը թէև քիչ էր, սակայն լաւ դիրք ունէին։ Դեռ 1830 ին ժամանակները իրենց թիւը կհասնէր մօտ 300-ի, և ունէին կրկին եկեղեցիներ. մին՝ վերափոխման՝ գեղեցիկ և նորաշէն, երկու զանդակատամբ։ Եկեղեցւոյս մօտ էր կրկնայարկ վանատուն մը 8 սենեակներով, և ուրիշ մերձաւոր շէնքի մը ստորին յարկի մէջ ալ կուսանէին կաթուղիկէ Հայոց մանկունք։ Միւս եկեղեցին կը գտնուէր քաղաքէն դուրս իրենց գերեզմանատան մէջ և կը կոչուէր Գաբրիէլի հրեշտակապետի։ Այժմ ցաւ ի սիրտ պէտք ենք ասել, թէ այդ հասարակութիւնն զուրկ մնալով խմբատուն և ազգասէր հովիւներէ, ժամանակի ընթացից մէջ կորսընդնելով իրենց ազգային ինքնուրոյնութիւնը, ձուլուեր և մրացեր է Ռուսաց հետ։ Ներկայապէս թէև կան մի քանի ընտանիք, սակայն աղքատին ու չնչին ապրուստով հազիւ կարող են ապրեցնել իրենց գոյութիւնը»։

Բնորոշ են հ. Սուքիասի վերջին խօսքերը։ Ի՞նչ է պատճառը, կհարցնենք մենք, որ Հաշտարխանի Հայադաւան հայ համայնքը մինչև ցայսօր էլ դեռ գոյութիւն ունի նոյն քաղաքում և պատուաւոր դիրք է բռնում բազմատարր և բազմաբոլոր քաղաքի ազգաբնակութեան մէջ, իսկ կաթոլիկները ձուլուել կորել են. չէ՞ որ Հայադաւանների հովիւները նս մի երևելի գիտնական ու ազգասէր մարդիկ չեն եղել։ Դարձեալ նոյն հին և լարատև պատճառը—կպատասխանենք մենք,

Իսկ որ նա գրուած է 1749—50 թուականներին—, այդ էլ երևում է գիրքը կնքող և ձեռագրի ճիշտ եղածը վկայող առաջնորդի Ստեփաննոս անունից։ Այդ անկասկած այն Ստեփաննոս արքեպիսկոպոսն է, որի

---

որ Հայն իւր մայրենի եկեղեցու գրկից դուրս դալուց յետոյ, այլ ևս իրեն հայ չի ճանաչում, այլ «ֆրանկ», «կաթոլիկ ազգ»։

Աւելորդ չենք համարում այստեղ մէջ բերել մեր մի համեմատաբար հասկացող հայ-կաթոլիկ տիկնոջ հետ ունեցած խօսակցութեան բովանդակութիւնը մեզ հետաքրքրող խնդրի մասին։ Տիկինը, նախ և առաջ, չէր հաւատում, որ պապը, որին նա փաղաքշաբար «Պապուսեա» էր կոչում, կարող է հիւանդանալ և մինչև անգամ մեռնել. մեր խօսակցութիւնը ներկայ պապի հիւանդութեան ժամանակն էր,—երկրորդ, նա անդադար իւր խօսակցութեան մէջ կրկնում էր «մեր ազգը» բառերը։ Եւ երբ որ մենք հետաքրքրուեցինք և հարցրինք, թէ տիկինն ինչ է ուզում ասել, կամ ինչ է հասկանում «մեր ազգը» խօսքերից, նա զարմանալով պատասխանեց, թէ «մենք կաթոլիկներս»։

Ակներև էր, որ տիկինը հայ-կաթոլիկներին մի առանձին ազգութիւն էր համարում, և ոչ թէ նոյն իսկ Հայերը։ Այդ, ի հարկէ, այն դաստիարակութեան արդասիքն է, որ արդոյապատիւ պատերազմները, փոռները և քարեպաշտ կոյսերը տալիս են հայ աղջիկներին։ Եւ, որ զարմանալին և բնորոշն է,—երբ որ մի որևիցէ հայ-կաթոլիկ համայնք հանդամանքի բերմամբ ձուլուում է մի ուրիշ տարրի հետ, նա ձուլուում է ոչ թէ Հայադաւանների հետ, այլ անպատճառ ուրիշ ազգերի հետ։ Միաբանասէրների աշխատանքով Հայաստանում կազմակերպուած հայ-կաթոլիկ համայնքները կորան, բայց նոքա չձուլուեցան Հայադաւանների հետ, այլ մահմեդականացան։

Այս հանդամանքի վերայ դարձնում ենք «Բազմավէպի» գրախօսական ակնարկների հեղինակ Կ. Տ. Ս.-ի ուշադրութիւնը, որ գրախօսելով «Լումայ» հանդէսի 1900 թուականի Բ. գիրքը, ի միջի այլոց, մի քանի խօսք էլ մեր հացեին էր ուղղել մեր այն դատողութեան առթիւ, որ մենք արել ենք մեր «Էմին» գրուածքում Լատինաձէս Հայերի կորչելու մասին։ Նա նկատել էր «բայց այդ կորուստը, այսինքն Լատինաձէս Հայերի կորչելը, կրօնից ազդեցութիւնն է թէ պարագաներուն. և դարձեալ ինքնին քահանայապետը չէ՞ խսաիս պատուիրողը՝ որ կաթուղիկեալք պահպանեն իրենց ազգային ծէսերը։ (Տես 1900 թուականի «Բազմավէպի» 9 թիւը, էջ 430.)



ժամանակ Ռուսաստանի Հայերը մտնելով Աղուանից կաթուղիկոսի իրաւասութեան ներքոյ և ընդունելով Աղուանից կաթուղիկոսից ձեռնադրուած Ստեփաննոս եպիսկոպոսի իշխանութիւնը, 1749 թուին արքունի հրաման բերել տուին և արգելեցին Ս. Էջմիածնի նուիրակների մուտքը Ռուսաստան։

Թէև գրքի յառաջաբանի տակ գտնում է երեք մարդու ստորագրութիւն՝ Նուաստ Սարգիս դի յոհաննի, Գրիգոր դի Սաֆար Կանպանեան և Եղիազար Գրիգորեան, բայց մենք կարծում ենք, որ ձեռագիրը նոցա գրուածքը չէ, որովհետև, նախ, մատեանի ձեռագիրն ամենևին նման չէ ստորագրութիւններին, երկրորդ, ամբողջ 285 մեծագիր երեսներից բաղկացած մատեանը գրուած է մի ձեռքով։ Հաւանական չէ կարծել, որ յառաջաբանը ստորագրող երեք հոգին էլ կարողանային այնպէս միմեանց նման գրել, որ անկարելի լինէր զանազանել նոցա ձեռքերը։ Պէտք է կարծել, որ այդ երեք հոգին «գաղափարել», թարգմանել են լատիներէնից և յետոյ տուել են արտագրելու մի ուրիշ անձնաւորութեան, որ հմուտ է եղել մեր հին ձեռագրութեան արուեստին։

Դատաստանագրքի թարգմանելու հանգամանքը մանրամասնօրէն յայտնուած է յառաջաբանի մէջ, որ բռնում է չորս մեծագիր թերթ և մի երես, և գրուած է նոյն գեղեցիկ խոշոր բոլորագրով, որով գրուած է և ամբողջ մատեանը։

Գաղափարողները խօսելով ընդհանրապէս յառաջաբան գրելու կարևորութեան մասին և յայտնելով, թէ օրէնքները կարող են գրուել թագաւորներից և հանճարեղ մարդկանցից միայն ժողովրդի խնդիրքով և ցանկութեամբ, նպատակ են դնում իւրեանց գրած դատաստանագրքի վերաբերութեամբ պարզելու չորս հանգամանք։ Նախ, թէ որպիսի գրքերից են գաղափարել և

---

Մենք դորա դէմ ուրիշ բան չենք ասիլ, բացի այն, որ կրկնեցնենք մեր ազգային առածը, որ ասում է. «Գառը գէլին են պահ տուել»։ Միթէ Մխիթարեան հայրերն այդ բոլորը լրջօրէն են գրում։

որպիսի վաղնջական սովորութիւններից են հաւաքել, երկրորդ, ինչ է պատճառը, որ այդ դատաստանագիրքը ծանօթ չէ Հայերին և բոլորեքեան տեղեկութիւն չունին նորա մասին, երրորդ, դատաստանագրքի գրելու պատճառը ինչ է եղել և, չորրորդ, ինչպէս պէտք է գործածել այդ գիրքը և ում վերայ է տարածւում նորա զօրութիւնը։

Նախագաղափար Հայոց դատաստանագրքի նոքա համարում են Յուստինեանոս կայսեր կոդեքսը [5]։ Նոցա ասելով, Յուստինեանոս կայսրը Կոստանդիանոսի, Թէոդոսի, Լէոնի, Արկադեայ, Հոնորեայ, Զենոնի, Անաստասի, Մարտինեայ, Գրացիանոսի և միւս մինչև իւր ժամանակները եղած կայսրների հրատարակած հրամաններից և օրէնքներից կազմելով մի ընդհանուր դատաստանագիրք, հրամայում է նորան գործածել ոչ միայն բուն կայսերութեան սահմաններում, այլև բոլոր հպատակ երկրներում։ Ահա այդ ժամանակ Հայաստանը ևս, իբրև Բիւզանդիոնի հպատակ երկրներից մէկը, իբր թէ ստանում է դատաստանագրքից մի օրինակ և թարգմանելով նորան հայերէն, սկսում է գործածել իւր դատաստաններում երկար ժամանակ, քանի որ

[5]) Այստեղ խօսքը, յայտնի բան է, Բիւզանդիոնի օրէնսդիր կայսեր Յուստինեանոսի (527—565 թ.) և նորա կազմած կոդեքսի մասին է։ Յուստինեանոսը իւր նշանաւոր զօրավար Վելիսարիոսի միջոցով իւր իշխանութիւնը տարածելով և Արևմտեան կայսերութեան մեծ մասի վերայ, կամենում է դարերից ի վեր մշակուած, բայց այդ ժամանակները խանգարուած և վերին աստիճանի խճճուած դրութեան հասած Հռովմայեցոց օրէնքները կարգի բերել։ Ահա այդ նպատակով նա ականաւոր Տրիբոնեանի նախագահութեամբ ինը հոգուց բաղկացած մի գիտնական յանձնաժողով է կազմում և օրէնքների կարգի բերելու գործը նորան է յանձնում։ Յանձնաժողովը կատարելով կայսեր հրամանը, հրատարակում է օրէնքների չորս տեսակ հաւաքածու՝ ա.) Կոդեքս, բ.) Պանդեկտներ, գ.) Դիգեստ, դ.) Ինստիտուտներ, ե.) Նովելլներ։ Կոդեքսը, որ Հայոց դատաստանագրքի գաղափարողների կամ թարգմանիչների ասելով, Յուստինեանոսը Հայաստան է ուղարկում, պարունակում էր իւր մէջ հասարակաց իրաւունքին, տէրութեան ու կառավարութեան կազմակերպութեան վերաբերեալ բոլոր դեկրետները և հրամանները։



գոյութիւն է ունենում Հայոց իշխանութիւնն ու տէրութիւնը։ Նոքա գտնում են Յուստինեանոսի այդ կոդեքսը և շատ բան, որ չէր համապատասխանում նոցա այն ժամանակուայ կացութեան, բաց թողնելով նորա միջից, գաղափարում են իւրեանց Նոր դատաստանագիրքը. իսկ ինչ որ վերաբերում է այն վաճառականական օրէնքներին և սահմանադրութիւններին, որ չը կային կոդեքսում, բայց գտնւում են դատաստանագրքում,— նոքա այդ հաւաքում են Հայոց վաղնջական սովորութիւններից, հնացեալ սովորութիւնները օրէնք համարելով։

Հայերին դատաստանագրքի անծանօթ լինելը նոքա մեկնում են Հայոց թագաւորութեան անկմամբ և Հայերի նեղութեան մէջ և Թուրքերի ու Պարսից իշխանութեան տակ ընկնելովը։ Թուրքաց մասի Հայերը, նոցա ասելով, մոռանում են իւրեանց դատաստանագրքի գոյութեան մասին, որովհետև իրաւունք չեն ունենում իւրեանց սեփական օրէնքը գործ դնելու, այլ ստիպուած են լինում ամեն մի դէպքում վարուելու իշխանաւորների օրէնքով, իսկ Պարսից մասի Հայերը թէև բացի արեան դատաստանից, իրաւունք են ունենում իւրեանց ազգային օրէնքը բանեցնելու, բայց հետևելով Պարսիկների սովորութեան, իւրեանց դատավարութիւնը ևս կատարում են բերանացի, որից իբրև թէ և առաջ է գալիս այն հանգամանքը, որ նոքա ևս մոռանում են գրաւոր օրէնքները։ Դատաստանագրքի մոռացուելուն, բացի Թուրքաց աշխարհում և Պարսկաստանում եղած կարգ ու կանոնից և ընդունած սովորութիւնից, նպաստում է և այն ընդհանուր նեղութիւնը, որի մէջ առհասարակ ընկնում են Հայերը Հայոց թագաւորութիւնը վերջանալուց յետոյ։ Հայերի կրած նեղութիւնները օտար բռնակալների ստրկական լծի տակ այնքան բազմաթիւ և անհամբերելի են լինում, որ հազիւ-հազ նոքա կարողանում են իւրեանց կեանքը, լեզուն և կրօնքը պաշտպանել, ուր մնաց, որ նոքա շարունակէին զանազան գիտութիւններով պարապել, շարունակէին այն մտաւոր շարժումը, որ կար Հայերի մէջ Հայոց տէրութեան ժամանակ, և մանաւանդ պահպանէին

իրաւաբանական կամ դատաստանական գիտութիւնը, որ աւելի մասնագիտականին էր վերաբերում։ Հայոց դատաստանագիրքն այդպիսի հանգամանքներում բոլորովին մոռացւում է և միայն առաջնորդների ու իմաստուն մարդկանց մտքի մէջ է մի աղօտ յիշողութիւն պահպանւում նորա գոյութեան մասին։

Հայոց դատաստանագրքի նորից գաղափարելու պատճառը թարգմանիչները մեկնում են Հայերի գաղթականութեամբ։ Հայերը, ասում են նոքա, հին ժամանակներից վաճառականական գործերով երթևեկելով Ռուսաստան, կամաց-կամաց սկսում են մշտական բնակութիւն հաստատել այդ երկրում։ Պետրոս Մեծի ժամանակ 1705 թուին նոքա ստանում են իրաւունք եկեղեցի շինելու Հաշտարխան քաղաքում, որ իբրև նաւահանգիստ և առևտրական կենդրոն, միւս բոլոր տեղերից աւելի շատ հայ բնակութիւն ուներ։ Խրախուսուելով մեծ թագաւորի տուած այդ իրաւունքից, նոքա վստահանում են դիմել նորան և խնդրել, որ պաշտօնապէս թոյլ տրուի Հայերին Ռուսաստանում ազատ կերպով առևտուր անելու, բնակութիւն հաստատելու, և հրովարտակ հրատարակուի այդ մասին, որ և ստանում են 1723 թուին։ Դորանով ևս չ'բաւականանալով, նոքա ուղարկում են թագաւորի մօտ իւրեանց նշանաւոր քահանաներից մէկին՝ չելեպի յորջորջուած Տէր-Անտոն քէխվային և թոյլտուութիւն են խնդրում տնով-տեղով տեղափոխուելու Ռուսաստան և գաղութներ հաստատելու Կասպից ծովի այդ ժամանակները Ռուսաստանին պատկանած երկրներում։ Թագաւորը սիրով ընդունում է Տէր-Անտոնին և հաճութեամբ 1724 թուին հրովարտակ տալով, հրամայում է Կասպիական երկրի այդ ժամանակուայ զինուորական կառավարիչ «ժեներալ մայեոր» Կրոպոտովին ամենայն պատրաստականութեամբ ընդունել գաղթող Հայերին և բնակութեան տեղ տալ Նոցա Ս. Խաչ ամրոցի առ գետովն Սուլխու, Կարախանու, Թարքու» և միւս տեղերում, որտեղ որ նոքա կ'ցանկանան։ Այդ հրովարտակի և մանաւանդ Պետրոսի արժանաւոր յաջորդ Եկատերինէ Ալէքսէյովնի նոյն նպատակով արձակած հրովարտակների հիման վերայ



Հայերը դուրս գալով թէ իւրեանց Արարատայ բնիկ երկրից և թէ գաղթականութեան տեղերից՝ Ալանաց երկրից, արքայանիստ Շուշից, Մազանդարանից, Համադանից, Ղազվինից, Թաբրիզից և Թուրքաց երկրից, գալիս են Ռուսաստան, գաղութներ են հաստատում Հաշտարխանում, Ղզլարում և ուրիշ տեղերում և սկսում են պարապել առևտրով, հողագործութեամբ, այգեգործութեամբ, շերամապահութեամբ և արհեստներով։ Երբ որ այսպէս հայ ժողովրդի թիւը բաւականին բազմանում է Ռուսաստանում, այն ժամանակ տէրութիւնը նորան աւելի ևս դրաւելու և Ռուսաստանի հետ կապելու համար, բացի ազատ կերպով առևտուր անելու, երկրագործութեամբ և արհեստներով պարապելու, եկեղեցիներ շինելու և իւրեանց կարգով իւրեանց կրօնական պաշտամունքը համարձակապէս կատարելու իրաւունքից, 1746 թուին շնորհում է նոցա և իւրեանց ծիսով ու սովորութեամբ դատուելու արտօնութիւն, որ յետոյ աւելի ընդարձակ կերպով 1765 թուի Յունուարի 12 ին հաստատում է իւր հրովարտակով և Եկատերինէ կայսերուհին։ Ահա հէնց այդ ժամանակները Հայերը հետևելով Ռուսաց և Եւրոպացւոց օրինակին և նոյն ժամանակ 'ի նկատի առնելով, որ առանց գրաւոր օրէնքի դատաստան կարելը շատ անյարմարութիւններ ունի, ինքեանք էլ ցանկանում են Հայկական գրաւոր օրէնքներ ունենալ, և յիշում են իւրեանց մոռացուած դատաստանագրքի մասին. «Քանզի, ասուած է այդ մասին դատաստանագրքի յառաջաբանում, դատաւորն թէպէտ և կատարեալ տեղեակ իցէ օրինաց և իրաւանց, սակայն առանց դատաստանական մատենի 'ի բազումս կարէ վրիպել. վասն զի դատաստանագիրքն է ճանապարհ արքունական, որով ընթացողքն ոչ խոտորին 'ի յաջ և 'ի ահեակ և է զամբար լուսոյ որ առաջնորդէ առ վարումն ուղղութեան ուստի եթէ ոք արասցէ զիրաւունս առանց դատաստանական մատենից, նման լինի առն յիմարի որ 'ի մթին գիշերի շրջի առանց լուսոյ ճրագի»։

Նոքա թէև իւրեանց ձեռքի տակ ունենում են Հայոց դատաստանագրքից չորս ձեռագիր օրինակ, բայց նո-

ցանով չեն բաւականանում, այլ գտնում են Յուստինեանոս կայսեր բուն դատաստանագիրքը և նորանից նոր ի նորոյ գաղափարում կամ թարգմանում են հայկական դատաստանագիրքը։ Եղած գրչագիր օրինակներով չբաւականանալու պատճառը լինում է, նախ, նոցա մաշուած և թերի լինելը, երկրորդ, օրէնքների զանազան մասերի անկարգ և խառն կերպով դասաւորուած լինելը, երրորդ, նոցա մէջ աւելորդ օրէնքների գտնուելը, ինչպէս, օրինակի համար, զինուորական և երկրի կառավարութեան օրէնքները, որոնք ամենևին չէին համապատասխանում նոցա այն ժամանակուայ կացութեան, և չորրորդ, գրչագիր օրինակների լեզուի և մտքի վերին աստիճանի աղաւաղուած լինելը, որ, յայտնի բան է, առաջ էր եկել արտագրողների անհմտութիւնից։ Գաղափարողները, բացի նորանից, որ նոր ի նորոյ թարգմանում են բոլոր դատաստանագիրքը, այլ և նորա մէջ աւելացնում են և վաճառականութեան վերաբերեալ օրէնքները, որ նոքա հաւաքում են Հայոց վաղնջական սովորութիւններից և գլխաւորապէս Պարսից մասի Հայոց սովորութիւններից, որովհետև թուրքաց մասի Հայերի վաճառականական սովորութիւններն էլ մասամբ մոռացուել, մասամբ էլ սաստիկ աղաւաղուել էին։

Այս օրէնքների զօրութիւնը, նոցա ասելով, տարածուում է եղել բոլոր հայերի վերայ, որ քաղաքից և երկրից և լինէին նոքա, իսկ ինչ որ վերաբերում է այն «կտակագրերին», «բարաթներին», «սանադներին» և այլ այս տեսակ թղթերին, որոնք գրուած էին նախքան այս դատաստանագրքի գործածութեան մէջ մրցանելը, և կամ նոցա, որ ապագայում կարող են գրուել օտար երկրներում,—չպէտք է վարուել սորանով։

Մի կողմ թողնելով այն խնդիրը, թէ ինչ օրէնքներով են վարուել Հայերը Հայոց տէրութեան ժամանակ, կամ թէ մինչև նշանաւոր Մխիթար Գօշը նոքա ունեցել են արդեօք գրաւոր օրէնքներ, թէ կառավարուել են միայն սովորութեան օրէնքներով, որի լուծման համար, բացի մասնագիտական իրաւաբանական գիտութիւնից, պէտք է մեծ աշխատանք գործ դնել և



մանրակրկիտ ու երկար հետազօտութիւններ կատարել, մենք այստեղ չենք կարող մատնացոյց չանել այն հակասութիւնների և անճշտութիւնների վերայ, որոնք աչքի են ընկնում այդ յառաջաբանի մէջ։ Նախ, եթէ ճիշտ որ Յուստինեանոս կայսրն իւր կոդեքսն ուղարկել է Հայաստան և հրամայել է գործ դնել նորան Հայոց դատարաններում, Հայերն էլ կատարել են նորա հրամանը և գործ են ածել նորան մինչև իւրեանց տէրութեան վերջանալը, ապա ուրեմն պէտք է կարծել, որ այդ դատաստանագրքի օրինակներից խիստ շատ պէտք է տարածուած լինէր Հայաստանում։ Ապա ինչպէս է պատահել, որ մինչև ցայսօր այդ ձեռագիր օրինակներից ոչ մէկը մեր ձեռքը չի հասել։ Մենք դժուարանում ենք կարծել, որ ընդարձակ Հայաստանի բոլոր դատաստանատների ատեաններում եղած բազմաթիւ դատաստանագրքերը բոլորն էլ ոչնչացել ու կորել են, քանի որ պահպանուած ենք տեսնում այնպիսի ձեռագիր մատեաններ, որոնցից այնքան շատ օրինակ չպէտք է որ արտագրուած լիներ։ Երկրորդ. յառաջաբանում ուղիղ ասուած է, որ քանի Հայոց տէրութիւնը գոյութիւն է ունեցել, բոլորեքեան տեղեկութիւն են ունեցել դատաստանագրքի մասին։ Եթէ այդ այդպէս է, ապա ինչով պէտք է մեկնել այն հանգամանքը, որ Հայոց տէրութեան ժամանակ ապրած և իւրեանց հեղինակութիւնները գրած հայ պատմաբանները ոչ մի խօսք չեն ասում այն նշանաւոր փաստի մասին, որ Յուստինեանոսն ուղարկել է Հայաստան իւր կոդեքսը և հրամայել է գործածել նորան Հայոց դատարաններում։ Երրորդ, Հայոց տէրութիւնը վերջանալուց յետոյ թէև ժողովուրդը մոռանում է դատաստանագրքի գոյութեան մասին, բայց առաջնորդները և իմաստուն մարդիկ, նամանաւանդ Պարսից մասի և քրիստոնեաների երկրները երթևեկող վաճառականները, չեն մոռանում։ Հաշտարխանի Հայերը մինչև անգամ իւրեանց հետ տարած են լինում դատաստանագրքից չորս ձեռագիր օրինակ։ Եթէ այդ այդպէս է, ապա ուրեմն պէտք է որ Հայոց տէրութեան վերջացած ժամանակ ապրած և իւրեանց պատմութիւնները գրած հեղինակ-

ները չիշէին նորա մասին. ոչ ապաքէն Հայաստանի այն ժամանակուայ հանճարեղ և իմաստուն մարդիկը նոքա են եղել։ Զորրորդ, Մխիթար Գօշը, որ իւր դատաստանագրքի համար աշխատել է ամեն տեղից նիւթ ժողովել, աշխատել է մինչև իւր ժամանակը Հայաստանում եղած եկեղեցական և քաղաքական բոլոր օրէնքներն ի մի հաւաքել, կարող էր արդեօք չիմանալ և չօգտուել մի այնպիսի դատաստանագրքից, որ կայսեր հրամանով ուղարկուած էր Հայաստան և այնքան երկար ժամանակ գործ էր ածուել Հայոց ատեաններում, կարո՞ղ էր չիմանալ նորա մասին, չօգտուել նորանից Սմբատ պատմիչը, որ կազմել է Ռուբինեանց դարպասի գրաւոր օրէնքները, թարգմանելով Անտիոքի «Անսիզները» և քաղելով, թէև առանց անունը չիշելու, Մխիթարի դատաստանագրքից։ Հինգերորդ, մենք լաւ չենք ըմբռնում թարգմանիչների գործածած Յուստինեանոսի ուղարկած դատաստանագիրքը գործ է ածուում Հայոց ատեաններում, «ցորքան գոյր տէրութիւն և իշխանութիւն Հայոց մինչև ի ժամանակս ձիգս» խօսքերի իմաստը։ Եթէ Հայոց տէրութիւն ասելով, նոքա հասկանում են Հայոց անկախ իշխանութիւնը, — խսպառ սխալւում են, որովհետև Յուստինեանոս կայսրը թագաւորել է 527—565 թուականներին, իսկ Հայաստանը այդ միջոցներում և դորանից յետոյ դեռ երկար ժամանակ իւր սեփական իշխանութիւնը չի ունեցել, այլ բաժանուած է եղել առաջ Յունաց և Պարսից, յետոյ Յունաց և Արաբացւոց մասերի։ Իսկ եթէ նոքա Հայոց տէրութիւն կամ իշխանութիւն ասելով, հասկանում են միայն Հայերի տեղական ինքնավարութիւնը, այն ժամանակ նոքա Հայաստան բառն այդպէս ընդհանուր մտքով չպէտք է գործածէին, որովհետև Յուստինեանոսն իրաւունք չունէր Պարսից մասի Հայոց ատեանների համար դատաստանագիրք ուղարկել։ Վերջապէս, ինչով պէտք է մեկնել այն հանգամանքը, որ Հաշտարխանի Հայերը չիշում են իւրեանց դատաստանագրքի մասին և երբ հարկաւոր է լինում, իսկոյն նորից նորան գաղափարում են, հաստատել են տալիս տէրութեան և սկսում են գործածել իւրեանց դատարանում,



իսկ Լեհաստանի Հայերը, որոնք նոցանից շատ առաջ էին թողել իւրեանց հայրենիքը և աւելի առաջ Լեհացւոց թագաւորներից իրաւունք ստացել սեփական դատարան ունենալու, չեն օգտւում արդէն պատրաստի դատաստանագրքից, այլ քաղուածք են անում Գօշի օրէնսգրքից և առաջարկում են Լեհաց թագաւորների հաստատութեան, ընծայելով իւրեանց այդ նոր օրէնսգիրքը Հայոց Յովհաննէս—Սմբատ թագաւորին և մի ոմն անյայտ Թէոդ թագաւորի։

Իրաւաբան վարդապետ հանգուցեալ Վահան Բաստամեանցն իւր հրատարակած Մխիթար Գօշի դատաստանագրքի յառաջաբանում Հայոց մինչև Մխիթարը գրաւոր օրէնքներ ունենալու կամ չունենալու գիտական հետազօտութեան առաջին յաջող փորձն անելով և գալով այն եզրակացութեան, որ «մինչև Մխիթար Գօշը չկար Հայոց մէջ որ և իցէ աշխարհական օրէնսգիրք կամ դատաստանագիրք», ի միջի այլոց, խօսում է և Նախիջևանի դատաստանագրքի մասին և հերքում է նորա յառաջաբանում յայտնուած փաստը։ Նա ասում է, որ Նախիջևանի դատաստանագիրքն երբէք գործածուած չի եղել Հայաստանում և Յուստինեանոս կայսրը մի այդպիսի դատաստանագիրք Հայերին չի ուղարկել, այլ Նախիջևանցիք կամենալով իւրեանց դատարանում իւրեանց սովորութեամբ և ծիսով դատավարութիւն անել և վախենալով, որ եթէ տէրութեան հաստատութեան առաջարկեն մի այնպիսի դատաստանագիրք, որ Հայոցը չլինի կամ Հայաստանում գործածուած չլինի, մերժուի տէրութիւնից, դիմել են մի այնպիսի կեղծիքի, որ մի անգամ արդէն յաջող կերպով գործ էին դրել Անեցիք Լեհաստանում։ Նոքա ուղղակի թարգմանում են Յուստինեանոսի օրէնսգրքից հարկաւոր օրէնքները և աւելացնելով նոցա վերայ «մի քանի նոր յօդուածներ», առաջարկում են նոցա տէրութեան, ակնարկելով, որ այդ դատաստանագիրքը թէև Յուստինեանոսի կազմածն է, բայց իւր մէջ պարունակում է և Հայոց օրէնքներ և գործ է ածուել և Հայաստանում [6])։

[6]) Տես «Մխիթարայ Գօշի Դատաստանագիրք Հայոց» յառաջաբանութիւն՝ էջ 38—53։

Հիմնուելով յառաջաբանի մէջ գտնուած վերոյիշեալ հակասութիւնների և անճշտութիւնների վերայ, չէ կարելի չհամաձայնել Հանգուցեալ Բաստամեանի մէջ բերած դիտողութեան հետ, բայց մենք չենք հասկանում, թէ ինչու համար Հանգուցեալն ընդդէմ է այդ դատաստանագրքի Հայկական կոչուելուն և ինչու է զարմանում, որ Ռուսաց տէրութիւնը տեսնելով, որ դատաստանագիրքը քաղուած է Յուստինեանոսի օրէնքներից, դարձեալ կոչում է նորան «Հայկական դատաստանագիրք»։ Մենք կարծում ենք, որ տէրութիւնը նորան ուրիշ պէս կոչել էլ չէր կարող. նա, ճիշտ է, տեսնում էր, որ օրէնքները քաղուած են Յուստինեանոսի օրէնսգրքից, որովհետև դատաստանագրքի ճակատին ուղիղ գրուած է՝ «Դատաստանական սահմանագրութիւն բարեպաշտ կայսեր Յուստինեանոսի» [7]), բայց

[7]) Նախիջևանի դատաստանագրքի կեղծողները ասելով, որ իւրեանց դատաստանագիրքը նոյն իսկ այն օրէնսգիրքն է, որ մի ժամանակ Յուստինեանոս կայսրը ուղարկել է Հայաստան, անկասկած օգտուել են այն հանգամանքից, որ Հայաստանի Յունաց մասը Յուստինեանոսի ժամանակ կառավարուել է Հռովմայեցւոց օրէնքներով. Իսկ որ Յուստինեանոսն իւր օրէնքներն երբեմն ուղարկել է Հայաստան—, այդ երևում է այն հատուածներից, որոնք գտնուում են Հռովմայեցւոց օրէնքների մէջ և պարունակում են իւրեանց մէջ տեղեկութիւններ Հռովմայեցւոց օրէնքների Հայաստան ուղարկուելու մասին։ Այդ հատուածներում Յուստինեանոսը պատուիրելով Հայաստանի պռոկոնսուլ Ակակիոսին գործադրել Հռովմայեցւոց օրէնքները Հայաստանում, ուղղակի ասում է. «Apmeniorum regionem bene legibus gubernare volentis et nihil ab alia nostra differre republica, et administrationibus illam Romanis ornavimus. prioribus eam liberantes nominibus et figuris uti Romanorum assuevimus; sanctionesque non alias esse apudeos quam quas Romani nominant...», այսինքն «Ցանկալով Հայաստանը բարւոք օրէնքներով կառավարել, այնպէս որ նորա և մեր տէրութեան մէջ ոչ մի տարբերութիւն չլինի, մենք չնորհեցինք նորան Հռովմայեցւոց օրէնքներ, փոխեցինք



նոյն ժամանակ տեսնում էր, որ այդ օրէնքները պէտք է գործածուեն Հայոց ատեանում, տեսնում էր, որ դատաստանագրքի մէջ մի ամբողջ բաժին՝ վաճառականական օրէնքները քաղուած են ուղղակի Հայոց վաղընջական սովորութիւններից։ Այստեղ դատաստանագրքի «Հայկական» յորջորջումի մտքի տարբեր հասկացողութեան թիւրիմացութիւն կայ միայն։ Տէրութիւնը Նախիջևանի դատաստանագիրքը «Հայկական» կոչելով, հասկացել է մի օրէնքի հաւաքածու, որ Հայերը պէտք է գործածէին իւրեանց դատարանում, իսկ Հանգուցեալ Բաստամեանը դատաստանագրքի նոյն «Հայկական» յորջորջումը հասկացել է իբրև Հայոց ատեաններում գործածուած և Հայերից մշակուած օրէնսգրքի յորջորջում։

Մենք նոյնպէս չենք հասկանում, թէ ինչ հիման վերայ Հանգուցեալ վարդապետը կարծել է, թէ դատաստանագիրքը գաղափարել են լատիներէնից, կեղծել են Նախիջևանցիք, չէ՞ որ դատաստանագիրքը, ինչպէս մենք տեսանք նորա յիշատակարանից, գրուած է Հաշտարխանում և կնքուած ու վկայուած է այնտեղի Ստեփաննոս եպիսկոպոսից։ Նախիջևանցիք իւրեանց նորահաստատ դատարանի համար կարիք չունէին մի նոր դատաստանագիրք կամ օրէնքների հաւաքածու կազմելու և նորան տէրութեան հաստատութեան առաջարկելու, քանի որ Ռուսաստանի Հայոց առաջնորդանիստ Հաշտարխան քաղաքում արդէն տէրութիւնից հաստատուած թէ՞ Հայկական դատարան և թէ՞ օրէնսգիրք կար [8])։

Նախիջևանի դատաստանագիրքը կազմուած է երեք մասից՝ «Կանոնք իրաւանց և, վաճառականութեանց»

նորա հին կարգերը և յարմարեցրինք Հռովմայեցւոց սովորութիւններին, հրամայելով, որ նա այսուհետև այլ ևս, բացի Հռովմայեցւոց օրէնքներից, ուրիշ օրէնք չունենայ»։ Տես „Собраніе актовъ, относящихся къ обозрѣнію исторіи Армянскаго народа“. Часть II, стр. 34—45.

[8]) Դատաստանագիրքն այժմ պահուում է Նոր Նախիջևանի քաղաքային դիւանում։ Դորա մի ընդօրինակութիւնն էլ մենք ուղարկել ենք Ս. Էջմիածնի մատենադարանը։

որ իւր մէջ բովանդակում է 23 գլուխ և 940 յօդուած (բան), «Յաղագս պարտաւորութեան դատաւորաց, դատաստանական պաշտօնէից և այլ դատաստանական կարգաց», որ ունի 15 գլուխ և 107 յօդուած, և «վասն կերառութեան դատաստանական գործոց», որ ունի 14 գլուխ և 88 յօդուած [9]։

[9]) Բացի հանգուցեալ Վահան վարդապետ Բաստամեանից, մի փոքրիկ «Армянскій Судебникъ» խորագրով ուսումնասիրութիւն էլ Նոր-Նախիջևանցւոց Դատաստանագրքի մասին հրատարակել է 1870 թուին ռուսազգի Ալէքսէեվը։

# ՆՈՐ ՆԱԽԻՋԵՒԱՆԻ ՀԵՌԱԳՐԵՐԸ

*(Համառօտ տեսութիւն)*

## Ա

Ցովսէփ արքեպիսկոպոս Երկայնաբազուկ Արղութեանի յիշատակով յիշն է Նոր-Նախիջևանը։ Ահա փառաւոր տաճարներ, որոնց բոլորի հիմքը գնողը ևս ինքն է եղել, ահա Ս. Խաչ վանքը, որ գլխավին նորա հիմնարկածը, կառուցածը ու օծածն է, ահա Հոգևոր Կառավարութիւնը, որի նախատիպար Հոգևոր դատարանն առաջին անդամ նա է բաց արել, ահա Քաղաքային վարչութիւնը, որի նախադաղափար Հայկական Մագիստրատը նա է հաստատել, ահա, վերջապէս, այն բոլոր հոգևոր սարքն ու կարգը, որ մինչև ցայսօր դեռ անխախտ պահպանւում է քաղաքիս ու դորա շուրջը գտնուած հայ գիւղերի եկեղեցիներում և հոգևորականութեան մէջ, չենք խօսում արդէն այն բազմաթիւ մանր յիշատակների մասին, որ թողել է հանգուցեալ արհին քաղաքում և որոնք մինչև ցայսօր ամեն մի քայլափոխում յիշեցնում են նորան։ Ահա, օրինակի համար, Ս. Խաչ վանքի հարաւային դրան կողքին պատի մէջ հագցրած գեղեցիկ մարմարիոնեայ տախտակը, որի վրայ մենք կարդում ենք. «Շնորհօքն Աստուծոյ կառուցի զսուրբ Խաչ վանքս և հաստատեցի ի սմա զդպրոցս և զտպարանս ես սանահնեցի Արղութեանց Շիրազեցի որդի և սուրբ Էջմիածնայ նուիրակ և Ռուսաց երկրի Հայոց ազգի առաջնորդ Ցովսէփ արքեպիսկոպոս ի Կայսերութեան ամենայն ռուսաց Եկատերինէ Ալէքսէովնին Երկրորդի և ի Հայրապետութեան ամենայն Հայոց տեառն Ղուկասու կաթողիկոսին աշխատութեամբ հոգևոր որդւոյն իմոյս Բայազիտցի Կարապետ վարդապետին օծեալ եղև յամի տեառն 1791 և ի Հայոց թուին ՌՄԽ Սեպտեմբերի». ահա Ս. Նիկո-

զայոս եկեղեցու մէջտեղը դեռեղուած մարմարիոն քարը, որի վերայ փորագրուած է. «Կառուցաւ տաճարս աստուածային սրբոյ Նիկողայոսի հայրապետին հոգևորական արդեամբք յօժանդակութեամբ և օծմամբ սրբոյ աթոռոյս Էջմիածնի ծայրագոյն նուիրակ և ռուսաց երկրի ամենայն Հայոց առաջնորդ և նոր քաղաքիս Նախիջևանայ հիմնադիր սանահնեցի Յովսէփ արքեպիսկոպոսին Արղութեանց ի թագաւորութեան մեծին Եկատերինէի երկրորդի Կայսերուհւոյն ամենայն ռուսաց ի հայրապետութեան աթոռոյն սրբոյ Էջմիածնի տեառն Ղուկաս կաթողիկոսին ամենայն Հայոց թվին 1783». ահա և Ս. Աստուածածնի հին պատկերը, որի տակ գրուած է. «Ես սանահնեցի երկայնաքաղուկ Արղութեանց Շիօշբէգի որդի Յովսէփ արքեպիսկոպոս նուիրակ սրբոյ Էջմիածնի առաջնորդ ռուսաց երկրի Հայոց ազգի և հիմնադիր Նոր-Նախիջևանայ նկարել եառու զպատկերս սուրբ Աստուածածնայ և օծեալ նուիրեցի Նորաշէն սուրբ Խաչ վանիցն Նախջևանու 1786 թուին և ի մուտքն Հոկտեմբերի», և այլն և այլն։

Եւ Նախիջևանցիք էլ գնահատել են նորան, սրբութեամբ զարդացնելով ու չարունակելով նորա դրածը, հաստատածը և ամեն բանում պահելով նորա անուան յիշատակութիւնը։ Նորա ոսկեզօծ չրջանակի մէջ առած պատկերը կախուած է Քաղաքային վարչութեան դահլիճում Եկատերինէ Կայսրուհու պատկերի մօտ, նորա նոյն մեծագիր պատկերներից մէկն էլ կախուած է Ս. Խաչի նախկին ժառանգաւորաց դպրոցի սրահում Յարութիւն վարդապետ Ալամդարեանի պատկերի մօտ, նորա վեղարազարդ գլուխը քանդակուած է Ս. Լուսաւորիչ մայր եկեղեցու առաջ նորերումս կանգնեցրած Եկատերինէյի չքեղ արձանի պատուանդանի վերայ։

Բայց ամենամեծ յիշատակը, որ հանդուցեալ արհին թողել է Նոր-Նախիջևանում, մեր կարծիքով, այն դրչագիր գրքերի հաւաքածուն է, որ խնամքով ժողովել, կազմել և ժառանգութիւն է թողել մեզ-յետնոցս։ Մենք ասում ենք ամենամեծ յիշատակը ոչ թէ նորա համար, որ մի ամբողջ քաղաքի հիմնարկութիւնը, հինգ փառաւոր տաճարների չինութիւնը, վանքի հիմնարկութիւնը, Հոգևոր դատարանի և Մագիստրատի հաստատութիւնն աւելի փոքր յիշատակներ են, քան թէ մի ձեռագրերի մատենադարան կազմելը, ոչ, այլ որովհետև քաղաքն առանց նորան էլ կը հիմնարկուէր, եկեղեցիներն ու



վանքն առանց նորա էլ կը կառուցուէին, Հոգևոր դատարանն ու Մագիստրատն առանց նորան էլ կը հաստատուէին, բայց ձեռագրերը կարող էին չը հաւաքուել, չը պահպանուել, կարող էին սորա-նորա ձեռքին ցրուած մնալ և ցեցի, մկների կերակուր դառնալ, փոչու ու խոնաւութեան մէջ փտել և այդպիսով կորստեան մատնուել, ինչպէս կորստեան են մատնուել ու փճացուել հայկական բազմաթիւ այդ տեսակ հարստութիւնները։

Դորա համար պէտք էր ձեռագրերի արժէքի գիտական հասկացողութիւն, որ այն ժամանակները հազարից մէկը չունէր, դորա համար հարկաւոր էր հայկական հնութեան, գեղարուեստի գնահատութիւնը, որ այն ժամանակները մեր մէջ ճրագով էլ որոնուէր, չէր գտնուիլ։ Ճիշտ է, բոլորեքեան էլ այն ժամանակները գնահատում էին հոգևոր բովանդակութիւն ունեցող ձեռագրերը, սրբութեամբ պահպանում էին նոցա, բայց այդ գնահատութիւնն ու սրբութեամբ պահպանելը նոցանով բժշկուելուց և բազմաթիւ թաշկինակների ու լաթերի մէջ նոցա փաթաթելուց ու տների խոնաւ անկիւններում պահելուց հեռու չէր գնում։ Պէտք էր Յովսէփ արքեպիսկոպոսի պէս մարդու խելացի հեռատեսութիւնը, որ մի կողմ թողած նոցա սրբութիւնը, որ սակայն չէր ազատում նոցա կորչելուց, գիտական նպատակներով Հայոց գիտութեան ու գեղարուեստի այդ անկման ժամանակներում մեծ աշխատանքով հաւաքուէին նոքա, սորա-նորա ձեռքից խլուէին, որոշուէին նոցա արժէքը և իրրև մի թանկագին գանձ պահուէին ապագայի համար։

Այդ ձեռագիր մատեանների հաւաքածուն, որի ահագին մեծամասնութիւնն այժմ պահւում է ս. Լուսաւորիչ եկեղեցում, իսկ փոքր մասը ցրուած է քաղաքի և գիւղերի եկեղեցիներում, առաջին անգամ հաւաքուել ու կարգի է բերուել Նոր-Նախիջևանի հիմնարկութեան ժամանակ 1780 թուին։

Երջանկայիշատակ Յովսէփ արքեպիսկոպոսն այդ թուին Պետերբուրգից, ուր գնացել էր նա այնտեղի եկեղեցին օծելու և աշխատելու Նախիջևանցոց արտօնութեան հրովարտակը ստանալու համար, ժամանելով Նոր-Նախիջևանի հիմնարկութեան համար նշանակուած տեղը և ձեռնարկելով քաղաքի հիմնարկութեան գործին, ի միջի այլոց, ուշադրութիւն է դարձնում և Ղրիմից բերած եկեղեցական իրեղէնների վերայ, որոնք արկղ-արկղ պահւում էին զանազան մարդկանց մօտ։

Նա հրամայում է բերել իւր մօտ արկղները, բաց է անում նոցա իշխանների ներկայութեամբ, խնամքով ցուցակագրում է և պահում է նոցա մի առանձին չինութեան մէջ, որ «զգեստատուն» կամ «հանդերձատուն» անունով նա յատկապէս հէնց դորա համար չինել է տալիս, մինչև որ կառուցուէին եկեղեցիները, որ նա արդէն ծրագրել էր, և իրեղէնները տեղաւորուէին նոցա մէջ [1]։ Ահա հէնց այդ ժամանակ նա կարգի է բերում և ձեռագրերը, որոնք միւս իրեղէնների հետ միասին բերուել էին Ղրիմի զանազան քաղաքների եկեղեցիներից — Կաֆայի Երաշխաւոր սուրբ Աստուածածին վանքից, ս. Սարգիս, ս. Աստուածածին, ս. Օղսէնդ, ս. Յակոբ, ս. Հրեշտակապետ, ս. Յովհաննէս Աւետարանիչ, ս. Խաչ, ս. Լուսաւորիչ, Դարի ս. Նիկողայոս, ս. Համբարձում, ս. Թորոս, ս. Գէորգ, ս. Յարութիւն, ս. Ստեփաննոս, վերի ս. Նիկողայոս, ս. Յովհաննէս եկեղեցիներից, Բաղչիսարայի ս. Լուսաւորիչ եկեղեցուց, Բալուխլուի ս. Յովհաննէսից, Աղ-Մէչիդի եկեղեցուց, Թամանի ս. Աստուածածնից, Գեօզլովի ս. Նիկողայոսից, Ղարասուի ս. Փրկիչ վանքից, Հին-Ղրիմի ս. Խաչ վանքից և Օրհջայ եկեղեցուց։ Եւ իմանալով, որ, բացի արկղներում եղածներից, ուրիշ մասնաւոր մարդկանց ձեռքում էլ կան ձեռագրեր և ուրիշ եկեղեցական իրեղէններ, որոնք կամենալով սեփականացնել, իւրեանց յօժար կամքով չէին կամենում բերել, հրամայում է նոցա բերել՝ որոնց յորդորելով, որոնց խնդրելով, որոնց էլ սպառնալով, և յաջողում է մի մասը ստանալ, իսկ միւս մասն այնպէս էլ մնում է մասնաւոր տներում թագցրած և պահած և ժամանակի ընթացքում դառնում է մասնաւոր անձանց սեփականութիւն։

Դորանով էլ մեկնւում է այն հանդամանքը, որ մինչև ցայսօր ևս մասնաւոր մարդկանց տներում գտնւում են հատուկտոր գրչագրեր, որոնք անկասկած առաջ պատկանել են եկեղեցիներին։ Որ Ղրիմից բերած եկեղեցական իրեղէնների և դորա հետ միասին և ձեռագրերի մի մասը մնացել է մասնաւոր մարդկանց ձեռքին,—այդ երևում է այն մի քանի խօսքերից, որ արքեպիսկոպոսը մի երկու տեղ գրել է իւր ձեռագիր «դաւթարում», որի մէջ նա մի մի ցուցակագրել է բոլոր իրեղէնները և ձեռագրերը [2]։ Կաֆայի Երաշխաւոր ս. Աստուածածին վանքի իրեղէնների ցուցակի տակ, օրինակի համար, մենք կարդում ենք «ի 1786 թուին և ի յուլիսի 20. դարձեալ յայտնեցաւ զաղաղ Աւետիքի մօտ սուրբ Աստուածածին վանից, զոր Սիմէօն վարդապետն պահէ տուեալ նմա։ և մեք հաստատեալ ի վերայ նորա, հաղիւ թէ՝ զներքոյ գրեալսն յայտնեաց՝ լետ բաղում սուտ երդմանց»։

Երբ որ թէ քաղաքի և թէ գիւղերի եկեղեցիները չինւում, պատրաստւում են, արքեպիսկոպոսը նոյն իշխանների ներկայութեամբ բաց է անում Հանդերձատունը և ընտրելով իրեղէնների միջից նորերը, ընծայում է եկեղեցիներին, իսկ հները, եթէ արծաթեղէն է լինում, ջարդել է տալիս և գործածում եկեղեցու զարդարանքի համար, եթէ զգեստեղէն,—ընծայում է աղքատներին։ Ահա հէնց այդ ժամանակն էլ նա

[1]) Ղրիմի եկեղեցիներից բերած զանազան եկեղեցական իրեղէնների և ժամանակաւոր «Զգեստատուն» չինելու մասին հաւաստի տեղեկութիւններ մենք գտնում ենք Յովսէփ արքեպիսկոպոսի ձեռագիր «Դաւթար»-ում։ «Ժողովուրդքն մեր որք ելեալք են ի Ղրիմու, բերեալ էին ընդ ինքեանս, զամենայն արծաթեղէն և զշորեղէն անօթսն վանօրէից և եկեղեցեաց, գրուած է այդ մասին Դաւթարի 11 երեսում, զոր մեք մեծաւ տառապանօք և վշտօք ի բաղում աւուրս աշխատեալ մերալնովքն, արկաք ի դաւթար անուամբ վանօրէիցն, եկեղեցեացըն, և որոց աշխատութեամբ բերեալ էին, և հաղիւ թէ՝ չինեալ զգեստատուն տեղաւորեցաք ի նմա։ և զայս գրեթէ պատմութեամբ, գրեցաք ի սմա զամենայն, որպէս զի՝ մի ինչ կորիցէ և ապագայն գիտասցեն զորքանութիւն բերեցեալ անօթիցն և զմերս ջանք և տաժանելի վաստակք զի ապագայիցն ըղձալիք են անցելոցն պատմութիւնք։ զի երբ Աստուծով չինեսցեն զեկեղեցիսն, որոյ անուամբ որ կառուցեն, նոյն եկեղեցեաց անօթն ի նմին եկեղեցին տացեն։ որպէս մեք արարաք, սուրբ Համբարձման և սուրբ Նիկողոսին և այլոց։ Իսկ աւելեալ զգեստքն և արծաթեղէն և անօթքն և ոսկեղէն խաչքն գնելիք են ի սուրբ Լուսաւորիչ Աւագ եկեղեցին, ուր Առաջնորդարան է լինելոց։ Նոյնպէս և ամենայն վանօրէից անօթսն։ Եւ զորս ի զգեստուցն հնացեալ գտաք, շուրջառք, շապիկք, վարագոյր, քիլիմք, խալիք և խալիչալք և այլք, խորհրդով դատաւորացն եռուք տառապեալ աղքատաց և տնանկաց։ Յառաջին ամեն որք մերկք էին և ի ցրտոյ մեռանէին. զի և նոքա Աստուծոյ են, և Աստուած առայս ոչ երբեք բարկանայ, այլ հաճի և ընդունի»։

[2]) Այդ ձեռագիր «Դաւթար»-ը, որ մինչև վերջին ժամանակները գտնւում էր Տէր-Խաչատուր աւագ քահանայ Զարիֆեանի ձեռքում, ներկայումս գտնւում է ի շարս միւս ձեռագրերի ս. Լուսաւորչի մատենադարանում։

ջոկում, հանում է միւս իրեղէնների միջից ձեռագրերը, մեծ մասը նոցանից առանձին արկղի մէջ հաւաքելով և դնելով ս. Լուսաւորչի պահարանը, փոքր մասը բաժանելով միւս եկեղեցիներին առձեռն գործածութեան համար, մի քանի ձեռագիր էլ ուրիշ տպագրուած եկեղեցական գրքերի հետ ուղարկելով Կարապետ վարդապետի ձեռքով Ղրիմ, որովհետև այնտեղի եկեղեցիները, գաղթականների դուրս գալուց յետոյ, բոլորովին զուրկ էին մնացել թէ եկեղեցական իրեղէններից և թէ գրքերից։ Որ ձեռագրերից մի քանիսը Յովսէփ արքեպիսկոպոսը նորից ուղարկել է Ղրիմ,—այդ հանգամանքի մասին մենք նորա ձեռագիր «Գաւթարում» կարդում ենք հետեւեալ ծանօթութիւնը. «Թիւն 1783 սեպտեմբերի 25-ումն ներքոյ գրեալ զգեստքն Կարապետ վարդապետին ետուք, որ տանի ի Կաֆայ սուրբ Սարգիս եկեղեցւոյն և սուրբ Խաչ վանիցն, երկու ձայնքաղ շարական պատմայ, երեք աւետնի գրչայ, երեք խորհրդատետր պատմայ», և այլն։

Իւր յիշատակն էլ գաղթականների սրտում և Նախիջևանի տարեգրութեան մէջ անջինջ պահելու համար, նա ընտրում է ձեռագիր աւետարաններից մի-մի օրինակ, արծաթապատ է անել տալիս նոցա կամ իւր և կամ ուրիշ բարեպաշտ մարդկանց ծախքով և ընծայում է եկեղեցիներին, նախապէս նոցա վերայ գրելով կամ հետեւեալ ընդարձակ յիշատակարանը. «Սա սրբոյ աթոռոյն Էջմիածնի ծայրագոյն նուիրակ ռուսաց երկրի ամենայն Հայոց աղգին Առաջնորդ, Նոր-Նախիջևանայ հիմնադիր և երանելի սուրբ Սիմէոն հայրապետին երեւանցւոյ ձեռնասուն աշակերտ Սանահնեցի Արղութեանց շիօշբէգի որդի՝ Յովսէփ ազարդիւն արքեպիսկոպոս, սուրբ աւետարանս այս՝ արծաթապատ առնել ետուս իմով սեպհական արդեամբ և նուիրեցի ի դուռն Նախիջևանու ս. Լուսաւորիչ աւագ եկեղեցւոյն, զոր ես հիմնարկեցի ի 1783 թուին Փրկչի և մեր ՈՄՂԲ ի սեպտեմբերի 9, ի տօնի Նիկիտու սուրբ ժողովուն։ Վայելողքդ՝ յիշեցէք զաշխատաւոր անձն իմ և զծնօղս՝ զշիօշբէգն և զապանեալն յանօրէն լաղգեացն ի տարապարտուց և զպարկեշտագնաց մայր իմ քէթէվան տիկինն՝ և զհանգուցեալ եղբարս և զքոյրս իմ զմովսէսբէգն, զվարսագանն և զմարիամն։ և զկենդանի եղբարս և քոյրս իմ զպարոն բէժաբէգն և զռուսուդանն և զայլ ազգականս իմ և զերիտարան։ յիշողքդ՝ յիշեալ լինիք ի Քրիստոսէ։ Գրեցաւ



ի 1783 թուին Փրկչի և ի հոկտեմբերի 27 ի Նոր-Նախիջևան», կամ հետեւեալ կարճառօտ ծանօթութիւնը. «Յովսէփ Արքեպիսկոպոս չնորհեցի Նոր-Նախիջևանի ս. Լուսաւորիչ եկեղեցւոյն զսուրբ աւետարանս 1793. նոյ. 30-ին» և կամ երկուսը միասին [3])։

Երջանկայիշատակ արքեպիսկոպոսն այդ իւր հաւաքած ձեռագրերի երկու տեսակ ցուցակն է թողել մեզ՝ մէկը Ղրիմից բերած բոլոր եկեղեցական իրեղէնների, որոնց մէջ և ձեռագրերինը ու տպագրուած գրքերինը, միւսը միայն ձեռագիր մատեանների։ Եթէ առաջին, ընդհանուր ցուցակի մէջից մենք զատելու լինենք միայն որոշակի նշանակուած գրչագրերը, կստանանք հանգուցեալի ձեռքով ժողոված ձեռագրերի հետեւեալ ցուցակը.

| Հմ. | Տեսակները | Թիւ |
|---|---|---|
| 1. | Աստուածաշունչ . . . . | 6 |
| 2. | Աւետարան . . . . | 94 |
| 3. | Յայսմաւուրք . . . . | 21 |
| 4. | Ճաշոց . . . . | 19 |
| 5. | Մաշտոց . . . . | 11 |
| 6. | Շարական . . . . | 17 |
| 7. | Գանձարան . . . . | 13 |
| 8. | Խորհրդատետր . . . . | 9 |
| 9. | Կանոնագիրք . . . . | 6 |
| 10. | Աղօթագիրք . . . . | 3 |
| 11. | Սաղմոսագիրք . . . . | 6 |
| 12. | Ատենի (Շարական) . . . . | 6 |
| 13. | Սարգիս Շնորհալի . . . . | 3 |
| 14. | Գանձք և ճառք (գրչեալ գիրք) . . | 3 |
| 15. | Սաղմոս. . . . . | 6 |
| 16. | Յովհաննու աւետարանի մեկ. Ոսկեբերանի | 3 |
| | | 226 [4]) |

Երկրորդ ցուցակը, որ, ինչպէս ասացինք, լոկ անխառն

---

[3]) Երջանկայիշատ. Յովսէփ արքեպիսկոպոս Արղութեանի մի այդպիսի ընդարձակ յիշատակարանն էլ գրուած է ս. Աստուածածին եկեղեցու Սմբատ Գունդստաբլին պատկանած աւետարանի կողքին։

[4]) Այդ թուի մէջ մենք հաշուել ենք և այն 8 ձեռագիրը, որոնց մասին «Գաւթարում» գրուած է «Տէր Թորոսի որդի պարոն Յովակիմի մօտ գոյ (գրչագիրք) Այսմաւուրք—3, Ճաշոց—3, Շարական—2»։

գրչագրերի ցուցակն է, ձեռագրերի թիւն ու տեսակը մեզ ներկայացնում է հետեւեալ աղիւսակով.

| Հմ. | Տեսակները | Թիւ |
|---|---|---|
| 1. | Ճաշոց գիրք՝ մեծ և փոքր . . . | ԻԶ |
| 2. | Այսմաւուրք՝ մեծ և փոքր . . . | ԽԱ |
| 3. | Գանձարան՝ մեծ և փոքր . . . | ԺԴ |
| 4. | Ատենի ժամագիրք և Ատենի շարականք | ԻԷ |
| 5. | Մաշտոցք՝ մեծք և փոքրք . . | ԺԹ |
| 6. | Աւետարանք կոստղեալ և անկոստղք, մեծ և փոքրք . . . . | ԾԵ |
| 7. | Զորս հատ ճառ գիրք . . . | Դ |
| 8. | Մէկ հատ արարածոց մեկնիչ Վարդանայ | Ա |
| 9. | Երկու հատ գրչեալ Սարգիս գիրք, որ է կաթ. մեկ. . . . . | Բ |
| 10. | Մէկ հատ Սաղմոսի մեկնիչ՝ Ներսիսի Լամբրոնացւոյ . . . . | Ա |
| 11. | Կանոն գիրք. մէկն հոգ. դատարանումն է | Դ |
| 12. | Գիրք մի յորում յորդորակին կաթուղիկէից մեկնութիւն Սարգիս Շնորհալւոյն և ապա զնոյն ճառք այլ վարդապ. | Ա |
| 13. | Տօմար և աշխարհացոյց . . . | Ա |
| 14. | Խորհրդատետրք . . . . | — |
| 15. | Մէկ գեղեցիկ մագաղաթ. Աստուածաշունչ | Ա |
| 16. | Մագաղաթ Աստուածաշունչ. . . | Ա |
| | | 196 |

Այս գրացուցակի վերը գրուած է հետեւեալ ծանօթութիւնը. «ի զրիմու բերեալ ամենայն եկեղեցական գրեանքս ի ներքոյ գրեմ, վասն տեղեկութեան ապագայ եկելոցդ և ի յիշումն՝ աշխատանաց մերոց՝ յորոցդ հայցեմ լիշել զիս յաղօթս աստուածահաճոյս՝ հանդերձ ծնողօք և աշխատակցօք»։

Արդութեանի կազմած երկու ցուցակից ճիշդը, ի հարկէ, երկրորդը պէտք է համարել, որովհետև դա անխառն միայն ձեռագրերի ցուցակն է, իսկ առաջնի մէջ խառն են հինը և նորը, պէտքականը և անպէտքը, իսկ, որ գլխաւորն է, շատ տեղ գրքերի վերայ բոլորովին չի նշանակուած «գրչեայ» և «պատմայ» բառերը, ուրեմն և նորանով անկարելի է որոշել Զրիմից բերուած և արքեպիսկոպոսի ձեռքով հաւաքուած ձեռագրերի իսկական, ճիշդ թիւը։ Սակայն երկրորդ ցուցակն էլ կարելի է ճիշդ համարել միայն առաջնի համեմատութեամբ և նորանով էլ կարելի է իմանալ ձեռագրերի թիւը ոչ ճշդիւ, այլ միայն մօտաւորապէս, որովհետև, նախ, յայտնի չէ, թէ



այդ ցուցակից որքան ձեռագիր է Կարապետ վարդապետի ձեռքով նորից Զրիմ ուղարկուել, և, երկրորդ, դորա մէջ «խորհրդատետրների» մասն ոչ մի թիւ գրուած չէ, այլ միայն անորոշ կերպով գրուած է «խորհրդատետրք», չենք ասում արդէն այն, որ «Ատենի ժամագիրք» և «Ատենի շարական» գրուած են միասին և նոցա թիւը միասին որոշուած է «ԻԷ», այնպէս որ դժուար է իմանալ, թէ իսկապէս որքան Շարական է եղել և որքան ժամագիրք։

## Բ

Ինչպէս կարելի է տեսնել վերոյիշեալ երկու ցուցակից, Զրիմից բերուած և Յովսէփ արքեպիսկոպոսի ձեռքով հաւաքուած բոլոր ձեռագրերն էլ հոգևոր-եկեղեցական բովանդակութիւն են ունեցել և մեր յայտնի պատմութիւնների ձեռագրերից դոցա մէջ չի եղել և ոչ մէկը։ Այստեղ, ուրեմն, դարձեալ կրկնուել է այն ընդհանուր երևոյթը, որ մեր միւս պահպանուած ձեռագրերի մատենադարանների գլխաւոր յատկութիւնն է կազմում։ Պահուել են միայն և գլխաւորապէս եկեղեցական գրքերը, իսկ աշխարհականների մեծամասնութիւնը կորել, ոչնչացել է։ Դորա պատճառն էլ, ինչպէս յայտնի է եղել ոչ միայն այն, որ եկեղեցական գրքերի աւելի կարօտութիւն լինելու պատճառով, նոցանից աւելի օրինակներ են արտագրուել, և կամ որովհետև հին Հայոց մատենագիրները մեծաւ մասամբ հոգևորական լինելով սիրել են տիրապէս և հոգևոր մատեաններ արտագրել ու հեղինակել, այլ և այն սրբութեան յարգանքը որ տածել են մեր Նախնիքը դէպի կրօնական մատեանները և այն խնամքը, որ նոքա տարել են նոցա վերայ, և, ընդհակառակն այն անհոգութիւնն ու անտարբերութիւնը, որ նոքա ցոյց են տուել դէպի մեր աշխարհական մատեանները։

Յովսէփ արքեպիսկոպոսը դեռ ինքը ձեռագրերի վերոյիշեալ ցուցակները կազմելու ժամանակ նկատելով գրքերից մի քանիսի առանձին արժանիքը, ուշադրութիւն է դարձրել նոցա վերայ, իւր առաջին ցուցակում նոցանից մի քանիսի վերայ նշանակելով «հնագոյն» բառը, մի քանիսի վերայ—նոցա գրուելու ժամանակը, մի քանիսն էլ նա իւր երկրորդ ցուցակի տակը կարճառօտ կերպով նկարագրել է։ Կաֆալի

Երաշխաւոր ս. Աստուածածին վանքից բերուած ութ աւետարանը ընորոշուած է «գրչեալ աւետարանք հնագոյնք» բառերով, նոյն վանքից բերուած երեք աւետարանի մօտ գրուած է. «Գրեալ ի ՈՁԸ թ. Հայոց»։ Երկրորդ ցուցակում նշանակուած Աստուածաշունչներից առաջինը նա հետեւեալ կերպով է նկարագրում. «Մէկ գեղեցիկ մագաղաթեայ Աստուածաշունչ բոլոր գրով գեղեցկանկար պատկերօք և ոսկետուպ ծաղկօք և զանազան երանգօք, իբրև զերկրորդ դրախտ զարդարեալ։ Կաֆայու սբ. Աստուածածին վանքին էր յիշատակ Վարդանայ եպիսկոպոսին, որոյ յիշատակն օրհնութեամբ եղիցի ընկալեալ մեր ընդ այլ զգեստուց, եդաք ի հանդերձատունն ի մէնջ չինեցեալ, և նուիրեցաք սբ. Լուսաւորիչ աւագ եկեղեցւոյն Նախիջևանու»։ Երկրորդի համար նա գրում է. «Մագաղաթեայ Աստուածաշունչ ևս Ղրիմու սբ. Խաչին, որ է լուսանոգի Յովհաննէս վարդապետին Սեբաստացւոյ չինողին նոյն վանից։ Գրեցաւ ի դուռն սբ. Խաչին Հայոց ի ՌԻԼ-ին» [5])։

Թէ ինչ են լինում և ինչպէս են պահւում ձեռագրերն եկեղեցիների պահարաններում Յովսէփ արքեպիսկոպոսից լետոյ—, յայտնի չէ, բայց ի նկատի առնելով մեր հաւաքած հատուկտոր տեղեկութիւնները և նոցա ներկայ դրութիւնը ու պահուելու եղանակը, չի կարելի ասել, թէ նոքա այդ դէպքում ևս բացառութիւն են կազմում մեր միւս տեղերի եկեղեցիների և վանքերի պահարաններում գտնուածներից։ Պահարաններում դրուած ձեռագրերի արկղները փակուած չեն լինում, չխօսելով կանոնաւոր ցուցակագրութեան մասին, նոքա մինչև անգամ հասարակ կերպով էլ ցուցակագրուած չեն լինում, այնպէս որ յայտնի չի լինում, թէ որ եկեղեցին որքան և ինչ ձեռագրեր ունի, որից և առաջ է գալիս այն ցաւալի հանգամանքը, որ եկեղեցու պաշտօնեաները, մինչև անգամ և օտար մարդիկ ցանկացած ժամանակ անարգելք բաց են անում արկղները, երերում են ձեռագրերը, տուն են տանում և երկար ժամանակ իրենց մօտ են պահում։ Դորա հետևանքն

[5]) Ներկայումս ոչ թէ չկան այդ երկու Աստուածաշունչը, այլ և չկայ ոչ մի Աստուածաշունչ, բացի մի թերի օրինակից, որ գտնւում է ս. Խաչ վանքում։ Այդ թերի Աստուածաշունչը, որ մանր բոլորագրով գրուած մի ընտիր օրինակ է, ս. Էջմիածնի միաբան արժ. Մեսրոպը վարդապետի խնդիրքով պիտի ուղարկուի ս. Էջմիածնի մատենադարանը։



էլ հասկանալի է, թէ ինչ է լինում։ Արկղների լաճախակի բաց մնալու պատճառով, մուկն է դիպչում գրքերին, ցեցն է ուտում, փոշին է փճացնում, պահարանների խոնաւութիւնից ձեռագրերը թացանում են և նոցա թերթերը կպչում միմեանց, մագաղաթը դեղնում է, սևանում է և գրի թանաքը լուծւում, խառնւում և գրուածքն անրնթեռնելի դառնում, չենք ասում արդէն, որ տուն տարուածները այլ ևս չեն վերադարձնում, և եթէ վերադարձնում էլ են, նախապէս քրքրում են նոցա, պոկում են պատկերները, հանում են վերայից արծաթէ զարդերը, աղտոտում են յիշատակարանները, կամենալով իրենց անարժան մրոտումներն էլ նոցա մէջ խառնել, նոցա կողքին գրել, և այլն և այլն։

Մեզ մատնացոյց արին, օրինակի համար, քաղաքիս ս. Աստուածածին եկեղեցու քահանաներից մէկի վերայ, որ մի ժամանակ տիրացու է եղել ս. Լուսաւորիչ եկեղեցում։ Դա, այդ հայ եկեղեցու պաշտօնեան պոկել, տուն է տարել ընտիր ձեռագրերի մէկի միջից Լևոն Երրորդի պատկերը և իբրև զարդ կախել է իւր բնակարանի պատից։ Ցեղիս երիտասարդներից մէկը հազիւ կարողացել է զգուշան խորամանկ միջոցներով յետ ետանալ պատկերը և նորից զետեղել ձեռագրի մէջ։ Մենք մէկ օր պատահեցինք այդ քահանային և հարցրինք նորա գործած այդ վանդալականութեան մասին։ «Տէր-Հայր, ասացինք մենք, ինչպէս է եղել, որ դուք ձեռագրի միջից պոկել, հանել էք Ռուբինեանց թագաւորի պատկերը և այդպիսով փճացրել էք և՛ ձեռագիրը և հազուագիւտ պատկերը»։ «Աղբար, պատասխանեց նա մեզ իւր աղճատ բարբառով, ով գիտէր այն ժամանակները դոցա գինը և արժէքը. մենք ձեզ պէս ուսումնական չենք, որ այդպիսի բաներ հասկանանք, ձեռագրերի պէս հնութիւնները գնահատենք։ Գրքերը թափուած էին խորանի յետևը, ով կուզէր, կնայէր, ով կուզէր, տուն կտանէր, ով էր նոցա վերայ ուշադրութիւն դարձնողը։ Տեսայ այդ գիրքը—«սիրէթներ» կային մէջը. այդ պատկերին հաւանեցի, որովհետև միւսները ւուրբերի պատկերներ էին, իսկ այդ մէկը—թագաւորի։ Առայ, կտրեցի, բայց ոչ առանց թոյլտուութեան։ Լուսարար Հայի-Գրիգորին խընդրեցի, նա էլ թոյլ տուեց. .» [6])։ Բացառութիւն են կազմում

[6]) Թէ ինչպէս դժուար է լինում առնել այդ պատկերը

միայն արծաթապատ աւետարանները, որոնք իբրև նիւթական արժէք ունեցող բաներ պահւում են եկեղեցիների միւս արծաթեղէնի հետ փակ արկղներում, երէցփոխանների հսկողութեան տակ։ մասամբ բացառութիւն է կազմում և ս. Լուսաւորչի ձեռագրերի հաւաքածուն, որ երկար ժամանակ միւս եկեղեցիների ձեռագրերի վիճակին ենթարկուած մնալուց յետոյ, հաւաքուելով մի տեղ, առաջ շարւում են մոմատանը չինած բաց դարակների վերայ, յետոյ արդէն ամփոփւում են ներկայումս նոյն մոմատանը գոյութիւն ունեցող ընդարձակ, շքեղ պահարանի մէջ։

Մի ընդհանուր ճիշտ ցուցակ, բացի Արղութեանի կազմած ցուցակից, Նոր-Նախիջևանի ձեռագրերն երբէք չեն ունենում։ Ոչ թէ մի ընդհանուր ցուցակ, այլ և մասնաւոր ցուցակներ էլ գոյութիւն չեն ունենում, այնպէս որ երբ 1845 թուին երջանկայիշատակ Ներսէս կաթուղիկոսն այցելում է Նախիջևանը և կամենում է իմանալ, թէ եկեղեցիներն ինչ իրեղէններ ունին, բոլորեքեան մոլորւում են և ստիպուած են լինում խոստովանել, թէ այդպիսի ցուցակներ չկան։ Այն ժամանակ կաթուղիկոսը զայրանալով, հրամայում է իւրաքանչիւր եկեղեցու դասալուսաց քահանային անյապաղ կազմել այդպիսի ցուցակ և իրեն ներկայացնել։ Աւագերէցները սարսափած վեհի սպառնալիքից, ձեռքներից եկած միջոցները գործ են դնում և շտապով կազմելով իւրաքանչիւրն իւր եկեղեցու իրեղէնների, որոնց մէջ և եկեղեցուն պատկանած ձեռագրերի ցուցակը, ներկայացնում են նորան։ Նա էլ այդ բոլորն աչքի անցկացնելով, վաւերացնում է նոցա իւր ստորագրութեամբ և յանձնում է այդ ժամանակ իւր նշանակած ընդհանուր երէցփոխ կամ վէքիլ Յարութիւն աղա Խալիբեանի և աւագերէցների պահպանութեան, նախապէս հրամայելով, որ նոքա ևս վաւերացնեն նոցա իւրեանց ստորագրութեամբ։

---

քահանայից, – այդ երևում է այն հանգամանքից, որ յիշեալ երիտասարդը ստիպուած է լինում յայտնել այդ մասին Նախիջևանի այդ ժամանակուայ յաջորդ հանգուցեալ Կիւրեղ վարդապետին, որ իւր կողմից այդ մասին յայտնում է հէնց այդ ժամանակներս Նախիջևանում գտնուած Նախիջևանի և Բնսարաբիոյ թեմի առաջնորդ Գրիգոր եպիսկոպոս Սագինեանցին։ Քահանան հրաւիրւում է յաջորդարան և ստիպմամբ առնում է նորանից պատկերը։



Մեզ յաջողուեց հոգևոր կառավարութեան հին գործերում գտնել այդ ցուցակները, աչքի անցկացնել յատկապէս նոցա ձեռագրերի մասը, համեմատել նոցա թիւը և տեսակները ներկայումս եկեղեցիներում եղած ձեռագրերի և թուի ու տեսակների հետ, և պէտք է խոստովանենք, որ միանգամայն հիասթափուեցանք։ Բանից դուրս եկաւ, որ դոքա, այդ ցուցակները ոչ մի արժէք չունին։ Եւ ուրիշ պէս լինել էլ չէր կարող։ Մի այդպիսի շտապով կատարուած գործ, այն էլ ձեռագրերի ցուցակ կազմելու գործ, որ պահանջում է բաւականին երկար աշխատանք և հմտութիւն, կանոնաւոր ու ճիշտ լինել էլ չէր կարող։ Նախ և առաջ ս. Լուսաւորչի և ս. Նիկողայոսի իրեղէնների ցուցակներում նոցա ձեռագրերի ցուցակներն ամենևին չկան, որ մի մեծ պակասութիւն է, որովհետև ձեռագրերի ամենամեծ մասը գտնւում են հէնց այդ եկեղեցիներում, միւս եկեղեցիների ցուցակների ձեռագրերի մասն էլ վերին աստիճանի անկատար ու անկանոն են կազմուած։ Այստեղ հարկաւոր ենք համարում նկատել, որ կանոնաւոր ցուցակ ասելով, մենք չենք հասկանում ու պահանջում, որ դոքա, այդ ցուցակներն այնպէս կազմուած լինէին, ինչպէս որ այժմ են միայն կազմւում, այլ, գոնէ, կանոնաւորապէս նշանակուած լինէին բոլոր ձեռագրերի անունները, նոցա երբ, որտեղ ու որի ձեռքով գրուած լինելը և այլ այսպիսի տարրական տեղեկութիւններ։

Աւելորդ չենք համարում համեմատութեան համար գնել այստեղ այդ ցուցակները և դոցա համապատասխան եկեղեցիներում ներկայումս գտնուած ձեռագրերի տեսակները և թիւը, որպէս զի հեշտ լինի մեր ընթերցողներին գաղափար կազմել դոցա, այդ հին ցուցակների արժէքի մասին։

## ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՑՈՒՑԱԿՆԵՐ

| Հին ցուցակ | | Նոր ցուցակ | |
|---|---|---|---|
| **Ս. Թորոս** | | **Ս. Թորոս** | |
| Աւետարան | 4 | Աւետարան | 5 |
| Ցայսմաւուրք | 2 | Ցայսմաւուրք | 2 |
| Ժամագիրք տաճնի | 2 | Շարական | 1 |
| | | Խօնացոյց և ժամագիրք | 1 |
| | | Մաշտոց | 2 |
| | | Սաղմոս | 1 |
| **Ս. Գէորգ** | | **Ս. Գէորգ** | |
| Աւետարան | 5 | Աւետարան | 5 |

| | |
|---|---|
| Ցայսմաւուրք | 4 |
| *Ս. Համբարձում* | |
| Աւետարան | 6 |
| Ցայսմաւուրք | 3 |
| Գանձարան | 1 |
| *Ս. Աստուածածին* | |
| Գանձարան | 1 |
| *Զալթը գ. Ս. Համբարձում* | |
| Ցայսմաւուրք | 2 |
| Մաշտոց | 1 |
| *Մեծ-Սալայ գ. Ս. Աստուածածին* | |
| Աւետարան [7]) | 1 |
| *Թուխտի* | |
| Աւետարան | 2 |
| *Փոքր-Սալայ* | |
| Սաղմոս | 1 |
| | 35 |

| | |
|---|---|
| Ցայսմաւուրք | 2 |
| *Ս. Համբարձում* | |
| Աւետարան | 5 |
| Ցայսմաւուրք | 3 |
| Գանձարան | 1 |
| *Ս. Աստուածածին* | |
| Աւետարան | 7 |
| Ցայսմաւուրք | 2 |
| Շարական | 1 |
| *Զալթը գ. Ս. Համբարձում* | |
| Ցայսմաւուրք | 1 |
| Աւետարան | 1 |
| *Մեծ-Սալայ գ. Ս. Աստուածածին* | |
| Աւետարան | 1 |
| *Թուխտի* | |
| *Փոքր-Սալայ* | |
| | 41 |

Սակայն որքան և անկատար և անկանոն կազմուած լինեն այդ հին ցուցակները, այնուամենայնիւ դոքա մեզ համար շատ կարևոր ու հետաքրքրական են, որովհետև ցոյց են տալիս, թէ անխնամք պահուելուց 1845 թուից մինչև ցայսօր

[7]) Հոգևոր կառավարութեան ցուցակի մէջ նշանակուած Մեծ-Սալա գիւղի ս. Աստուածածին եկեղեցու աւետարանի առաջ գրուած է. «Գրեալ ձեռամբ Յոհաննէսի թուին հայոց 1103»։ Ներկայումս այդպիսի թուականով աւետարան չկայ Մեծ-Սալայի եկեղեցում։ Դորա փոխարէն կայ մի կաշեպատ փայտէ կազմով թղթի վերայ գրուած բոլորագիր աւետարան, որ ունի հետևեալ նօտարագիր յիշատակարանը. «Վերստին նորոգեցաւ քարաբուղխ աղրիւրս եդեմայ և կազմեցաւ ձեռամբ մեղսաներկ Յովաննէսի ի վայելումն մանկանց սեռի. ի հայրապետութեան տեառն Փիլիպպոսի ամենայն հայոց կաթուղիկոսի. և յարհիական եպիսկոպոսութեան յայսմ նահանգի տէր Գրիգոր արհի եպիսկոպոսի. և ի թվականութեան Հայոց ՌՃԳ (1654) ամի։ Արդ ստացաւ սա ի հալալ ընչից... իւրոց Պէյմէլիքն և եղ յիշատակ յանառիկն Սիօն և յիշատակ իւր հոգւոյն և առն Մինասին և այլն. և եղ զսուրբ աւետարանս ի դուռն սուրբ Աստուածածնին յիշատակ անջնջելի ի Սոլուխ Չորախ գիւղն»։



ինչ տեսակ և որքան փոփոխութիւն է առաջ եկել համապատասխան եկեղեցիներում պահուած ձեռագրերի թուի և տեսակների մէջ։

Մի երկու անգամ թոյլ փորձեր են եղել միայն ս. Լուսաւորչի ձեռագրերի ցուցակը կանոնաւոր կերպով կազմելու, բայց երկու անգամն էլ փորձն անպտուղ է եղել և ցուցակները թերի են մնացել։ Առաջին փորձ անողն եղել է ս. Լուսաւորչի միաբան քահանայ Տէր-Սարգիս Ոսկերչեանը, որ ցուցակագրել է միայն քառատուն ձեռագիր։ Երկրորդ փորձ անողն եղել է տեղիս դպրանոցի ուսուցիչ պ. Աբրահամ Զամինեանը, որ սակայն ցուցակագրել է միայն քսան ձեռագիր։ Այդ փորձերի անպտղութեան գլխաւոր պատճառը, նախ, Նախիջևանի եկեղեցիների խոնաւութիւնն է ընդհանրապէս և մասնաւորապէս ս. Լուսաւորչի խոնաւութիւնը, որ միանգամայն արգելում է երկար ժամանակ այնտեղ պարապելը, երկրորդ, ձեռագրերի թուի բազմութիւնը, որ շատ երկար ժամանակուայ և մեծ աշխատանքի գործ լինելով, եթէ չասենք անկարելի ու վեր է մի մարդու ոյժերից, գոնէ, շատ ու շատ դժուար է։ Անհրաժեշտ է, որ այդ կարևոր գործը կատարուի մի քանի գործին հմուտ մասնագէտների ձեռքով և, որ գլխաւորն է, պէտք է նախապէս այդ աշխատանքի համար ձեռագրերն եկեղեցիների պահարաններից հանելու, աշխատողների մէջ բաժանելու և տուն տանելու թոյլտուութիւն ու ձեռնտուութիւն լինի [8])։

[8]) Իսկ որ ամենակարևորն է,—պէտք է հոգ տանել, որ չուտով բոլոր ձեռագրերը հաւաքուեն ս. Լուսաւորիչ, որ իբրև մայր-եկեղեցի զորա համար բոլոր յարմարութիւններն ունի —և՛ տեղ և՛ չքեղ պահարան։ Դորանով նախ, ձեռագրերն ապահով կըլինին կողոպտուելու ենթարկուելուց, որովհետև ս. Լուսաւորիչը շինուած է քաղաքիս միջավայրում և համեմատաբար աւելի լաւ է պահպանուում, քան թէ միւս եկեղեցիները, երկրորդ, մեծ դիւրութիւն կլինի հարցասէրների և պարապողների համար։ Եւ այդ անելը մի դժուար բան չէ, որովհետև արդէն իսկ ձեռագրերի մեծ մասը գտնուում է ս. Լուսաւորչի մատենադարանում. կմնայ, ուրեմն, մի փոքր մասը, որ սրբազան առաջնորդի մի հրամանով կարելի է հաւաքել բերել մայր եկեղեցին։ Այդ մասին մենք խնդրել էինք թեմիս նախկին կառավարիչ Տէր-Յուսիկ վարդապետից և Նախիջևանի նախկին յաջորդ Տ. Մխիթար վարդապետից, այդ

Նախիջևանի ձեռագրերը նայել է հանգուցեալ Բժշկեանը, որ իւր ճանապարհորդութեան դրքի մէջ մոցրել է ս. Լուսաւորչի ձեռագիր աւետարաններից մէկի և Նիսուիթայ

---

մասին խնդրել ենք և Նախիջևանի ներկայ լաջորդ արժան. Մուշէ վարդապետից, և թէև ստացել էինք ու ստացել ենք զոցանից դրական պատասխան ու խոստումներ, բայց մինչև ցայսօր ևս այդ գործը մնացել է իւր առաջուայ դրութեան մէջ։ Նորերումս ս. Թորոս եկեղեցու կողոպտուելը, որին զոհ գնաց և այն արծաթապատ ձեռագիր աւետարանը, որ Նախիջևանի հիմնադիր Աղութեանն ընծայել էր այդ եկեղեցուն, ստիպողական են դարձնում այդ խնդրի փութով կարգադրելը։ Ս. Թորոսում ձեռագրերն անկարգ կերպով թափուած են մի կոտրած, բերանը բաց արկղի մէջ, որ դրուած է վերնատունը. միւս եկեղեցիներում, բացի ս. Լուսաւորչից, նոքա բաց թափուած են խորաններում միւս իրեղէնների հետ միասին և միևնոյն արծաթապատ աւետարաններն են, որ պահում են երէցփոխների խոնաւ «կասսաներում»։ Պարապողները, տեսնել ցանկացողները ստիպուած են պտտել քաղաքի ու գիւղերի բոլոր եկեղեցիները, այստեղից-այնտեղից փոշու տակից հանել ձեռագրերը, աղաչել, խնդրել երէցփոխներին, որոնք արդէն ամեն անգամ չեն լինում եկեղեցիներում, որ ցոյց տան կասսաններում պահուածները։ Հասկանալի է, ուրեմն, որ այսպիսի հանգամանքներում ոչ կարելի է ձեռագրերը կարգին ուսումնասիրել, ոչ էլ ապահով լինել, որ նոքա չեն փոխել խոնաւութիւնից կասսաներում, մկների ու ցեցի կերակուր չեն լինել խորաններում և սորա-նորա ձեռքով տուն չեն տարուել։ Ինչ ասել կուզի, որ աւելի լաւ կլինէր, եթէ հնարաւորութիւն լինէր, բոլոր ձեռագրերը հաւաքել այս կողմերից և ուղարկել ս. Էջմիածնի թանգարանը, կամ թէ հէնց այստեղ մայր եկեղեցու մօտ մի փոքրիկ եկեղեցական թանգարան շինուէր և բոլոր հնութիւնները ձեռագրերի հետ միասին հաւաքուէր նորա մէջ։ Բայց որովհետև մեր ներկայ հանգամանքներում այդ եթէ ոչ անկարելի, գոնէ, շատ դժուար է, ուստի և յարմարագոյն է վերոյիշեալ միջոցի մասին մտածելը, վերոյիշեալը կարգադրելը։ Ս. Թորոսի զողացուած արծաթապատ աւետարանը, որքան մենք յիշում ենք, գրուած էր մագաղաթի վերայ Կաֆայում «առ ոտս սուրբ Թէոդորոսի զինաւորին» մանր բոլորագրով մի ոմն «բազմամեղ և թերավարժ գրիչ» Վարդան երէցի ձեռքով Նահապետ կաթուղիկոսի և Ղրիմի առաջնորդ Յակոբ արքեպիսկոպոսի ժամանակ։ Դարձ կողքին գրուած էր Յովսէփ արքեպիսկոպոսի հետևեալ համառօտ ընծայականը. «զսուրբ աւետարանս չնորհեցի սուրբ Թորոս եկեղեցւոյն Նոր-Նախիջևանի Յովսէփ արք եպիսկոպոս 1792 Նոյ. 27»։



գիւղի ս. Կարապետ եկեղեցու նշանաւոր Յայսմաւուրքի պատմական յիշատակարանները Ս. Լուսաւորչի ձեռագրերից մի քանիսի յիշատակարանները արտագրուել և ուղարկուել են Պետերբուրգ պ. Աղեանին և հանգուցեալ Բերովբէ Պատկանեանին, որոնք իւրեանց Նախիջևանին արած այցելութեան ժամանակ աչքի էին անց կացրել ձեռագրերը և խնդրել էին այդ մասին։ Հայր Ղևոնդ Ալիշանի խնդիրքով Նախիջևանցի Սղիփան Պողոսեանը 1883 թուին արտագրել է մի երկու աւետարանի յիշատակարան և ուղարկել է Վենետիկ. նոյն Ալիշանի խնդիրքով հանգուցեալ Բերովբէ Քուշնարեանը հարևանցօրէն գտնել է ձեռագրերը և իւր քննութեան արդիւնքը հաղորդել է նորան [9]։ Ս. Լուսաւորչի

---

[9]) Հանգուցեալ Հ. Բերովբէ Քուշնարեանը, որ երկար ժամանակ պաշտօն է վարել Թէոդոսիայում, Մխիթարեաններին յատուկ հետաքրքրութեամբ վերաբերուելով դէպի Ղրիմի, մասնաւորապէս դէպի Թէոդոսիայի հայկական հնութիւնները, կազմել է Կաֆայի Հայոց պատմութիւնը։ Այդ պատմութիւնը, ինչպէս յայտնի է, նախ, մաս-մաս տպագրուեց 1892 թուի «Բազմավէպում», յետոյ արդէն իւր, Քուշնարեանի դէպի Նոր-Նախիջևան և Կամենեց-Պոդոլսկան արած ճանապարհորդութեան նկատողութիւնների հետ միասին դուրս եկաւ առանձին գրքոյկով՝ «Պատմութիւն գաղթականութեան Ղրիմու Հայոց» խորագրով։

Մեր ուշադրութիւնն այդ պատմութեան մէջ գրաւում են հանգուցեալ վարդապետի հաղորդած մի քանի տարօրինակ տեղեկութիւնները ու ծանօթութիւնները—«Կաֆա» անուան ստուգաբանութիւնը, Նախիջևանցոց արտասանութիւնը և նիսուիթայցոց ոչ հայ արիւնից սերելու հանգամանքը։ Հ. Քուշնարեանի կարծիքով Կաֆա—Capha անունն առաջ է եկել Հայոց «կաւ ա» խօսքից։ Իբրև թէ Հայերն առաջին անգամ հասնելով Թէոդոսիոյ նաւահանգիստը, ցամաք դուրս գալով ու նկատելով քաղաքի և ծովափը շրջապատող կաւային բլուրներն ու բարձրութիւնները, բացականչել են «կաւ ա», որից և առաջ է եկել ջանովացւոց առոգանութեամբ «կաւ ա» ոճի կաֆա փոխուած ձևը։ Հանգուցեալ վարդապետն իւր այդ կարծիքը հաստատելու համար, բերում է երկու ապացոյց՝ մէկ որ կաֆա անունն առաջին անգամ լսում է պատմութեան մէջ Ժ դարում և Հայերն էլ հէնց առաջին անգամ սկսել են քնակութիւն հաստատել այդ դարում և, երկրորդ, որ ջանովացիք Հայոց «ւ» տառն արտասանելուս են եղել «ֆ» և տառացարձնելուս են եղել ph բարդութեամբ։

Մեզ թւում է, որ սոյս բանասիրական բացատրութիւնը

ձեռագրերը, վերջապէս, տեսել է Օքսֆորդի ուսուցչապետ հայագէտ յայտնի Կոնիբէարը, որ 1886 թուին ս. Էջմիածնից

---

հիմնուած է մ՚այն «կաւ ա» և կաֆա բառերի արտաքին ձևի նմանութեան ու նոյնանշնչութեան վերայ, ուստի և նոյնքան միամիտ ու ծիծաղաշարժ է, որքան և հանդուցեալ Ինճիճեանի դոյն օրինակ բանասիրական յայտնի բացատրութիւնները։ Բայց ինչ որ ներելի էր Ինճիճեանին, ի նկատի առնելով ժամանակը, նոյնն անկասկած նելելի չի կարող լինել Հ. Քուշնարեանին, որի ժամանակ (1892թ) բանասիրական գիտութիւնն այնպիսի մեծ քայլեր էր արել, որ արդէն խօսքերի ու ոճերի արտաքին ձևի նմանութիւնն ու նոյնանշնչութիւնն ոչ մի տեղ չէր բռնում, ոչ մի խորհուրդ չունէր բանասիրական լուրջ հետազօտութիւնների մէջ։ (Տես «Պատմութիւն գաղթականութեան Խրիմու Հայոց՝» Գլուխ Ը, էջ 112)։

Հայր Քերովբէի կարծիքով Կովկասից հրաւիրուած ուսուցիչները դասատուութիւն անելով Նոր-Նախիջևանի և նորա գիւղերի դպրոցներում, աղաւաղել են Նախիջևանցւոց արտասանութիւնը։ Դուրս է գալիս, ուրեմն, որ Նախիջևանցւոց արտասանութիւնն առաջ շատ լաւ է եղել և յետոյ միայն Կովկասցի ուսուցիչների ազդեցութեան ներքոյ աղաւաղուել է։ Թողնելով մի կողմ արևմտեան և արևելեան Հայերի արտասանութեան խնդիրը, որի լաւ կամ վատ լինելը մէկին կամ միւսին առաւելութիւն տալու տեսակէտից կախեալ է զուտ անձնական ճաշակից ու սովորութիւնից, մենք այստեղ չենք կարող մատնացոյց չանել հանդուցեալ վարդապետի վերոյիշեալ կարծիքի անհեթեթութեան վերայ։ Նախիջևանցւոց բարբառն իւր ոճաբանութեամբ, դարձուածներով, տառադարձութեան կանոններով ու բաղաձայների առոգանութեամբ պատկանելով Հայոց լեզուի արևմտեան ճիւղին և, բայի դորանից, ունենալով և իւր մանր մունր առանձնայատկութիւնները, ինչպէս յայտնի է, դասատուութեան համար ներկայացնում է մի քանի դժուարութիւններ, որոնց յաղթելու համար Հայոց լեզուի ուսուցիչները միշտ մեծ ճիգ ու աշխատանք են թափել։ Նախիջևանցի երեխայի ականջը չի զանազանում լծորդ բաղաձայնների հնչիւնների տարբերութիւնը,—պէտք է հետզհետէ ընտելացնել նորան դորան։ Նախիջևանցի երեխան կանոնաւոր տառադարձութիւն անել ամենևին չ՚գիտէ,—պէտք է նորան այդ հասկացնել։ Նախիջևանցի երեխան Մարտիրոս անունն արտասանում է Մայտիրոս, Թադէոսը—Թադիոս, Ղևոնդը—Խևոնդ, Ղազար, Ղազարոս—Խազար, Խազարոս,—պէտք է նորան այդ սովորեցնել։ Նախիջևանցի երեխան ը տառը արտասանում է ժ, և այլն շատ մանր ու խոշոր բաներ, որոնց միայն ծանօթ են այն ուսուցիչները, որոնք երկար ժամանակ գործ են ունեցել Նախիջևանցի երեխաների հետ։ Եթէ հայր Քերովբէի կար-



վերադառնալիս, մի քանի օր մնաց Նախիջևանում և աչքի անցկացրեց ձեռագրերից մի քանիսը «Էստամպաժով» հանելով

---

ծիքով կովկասցի ուսուցիչները սովորեցնելով Նախիջևանցի երեխաներին «իժեք» ի տեղ դրել ու արտասանել «երեք», «պալեր»-ի տեղ «պահել», «սպանելը»-ի տեղ «սպանել», «զուգ»-ի տեղ «սուգ», «զրջել»-ի տեղ շրջել, «Պետրոս» ռուսերէն «Петросъ» չ՚տառադարձնել և այլն, զորանով աղաւաղել ու աղաւաղում են Նախիջևանցւոց «մաքուր», «դեղեցիկ» արտասանութիւնը—, դորա դէմ մենք բան չունինք ասելու, որովհետև, կրկնում ենք, այդ մի զարհուրելի անհեթեթութիւն է։ Եւ յետոյ հայր Քերովբէն արևելեան դրական լեզուն կոչում է «նորահնար», իսկ Նախիջևանի բարբառը—«ոստանիկ»... (Տես «Պատմութիւն գաղթականութեան Խրիմու Հայոց՝» Գլուխ Բ., էջ 39—41.)

Հայր Քուշնարեանը նշանակութիւն տալով Նիսութայ գիւղի ծերունի և հիւանդոտ Տէր-Յովհաննէս քահանայի ասածներին, արձանագրել է իւր պատմութեան մէջ իբրև մի հաւաստի փաստ, թէ նիսութացիք հայ չեն, այլ քրիստոնէութիւն ընդունած նողայ թաթարներ։ Զարմանում ենք, երբ և ինչպէս են այդ մահմեդական նողայները հայադաւան քրիստոնեայ դարձել։ Թաթարների արշաւանքի ժամանակ Հայաստանում այդ անկարելի է, Անեցիների գաղթելու և Ախսարայում թաթարների մէջ ապրելու ժամանակ նոյնպէս անկարելի, Ղրիմում նամանաւանդ անկարելի։ Միթէ կարելի է կարծել, որ Ղրիմի խաների իշխանութեան ժամանակ նոյն իսկ Ղրիմում կարող էին մահմեդական նողայները հաւատափոխ լինել։ Ակներև է, որ Ն սուլթայի քահանան բարկացած լինելով իւր հօտի վերայ, դանդատուել է հայր Քուշնարեանին գիւղացւոց վերայ, և նորա արած հարց ու փորձին ժողովրդի մասին, «նողայ» է կոչել նոցա, ինչպէս որ սովորութիւն կայ Նախիջևանում ամեն մի կոպտութիւն ու անքաղաքավարութիւն նողայութեան անունով կնքել, իսկ հայր Քերովբէն այդ բոլորը հաշած իւրի տեղ ընդունելով, պատմութեան նիւթ է չինել։ Սահմանակ Մխիթարեանք հաւաստի, քննական պատմութիւն գրել երբէք չեն իմացել։ Հայր Քերովբէ Քուշնարեանը Մխիթարեան վարդապետ էր։ (Տես «Պատմութիւն գաղթականութեան Խրիմու Հայոց՝» գլուխ Ժ, էջ 60—63.)

Չենք կարող վերջապէս ուշադրութիւն չդարձնել հայր Քերովբէի պատմութեան և մի կէտի վերայ, որ նոյնպէս շատ բնորոշ է Մխիթարեանների համար։ Վարդապետն իւր պատմութեան «Ուխտադնացութիւն ի Կամենից Փոտոլեան» գլխի մէջ խօսելով Լեհաստանցոց լեհանալու մասին, դորա գլխաւոր պատճառը համարում է Հայերի իւրեանց ազգային լեզուն

նոցանից մէկի կողքին գտնուած ու կազմի համար գործածուած թերթի անորական թէ երբ՝ական ձեռագրի մի հատուած [10]։

---

կորցնելը և անխտիր խնամութիւն անելն իշխող տարրի հետ և ոչ թէ դաւանափոխ լինելը, ինչպէս սովորութիւն եղած է ընդունել։ Ինչ ասել կուզի, որ մեծ անբախտութիւն է մի հասարակութեան համար իւր ազգային լեզուն կորցնելը և անխտիր խնամութիւնից չխորշելը, բայց մենք իսպառ համաձայն չենք հանդուցեալ վարդապետի հետ, և դարձեալ մի անգամ էլ շատ ուրիշների հետ միասին կրկնում ու երեքկնում ենք, թէ լեհահայոց լեհանալու գլխաւոր պատճառն եղել է նոցա բռնի կերպով կաթոլիկ դարձնելը։ Նախ, մի ճշմարտութիւն է, որ հայր աւելի շուտ փոխում է իւր լեզուն, քան թէ իւր դաւանութիւնը, երկրորդ, անխտիր խնամութիւնը հետևանք է դաւանական անխտրութեան։ Քանի որ գոյութիւն ունի ազգային դաւանանքը, անխտիր խնամութիւնն էլ հայերի մէջ այնպէս և այնքան յաճախ չի պատահում, որ սպառնալ ազգութեան գոյութեան։ Մենք աւելին կասենք. Լեհահայերն իւրեանց ազգային լեզուն կորցրած լինելով հանդերձ դեռ երկար, շատ երկար ժամանակ կարող էին հայ մնալ, ինչպէս որ գոնպիսի հանգամանքներում մնացել ու մնում են և շատ ուրիշ հայ համայնքներ։ Ի՞նչու վիրախօս Հայերը վրացի չեն դառել ու չեն դառնում, այն ինչ կաթոլիկ դարձած վիրախօս հայերն իրենց հայ չեն համարում. ինչու թրքախօս ու թաթարախօս հայերը չեն կորչում մահմեդականութեան ովկիանոսում, այն ինչ Երնջակ գաւառի Ունիտորների աչխատանքով կաթոլիկ դարձած հայախօս հայերը ձուլուեցան մահմեդականների հետ. ինչու, վերջապէս, Հաշտարխանցի հայախօս կաթոլիկները միացան իշխող տարրի հետ, իսկ ազգային եկեղեցին պահպանողները մինչև ցայսօր էլ դեռ կան։ (Տես «Պատմ. դաղթակ. Խրիմու Հայոց՝» էջ 197—198.)

[10]) Պ. Կոննիբէարն իւր պատուական տիկնոջ հետ երեք օր մնաց Նոր-Նախիջևանում։ Նա աչքի անցկացրեց ս. Լուսաւորչի մի քանի ձեռագրերը, շատ տաւանեց պատկերազարդ աւետարաններին, նամանաւանդ մի քանիսի գրութեան ձեւին։ Մենք այդ ժամանակ նկատեցինք, որ յարգելի ուսուցչապետը բաւականին վարժ կարդում էր ձեռագրերը, այն ինչ նա շատ դժուարութեամբ կարողանում էր գրել ու կարդալ ներկայում գործածական չեղագիրը։ Մենք նկատեցինք նոյնպէս, որ նա ձեռագրերի տառերի ձևից յաջողութեամբ կարողանում էր գուշակել ձեռագրերի գրուելու ժամանակը։ Դրպրանոցի ուսուցչական խումբը ի պատիւ անդլիացի հայագէ-



Այդ վերջին այցելութիւնն անհետևանք չանցաւ ձեռագրերի պահպանելու և կարգի բերելու գործի համար։ Եկեղեցու վարչութիւնը, որ մինչև այդ ժամանակ բոլորովին բարձի թողի էր արել ձեռագրերը, ենթարկելով նոցա ցեցակեր լինելու և փոշուց ու խոնաւութիւնից փտելու վիճակին, տեսնելով, որ այդ աչքից ընկած մագաղաթներին, այցելութիւն են գալիս մինչև իսկ հեռաւոր տեղերից օտարազգիներ, սթափուեց խոր քնից և ձեռքից եկած միջոցները գործ դրեց նոցա կարգի բերելու և խնամքով պահելու համար։ Բաց դարակների և հասարակ տախտակների տեղ, որոնց վերայ մինչև այդ ժամանակ անկարգ կերպով թափուած էին ձեռագրերը, դրուեցան վերոյիշեալ չքեղ ապակէզարդ պահարանները, ձեռագրերի վերայից տասնեակ տարիներով հաւաքուած փոշին մաքրուեցաւ, հնացած-անպէտք դարձած օրինակները հանուեցան, զատուեցան, իսկ մաքուրները, անաղարտ մնացածները կարգով չարուեցան պահարանում, և այլն և այլն [11]։

## Գ

Նոր Նախիջևանի ձեռագրերն ընդհանրապէս մեր ձեռագրերի բոլոր միւս հաւաքածուների մէջ կարող են պատուաւոր տեղ բռնել իւրեանց թուի չատութեամբ, հնութեամբ, գրութեան արուեստի պատուականութեամբ, պատկերների, նկարների, ներկերի գեղեցկութեամբ, լիչատակարանների պատմական նշանակութեամբ, մագաղաթի նրբութեամբ և այլն։ Նոքա բոլորն էլ գրուած են Ղրիմի զանազան քաղաքներում ու գիւղերում—Կաֆայում, Սուրխաթում, Բախչիսարայում, Ղարասուբազարում, Հին-Ղրիմում, Օրդուբազարում, Սովուխ-Զորախ գիւղում, Սրուկ-Թլակ գիւղում,

---

տին մի երեկոյ ընթրիք սարքեց դպրանոցի փոքրիկ պարտէզում և պատուեց նորան «հայկական խորովածով»։ Ընթրիքի ժամանակ ֆրանսերէն և հայերէն գրաբառ ճառեր արտասանուեցան, որոնց բնագրերը խնդրեց և իւր հետ տարաւ մեծապատիւ հիւրը։

[11]) Այդ հնացած ու անպէտք դարձած ձեռագրերի հաւուկտորները հաւաքած մի արկղի մէջ պահում էին մինչև վերջին ժամանակները եկեղեցու վերնատանը։ Ներկայումս այդ արկղն այլ ևս չկայ, չգիտենք ինչ է եղել։

Շանշաղ գիւղում, Աղախում, Լեհաստանի Իլով քաղաքում, Երուսաղէմում, Կիլիկիայում, Միջագետքի Բերդաձոր կամ Բերիաջուկ գիւղում, Հայաստանի Կարին քաղաքում, Սեբաստիայում, Վարագայ Ս. Նշանում, Բաբերդի Վանան-չէն գիւղում, Սեբաստիոյ Ճանճի գիւղում, և այլն և այլն։ Արժանի է ուշադրութեան այն հանգամանքը, որ ձեռագրների մէջ չկայ մէկը, որ գրուած լինի Անիում, թէև Նախիջևանցիք Անուշ գաղթականներից լինելով, պէտք է որ ուրիշ հնութիւնների հետ միասին և ձեռագրեր բերած լինէին իւրեանց հայրենիքից։

Ձեռագրերի մեծ մասը գրուած է Կաֆայում։ Ղրիմի հայ գաղթականութեան ծաղկած ժամանակ այդտեղ դոյութիւն է ունեցել գլխաւորապէս հոգևորականներից բաղկացած մի բարեպաշտ գիտնական դասակարգ, որ Հայաստանից բերած լինելով գրչագրութեան, նկարչութեան և ոսկեղու ու ծաղկելու արուեստները, պահպանել ու շարունակել է նոյն արուեստները և նոր հայրենիքում, որդեց-որդի աւանդելով նոցա ուսմունքը։ Դոքա, հայ գաղթականների այդ գիտնականներն ապրելիս են եղել գլխաւորապէս Կաֆայի քառասուն եկեղեցիների խցիկներում և «ընդ հովանեաւ» այս կամ այն եկեղեցու արտագրելիս են եղել ըստիր օրինակներից զանազան ձեռագրեր։ Մի մասն էլ դոցանից ապրելիս է եղել վանքերում, տիրապէս Ս. Խաչ վանքի «Հողէտներում», ինչպէս հին ճգնաւորները, և շարունակելիս ու զարգացնելիս է եղել նոյն արուեստները։ Որ մի այդպիսի գիտնական դասակարգ եղել է Ղրիմում, որ հին ճգնաւորների նման մենաւոր կեանք է վարել և մեծ նեղութիւններով ու բազմաթիւ զրկանքներով ձեռագրեր արտագրելու բարեպաշտ գործով է զբաղուել—, այդ երևում է և ձեռագրերից մի քանիսի լիշատակարաններից, որոնց մէջ ուղղակի լիշուած են այն մենաւոր խցիկները կամ «Հողէտները», որտեղ ճգնել ու գրել են նոքա։ Ս. Լուսաւորչի ճաշոցներից մէկի լիշատակարանի մէջ, օրինակի համար, մենք կարդում ենք. «Եղև ծրագրութիւն մատենագիր լիշատակարանիս ի լաշխարհիս հոնաց՝ որ այժմ կոչի Ղրիմ, ի մեծի գիւղաքաղաքիս Ղարասու ի քրիստոնեա ժողով վայրիս ի հողաւարմար տներս առ ամս եղեր զեռուն ընդ հովանեաւ սրբանորոգ տիրաբնակ սուրբ Աստուածածնի եկեղեցւոյս, և այլ սրբոց խորանաց՝ և կաթուղիկոսութեանն տէր Յակոբին. ընդհանուր ամենայն Հայաստան ազգիս։ Եւ յարհիական եպիսկոպոսութեանն տէր Գրիգորի՝ յայսմ նահանգիս, ամենայն հիւսիսական կողմանցս վերադիտողի. որ յայսմ ամի փոխեցաւ առ Քրիստոս ի ճանապարհին Երուսաղէմայ. և եթող մեզ սուգ մեծ. և տրտմութիւն անմխիթար՝ որ և անտէրունչ մնալով մեր՝ ոչ գիտեմք պառաջիկայն թէ զինչ լինելոց է։ Դարձեալ լիշեսջիք զուսուցող գրիս զհոգևոր հայրն իմ տէր Յովանէս քահանայն ժրաջան գրիչն, որ բազում աշխատանաւք և ջանիւք ուսոյց մեզ արհեստ գրագրութեան. և մեր սկսեալ զաստուածաշունչս աւարտն արարաք» և այլն։

Նոր-Նախիջևանի ձեռագրերի մեծ մասը հասարակ կաշեպատ փայտէ կազմ ունի, փոքր մասն արծաթապատ է, կան և սակաւաթիւ թաւշապատ աւետարաններ։ Կազմերի վերայ մի քանի ձեռագիր ունին արծաթեայ մեծ ու փոքր խաչեր ու զարդեր լիշատակարաններով, մի քանիսի կազմն էլ ներքին կողմից պատած է մետաքսէ դոնդղոն կտորներով։ Ձեռագրերից շատերը գրուած են մագաղաթի վերայ, որոնցից մի քանիսը շատ նուրբ և ընտիր տեսակից են. երևում է, որ հմուտ վարպետների ձեռքով են պատրաստուած և շատ դժուարութեամբ ու մեծ ծախքով ձեռք բերուած։ Շատ ձեռագրերի մէջ կազմի ու գրքերի կողքերն ամրացնելու համար գործածուած են հին ընտիր մագաղաթի թերթեր, առնուած Հայոց աւելի հին, երկաթագիր աւետարաններից, կան և եբրայական, լատինական, յունական ձեռագրերից առնուած թերթեր, դարձեալ կազմի համար գործածուած։ Ձեռագրերից շատերը պատկերազարդ են. նոցանից մի քանիսի պատկերներն այնքան նուրբ, գեղեցիկ ու ճարտարութեամբ են քաշուած, ծաղկուած, ոսկուած, որ յաջողութեամբ կարող են մրցել մեր լաւագոյն ձեռագրերի մէջ գտնուած պատկերների հետ։ Կայ, ի միջի այլոց, մի ձեռագիր, որի պատկերները քաշուած են մեր պատկերահանութեան ու զարդագրութեան գեղարուեստի մէջ լայտնի Սարգիս Պիծակի ձեռքով։ Առ հասարակ երևում է, որ նկարների, տառերի ու զարդերի ոսկողները, ծաղկողները, գունողները շատ հմուտ են եղել իւրեանց արուեստին, ապա թէ ոչ՝ անկարելի է, որ այսքան ժամանակ անցնելուց և այնքան անխնամք պահուելուց լետոյ էլ նոցա ոսկին, գոյնը և ներկն այնպէս լաւ պահպանուէին։ Մի քանի պատկերներ կան, որոնք այնպէս լաւ են պահպանուած, որ, կարծես,

նկարիչը նոր է միայն վերջացրել նոցա։

Պատկերները մեր ձեռագրերի սովորական պատկերներն են—Աւետարանիչների մեծագիր պատկերներն՝ իւրաքանչիւրն իւր աւետարանի սկզբում, Աւետման, Ծննդեան, Քառասնօրեայ գալստեան ի տաճարն, Մկրտութեան, Պայծառակերպութեան, Խաչելութեան, Յարութեան, Համբարձման, Դժոխոց աւերման, Հոգեգալստի, Վերջին դատաստանի և այլն մեծագիր պատկերները աւետարանների սկզբում կարգով և աւետարանների մէջ գործող անձանց և կատարուած անցքերի փոքրագիր պատկերները լուսանցքների այն տեղերում, որտեղ պատկերներին համապատասխան անցքերն են պատմուում, խորանաղարդեր կանոնատախտակների համար, լուսանցքազարդեր՝ թռչուններ, ծաղիկներ, ծառեր, օձեր, կաթուղիկէներ, խաչեր, աչտանակներ, և այլն և այլն։

Արժանի է ուշադրութեան Եղնիկ Կողբացու պատկերը, որ մենք տեսնում ենք քաչուած Հաւաքածուներից կամ Գարդան—գրքերից մէկի մէջ, և նամանաւանդ Լևոն Երրորդ Ռուբինեանց թագաւորի պատկերը, որ գտնուում է աւետարաններից մէկի մէջ։ Ոսկէ տեղի վերայ գրուած է ծաղկաւոր կըտորով պարածածկուած ցած գահոյքի պէս մի նստարան, որի առաջ կանգնած է գլխաբաց, երկար ալեզարդ մազերով և կարճ կլոր մօրուքով մի միջահասակ տղամարդ։ Նա հագած է երկար, մինչև ոտքերը հասնող պարեգօտ, որ ամեն կողմից զարդարուած է մէջը կապոյտ ու եղերքն ոսկի շրջանակներով, որոնց մէջ նկարուած է առիւծ և գորա գլխավերևն արքեի կամ մահիկի պէս մի բան։ Այդ պարեգօտի վերայից ձգուած է մի կարմրագոյն երկար լօղիկ, որի եղերքը պարեգօտի եղերքի նման ոսկեգոյն տեղի վերայ նախշած է մէջէջ կարմիր-կապոյտ բծերով։ Պատկերի ձեռքը տրուած է ծաղիկ, իսկ գլխի վերայ ձևացրած է շրջանակաձև ճաճանչաւոր պսակի պէս մի բան, ինչպիսին մենք սովորաբար տեսնում ենք նկարուած սրբերի պատկերների գլխին։ Երկու հրեշտաների կանման կարմիր-կապոյտ հագած էակներ, որոնք, կարծես, գուրս են ընկած օդի մէջ կամարը բռնող սիւների խոյակների յետեից, բռնած են թագաւորի գլխին քչոցներ։ Պատկերի ձախ կողմը վերևից ցած կապոյտ ներկով խոշոր գլխագիր տառերով գրուած է. «Լևոն Որդ», իսկ աջ կողմը գորա շարունակութիւնը—«Հեթում թագ», որ պէտք է կարդալ «Լևոն



որդի Հեթում թագաւորի»։ Մենք կարծում ենք, որ դա Լևոն Երրորդի պատկերն է, որովհետև այն ձեռագիր աւետարանը, որի միջից կտրուած է եղել և որի մէջ այժմ նորից զետեղուած է այդ պատկերը, գրուած է Հեթում Առաջնի ժամանակ Հայոց ՈՂԸ (1249) թուին Տէր-Կոստանդին կաթուղիկոսի (1220—1267) հրամանով և ծախքով Հռոմից բերած մագաղաթի վերայ և պատկանել է Լևոն Դ-ին, որ ընծայել է իւր քրոջը՝ «աստուածասէր, բարեփառ, կայսերածին և ծիրանածնունդ» Սալիդ քաղաքի տիկին Տամֆիմէին կամ Տամֆիմէին, որ ՁԺԲ (1263) թուին իւր ընտանիքով եկել էր իւր հօր մօտ Կիլիկիա։

Ձեռագրերի մեծ մասը բոլորագիր են կարմրագեղ կամ ոսկած գլխագրերով, թռչնագրերով ու ծաղկագրերով. նամանաւանդ զեղեցիկ են աւետարաններից մի քանիսի առաջին երեսները, որոնք գրուած են համակ ոսկած և գոյնզգոյն ներկած խոշոր գլխագրերով։ Մի քանի աւետարան չունին «իրք կնոջն չնացելոյ» գլուխը և Մարկոսի աւետարանից լեռոյ գրուած «Յարուցեալ Յիսուս» կտորը, որոնք, ինչպէս յայտնի է, անվաւեր են և լեռոյ են միայն գրուած. մի քանիսն էլ թէև ունին այդ կտորները, բայց այդպիսի ձեռագրերի մէջ դոքա, այդ կտորները գրուած են իբրև յաւելուած առանձին գլուխներով։

Աւետարանների կազմերի վերայ կպցրած մեծ ու փոքր արծաթեայ խաչերի վերայ տեղ-տեղ ուրիշ փիշատակարանների հետ միասին մենք կարդում ենք և «բժշկական» խօսքը։ Դոքա բժշկական աւետարաններն են, որոնցից Հայաստանի զանազան խուլ անկիւններում նոյն իսկ գիւղացոց խրճիթներում շատ է պահպանուած, այն ինչ միւս տեսակները, բժշկական չհամարուածները գլխաւորապէս հաւաքուած են վանական և եկեղեցական մատենադարաններում, եթէ միայն «մատենադարան» խօսքը կարելի է յատկացնել մեր եկեղեցիների ու վանքերի պատերի մէջ փորուած խոնաւ պահարաններին, կոտրտուած արկղներին և այլ այդ տեսակ ձեռագրեր պահելու համար նշանակուած անպէտք դարակներին, որոնց մէջ սովորաբար անկարգ թափուած պահուում են մեր ձեռագրերը։ Դորա պատճառը պէտք է որոնել այն հանգամանքի մէջ, որ այդ ձեռագրերը բժշկելու հրաշագործ համբաւ վայելելով ամբոխի աչքում, միշտ գրաւել ու գրաւում են բազմա-

թիւ ուխտաւորներ, որոնց ջերմեռանդութեան արդիւնքը լինում է մի որոշ եկամուտ, որ նոքա, այսինքն բժշկական աւետարանները բերում են կամ տալիս են իւրեանց տէրերին։ Գիւղացիներից շատերը կամենալով տիրանալ այդ եկամտին, ամենայն միջոց գործ են դնում այդպիսի աւետարաններ ձեռք բերելու ու իւրեանց տներում պահելու համար, որից և առաջ են գալիս այն ցաւալի դէպքերը, որոնք յաճախակի տեղի են ունենում մեր գիւղական հասարակութիւնների մէջ։ Կռիւներ, հայհոյանք, թշնամութիւն և մինչև իսկ դողութիւն միշտ անպակաս են լինում այդպիսի տեղերում, որովհետև աւետարանատէրերը մի անգամ ձեռք բերելով հրաշագործ աւետարանը, պահում են նորան ամենածածուկ տեղերում իւրեանց աչքի լոյսի պէս և կտակում են իւրեանց որդիներին ու թոռներին, աւանդելով, որ նոքա ևս այդպէս պինդ պահեն սրբութիւնը, որպէսզի ընտանիքը չզրկուի իւր մշտական և հաստատ եկամտի աղբիւրից։ Միւս գիւղացիներն էլ տեսնելով այդ, սկսում են նախանձել, և գործ են դնում զանազան միջոցներ խլելու սրբութիւնները տէրերի ձեռքից և իրանց սեփականացնել. նոքա կամ ծածուկ գողանում են նոցա, կամ արձակ-համարձակ աւազակների պէս յարձակւում են տների վերայ և փախցնում են աւետարանները, որից և առաջ է գալիս այն հանդամանքը, որ բժշկական աւետարաններից շատերը, որոնք յաճախ լինում են շատ հին, ընտիր ձեռագրեր, փչացւում են և կորչում։

Հոգևոր իշխանութեան պարտքն է, ի հարկէ, հետզհետէ զանազան միջոցներով ժողովել այդ թանդագին ձեռագրերն և ամփոփել Ս. Էջմիածնի մատենադարանում։ Դորանով նա մի քանի նպատակի կհասնի. նախ, հայ գիւղական հասարակութիւնների միջից կվերացնէ կռուապատճառը, երկրորդ, կազատէ կորստեան վտանգից հայ գեղարուեստի այդ մնացորդները և, երրորդ, միջոց կտայ ուսումնականներին հեշտութեամբ նոցա գտնելու և գործ ածելու իւրեանց ուսումնական հետազօտութիւնների համար, թէև այն էլ պէտք է ասել, որ այդ բանը գլուխ բերելը հեշտ չէ, որովհետև գիւղացիք երբէք իւրեանց կամքով չեն յօժարում հրաժարուել իւրեանց հարստութիւնից, գոնէ, եղած փորձերից շատերն անյաջող են եղել։ Մասնաւոր մարդկանց պատկանածները պաշտպանում են իրանց տէրերից, իսկ ուխտատեղիներին ու եկեղեցիներին



պատկանածները տեղի ամբողջ հասարակութիւնից։

Մենք լիշում ենք մի դէպք, երբ Գանձակ գաւառի Գիւլիստան գիւղի նշանաւոր «Կարմիր» կոչուած հրաշագործ աւետարանը գողացել էին նորա տիրոջից և մի մեծ քրէական գործ էր բացուել դորա գողութեան հանդամանքներից։ Նոյն «Կարմիր աւետարանը» գործի վերջանալուց յետոյ, երբ Հոգևոր իշխանութիւնը յաջողեցրել առնել և դնել տեղի եկեղեցին, արդէն սկսել էր ծառայել իբրև եկամտի աղբիւր եկեղեցու երեցփոխի ու հոգևորականների համար։ Լաւ լիշում ենք, թէ ինչպիսի խայտառակ և ամօթալի տեսարանի հանդիպեցինք, երբ մի անգամ պատահեցինք Գիւլիստանում և կամեցանք տեսնել այդ աւետարանը։ Այդ օրը բազմաթիւ ուխտաւորներ էին հաւաքուել հրաշագործ աւետարանը համբուրելու համար մասնաւորապէս սարը եկած Սարովցիներից։ Երբ քահանան հանդիսաւոր կերպով շարական ասելով հանդէս բերեց աւետարանը, մի առ մի սկսաւ բանալ նրա բազմաթիւ թաշկինակները և ուխտաւորները մեծ հաւատքով մօտեցան համբուրելու և խաչ-համբոյր ձգելու, երեցփոխը դարձաւ դէպի ժողովուրդը և բարձր ձայնով հրաւիրեց նորան ջերմեռանդութեամբ մօտենալու և առատութեամբ նուէրներ տալու, որովհետև տէրտէրն իբրև թէ հարիւր լիսուն մանէթով կապալով է վերցրել աւետարանը, ուստի պէտք է լրացնէ այդ գումարը, թէ չէ՝ մեղք կլինի։

Վերոլիշեալ «Կարմիր աւետարանի» գողութեան կամ գերեվարութեան դէպքի պէս մի դէպքի մասին էլ մենք կարդում ենք Նախիջևանի ձեռագիր աւետարաններից մէկի լիշատակարանում։ «Այս սուրբ աւետարանս որ անկեալ էր ի ձեռն լօթռանին առեալ էին Օրին ժամէն որ բերեալ էին ի քաղաքն Նիժնայ որ հանդիպեցաւ մեզ քէֆէցի մահտեսի Օվակէմս Պահչայսարայցի Ակոբի որդի Թորոսը որ այս սուրբ աւետարանս ազատեցինք ի գերութենէն որ մենք ոչ էինք մնացեալ Աստուած ազատեաց մեզ այս սուրբ աւետարանս բերինք խաբմ ի քաղաքն Պահչայսարայ որ տվանք Պալբխալավայ լիշատակ ի դուռն սուրբ Օվհաննէսին քէֆէցի մահտեսի Օվակէմին և ծնողացը հոգուն Պահչայսարայցի աճէմ Պիլաթէին որդուն պարոն Փիլիպոսին և ծնողաց հոգուն կամ դէմ մեղաւոր և անարժան Պահչայսարայցի ակոբի որդի Թորոսին Լուսպարոնին ծընողացը հոգուն որ եդին սուրբ աւետարանս

այս անուանի սուրբ եկեղեցին կարդացէք և լսեցէք ասէք Աստուած ողորմի ծընողացներուն հոգուն յիշեցէք հար մեղալեօվ որ յիշիլիչիք առաչի քրիստոսի ամէն գրեցաւ ի գիրս թվին ՌՃՂ-ին մայիսի ամսուն Ի-ին» [12]։

Նախիջևանի բժշկական աւետարանները, թէև վաղուց արդէն կորցրել են իւրեանց հրաչագործութիւն անելու համբաւը, ուստի և հանգիստ մնում են իւրեանց պահարաններում, բայց ժողովրդի մէջ տակաւին կենդանի են այդպիսի ձեռագրերին մի ժամանակ վերագրուած յարգանքի ու պատուի արձագանգները «Օղաբաչենց» կոչուած «բժշկարան» աւետարանը, որ անկասկած եկեղեցուց է ներկայ տիրոջ տունը տարուել, չեն վերադարձնում նորից իր տեղը, որովհետև հաւատում են, թէ նա «օղուր» է բերել իւրեանց տունը, ուստի եթէ հանեն նորան տանից, կարող է այդ «օղուրն» էլ երթալ աւետարանի հետ։

## Դ

Նոր-Նախիջևանի ձեռագրերի սկզբից ու վերջին բաց մնացած թերթերի վերայ մենք յաճախ տեսնում ենք նօտրագրով կամ չեղագրով գրուած զանազան ոտանաւորներ, տաղեր, զանձեր, ներբողներ, որոնք ներկայումս մեծ գին ունին

---

[12]) Այդ աւետարանը, որ պատկերազարդ է, ներկայումս գտնուում է ս. Նիկողայոս եկեղեցում։ Դա գրուած է 1722 թուին մի ոմն «ապիկար» Եղեկիել քահանայի ձեռքով։ Դորա կազմի մի երեսին կպցրած արծաթեայ խաչի վերայ գրուած է. «Ցիշատակ է սուրբ նշանս և բարեխօս օրի եղեալ երթ և էկող վաճառականացն ի դուռն օրի եղեալ սուրբ Աստուածածնի. թվին ՌՃՀ-ին. խուիմճի չանպազին բան է»։

Արժանի է ուշադրութեան ս. Նիկողայոս եկեղեցու խորհրդատեարներից մէկը, որի գրուելու թուականն այսպէս է որոշուած. «Արդ գրեցաւ սա ի յամի թուարերութեան հայկազեան սեռի՝ քսան և մէկ յոբելինի. և երկրորդ վեչտասանի. և միակ երկոտասանի. և յուլիս ամսոյ ի Ժ աւուրն հինգշաբաթի, ձեռամբ անարհեստ խասպէկ գրչի ի հայրապետութեան տեառն Փիլիպպոսի կաթողիկոսի»։ (ՌՂԴ—1645)։

Ս. Նիկողայոսի ամենահին ձեռագիրը մի աւետարան է, որ գրուած է Հայոց ՉԽԲ թուին Ստեփաննոս կաթուղիկոսի ժամանակ Վարագայ ս. Նշանում։



մեզ համար, որովհետև, ինչպէս յայտնի է, մեր միջնադարեան բանաստեղծութեան արդիւնքը դեռ-մինչև ցայսօր լիովին չի հաւաքուած, չի զտուած, չի հրատարակուած։ Դոցանով, ձեռագրերի այդ յետոյ ժամանակի յաւելուածներով կարելի է մի կողմից լրացնել չատ կորած համարուած բանաստեղծական կտորների պակասը, միւս կողմից էլ դոցա միջոցով կարելի է զտել, մաքրել և վերականգնել արդէն իսկ գտնուած ու հրատարակուածների աղաւաղուած տեղերը։ Ս. Լուսաւորչի ՌՂԲ (1643) թուին գրուած Շարակնոց և Սաղմոսարան ձեռագրի վերջում, օրինակի համար, գրուած է տգեղ չղագրով հետևեալ աշխարհաբառախառն գրաբառ ներբողը, որ ժողովրդական բանահիւսութեան բնաւորութիւն ունի.

Անճառին տաճար, Մրթան գիշերի,
Բանին հաչտարար Ճրագ լուսատու Մարիամ.
Գերագոյն գտար, Մարիամ։ Ցեռեալ ընդ ոսկի,
Դուռն երկնից գովեալ. Նարդոս քրքումի,
Սրգեն Սերովբէք, Շուչան ի դաչտի Մարիամ։
Ջարմանան Քերովբէք, Ոսկի ճուլածուի,
Երանեալ սուրբ կոյս Մարիամ։ Չի կայ քեզ նըման
Ընտրեալդ ի Փրկչէն, Պտուղ ցանկալի,
Թագըդ պարծանաց, Ջուր մաքուր, յստակ Մարիամ։
Ժառանգ աւետեաց, Ռահըդ վերին,
Իսկուհի մաքուր Մարիամ։ Սատափ ի ծովին,
Լուսին անընման, Վանիչ մարգարտին,
Խորան խընդալի, Տաճար տէրունի Մարիամ։
Ծառ նարընջենի, Բաբունուն վերին,
Կաքաւ քաղցրախօս Մարիամ։ Ցօղ գարնանային,
Հաւիկ սըխրալի, Քո ճոխ պատկերին,
Ձայն քո տատրակի, Ի՛ իւսեալ ոսկով,
Ղամբար գիշերի, Փափաքեալ ցանկամ, Մարիամ։

Այս ոտանաւոր ներբողի տակ ծանօթարանած է. «եպիսկոպոսին ասածն է»։ Թէ ով է այդ եպիսկոպոսը, մենք որոշակի ոչինչ չենք կարող ասել։ Մեր միջնադարեան բանաստեղծների մէջ արդէն իսկ հոգևորականներ չատ կան, մինչև անգամ իսկ այնպիսի բարձրաստիճան հոգևորականներ, ինչպիսի էին Սսի կաթուղիկոս Յովհաննէս Թլկուրանցին, Աղթամարայ կաթուղիկոս Գրիգորիս Աղթամարցին, Ամդայ առաջնորդ Մկրտիչ Նաղաչը և միւսները։ Դա, գուցէ, լինի այն Յովհան-

նէս եպիսկոպոսը, որ երգել է յայտնի «վասն թռչնոց» երգը՝ «Տէր Յովհաննէս հոգւով տկար...», և այլն։

Նոյն ձեռագրի մէջ դարձեալ տգեղ շղագրով և, ինչպէս երևում է, նոյն իսկ վերոյիշեալ ներբողը գրող անձի ձեռքով գրուած է և հետևեալ վարդի ու սոխակի երգը, որ ամէն բանով արդէն մեր զուտ ժողովրդական միջնադարեան երգերից է.

Առաւօտեան ժամի պահուն
Ահնես զԱծ զուարթուն.
Թռչուն փոքրիկ ես զուարթուն.
Զրուցէ, պուլպուլ, զրուցէ,
Զայնիկդ ի հոգիս դու զրուցէ։
Գիշեր-ցերեկ քուն չունիս,
Ժամ մի երբէք չի հանգչիս,
Վարդին սիրուն կու վառիս.
Զրուցէ..., և այլն։
Վարդն հպարտ է բնութեամբ
Վասն գեղեցիկ տեսութեան.
Ընդ քեզ կու հայի ցնծութեամբ
Զրուցէ...
Կանանչ ու կարմիր կու հագնի,
Ըսպիտակ ու ծիրանի,
Նըման արևու կու փայլէ.
Զրուցէ...
Ահա զատիկ մեր հասեալ է,
Սաստիկ ձմեռն անցեալ է,
Վարդին կոկոնն բացեալ է,
Զրուցէ...
Նարդոս զիւր հոտն բուրէ,
Մանուկն գունդգունն է,
Գարնան աւետիս կուբերէ.
Զրուցէ...
Այգիքն մեր ծաղկեալ է,
Անուշահոտ բուրեալ է,
Քաղցրահամ պտուղ բերեալ է.
Զրուցէ...
Թղենին տերևն արձակեաց,
Ծիրանի ծաղիկ նըռնենեաց,
Մաքուր տատրակն ձայնեաց
Զրուցէ...
Ողկոյզ հաւողն հասեալ է,
Թուխ և սպիտակ կախեալ է,
Կարասն գինով լցեալ է,
Զրուցէ...
Կարմիր և ըսպիտակ խնծոր է,
Նըման լուսնի կու փայլէ,
Տեսըն զիս միշտ կու հալէ.
Զրուցէ...
Անտոնիէ զայս երգէ,
Մանուկ, անուշ դու ձայնէ,
Եղբայր, բաժակըդ ըմպէ.
Զրուցէ, Պուլպուլ, զրուցէ,
Զայնիկդ ի հոգիս դու ձայնէ։

Նոյն Ս. Լուսաւորչի Ռձիվ (1675) թուին Ղարասու քաղաքում գրուած խորհրդատետր ձեռագրի սկզբում նոր տգեղ բոլորագրով գրուած է մի ուրիշ վարիանտով «խաղող ղքեզ գովել պիտի» երգը, որ, ինչպէս յայտնի է, առաջին անգամ հրատարակուել է 1851 թուին Պոլսի «Բանասէր» ամսագրում «Ռամկական երգեր» խորագրով։ Երգի այդ օրինակը թէև մի շատ ազէտ անձի ձեռքով է գրուած երևում, որովհետև լիքն է տառասխալներով ու աղաւաղումներով, այնուամենայնիւ դա իւր անաղարտ կտորներով կարող է հեշտութեամբ ուղղել հրատարակուածի մի քանի սխալներն ու աղաւաղումները.—

Խաղող ըղքեզ գովել պէտքէ,
Որ բոլոր պըտղովդս հաւասար
Զի դու միանս գեղեցիկ
Ցամ պըղուն թաճու սալվար։
Թելդը քաշած ոսկու մէջէն,
Դու մարգարիտ ոսկի չար,
Քո մէկ պըտուղդ ամէ ճուար
Տրպազոնի ակ ու գուար։
Ազդ մի թուխ. ազդ մի սպիտակ,
Ազդ մի կարմիր, որ լուս կուտար,
Ազդ մի դեղին՝ խունկի նման,
Անուշահոտ մուշ ու ամպեր։
Դու դրախտէն մէջ արմզան
Արարիչէն պարգևեցար,
Քեզի հրեշտակ երեր Նոյին,
Որ քո պըտղովդ ուրախանար։
Անմահութեան պըտուղ դու ես,
Որ աշխարհիս մէջ բուսար.

Հոտով անուշ, գունով պայծառ,
Մարդ քո սէրուդ ոչ ագենար։
Ընդքեզ քաղեն, տանին հնձան,
Ճմլելու տան քեզի իրար.
Վարդի նըման ջուր կըբըխաս,
Գետի նըման որդոր գընաս։
Տանին քեզի, լընուն կարաս,
Առանց կըրակ կը եռանաս.
Շատ թագաւոր ժողովին վերադ,
Մեծ մեծ իշխանք, աւագ ու մարագ։
Թագաւորաց սիտ բանաս
Եւ տէր այնես քաղաքի հաղար.
Թէ նա ունէր հաղար չարկամ,
Կամ խոցիլ սիրտ դիժար,
Ցորժամ խըմէ թաս մը լիք
Ցամենայն թողու և հաշտայ։

Նախիջևանի նօտրագիր ձեռագիր տաղարաններից մէկն այս տաղի վերջին շատ աղաւաղուած և միանգամայն անմիտ դարձած երկու տունը հետևեալ կերպով է ուղղում.—

Զթագաւորաց սիրտն բանաս
Եւ տէր այնես քաղքի հաղար.
Թէ նա ունէր հաղար չարկամ
Նա քո սիրովըդ հաշտենար։

Թէ բարկացած լինի մարդոց,
Կամի խոցեր զինքն դիժար,
Ցայնժամ խմէ կաթ մի քենէ,
Բաշխէ զամէնն ու հաշտենար։

Նոյն նօտրագիր տաղարանն ոչ միայն ուղղում է վերոյիշեալ խորհրդատետրի մէջ գրուածի վերջին տները, այլ և տեղեկացնում է նորա վերայ այլ ևս վեց տուն, որ մենք չենք տեսնում «Բանասէրում» հրատարակուած այդ տաղի սկզբնական օրինակի մէջ։ Աւելորդ չենք համարում դնել այստեղ այդ աւելորդ տները, որոնք այսպիսով առաջին անգամ հրատարակուելով, կարող են շահեկան լինել թէ մեր ընթերցողների և թէ մեր միջնադարեան բանաստեղծութեան բովանդակ արդիւնքը լիակատար հաւաքածուով հրատարակելու գործով հետաքրքրուողների համար.—

Յորժամ խմէ աղքատն ի քէն, Մասխարանայր զէտ զիւանար։
Որ զհացն ու զջուրն կու մուրայր, Զեռօք սուրբ քահանային
Նա լինի տէր աշխարհիս՝ Պատարագի ամեն տաճար.
Արարածոցըս պարապար։ Դու հիւանդաց լինիս բժիշկ,
Յորքամ խմէ կուրն ի քէնէ, Մեղաւորաց դու քաւարան
Որ ի մօրէ ծնեալ լիմար, Որ սարկաւագ բերթաց ասիր,
Հանց հետ քաղաքաց տալ մեկ- Դուն ի գինուն ինչ չահեցար.
նութիւն. Անչափ ունիս հետ սէր գինուն,
Զէ տեսեր, չունի խապար։ Որ գովեցիր սիրովդ յօժար։
Յորժամ խմէ մունճն ի քէնէ, Գիմ ես չունիմ գինուն չարիք,
Որի լեզուն քամոտ լինար,— Ես բաժակին եմ խզմէթքար.
Զերթ զթուխակն աղվնուն լե- Ես զբաժակն գովեցի,
զուն Որ մեր հոգոցն է լուսարար։

Ս. Լուսաւորչի մի ուրիշ անթուական խորհրդատեսր ձեռագրի սկզբում գրուած է հետևեալ խրատաբանական ոտանաւորը, որ թէև իւր գրութեան ձևով ու ոտանաւորի արուեստով չատ էլ հետաքրքրական չէ, բայց այնուամենայնիւ արժանի է ուշադրութեան իւր բովանդակութեամբ.—

Ով քահանայդ պատարագաւդ, Թէ դու ունիս արատ ի քեզ,
Դու իմացիր զխորհուրդս փըր- Ցեկեղեցի չի մատնես,
կաւդ. Ոչ ի խորհուրդ մերձիլ իշխես,
Սա է հոգոց կենագործաւդ, Որ լայ ամօթ չկրես։
Թէև սբ. լինի մատուցող։ Թէև լրբիս, պատարագես,—
Եւ թէ լինի քան զիս խաբաւդ, Դատաստանին պատիժ առնես.
Պիղծ և զազիր չարեաց գործաւդ, Այլ զխորհուրդս սխալ չասես։
Ցաչս մարդկան պարկեշտ չըր- Ցամէն զիմաց զմիտքդ ուղղես,
ջաւդ, Կամ հետ ումեք ոխ չի պահես,
Նա ինչանէ հոգով դժոխ։ Ապա զքս պատարագես։
Ապա ի քեզ նայեա և տես, Այս քեզ խրատէ, թէ գիտես,
Որ զքս պատարագես. Լաւ իմացիր, խորագոյն տես։
Թէև դու մարմնով սբ. ե՛անա- Զայս պատուիրեալ եղէ ես քեզ,
բատ ես Ես ամէնուդ ձեր սիերես։
Եւ ընդ փրկչին համարձակ ես, Դարձեալ առ քեզ աղերսեմ ես։
Առաջ և մարդ դու միջնորդ ես, Զարագործիս բարեխօս ես.
Զաջ ընդ մարդկան հաշտեցուս- Զունիմ բերան, որ ասեմ քեզ,
ցես։ Թէ զմարտիրոս լիշեսցես։

Նախիջևանի Գրիմում գրած ձեռագրերի լիշատակարանների մեծ մասը նման են միմեանց թէ իւրեանց բովանդա-



կութեամբ և թէ ոճաբանութեամբ ու դարձուածներով։ Երևում է, որ լիշատակարանների հեղինակներն ուղղակի արտագրել են միմեանցից, աւելացնելով միայն իւրեանց անուան ու ազգատոհմի լիշատակութիւնը և տեղ տեղ փոխելով լեզուն, ոճերն ու դարձուածները։ Կան և ոտանաւոր լիշատակարաններ. յաճախ պատահում է հետևեալ չատ ընդունուած ոտանաւոր լիշատակարանի օրինակը.—

Զեռս երթայ, գիրս մնայ,
Տկար մարմինս ի հող դառնայ.
Տէրն ողորմի ինձ և նորա
Եւ յամենայն զարմից սորա [18]։

Ներկայումս Նոր-Նախիջևանի ձեռագրերի ընդհանուր թիւը, համարելով ս. Լուսաւորչի մատենադարանում, քաղաքի միւս եկեղեցիներում, գիւղերի եկեղեցիներում և ս. Խաչ վանքում գտնուածները, հասնում է 325-ի։ Ձեռագրերից ամենահինը համարուում է ս. Լուսաւորչի աւետարաններից մէկը, որ գրուած է Հայոց ՈԿԳ (1212) թուին, իսկ ամենանորը —նոյն ս. Լուսաւորչի «Դաւթար»-ը, որ գրուած է մասամբ իւր Յովսէփ եպիսկոպոս Արղութեանի ձեռքով, մասամբ էլ

---

[13]) Այս լիշատակարանի մի ուրիշ վարիանտն էլ այսպէս է.

Զեռս երթայ, գիրս մնայ,
Տկար մարմինս ի հող դառնայ.
Տէրն ողորմի ինձ և նորա,
Զսուրբ աւետարանս կարդա
Եւ զմեզ ի բարին լիշեա։

Մի տեղ էլ այս լիշատակարանը ընդարձակած է հետևեալ կերպով.

Զեռս երթայ, գիրս մնայ,
Տկար մարմինս ի հող դառնայ.
Տէրն ողորմի մեզ և նորա։
Որ սուրբ աւետարանս կարդայ,
Վերոգրեալքս լիշատակեա.
Կցորդութեամբ զրիչս լիշեա
Եւ դուք լիշիք մարանաթայ,
Զի կայք օրհնեալք լսել տայ, (?)
Այն որ օրհնեալ է յարակայ։

նոյա հրամանով Հայոց ՌՄԻԹ (1780) թուին Նոր-Նախիջևանում։ Ձեռագրերի թուի շատութեամբ առաջին տեղը բռնում է քաղաքի ս. Լուսաւորիչ մայր-եկեղեցին, երկրորդը—ս. Նիկողայոսը, երրորդը—ս. Թորոսը, չորրորդը—ս. Աստուածածինը և յետոյ միւսները կարգով։ Արժանի է ուշադրութեան այն հանգամանքը, որ գիւղերի եկեղեցիներում շատ քիչ ձեռագիր է պահպանուել։ Դորա պատճառը պէտք է համարել կամ այն, որ հէնց սկզբից էլ գիւղերի եկեղեցիներում շատ քիչ ձեռագիր է եղել և կամ, որ աւելի հաւանական է, այն, որ գիւղերում ձեռագրերը աւելի անխնամք են պահուել, քան թէ քաղաքում։ Յայտնի է, որ առաջ գիւղերի եկեղեցիներին պատկանած շատ ձեռագրեր այժմ գտնուում են մասնաւոր մարդկանց, գլխաւորապէս քահանաների ու նոցա ժառանգների ձեռքին. յայտնի է նոյնպէս, որ «Քելլէշահինենց» կոչուած Նախիջևանի ամենանշանաւոր ձեռագիրը — Յայսմաւուրքը, որի յիշատակարանի մէջ գրուած է Ղրիմի գաղթականութեան պատմութիւնը, առաջ պատկանել է Նիսուիթայ գիւղի ս. Կարապետ եկեղեցուն։

Նախիջևանի և Բեսսարաբիոյ թեմի առաջնորդութեան տեղապահ հանգուցեալ Գաբրիէլ եպիսկոպոս Այվազեանն իբր թէ կամենալով վտանգից ազատել այդ թանկագին մագաղաթը, հրամայել է 1858 աւուրն ս. Կարապետից տեղափոխեն նորան քաղաքի ս. Լուսաւորիչը, որտեղից և, չգիտենք, Երբ և ինչպէս այդ Յայսմաւուրքն ընկել է իւր այժմուայ տէրերի՝ Քելլէշահինենց ձեռքը։ Մենք քանիցս առիթ ենք ունեցել այդ ձեռագրի առթիւ տեսնուել և խօսել պ. Յովհաննէս Քելլէշահինեանի հետ և յորդորել նորան վերադարձնելու ձեռագիրը կամ իւր նախկին տեղը—ս. Լուսաւորչի պահարանը և կամ ուղարկելու նորան ս. Էջմիածնի մատենադարանը, հասկացնելով նորան, նախ, դորա կարևորութիւնը Ղրիմի գաղթականութեան համար ընդհանրապէս և Նախիջևանի գաղթականութեան համար մասնաւորապէս, երկրորդ, նորա եկեղեցուն պատկանելու հանգամանքը և, երրորդ, այդպիսի մի թանկագին բանի մասնաւոր տան մէջ պահելու անյարմարութիւնը և դորանից առաջ գալիք վտանգը։ Բայց չենք կարողացել համոզել նորան։ Պարոնը, իւր ասելով, միտք ունի մի օր ուխտ գնալու ս. Էջմիածին. այն ժամանակ նա իւր հետ պէտք է տանէ և այդ ձեռագիրը և նուիրէ վեհափառին ս.



Էջմիածնի մատենադարանի համար։ Բարի մտադրութիւն է, ի հարկէ, եթէ չուտ կատարուի. բայց մենք վախենում ենք, որ մինչև այդ օրը հասնի, շատ ջուր անցնի մէջտեղը և ձեռագիրը մի որ և է վտանգի ենթարկուի։ Արդեօք մտածել է պարոնը, թէ ինչ մեծ բարոյական պատասխանատուութիւն է առնում իւր վերայ, իւր մօտ պահելով և այդպիսով կորստեան վտանգին ենթարկելով մի յիշատակարան, որ միակ պատմական վաւերականն է Ղրիմի Հայոց մեծ գաղթականութեան։

Այդ Յայսմաւուրքը գրուած է մագաղաթի վերայ Հայոց ՌՃԼԹ (1690) թուին և յիշատակ է մի ոմն տիրացու Աւետիքի, ինչպէս այդ կարելի է տեսնել նորա համառօտ յիշատակարանից. «Յիշատակ է գիրքս տիրացու Աւետիքին յեկեղեցի Աստուածածնի, որ կոչի Յայսմաւուրք. զոր կարգեալ է ի յետին ժամանակս վարդապետն Գրիգոր Ծերենց կոչեցեալ։ Գրեցաւ սա յամի Հայոց ՌՃԼԹ, և Տեառն յամի ՌՈՂԴ, ի կաթուղիկոսութեան Տեառն Եղիազարու, յառաջնորդութեան հիւսիսային երկրիս, որ է Ղռիմ, Վարդանայ արքեպիսկոպոսի և Յակոբ վարդապետի քաջ բարեբնապետի»։

Ղրիմի և Նախիջևանի Հայերի Շիրակի Անուց գաղթելու և Ղրիմ հասնելու պատմութիւնը գրուած է ս. Սարգիս զօրավարի վկայաբանութիւնից յետոյ։ Դա մի ընդարձակ յիշատակարան է, որ առաջին անգամ տպագրուել է Բժշկեանի ճանապարհորդութեան գրքում, երկրորդ անգամ «Ծիածան» ամսագրում։ [14])

Թէ Նախիջևանի վերոյիշեալ բոլոր ձեռագրերն ինչ տեսակներից են բաղկացած և իւրաքանչիւր եկեղեցում ինչ քանակութեամբ են գտնուում,—այդ կարելի է տեսնել հետեւեալ ընդհանուր աղիւսակից.—

---

[14]) Քելլէշահինենց Յայսմաւուրքի Անուշ գաղթականութեան վերաբերեալ յիշատակարանն անմիջապէս մէջ է բերուած և Նիսուիթայի Վարդան-գրքի մէջ։ Այդ Վարդան-գիրքն այժմ մեզ է պատկանում։ Դորա մի օրինակն էլ եղել է հայր Քուշնարեանի ձեռքին։ (Տես «Պատմութիւն գաղթականութեան Խրիմու հայոց» գլուխ ԺԱ, էջ 127»։)

| Ձեռագրերի տեսակները | Ս. Լուս. | Ս. Նիկ. | Ս. Թորոս | Ս. Աստ. | Ս. Համբ. | Ս. Գէորգ. | Ս. Խաչ. | Զարմար. | Նեսուտիմ. | Ս. Պող. |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Աւետարան | 62 | 9 | 5 | 7 | 5 | 5 | — | 1 | 1 | 1 |
| Ցայսմաւուրք | 33 | 1 | 2 | 2 | 3 | 2 | 1 | 1 | — | — |
| Մաշտոց | 33 | — | 2 | — | — | — | — | — | — | — |
| Ճաշոց | 25 | 1 | — | — | — | — | — | — | — | — |
| Շարական | 28 | — | 2 | 1 | — | — | — | — | — | — |
| Խորհրդատետր | 20 | 3 | 1 | — | — | — | — | — | — | — |
| Սաղմոսարան | 20 | — | 1 | — | — | — | — | — | — | — |
| Գանձարան | 12 | 1 | — | — | 1 | — | 1 | — | — | — |
| Ժամագիրք | 3 | 1 | — | — | — | — | 1[15] | — | — | — |
| Տօնացոյց | 7 | — | 1[16] | — | — | — | — | — | — | — |
| Սաղմոսարան և Գանձարան | 1 | — | — | — | — | — | — | — | — | — |
| Ժամագիրք և Սաղմոս | 1 | — | — | — | — | — | — | — | — | — |
| Խաղգիրք | 2 | — | — | — | — | — | — | — | — | — |
| Շարակնոց և Սաղմոս | 1 | — | — | — | — | — | — | — | — | — |
| Գանձարան և Քարոզք | 1 | — | — | — | — | — | — | — | — | — |
| Գանձարան և Տաղարան | 1 | — | — | — | — | — | — | — | — | — |
| Ճառընտիր | 1 | — | — | — | — | — | — | — | — | — |
| Սարգիս Շնորհալի | 2 | — | — | — | — | — | — | — | — | — |
| Գիրք Տղայութեան Յիսուսի | 1 | — | — | — | — | — | — | — | — | — |
| Վարդանգիրք | 1 | — | — | — | — | — | — | — | — | — |
| Ժողովածու | 2 | — | — | — | — | — | 1 | — | — | — |
| Քահանայաթաղ | 1 | — | — | — | — | — | — | — | — | — |
| Դաւթար | 1 | — | — | — | — | — | — | — | — | — |
| Աստուածաշունչ (պակաս.) | — | — | — | — | — | — | 1 | — | — | — |
| Գիրք խրատուց | 1 | — | — | — | — | — | — | — | — | — |
| | 260 | 16 | 14 | 10 | 9 | 7 | 5 | 2 | 1 | 1 |

Բացի այդ ընդհանուր ցուցակում նշանակուած ձեռա-

[15]) Ս. Խաչ վանքի «Ժամագիրք» ձեռագիրը լոկ ժամագիրք չէ, այլ «Ժամագիրք և պարզատումար» մի կազմի մէջ։

[16]) Ս. Թորոսի Տօնացոյցը լոկ Տօնացոյց չէ, այլ «Տօնացոյց և ժամագիրք» մի կազմի մէջ։



գրերից, որոնք գտնւում են եկեղեցիներում և կազմում են ընդհանրութեան սեփականութիւն, Նախիջևանում կան բաւականին թուով ձեռագրեր և մասնաւոր մարդկանց ձեռքում։ Այդ մասնաւոր մարդկանց սեփականութիւն համարուած ձեռագրերի մեծ մասը, ինչպէս արդէն առաջին գլուխներից մէկում ակնարկեցինք, առաջ դարձեալ եկեղեցիներին են պատկանել և լոկով միայն ժամանակի ընթացքում անցել են սորա նորա ձեռքը և մասնաւոր սեփականութիւն են դարձել։ փոքր մասն էլ դեռ Ղրիմում մասնաւոր սեփականութիւն են եղել և գաղթականութեան ժամանակ բերուել են Նախիջևան և որդեգրդի ժառանգաբար հասել են իւրեանց ներկայ տէրերի ձեռքը։

Մասնաւոր ձեռագրերից մեզ յատկապէս յայտնի են՝ վերոյիշեալ Օղաբաշենց աւետարանը և Քելլէչահինենց Ցայսմաւուրքը, Գանձապետեան Տէր-Մկրտիչ քահանայի Սարգիս Շնորհալին (գրուած Ղրիմում ՊԵ թ.) և Ամիրտովլէթ Ամասիացւոյ «Անգիտաց անպէտ» կոչուած բժշկարանը [17]), որ-

[17]) Այս ձեռագիրը յայտնի Ամիրտովլաթ Ամասիացւոյ «Անգիտաց անպէտ» կոչուած բժշկարանի ոչ ընտիր օրինակներից մէկն է։ Դա գրուած է տգեղ նօտրագրով և չեղագրով կոկած բարակ թղթի վերայ, ունի 621 թուղթ և ամփոփուած է կաշեպատ փայտի կազմի մէջ։ «Դեղօրէից կերպն ու պատրաստութիւնը» գլուխը, որ ձեռագրի ամենաընդարձակ մասն է, իւր սկզբում ունի Ամիրտովլաթի յայտնի լիշատակարանը։ «Հիւանդութիւնները և նոցա բժշկութիւնը» գլուխը, որ գրուած է այբուբենական կարգով, բաղկացած է երկու մասից՝ հին, Ամիրտովլաթի գրածից և նոր, ուրիշների ձեռքով եղած յաւելուածից։ Յաւելուած կայ և «Բառարան բժշկութեան» գլխի վերջում։ Թէև նոր լիշատակարաններ չատ կան գրուած, բայց դոցա մէջ չկայ ոչ մէկը, որ իւր, ձեռագիրն արտագրողինը լինէր և որից մենք կարողանալինք իմանալ, թէ այդ ձեռագիրն ով է արտագրել, որտեղ և երբ։ Նոր լիշատակարանները գրուած են ձեռագրի սկզբում, միջում և վերջում տգեղ չեղագրով անգրագէտ մարդկանց ձեռքով, որոնք գործ են ածել բժշկարանը և իւրեանց տպաւորութիւնն են յայտնել։ Աւելորդ չենք համարում այստեղ բերել այդ տպաւորութիւններից մի երկուսը, որոնք հետաքրքրական են։

«1830-ին. Շատ մարդու հիւանդին չատ հեգիմներին կը մեռնի ասածներն ես նայեցայ ամէնն ալ աղէկ եղան Աստուծով Կարապետ Լօիմանեան»։ «1881-ին. Ես հեգիմնարանս կարդացի օրն ի անդամ լաւն կանէի վատ բանին վրան չէր

Մարիամ Տէր-Գրիգորեանի Շարականը [18]), մեր սեփական Վարդանագիրքը և Տաղարանը, նախկին Հայկական Մագիստ-

---

նալէի այսկից չատ բան կը իմանալի քանի կարդալ միտքը կը բացուի անպէս իմանաս Աստուծով ես Լօիմանովս հասու եղայ այս բանիս ինչ որ մէկ բանըն տեղակ չեղալ վաղ չէր գալի ամէն մէկ բանըն բերանք եղայ ամէն մէկ ճարն հարցնուր նէ խրատ կու տալի ամէն մարդ չնորհակալ կ'լալին կամ ողորմիս կասէին ծնողացս»։

«Այս բժշկարանս ՃՁ տարի ապրող մեռնող չըվտերնէստէ անունով հէքիմին գիրերուն մէջէն գտնվիլ է մեռնելուն էտև։ Այս գաղտուկ հէքիմարանս իւրեան սագէրուն Ճ տարիներով պահիլ էր, որ սորալ պապըն ապրել է ՃԸ տարի, մայրն ՃԷ տարի և հայրն ՃԺԲ տարի ամէն օր բանցնելով ասոր մէջի ճարը որ գրված է պարտէ ամէն առաւօտ իրկուն Ը կամ Թ կաթիլք կարմիր գինիի կամ չալի կամ խորոված միսի ջուրի մէջ կաթեցնելով խըմել»։ Այս յառաջաբանից յետոյ գրուած է. «Դեղ երկարութեան կենաց» անունով ճարի մասերը—«էգաները» և պատրաստութեան ձևը։ Այս յիշատակարանը և դեղի պատրաստութիւնը գրել է մի ոմն Տէր Մարտիրոս — «տէր Մարտիրոսի ձեռամբ է գրեցեալ թվին ՌՄԾԵ ով ոք կարդայ մեզ յիշէ»։

Ձեռագիր բժշկարանիս կողքին գրուած է և Ղրիմի ս. խաչ վանքի գմբէթի երկաթագիր ոտանաւորը.—

Փառաց տաճարս Աստուածային,
Երկրորդ զբրախտ կենաց փայտին,
Որ է պատկեր երկնից վերին,
Եւ եռյանձնեանն կալեանին.
Ի ծընընդենէ մարմնոյ Փրկչին՝
Երեք հարիւր և հազար ամին
Ութ և լիսուն ըսկսեալ յամին,
Կանգնեալ յանուն սուրբ Նշանին.
Սատարութեամբ իւր ծառային՝
Յօհաննէսի կըրոնաւորին
Եւ հարազատ եղբարց նորին
Եւ ըստ հոգոյ որդոց ընաւին։

[18]) Օրիորդ Մարիամ Տէր-Գրիգորեանի Շարականը մի մագաղաթ փոքրագիր կաշեպատ փայտէ կազմով մանր, գեղեցիկ բոլորագրով գրուած ընտիր ձեռագիր է, որ գրուած է Օշին թագաւորի ժամանակ Հայոց ՉԿԷ—(1318) թուին գալու անապատում «Խըլգի» կոչուած ընտիր օրինակից։ Աւելորդ չենք համարում մէջ բերել այստեղ այդ Շարականի ամբողջ յիշատակարանը։ «Փառք սուրբ երրորդութեան և միաստուածութեան ամէն։ Գրեցաւ եղանակաւոր փառս ի թուս՝՝ հայոց ՉԿԷ ի թագաւորութեանս հայոց աշնի աստուածասիրի և



գրատի «Դատաստանագիրքը» [19]), տեղիս թեմական դպրանոցի «Անտառ նորագոյն մատծմանցը» [20]; և այլ ևս մի քանի մանրմունր բաներ, ինչպէս, օրինակի համար, Տօնացոյց, Ոսկեփորիկ, Համալիլ և այլն։

---

բարեպաշտի, որդւոյ արքայիս Լենի։ Եւ ի հայրապետութեան տեառն Կոստանդեա Կիսարացոյ։ Ի յանապատս որ կոչի գալու՝ ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնիս և այլոց սրբոցս որք աստ, ձեռամբ մեղապարտ և անարժան քա՞հ Սիմէոնի. ի խնդրոյ պատուական և հոգևոր եղբաւր մերոյ՝ Ստեփանոսի դպրի։ Արդ աղաչեմ զամենեսեան որք աւգտիք ի սմանէ, յիշեսջիք զստացաւղ տառիս զպատուական պատանին զստեփաննոս դպիրն և զծընաւղս իւր որ ստացաւ զսա ի վայելումն անձին իւրոյ և ի յիշատակ հոգւոյ իւրոյ և ծնաւղաց իւրոց մաւր իւրոյ պիպարդին և հաւր իւրոյ մարտիրոսին հանգուցելոյն ի Քրիստոս, որոյ ողորմեսցի Տէր Յիսուս Քրիստոս. ամէն։ Ընդ նմին աղաչեմ յիշել զանպիտան գրիչս զՍիմէոն և զծնաւղս իմ և խոչորութիւն գրիս՝ և սխալանացն որ ի սմա հանդիպի անմեղադիր լերուք աղաչեմ։ Եւ Աստուած յիշողացդ և յիշեցոցս առ հասարակ ողորմեսցի ի միւսանդամ գալստեանն իւրոյ. և նմա փառք յաւիտեանս ամէն. բայց գրեցաւ սա ի լաւ և յընտիր աւրինակէ զոր ալժ խըլգի կոչեն»։

«Ո՛հ զմեղաւոր հոգս զարգիս սուտանուն քհ՞՝՝ զոսկաւղ տառիս և զծն՞՝՝. իմ աղաչեմ յիշել ի տէր»։

[19]) Այդ դատաստանագիրքը ներկայումս պահւում է Նոր Նախիջևանի քաղաքային վարչութեան դիւանում։ Դորա մասին տես մեր «Նոր-Նախիջևանցւոց Կայսերաշնորհ հրովարտակը և նոցա Դատաստանագիրքը» յօդուածը. «Լումայ» թիւ 1902, գիրք 1.

[20]) Կաշեպատ փայտէ կազմով նորը, բարակ թղթի վերայ երկսիւն նօտրագրով, կարմրագիր գլխագրերով և ունիրայ երկսիւն նօտրագրով գրուած մի մեծագիր ձեռագիր է դա։ Դորական լեզուով գրուած մի մեծագիր ձեռագիր է դա։ Դորա լիակատար խորագիրն է. «Անտառ նորագոյն մատծմանց հիմնեալ ի հեղինակութեան սրբոյ եկեղեցւոյ։ Ցարմարեցուցանելի ամենից լուր աւուրցն քառասնորդաց, կիւրակէից, բոլոր տարոյն. և հասարակ տօնից սրբոց։ Ի գերյարգելի. Տեառնէն Աղէքսանդր գալամաթ կոչեցելոյ. մեսինացւոյ ի փառուայ։

Թարգմանեցեալ յիտալականէ լեզուէ. ի հայկական բարբառ ի Ղուկասու վարդապետէ խարբերթացւոյ։ Ամի տեառն 1741։ Ըստ խնդրոյ Արէի և պանծալի եպիսկոպոսին տեառն Յովհաննու պարիարքին Կոստանդնուպօլսոյ, հանգուցելոյն առ Քրիստոս։ Ի Կոստանդնուպօլիս քաղաքի արքայականի։ —Ըստ հայոց թվաբանութեան ՌՃԳ.ին»։

## Ե

Եկեղեցիների ձեռագրերից արժանի են առանձին ուշադրութեան՝ Ս. Լուսաւորչի Կիլիկեան երեք աւետարանը, Սաղմոսներից մէկը, գիրք կամ աւետարան տաղաւորութեան Յիսուսի և Ս. Աստուածածնի աւետարաններից մէկը։ Կարօտ են մանրամասն հետազօտութեան ու ուսումնասիրութեան Ս. Լուսաւորչի ճառընտիրը, որ գրուած է հայոց ՊԲ (1353) թուին. Սարգիս Շնորհալու երկու օրինակ մեկնութիւնը, որոնցից առաջինը գրուած է Հայոց ՊԼԶ (1376) թ., երկրորդը- ՊԽԷ (1398) թուին. Վարդան-գիրքը, որ գրուած է հայոց ՉՂ (1341) թուին և մօտաւորապէս ԺԶ և ԺԷ դարերում գրուած երկու ժողովածուն։

Առաջին Կիլիկեան աւետարանը, որ երկու անգամ արծաթապատ է անել տրուած—առաջին անգամ հին ժամանակները մի ոմն Սինանի ձեռքով, որ մի բարեպաշտ մարդ է եղել և իւր ծախքով արծաթեայ զարդերով զարդարել է տուել ձեռագրի կազմը, երկրորդ անգամ նոր ժամանակները մի ոմն Յովհաննէսի որդի բժիշկ Պետրոսի ձեռքով Մոսկուայում—սկզբից պատկանել է Սսի թագաւորական մատենադարանին։ Այդտեղից դա առաջ տարուել է Սեբաստիա, յետոյ Ղրիմի Կաֆա քաղաքը և, վերջապէս, Նոր-Նախիջևան։ Թագաւորական աւետարանի այդպէս երկրից երկիր, քաղաքից քաղաք թափառելու պատճառն եղել է, ինչպէս երևում է յիշատակարանից հետևեալ հանգամանքը։ Մի սեբաստացի Ստեփան անունով եպիսկոպոս կամենալով երկրպագութիւն անել Ս. Լուսաւորչի աջին, Հայոց «Սուրբ» դիտապետի օրհնութիւնն առնել և ողջունել Հայոց Կիլիկիոյ թագաւորին, գալիս է Կիլիկեա Օշին թագաւորի և Կոստանդին կաթուղիկոսի ժամանակ։ Թագաւորը սիրալիր ընդունելութիւն ցոյց տալով եպիսկոպոսին, կամենում է նորան մի թանկագին ընծայ տալ, բայց նա «մարմնաւոր գանձն առ ոչինչ է համարում և ըղձանում է միայն կենաց քարոզին», այսինքն աւետարանին։ Այն ժամանակ Օշինի հրամանով նորա առաջ բացւում է արքունի մատենադարանը և առաջարկւում է նորան ընտրել իւր համար այնտեղ գտնուած բազմաթիւ աւետարաններից որը ցանկանալ։ Նա էլ մտնելով «յարկեղս տանն ուր հաւաքեալ կային սուրբ կտակարանքն», ընտրում է բոլորի միջից այդ աւետարանը, որովհետև չատ է հաւանում դորա» արագ և գեղեցկագիր գրչին



և բազմերանգ ծաղկաւք զարդարեալ յոգնալանճաք նկարակերտին»։

Այդ աւետարանը գրել է Աւետիս գրիչը, բայց թէ երբ,—յայտնի չէ, որովհետև դորա գրուելու թուականը չի նշանակուած։ Կարելի է միայն չատ հաւանականօրէն ասել, որ Ստեփաննոս եպիսկոպոսի ձեռքն անցնելու ժամանակ դա դեռ նոր է գրուած եղել, որովհետև նորա զարդերն ու պատկերները դեռ բոլորովին վերջացած չեն եղել, այլ միայն «ի տն տնօրինականացն բաժին մի նկարեալ էին և զկէսն նշանագծեալ և զլոլոիս թողեալ զտեղի»։ Առ հասարակ մեծ հաւանականութեամբ կարելի է ասել, որ այդ աւետարանը գրուած է մօտաւորապէս 1319—20 թուականներին։ Որ դորա գրութիւնն այդ թուականներից առաջ կամ յետոյ չի կարող լինել—, այդ երևում է և այն հանգամանքից, որ Ստեփաննոս եպիսկոպոսը կամենալով լրացնել ձեռագրի պատկերների և նկարների թերի մնացած տեղերը, որոնում, գտնում է մի Սարգիս անունով և Պիծակ մականունով քահանայ և յանձնում է նորան այդ գործը, խոստանալով աշխատանքի վարձ հատուցանել քահանային Ռ և Ց դրամ։ Սարգիսն էլ, որ չատ հմուտ է լինում «նկարագրութեան» արուեստին, մեծ սիրով ձեռնարկում է գործին և մեծ աշխատանքով լրացնում է «ոսկենկար» պատկերների պակասը նոյն Օշին թագաւորի և Կոստանդի Բ պրօնագործ կաթուղիկոսի ժամանակ հայոց ՉԹԿ (1320) թուին [21])։

---

[21]) Իւր պատկերների գեղեցկութեամբ ու նկարների նրբութեամբ աչքի ընկնելու բան է և «Յովսէփեան» կոչուած մեծադիր աւետարանը, որ նոյնպէս Կիլիկիայումն է գրուած երևում։ Յովսէփեան աւետարանը, որ ինքն երջանկայիշատակ արհին իւր սեպհական ծախքով արծաթապատ է անել տուել և նուիրել «ի զուռն Նախիջևանու ս. Լուսաւորիչ աւագ եկեղեցւոյն», գրուած է մագաղաթի վերայ մաքուր բոլորագրով։ Դորա հաստ արծաթապատը ձուլածոյ է և ունի երկու երեսի վերայ ուռուցիկ պատկերներ։ Առաջին երեսի վերայ՝ անկիւնադրում ձևացրած են աւետարանիչների պատկերները, իսկ մէջտեղը—խաչելութիւնը. երկրորդ երեսի վերայ՝ մէջտեղը ձևացրած է Աստուածամօր պատկերը՝ Յիսուս մանուկը գըրկին, անկիւններում—աւետման, ընծայման, մկրտութեան և մոգերի երկրպագութեան պատկերները։ Կան պատկերներ արծաթեայ կազմի և լայն բերանակալի վերայ, որոնց բովանդակութիւնը առնուած է Քրիստոսի չարչարանքի տեսարան-

Արժանի են սառանձին ուշադրութեան այդ աւետարանի պատկերները։ Դորա լուսանցքներն էլ, ինչպէս Նախիջևանի

---

ներից։ Ամբողջ ձեռագիրը պարունակում է իւր մէջ հաստ ընտիր մագաղաթի 337 թուղթ, որոնցից 316 թուղթը բռնում է աւետարանի բնագիրը, իսկ մնացեալ 16 թուղթը—լիչատակարանները, համաբարբառը և լիչատակարանների համար գրքի սկզբից ու վերջից բաց թողած թղթերը։ Համաբարբառը, որ գրուած է կամարակապ զարդերի մէջ, սկսում է «Ամենի աղեկսանդրացւոյ» սովորական խօսքերով և վերջանում է «Աղչ լեր։ Զա՞վ վդ լի՞չ» բառերով։ Համաբարբառի երկու առաջին երեսների կամարակապ զարդերի ճակատին նկարուած է երկու մարդու պատկեր, որոնցից առաջին երեսի վերայ նկարուածը մի ձեռքին բռնած է կիսաբաց ոլորած թուղթ, իսկ միւս ձեռքը բարձրացրած է օրհնութիւն տալու ձևով. երկրորդ երեսի վերայ նկարուածը մէկ ձեռքին գիրք է բռնած, միւս ձեռքն առաջնի նման բարձրացրած է օրհնութիւն տալու ձևով։ Առաջին պատկերի մօտ գրուած է. «Եսայիէ», երկրորդի մօտ—«Յարպիոսէ»։

Աւետարանն երկէջ է և ունի ծաղկեայ և ոսկեզօծ գըլխագրեր և հայկական ձեռագրերին յատուկ զարդեր լուսանցքների վերայ՝ ծաղիկներ, խաչեր, կսթուղիկէներ, օձեր, ծառեր, թռչուններ, հրեշտակներ և աւետարանի բովանդակութիւնից առած զանազան գործող անձանց պատկերներ՝ Տիրամօր, Առաքեալների, Սողոմոնի, Յուդայի, և այլն և այլն։ Իւրաքանչիւր աւետարան ունի նախադրութիւն և գլխակարգութիւն, իսկ Մատթէոսի, Ղուկասու և Յովհաննու աւետարաններն ունին իւրեանց նախադրութիւնից և գլխակարգութիւնից յետոյ և այդ աւետարանիչների մեծագիր պատկերները։ Ձեռագրի գրութեան ձևից պարզ երևում է, որ Մատթէոսի և Մարկոսի աւետարանները գրուած են մէկ մարդու ձեռքով, իսկ Ղուկասինն ու Յովհաննունը—մի ուրիշի։ Ղուկասի աւետարանի վերջում գրուած հետևեալ լիչատակարանից մենք իմանում ենք, որ առաջին մասի գրողն է Աւագ վարդապետը, երկրորդինը—Սարգիս երէցը և որ այդ ձեռագիրը գրուած, վերջացած է Հայոց ՊԱ (1352) թուին։ — «Ո՛վ զմեզաւոր հոգս զաւա՞" վդ" անարժանս։ զոսկաւզ և զծաղկաւզ սուրբ աւետա՞", լիչ" ազչէ"։ Նայև զանարժանս Սարգիս երէց՝ որ բազում աշխատութեամբ ի դառն ժամանակիս որ էր թիւս հայոց ՊԱ. կատարեցի զսա իմով անձամբ և ձեռաւք ի խնդրոյ մեծ հռետոր բարեւնոյն ավագ կոչեցեալ. որ ինք մեծ բարեւնին գրեալ էր զաւետարանս զայս մինչև ի ՂՈՒԿԱՍՈՒ վանց որ այլ մագաղաթ չկայր նա մնացեալ էր և սկատար. նա վասն յոյժ սիրոյն Քրիստոսի կուչանայր որ ի զլուխ ելանէր. նա կատարեց Աստուած զիր



միւս պատկերազարդ աւետարաններինը, զարդարուած են ծաղիկների, ծառերի, թռչունների, օձերի, խաչերի և կսթուղիկէների նկարներով, բայց դորա զարդերը, նախ, աւելի նուրբ ու գեղեցիկ են, քանթէ միւսներինը, երկրորդ, դա, բացի իւր լուսանցքների նկարներից և աւետարանիչների մեծագիր պատկերներից, ունի և բազմաթիւ ընտիր, նուրբ ճաշակով յօրինուած աւետարանների համարեա իւրաքանչիւր գլխի բովանդակութեան համապատասխանող մանր պատկերներ։ Ստեփաննոս եպիսկոպոսի սրտին այնքան մօտիկ, այնքան սիրելի այդ «կենաց քարոզը» բերուել է Ղրիմ իւր իսկ եպիսկոպոսի ձեռքով, որ խոյս տալով այլազգիների հալածանքներից, եկել է Կաֆա քաղաքը և երկար ժամանակ այնտեղ ապրելուց յետոյ, թողել է նորան լիչատակ քաղաքի բազմաթիւ եկեղեցիներից մէկում, պատուիրելով չծախել, գրաւական չդնել և չհանել եկեղեցուց, չսեփականացնել։ Կիլիկեան երկրորդ աւետարանը նոյնպէս արծաթապատ է. նա գրուած է մագաղաթի վերայ մանր, գեղեցիկ բոլորագրով և ունի սովորական զարդագրերը և ոսկեայ տառերը և բազմաթիւ մանրանկարներ լուսանցքների վերայ։ Այդ աւետարանը գրել է Ստեփաննոս գրիչը Սմբատ թագաւորի և Գրիգոր կաթուղիկոսի ժամանակ հայոց ՉՃԽՉ (1297) թուին և ոսկով զարդարել է Գրիգոր քահանան։ Դա պատկանել է Լևոն թագաւորի «զռնապան» Սիր Սիրուն իշխանին, որ ընծայել է դորան «Անհամբեր» կոչուած սուրբ Աստուածածնի տաճարին «ի յատանայ խնչ խրանվոյն», որ նա ինքն իւր ծախքով վերանորոգել էր [22])։

Հալիբի Ալթուն Պուղա Նայիբի դէպի Կիլիկիա կատա-

---

խնդիրքն ու պատրաստեց զանաւթն գրոյս որ կատարեցաւ ի փառ Աստուծոյ ամէն։

Յովհաննու աւետարանի վերջում անմիջապէս ինչպէս նորա չարունակութիւնը նոյն ձեռքով ու ոսկած գլխագրով գրուած է հետևեալը.—

Իսկ Յովհաննէս արծուանման
Ոլորեաւ մրտաւք անհասական,
Առ ի պատմել որդւոց մարդկան
Զանճառ էիցս հանրական։

[22]) Հայր Մինաս Բժշկեանը մէջ է բերում իւր ճանապարհորդութեան գրքի մէջ այս աւետարանի լիչատակարանի միայն համառօտ բովանդակութիւնը։

բած արշաւանքի ժամանակ, երբ աւերուել, քանդուել ու աւարի է մատնուել ամբողջ Կիլիկիան, կողոպտուել է և Ադանայի վերոյիշեալ Ս. Աստուածածին եկեղեցին և այդ աւետարանը միւս սրբազան անօթների հետ միասին ընկել է անօրէնների ձեռքը և տարուել է Հալեբ, որտեղ դրել է նորան պարոն Պետրոս Խըպտենց իշխանը, որ դեսպան է ուղարկուած եղել ամիրաների մօտ, և գնել, բերել է Կիլիկիա։ Վասիլ իշխանը, որ թագաւորի «թղթագիրն» է եղել, հատուցանելով Պետրոս իշխանին աւետարանի ազատելչէքը, վերստին տարել, դրել է նորան իւր առաջուայ տեղը—Ս. Աստուածածին։ Վերին աստիճանի հետաքրքրական է այդ ձեռագրի յիշատակարանը, որի մէջ պատմուած է վերոյիշեալ Ալթուն Պուղայի և աւետարանի գերի տարուելու մանրամասն պատմութիւնը։ Դա, այդ յիշատակարանը հետաքրքրական է ոչ թէ միայն իւր պատմական բովանդակութեամբ, որ մեծ գին ունի մեր պատմութեան համար, այլ և իւր լեզուով, որ Կիլիկիայում այն ժամանակները գործածուած հայոց լեզուի մի կատարեալ օրինակը կարող է համարուել, չենք ասում արդէն այն, որ դորանից մենք իմանում ենք, թէ Կիլիկիոյ հայ թագաւորների դրանը գոյութիւն են ունեցել «դռնապան» և «թղթագիր» կոչուած պաշտօնեաներ։

«Արդ յետ կատարելոյ զսուրբ աւետարանս, գրուած է այդ նշանաւոր յիշատակարանում, ամենայն օրհնութեանց արժանիքն զորս յիշեալ են յիւրեանց յիշատակարանս, անկեալ էր սուրբ աւետարանս ի հանդուցեալ հոգին ի Սիր Սիրունն որ էր դռնապան արքային հայոց Լեւոնի. և նա չնորհեալ էր զսայ սուրբ տաճարին աստուածածին զոր ինքն վերստին էր շինեալ ի յատանայ խէչ խրտնվոյն որ կոչի անհամբեր աստուածածին, նա ի բազմանալ անաւրինութեանն մերոյ վասն բազում մեղաց մերոց, անաւրէն նայիպն հալպայ ալթուն պուղայն իբրև զբռավսակ և զանձն առաջին, խաբեալ զարքայն հայոց Լեւոն բազում բանիւք, և անհոգցուցեալ, և էր արքայն անհոգ նստեալ յատանայ և աշխարհն ամենայն անհոգ ամենմարդ ի յիւր տուն ու ի յիւր գործս, վստահ ի սուլտանին ամանաթն և ի յայն որ մեր դեպներն մալովն առ սուլտանին և առ անաւրէն ամիրայս, և սայ խարէութեամբ առեալ զհալպայ հնծեալն տնուանելով յԵփրատ ի ճապարն կու երթամ, ու յիշուեց յերկիրս ի ԻԶ ի մայիսն ի Ե շաբթի յաւուր Համբարձման փրկչին, և երեկ զորդ ի մլունն ու ի յատանայ ու ինչվի տարուս, և առեալ բազում ըռզակս և մարդ ու անասուն ու արար ուժով սպանումն՝ ու արար բազում աւեր ու այրեցումն, և արքայն հաղիւ զերծեալ յատանայ ու գնացեալ ի մուլեանին առջև, և կեցաւ Թ աւր յերկիրս ու եկաւ, և վարեցաւ գիրք սուրբ աւետարանս ի հալպ հետ. այլ անաւթից եկեղեցւոյն, և գտեալ զսայ աւրհնութեանց արժանին պատուելին իշխանն պ"ր Պետրոս Խըպտենց՝ որ առաքեալ էր դեսպան առ անաւրէն ամիրայս, և վասն աստուծոյ սիրոյն և գիտելոյ որ մեր եկեղեցւոյն էր, գնեալ զսայ և բերեալ յերկիրս և ետ յանարժան ծառայս աստուծոյ և ձեր ի վասիլս որ եմ թղթագիր արքային, և առեալ զգինն զոր գնեալ էր յանաւրինացն, և ես մեծաւ սիրով և յոյժ փափաքանաւք ընդալայ զսայ ի վայելս սուրբ եկեղեցեաց և սուրբ տաճարին տիրամօր աստուածածնին, և յետ աւերելոյ զերկիրս անաւրինացն, դարձեալ խարէութեամբ թէ այն զորեղաւ եղաւ սուլտանն ընդ ձեզ սէր է տուք զմալն ու ի առխասատ մի մալ ի մէնէ որ էր զՃՌ դրամ ու տարի մի ի բուն ինչվի մէկալ ապրիլն ծեծելով և հարամով անցոյց զերկիրս, և յետ մալին առնելոյն սուլտանին ուղեց զբերդերն զդետին այն դէհին զոր մալ էր տված, նայ արքայն Լեւոն առաքեաց զպարոն պաղտին մարաջախտն և զիս զանարժանս զվասիլս առ սուլտանն եգիպտոսի նասրն, ուղելով ամանաթ որ ինք արքայն երթայր առ ինք վասն փրկութեան երկրիս, նայ անաւրէնս այս ալթուն պուղայս արդել զմեզ ի հալպա բերդն ի զնդան և ինք մտաւ հեծելով յերկիրս ու ի տա զղիրն և յետ բազում տանջանացն ի զնդանն հետ է ամսոյն հասեալ վախճան մարաջախտուն, որոյ ողորմեսցի տէր յիսուս և տացէ իւր պսակ մարտիրոսական և բերեալ զմարմինն ի հալբ և զիս արդել անաւրէր ամրայն բոլոր տարի մի, ու կուզէր սուլտանն զոր ջահանն կորէր ու չատ ջանաց արքայն վասն փրկութեան երկրին ու չկարաց, և յերկրորդ տարին մտեալ նոյն ամիրիս այլ վայր յերկիրս բազում հնծելով ու բարնով ու աւերեցին զերկիրս զլեռն ու դաշտս ու այրին բազում սպանումն ու առին անբաւ ծառայս ու մառ ու կու կորանվէր երկիրս՝ նա անճարկեցաւ թագաւորն ու կատարեաց զսուլտանին կամքն ու երեսս զոր կորէր ջահան բերդերովն ու զերկիրն ու զպանծալին այս զոր բազում ծախիւք չինեալ էր և հասեալ ի

յանարժանս խնամքն աստուծոյ բարձրելոյն բարեխաւսութեամբ իր սուրբ մօրն սուրբ կուսին մարիամայ, ազատեցաք ի բանտէն ու եկի յերկիրս և ի սոյն ամի տագնապ մեծ էր յերկիրս Կիլիկիոյ յահէ անաւրինացն, ի սրոյ ի գերութենէ և ի սովոյ, որ չմնաց չէն յետ ի բերդերոյն զոր մնացին ոչ մարդութիւն յետ այնուց որ բերդերն ի փախուստ էին ակն ունելոյ ողորմութեան աստուծոյ և ես գրեցի զայս չափս առ ի յիշելոյ զանարժանս. արդ աղաչեմ զամենեսեան վասն սիրոյն քրիստոսի որք աւգտիք ի սուրբ աւետարանէս, կարդալով, կամ աւրինակելով յիշեցէք առաջի քրիստոսի և մեզաց թողութիւն խնդրեցէք, նախ և առաջին ստացաւղաց սուրբ գրոցս, և երկրորդ ստացաւղին զսայ սիր սիրունին, և իշխանին պարոն պետրոսի որ ազատեաց զսայ յանաւրինացն, և յետոյ անարժանիս վասլի և ծնողաց իմոց ստեփանոսի և մարիամու և ալիծին, և ամուսնոյն իմոյ սպլի և դեռաբոյս որդեկին իմոյ անդրանկին յակոբայ որպէս զի ընդ միոյ հարոյ-բարպատիկ հատուսցէ ձեզ աստուած աստ և ի հանդերձեալն. գրեցի զսա ի դառն և յետին ժամանակիս ի մարդեղանալոյն քրիստոսի աստուծոյ յուսոյն մերոյ ՌԳՃԼԷ, և ի հայոց թվ. ՉՁՁ (1337) և քրիստոսի փառք յաւիտեանս ամէն»։

Կիլիկեան երրորդ աւետարանի փայտէ կազմը հագցրած է ոսկեջրած արծաթապատի մէջ, որի մի երեսի վերայ ձևացրած է աւետարանիչների պատկերները և երեսի չորս բոլորը խոշոր տառերով գրուած է հետևեալ յիշատակարանը։ «Գրեցաւ աւետարանս և կազմեցաւ հրամանաւ Տեառն Կոստանդեայ կաթուղիկոսի յիշատակ իւր ծնողաց իւրոց և եղբայրց ամէն», իսկ միւս երեսի վերայ ձևացրած են Փրկչի, Տիրամօր և Յովհաննու Կարապետի պատկերները և երեսի չորս բոլորը դարձեալ խոշոր տառերով գրուած է. «Քրիստոս Աստուած ողորմեա Տեառն Կոստանդեայ կաթուղիկոսի և ծնաւղաց իւրոց և եղբարց և եղբաւր որդեաց ամէն թվ. ՉԴ.»։ Այս աւետարանի արծաթապատն աւելի նուրբ, գեղեցիկ և ճաշակով է շինուած, քան թէ միւսներինը, և հնութեան կնիք է կրում. հաւանական է, որ դա հայ վարպետի գործ լինի։

Ամբողջ գիրքը, որի կազմի կարը քանդուած է, տեղ-տեղ թերթերը միմեանցից բաժանուած, տեղ-տեղ էլ թերթերը և պատկերները թափուած, ունի իր մէջ 365 մագաղաթ թերթ, որոնցից 359-ը բռնում է երկէջ գրած բնագիրը, 5-ը



յիշատակարանները և մէկը բաց թերթ։ Աւետարանները չունին ոչ նախադրութիւն և ոչ գլխակարգութիւն, չկայ և սովորական համաբարբառը։ Իրաքանչիւր աւետարանի սկզբում գրուած է աւետարանչի մեծադիր պատկերը. Յովհաննու աւետարանչի պատկերը Ղուկասի աւետարանի վերջին երկու թերթի և Յովհաննու աւետարանի առաջին թերթի հետ միասին ընկած, կորած է։ Ընկած են երևում և ուրիշ մեծադիր պատկերներ, որոնցից մէկն է և մեր յիշած հայոց թագաւորի պատկերը, որ այժմ զետեղուած է ձեռագրի վերջում, յիշատակարանների մէջ։ Բացի թագաւորի և աւետարանիչների պատկերներից, դա ունի իւր լուսանցքների վերայ և ուրիշ մանր պատկերներ ու սովորական զարդերը, որոնց բոլորի նկարչութեան արուեստն էլ նուրբ է, ներկերը թարմ և գեղեցիկ ճաշակով ընտրած։ Աւետարանների սկզբի տողերը և գլուխների գլխագրերը գրուած են զարդագրերով և ոսկեզօծ երկաթագրերով, իսկ բոլոր բնագիրը միջին մեծութեամբ մաքուր բոլորագրով։

Աւետարանը, գրուած է, ինչպէս երևում է կազմի արծաթապատի և միւս յիշատակարաններից, Կոստանդին կաթուղիկոսի ծախքով և հրամանով Հռոմկլայում Կիւրՙ (Կիւրեղ) գրչի ձեռքով Հռոմից Բարսեղ կրօնաւորի ձեռքով բերուած մագաղաթի վերայ «բարեպաշտ» Հեթում թագաւորի, «բարի չառաւիղ» Լևոն և Թորոս արքայորդիների և «սրբազնագի» Զապէլ թագուհու ժամանակ Հայոց ՈՂԸ (1249) թուին։

Ձեռագրի վերջում գրուած երկու յիշատակարանից մենք իմանում ենք, նախ, որ Կոստանդին կաթուղիկոսը, որ հրամայել է գրել այդ աւետարանը և «վայելչացուցանել յոսկւոյ սրբոյ և ի պատուելի երանգոց սիրելի առնել զսա ներքոյ և արտաքոյ», գրասէր լինելով մանաւանդ թէ աստուածասէր, գրել է տուել այլ ևս ուրիշ աւետարաններ ու գրքեր, երկրորդ, որ դա պատկանել է Հեթումի որդի Լևոնին, որ ընծայել է դորան իւր քրոջը «աստուածասէր և բարեփառ», «կայսերածին և ծիրանասնունդ» տիկին Տամֆիմէին նորան մխիթարելու համար։ Իմանում ենք նոյնպէս, որ Հեթում Ա. թագաւորը, բացի այդ Տամֆիմէից, ունեցել է այլ ևս չորս զաւակ—Բրընձես Սպլի, որ եղել է բարեպաշտութեամբ զարդարուած, Աստուծոյ օրէնքը սիրող, աստուածասէր և ամեն բանով նման իւր ծնողին, տիկնանց տիկին Ըսիթան, որ այդ

ժամանակները, այսինքն 1263 թուին, վախճանած է եղել, Զապլուն, որ ոչ միայն անունով, այլ և բարեպաշտութեամբ ևս նման է եղել իւր մօրը, և Մարիուն, որ եղել է քոյրերից կրտսերը։ Տամֆիմէն, որ մարդու է տուած եղել Սաֆիտոյ աստուածապահ քաղաքը, «Սատանայական պատերազմներից» վշտի է հանդիպել, հաւանականաբար այրիացել է, և իւր Պաղիաւ և Ճուան որդիների և Մարկրաւն կամ Մաւինէ դստեր հետ տեղափոխուել է Կիլիկիա իւր հօր Հեթումի և իւր եղբայր Լևոնի ու Թորոսի մօտ հայոց ՉԺԲ (1263) թուին [23]։ Սաղմոսը, որ կաշուեպատ փայտէ կազմ ունի և գրուած է տգեղ բոլորագրով և կարմրագեղ գլխագրերով ու թռչնագրերով հատ, կոպիտ մագաղաթի վերայ մի ոմն «մեղապարտ» Մատթէոս գրչի ձեռքով մօտաւորապէս ԺԷ դարում, իբրև ձեռագիր ոչ մի արժէք չունի. դորա բնագիրն էլ մինչև անգամ լրիւ չէ, այլ մէջը տեղ-տեղ, իսկ վերջում բոլորովին թերթերն ընկած ու տեղը տպագրուած Սաղմոսից լրացրած և տգեղ, նոր նօտրագիր թերթեր դրած։ Հետաքրքրականն ու արժէքն այդ ձեռագրի միայն այն է, որ դա կրկնագիր է. դորա մագաղաթը պատկանել է մի ուրիշ ձեռագրի, որի վերայից գրուածքը ջնջուած է և տեղը գրուած է այդ Սաղմոսը։

Թէ դորա հիմքն ինչ ձեռագիր է կազմել,—սաղմոսի ձեռագրի դրութեան ներկայ հանգամանքներում մենք դժուարանում ենք որոշել. սակայն մենք կարող ենք ճշտութեամբ մի բան ասել, որ սրբուած ձեռագիրն երկաթագիր է եղել, որովհետև նոր գրուածքի տակից ու տողերի միջից շատ պարզ կերպով երևում են երկաթագիր տառեր, խօսքեր և մինչև իսկ ամբողջ նախադասութիւններ. Միտ դնելով այդ խօսքերին ու նախադասութիւններին, կարելի է, դուցէ, ասել, թէ դորա հիմքը կազմել են Ս. Գրքից կամ ճաշոցից և մի աստրական ձեռագրից կտորներ ու հատուածներ։

Յամենայն դէպս ցանկալի է, որ ներկայումս գտնուած զանազան քիմիական բաղադրութեամբ Սաղմոսի ներկայ բնագրի տակ ծածկուած այդ թէ հայոց և թէ ասորական ձեռագիրը, որ, դուցէ, մի շատ հին բան լինի, ընթերցանելի դարձնել, նամանաւանդ որ այս դէպքում չի կարող երկիւղ լինել, թէ կարելի է ներկայ ձեռագիրը փչացնել, քանի որ, եթէ այդ

[23]) Կիլիկիայումն է գրուած և Նախիջևանի եկեղեցիներին պատկանած ձեռագրերից ամենահինը — ս. Լուսաւորչի Հայոց ՌԿԳ թուին գրուած աւետարանը։

Թուղթք՝ 239, որից երկու թուղթ լիշատակարան, մնացեալը բնագիր. մի քաց մագաղաթ թերթ և երկու կողմից երկու երկու մագաղաթ երկաթագիր հին աւետարանից թերթեր, գործածուած իբրև կողակալ։ Մեծութիւն՝ $9^1/_2 \times 6^1/_2$ սանտիմ. Տողք՝ 21։ Գրութիւն՝ երկսիւն. Գիր՝ բոլորագիր, երկու զանազան ձեռքով գրուած. կազմ՝ կաշեպատ փայտ. Նիւթ՝ հատ, կոպիտ մագաղաթ. ժամանակ գրութեան՝ ՈԿԳ Հայոց. Տեղի գրութեան՝ Հռոմկլա գղեակ. Գրիչ՝ Յովհաննէս սարկաւագ Հռոմկլայեցի. Հանգամանք՝ լաւ պահպանուած. իւրաքանչիւր աւետարանի սկզբում կարմրաներկ խորաններ և կարմրագեղ գլխագրեր, անճաշակ և կոպիտ սովորական զարդեր։ Հին լիշատակարան. «Ի վեց հարիւրերորդի. վաթսներորդի. երրորդի շրջագայութեան տոմարի հայոց։ Ի հայրապետութեան տեառն լոհաննիսի, կորովամիտ և խոհիմատ առաջնորդի։ Եւ ի թագաւորութեան Լևոնի, որդոյ Ստէփանէի։ Եւ ի սուլտանութեան մէլէքըլլէտէրն, որ տիրէր Եգիպտոսի և սուրբ տեղեացն մայրաքաղաքին ամենայն տիեզերաց Երուսաղէմի և Դամասկոսի. և Եղեսէա. և Ծոփաց երկրին Ղլաթա մինչև ի մնուռն վրայ, Եւ ի թագաւորութեանն վերայ՝ լաշո որ տիրէր տպխաց և անուշ. և այլ բաղում քաղաքաց առաջին տանուտէրացն հայոց, ալանաց և աղուանից, ի Կարնոյ մինչև ի Պարսս։ Եւ ի բռնակալութեան որդոյ Խոսրով շահին որ տիրէր երկրին Հոռոմոց՝ Կիսարիոյ, Սեբաստիոյ և Կաւնին. և այլ բաղում մայրաքաղաքաց և Սինոպին. մինչև ի ծովն լիբէացւոց։ Եւ ի թագաւորութեանն հոռոմոց լաշքարս որ տիրէր ծովեզերացն ովկիանոսի ի սինոպէն մինչև ի թագաւորական քաղաքն Կոստանդինուպալիս. և սմա տիրէ ազգն փռանգաց խլեալ ի հոռոմէն։ Եւ ի թագաւորութեանն ասորւոց եհանեալ որ է ի հնդիկս ես Գրիգոր եպիսկոպոս և Կոստանդին քահանա արեանաւոս մեր ստացաք զպատուական և զդերաշխարհիկ և զտիեզերազաւ մատեան սուրբ աւետարանի տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի թագաւորին անմահի ի վայելումն մանկանց եկեղեցւոյ ի լիշատակ հոգւոյ զկնի ելից յաշխարհէ և ծնաւղաց մերոց ուղղորդելոցն առ Քրիստոս։ Արդ աղաչեմք զամենեսեան որի ընթեռնուք կամ աւրինակէք լիշեսջիք առաջի Քրիստոսի զտէր Գրիգոր և զԿոստանդին քահանա զստացաւղք սուրբ աւետարանիս։ Եւ զեղբարսն մեր զհանգուցեալսն ի Քրիստոս զԿարապետն և զԳէորգ և զծնաւղսն մեր։ և Քրիստոս զձեզ լիշէ լիւր ողորմութիւնն։ Գրեալ եղև ձեռամբ նուստ գրչի լոհաննիսի սարկաւագին հռոմկլայեցւոյ..... ժեալ յաշխարհապահ տղեկիս հայրապետանիստ քաղաքիս հայոց։ Ընդ որում չնորհեսցէ զսա Քրիստոս ընդ երկայն աւուրս պատուական առաջն.

պատահի էլ, ձեռագրի արժէք չունենալու պատճառով, մի մեծ կորուստ չի լինիլ։ Աւելորդ չենք համարում այստեղ նկատել, որ «Հանդէս Ամսօրեայ»-ի 1898 թուականի Յունիս ամսուայ համարում «Ակնարկ ՝ը հայ հնագրութեան վրայ» հմուտ ձեռքով գրուած հետաքրքրական յօդուածի մէջ մեր այս կրկնագիր Սաղմոսի վերաբերմամբ հաղորդած տեղեկութեան մէջ սպրդել է մի սխալ։ Հայր Տաշեանին այդ մասին տեղեկութիւն հաղորդող պ. Ա.բ. Զամինեանը սխալմամբ, փոխանակ Սաղմոսի գրիչ ներկայացնելու մեր վերոյիշեալ մեղապարտ Մատթէոսին, ներկայացրել է մի ոմն երէց Մխիթարի։ Սաղմոսի «Որհնութիւն Մովսիսի և որդւոցն Իսրայէլի» գլխի «Նաեւ ի վերայ նոցա տէր ողորմ ծովուն. և որդիքն Իսրայէլի գնացին ընդ ցամաք ի մէջ ծովուն» խօսքերի տակ մանր տառերով գրուած է այդ ձեռագրի հետեւեալ միակ համառօտ լիշատակարանը. «Զմեղապարտ գրիչս զմատթէոս. մին տէր ողորմիս լիշեցէք ի սուրբ աղաւթս ձեր. ամէն»։ Յիսուսի տղայութեան գիրքը մեր սակաւաթիւ «Մանկութեան աւետարան» կոչուած ձեռագրերից մէկն է։ Դա մի հետաքրքրական անվաւեր գրուածք է, որի հեղինակութիւնը կամ խմբագրութիւնը վերագրուած է «Յակոբայ որդւոյ Յովսեփայ եղբաւր»։ Աւետարանիչների հաղորդած տեղեկութիւնները Քրիստոսի մանկութեան մասին, ի հարկէ, չեն բաւականացրել առաջին ջերմեռանդ քրիստոնեաներին. նոքա բնականաբար ցանկացել են աւելի մանրամասն տեղեկութիւն ունենալ Աստուածորդու մանկութեան մասին, ցանկացել են տեսնել Փրկչի մէջ դեռ մանուկ հասակից այն աստուածային յատկութիւնը, այն աստուածային իմաստութիւնն ու կատարելութիւնը, այն հրաշքներ գործելու և աշխարհ զարմացնելու կարողութիւնը, որ լեռոյ այրական հասակում երևեցան նորա մէջ։ Ահա բարեպաշտ քրիստոնեաների այդ ցանկութեան լրումն, այդ բաղձանքների կատարման արդասիքն ու հետևանքը կարելի է համարել և այդ տեսակ անվաւեր աւետարանների խմբագրուելը քրիստոնէութեան առաջին դարերում, որ միանգամ առաջ գալով մի որ և է քրիստոնեայ հասարակութեան մէջ, այնուհետև թարգմանւում են ամեն լեզուներով և հետզհետէ տարածւում են միւս բոլոր քրիստոնեայ հասարակութիւնների մէջ, ամենքի համար սիրելի ու ախորժելի ընթերցանութեան նիւթ դառնալով։



Հայերն ընդունելով քրիստոնէութիւն, ինչպէս յայտնի է ձեռնարկեցին թարգմանելու Ս. Գրքի հետ միասին և բոլոր այն եկեղեցական գրքերը, որոնք այն ժամանակները գտնւում էին ասորի և յոյն գրականութեան մէջ։ Շատ իսկական գրքերի հետ անխտիր թարգմանւում են այն ժամանակները և այն ապոկրիֆները, որոնք արդէն գոյացել էին հայերից առաջ քրիստոնէական գրականութիւն կազմած քրիստոնեայ հասարակութիւնների մէջ, չենք ասում արդէն, որ նոքա հետևելով ուրիշների օրինակին, ինքեանք էլ ձեռնարկում են կազմելու իւրեանց սեփական ինքնուրոյն ապոկրիֆները զանազան աղգալին սրբերի ու վկաների մասին։ Մանկութեան աւետարանը հայոց ահա այդ թարգմանական ապոկրիֆ գրականութեան ամենաընտիր ներկայացուցիչներից մէկը կարելի է համարել։ Թէ ո՞րքան է պահպանել մեզ համար ամենածախ ժամանակն այդ ապոկրիֆի ձեռագիր օրինակներից,—մենք այժմ ճշտիւ չենք կարող ասել, որովհետև մինչև ցայսօր դեռ մեր ամենուրեք գտնուած ձեռագրերի հաւաքածուներն ուսումնասիրուած ու հետազօտուած չեն. բայց արդէն յայտնի հաւաքածուների վերաբերմամբ կատարուած հետազօտութիւններից կարելի է եզրակացնել, թէ դոցանից այնքան էլ շատ օրինակ չի մնացել։ Այդ այդպէս լինելով, հասկանալի է, որ Նախիջեւանի մանկութեան աւետարանի ձեռագիր օրինակն էլ պահպանուած ու մեր ձեռքը հասած միւս սակաւաթիւ օրինակների մէջ կարող է իր նշանակութիւնն ունենալ։

Ձեռագիրը, որի մէջ, բացի աւետարանից, գտնւում են՝ «Պատմութիւն սրբոյն Յակովբայ զոր գրեաց Մեղիգէ աշակերտ Մարուգէի միաւնակեցի», «վարք և վկայութիւն սրբոց Գոնարինեանցն որ կատարեցան ի փառս աստուծոյ», «ճառ անքուն որդանցն», «Յովհաննու Ոսկեբերանի ասացեալ վասն ապաշխարութեան», «վարք սրբոյն Դիոնեսիոսի եպիսկոպոսի աշակերտի առաքելոյն Պաւղ. որդի Սոկրատա դատաւորի աթենացւոց քաղաքի իմաստնոց, սա պատմեաց յաղագս անձին իւրոյ և ասէ», «Ներանելոյն Աբրա Եփրեմի խորին ասորոյ ասացեալ յորդորումն և յապաշխարութիւն քաղաքին Նինուէացւոց», Տեառն յոհաննու Ոսկեբերանի Կոստանդինուպալսի եպիսկոպոսապետի ի խաչելութիւն տեառն», կաշեպատ փայտէ կազմ ունի և գրուած է հաստ թղթի վերայ տգեղ, խոշոր բոլորագրով Սեբաստիայում՝ «մերձ ի լուսազարդ և աստուածաբնակ

տաճարիս որ ի ձեռն սրբոյն Գրիգորի մերոյն լուսաւորչի հիմնացեալ և հաստատեալ է» Կոստանդին կաթուղիկոսի, Հեթում թագաւորի, Միջերկրեայ կողմանց իշխան Սալատինի որդի խալաթատին սուլթանի բռնակալութեան և Սեբաստիոյ Տէր-Գրիգորի եպիսկոպոսութեան ժամանակ հայոց ՈՁԸ (1239) թուին Աստուածատուր գրչի ձեռքով։ Դա ընդհանրապէս վատ է պահպանուած—քրքրուած, թերթերը թափթփած, փտած և վերջից ու միջից պակասաւոր ու թերի։ Ամենալաւ պահպանուածն Աւետարանն է, որի առաջին թերթի ճակատին կարմրագեղ նկարած խորանի մէջ գրուած է. «Գիր տղայութեան տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի զոր ասացեալ է Յակոբայ որդւոյ յովսեփայ եղբաւր»։ Սկսում է կարմրագեղ գլխագրով՝ «ի յառաջին ամի տէրութեան ազգոստեայ կայսեր հռոմոց աշխարհին» և այլն։ Դորա ընկած թերթերի տեղ գրուած ու կազմուած են հնի հետ նոր նօտրով գրած թերթեր։ Ցիշատակարանը, որից մենք քաղեցինք ձեռագրին վերաբերեալ վերոյիշեալ տեղեկութիւնները, գրուած է վերջում։ Բացի այդ գլխաւոր յիշատակարանից, աւետարանին վերաբերեալ մի հատուած յիշատակարան էլ կայ գրուած Ս. Յակոբայ պատմութիւնից յետոյ, որից մենք իմանում ենք, թէ այդ ձեռագիրը յիշատակ է եղել Կաֆայի Ս. Յովհաննէս Աւետարանչի եկեղեցուն—«Այս քրիստոսի տղայութիւնիս յիշատակ է գրիգոր քահանայի նախնեաց և է յիշատակ ծնողաց զարմից և զաւակաց նորին. ի թուականութեանս հայոց ՌԽ (1591) առ ի տէր յոհաննէս եպիսկոպոսէն և եղի յիշատակ սուրբ յոհաննէս աւետարանչի. եթէ ոք ուզէ կարդալու կամ օրինակելու չի խնայէք տաղ գրաւ կնով զէրայ այս գիրկս ա տարի մի կորաւ ձեռքը ձեռք տալով ով աստուծոյ աւրհնութիւն ուզէ տեղը հասուցանէ ով պահէ նզովեալ եղիցի»։

Տղայութեան գրքի հիմքը կազմում է աւետարանը. զանազանութիւնը միայն այն է, որ որտեղ աւետարանիչները բաւականացել են մի նախադասութեամբ, մի խօսքով և մինչև իսկ մի ակնարկով, այնտեղ ապոկրիֆի հեղինակը մի ամբողջ պատմութիւն է աւելացրել, ընդլայնել, զարդարել է զանազան ընդարձակ յաւելումներով աւետարանիչների պատմածները, նկարագրածները։

Պատմութիւնը սկսում է Յովակիմի զոհաբերութեամբ, որ քահանայապետը և քահանաները չեն ընդունում, որովհետև նա անզաւակ էր, որովհետև նորա կին Աննան ամուլ էր։ Յետոյ մանրամասնաբար պատմում է Աննայի յղանալը, ծնելը, Ս. կոյս Մարիամի սնուելը, տաճար տարուելն ու այնտեղ մեծանալը, Եղիսաբէթի յղանալը, ս. կոյսի Յովսէփին յանձնուելը, հրեշտակի աւետումը, կոյսի յղանալը, Յովսէփի և Մարիամի Բեթղեհէմ գնալը, Քրիստոսի ծնունդը, մոգերի գալը, հովիւների երկրպագութիւնը, թլպատութիւնը, Հերովդէսի հալածանքը, սուրբ ընտանիքի Եգիպտոս փախչելը և այն կողմերի քաղաքներում թափառելը, Քրիստոսի հետզհետէ մեծանալը, հասակակից մանուկների հետ խաղալը, Գամաղիել իմաստունին աշակերտելը, հիւանդութեան և ներկաբարութեան արհեստները սովորելը, սուրբ ընտանիքի Հրէաստան վերադառնալը և Գալիլիոյ Նազարէթ քաղաքում բնակուելը և, վերջապէս, Քրիստոսի Երուսաղէմ գնալը և իւր անձը ժողովրդին յայտնելը։

Ամեն քայլափոխում մէջ է բերուում երկար խօսակցութիւններ, ամեն քայլափոխում պատմում են զանազան հեքեաթական գործողութիւններ, անդադար հրեշտակն երևում է, ցուցմունքներ է անում և առաջնորդում է Յովսէփին։ Բազմաթիւ են նամանաւանդ հրաշքները, որոնք գործում են Մանուկ-Յիսուսի ձեռքով այն տեղերում, որտեղ ապրում են նոքա, որտեղից անցնում են նոքա։ Մեհեանները կործանուում են, կուռքերը խորտակուում, քուրմերը հարիւրներով փլատակների տակ մնում, կոյրերը տեսնում են, կաղերը գնում են, անդամալոյծները, վիրաւորեալները, հիւանդները բժշկուում, համրները խօսում են, խուլերը լսում, մեռեալները յարութիւն են առնում, թագաւորները, իշխանները, դատաւորները գիտունները և իմաստունները խայտառակուում, ամօթահար են լինում։

Մէջ է բերուած, ի միջի այլոց, մի գուշակութիւն, որ իբրև թէ մոգերը ստացել են իւրեանց նախնիքներից Աստուածորդու ծննդեան մասին.—«Զի լեռ աղամայ ելանելոյն ի դրախտէն, և կալենի սպանանելոյ զեղբայրն զհաբէլ սուգ առ աղամ ի վերայ մահուան որդւոյն իւրոյ քան զելանելն նորա ի դրախտէն. ետ աստուած աղամայ որդի զսէթ որ թարգմանի որդի միսիթարութեան։ զի աղամ առաջ ցանկացաւ աստուածանալ և աստուած խոնարհեցաւ մարդանալ վասն առաւել գթոյ իւրոյ խոնարհութեանն։ ետ աստուած զուխան և

զերդումն ընդ նախահայրն միջնորդութեամբ գրեալ և կընքեալ մատամբն իւրով, եթէ զվեցհազարամերորդի առաքեմ զմիածին որդին զբանն աստուած որ եկեալ մարմնանա ի զաւակէ քումմէ, և լինի որդին իմ որդի մարդոյ, և զքեզ դարձեալ վերստին լառաջին փառս հաստատեցից։ յայնժամ եղիցիս դու ազամ անմահացեալ մարմնով աստուած ընդ աստուածս միաւորեալ իբրև զմի ի մէնջ ճանաչել զբարին և զչար»։

Ամբողջ աւետարանը, որ մեր ձեռագրի մէջ բռնում է 116 թուղթ և մի էջ, պատմուած կամ գրուած է չոր ու ցամաք ոճով, չատ տեղ մինչև իսկ երկար, տաղտկացուցիչ կրկնութիւններով։ Շատ սակաւ, երբեմն միայն ոգեորուել է ապոկրիֆի հեղինակը և մի առանձին շնչտ ու զգացմունք մտցրել իւր գրուածքի մէջ։ Առանձնապէս արժէ կանգ առնել երկու կտորի վերայ, որոնցից սրտի զեղմունքի, խոր զգացմունքի և մի յայտնի աստիճանի կենդանութեան ու բանաստեղծական աւիւնի տպաւորութիւն է ստացւում։ Այդ երկու կտորն էլ Յովակիմի և Աննայի պատմութեան մէջ է։ Յովակիմը, երբ նորա զոհը և ընծաները չեն ընդունւում, տխուր ու տրտում վերադառնում է տուն, ամեն բան պատմում է Աննային և ինքն իւր հօտերի ու հովիւների հետ հեռանում, գնում է անապատն՝ այնտեղ միայնութեան մէջ ողբալու իւր անբաղդութիւնը։ Աննան մնում է տանը մենակ և կոտրուած սրտով անդադար սգում ու լաց է լինում։ Մէկ օր էլ նա իջնում է պարտէզ, նստում է դարձի ծառի տակ, նայում է իւր չորս կողմը բնութեան գեղեցկութեան և սկսում է ողբալ իւր ամլութիւնը։ Նա երանի է տալիս իրեն շրջապատող ծառերին, թռչուններին, ծաղիկներին, արօտներին, թռչուններին, որովհետև նոքա ծնունդ ունին, աճելութիւն ունին, իսկ ինքը չոր, խոպան, անպտուղ և ամուլ է։ «Ո՞ւմ նմանեմ ես, ասում է նա, կամ որով նմանութեամբ նմանեցուցից զանձն իմ։ Նման եմ ես զաւսացեալ և անպտուղ ծառոյ մերձ ի չորացեալ արմատախիլ լինելոյ։ Ո՞ւմ նման եմ ես։ Նման եմ ես հնացեալ փուտ փայտից և մերձ յապականութիւն հասեալ և հուր քորքոքելի յայրումն։ Նման եմ ես ապառաժ քարանց անշնչոց զի ոչ ունին արմատս և ոչ դալարութիւն լինքեանս և ոչ ծնելութիւն։ Ո՞ւմ նման եմ ես։ Նման եղէ անապատի խոպանացեալ յերկրի որ ոչ ունի դալարութիւն նիւթոյ կանա-



չութեան և աճումն լինելութեան։ Ո՞ւմ նման եմ ես։ Նման եմ ես անցաւոր մեղաւորաց որ ոչ ունին պտուղ արդարութեան»։

Բայց ահա նա լղանում է և ծնում է Մարիամին.—նորա ուրախութեան չափ չկայ. նա անդադար զգում ու սիրում է իւր սիրունիկ աղջկան։ Երբեմն էլ, երբ մանուկը դառնում է 108 օրուան, նա խոստանում է, որ նա «թեակոխէ. մանուկը մի երեք քայլ առաջ է գնում ու վերադառնում, ընկնում իւր մօր գիրկը։ Այն ժամանակ մայրն առնում է նորան իւր ձեռքերի վերայ և դրգռելով ասում է.

«Դու Մարիամ, սուրբ կուսից մայր,»
«Դու բարի արմատ տնկոց բարունակ չառաւիղ.»
«Ի քէն սառաւատն ծագէ արուսեակն,»
«Լոյսն նման լուսնի, քան զաստղ պայծառ արևու,»
«Շող արեգական, այդ տուընջեան, ծագումն արևելից արփոյն։»

## Զ

Մասնաւոր մարդկանց ձեռքին գտնուած ձեռագրերից արժանի են ուշադրութեան, բացի Բելլէչահինենց Ցայսմաւուրքից, որի մասին արդէն խօսեցինք, Օդաբաշենց աւետարանը և մեր Վարդան-գիրքն ու Տաղարանը։

Օդաբաշենց աւետարանը նշանաւոր է, նախ, նորանով, որ երկաթագիր է, երկրորդ, որ Նախիջևանում ներկայումս եղած ձեռագրերից ամենահինն է։ Նա գրուած է տեղ-տեղ նուրբ, տեղ-տեղ էլ հաստ մագաղաթի վերայ միջին-մեսրոպեան երկաթագրերով Հայոց ՈԽԲ (1193) թուին բարեպաշտ Լևոն Բ. թագաւորի և Գրիգոր կաթուղիկոսի ժամանակ Կիլիկիոյ Սկատինոյ ղղեակի մօտ գտնուած «Պաւղոսական» կոչուած անապատում։

Ամբողջ ձեռագիրը, որ ամփոփուած է կաշեպատ փայտէ կազմի մէջ, պարունակում է իւր մէջ 313 և մի էջ մագաղաթ թուղթ, որից 296 ը բռնում է երկսիւն գրուած բնագիրը, 9 թուղթ Համաբարբառը, 2 թուղթ և մի երես Ցիշատակարանը և 6 թուղթ բաց մագաղաթ՝ սկզբից, մէջից և վերջից։ Կազմի մի երեսը դատարկ է, իսկ մես երեսի վերայ անկիւններում գտնւում են արծաթեայ եռանկիւնի զարդեր, մէջ տեղը չորս արծաթեայ խաչ՝ երկուսը Քրիստոսի խաչելութեան

պատկերով, մէկը բոլորովին դատարկ, մէկն էլ հետևեալ յիշատակարանով. «Ցիշատակ խաչս Նաղլուխանի որդի Դէվորքի և ետ բժշկարան սուրբ աւետարանս ի վալելումն տէր յոհաննէսին թվին ՈՒԲՃԺ Թ.»։ Իւրաքանչիւր աւետարանի առաջին երեսը զրուած է խոշոր ոսկեզօծ զարդագրերով և իւր հակատին ու լուսանցքների վերայ ունի խաչաձարդ և սիրամարգաձարդ գեղեցիկ նկարներ ու պատկերներ։ Աւետարանների ամեն մի տունը սկսուում է խոշոր գլխագրով, ամեն մի գլուխ ոսկեզօծ տառով։ Շատ գեղեցիկ են և կանոնատախտակները, որոնք ամփոփուած են ճաշակով նկարուած խորանների և կամարակապ զարդերի մէջ։

Ընդհանրապէս այդ աւետարանը լաւ է պահպանուած. տեղ տեղ միայն թանաքը կորցրել է իւր բնական գոյնը և մագաղաթը խոնաւութիւնից դեղնել է, որից և տառերն եղծուել են ու գրուածքը դժուար ընթեռնելի է դարձել։ Դժբաղդաբար այդ փորձանքին է ենթարկուել և դժուար ընթեռնելի է դարձել և ձեռագրի գլխաւոր յիշատակարանը, որ գրուած է նոյն իսկ ձեռքով և տառերով, որով գրուած է և ամբողջ աւետարանը։ Մենք ասում ենք դժբաղդաբար, որովհետև այդ յիշատակարանը պատմական հետաքրքրական բովանդակութիւն ունի և նորա եղծուած և նամանաւանդ թերի լինելը մեզ միջոց ու հնարաւորութիւն չի տալիս ամբողջովին վերականգնելու նորա բնագիրը, որ, գուցէ, շատ կարևոր տեղեկութիւններ է պարունակել իւր մէջ։

Այդ յիշատակարանը մեզ պատմում է Երուսաղէմի Սալահեդինի ձեռքով առնուելու, գերմանացւոց կայսեր Ֆրեդերիկոս Շէկամօրուսի գալու և խեղդուելու, նոյն Սալահեդինի Կիլիկիա արշաւելու և Լևոնի զօրութեամբ նորան դէմ դնելու հանգամանքների մասին։ Բայց արժէ կարդալ ամբողջ յիշատակարանը, որի բնագիրը մենք կարդում ու վերականգնում ենք հետևեալ կերպով. «Ցամի Ռարիւերորդի քառասներորդի երկրորդի հայվաղնեան տաւմարիս ի հայրապետութեան տն Գրիգորի կաթողիկոսի Հայոց, յիշխանութեան բարեպաշտ իշխանին Լևոնի, իսկ ի բռնակալութեան Հաքարացւոց ումեմն Սալահատին կոչեցեալ ըստ իւրեանց առասպելաբանութեանն, որ և տիրեաց եգիպտացւոց և մինչև ի կողմանս արևելից, և զբազումս յազգայնոց իւրոց արկեալ ընդ իշխանութեամբ իւրով, եւ զաւրացեալ այսու սկսաւ պատերազմել ընդ սուրբ քաղաքն Երուսաղէմ, և ընդ զաւրս նորա։ Զորս թուացեալս զտանէր ի հաւատս զնոսա կարասեաւ և խոստմամբ պատրէր, և որ քաջ սպառազէնքն էին, բանիւք ողոքանաւք հաւանեցուցանէր, և զայլս ի մեծամեծացն երդմունս հաստատէր, նոցա ունիլ զտէրութիւն աշխարհացն, և այսպիսի խորամանկութեամբ քակեաց զամենեսեան ի միմեանց և արար ի միում տան խռովութիւն։ Եւ զայս արարեալ ի բազում ամս, ոչ կարաց յաղթել նոցա, և ապա աւրինաւք խնդրէր պատերազմել ընդ նոսա, զի գիտէր զխռովութիւն և զերկպառակութիւն զաւրացն և զյետս կացելոցն ի սուրբ ուխտէն։ Եւ պատերազմեալ ընդ նոսա յաղթեաց. զ՝ զաւրքն ընդ չորս մասունս բաժանեալ էին, և ձերբակալ արարեալ զթագաւորն և զաւրս պատերազմողս, որ կոչին Փրերք, և զայլ զաւրսն կոտորեաց, և բռնացեալ առ զսուրբ քաղաքս Երուսաղէմ և զասկաղոնն և զամենայն սահմանս աշխարհին, և զայլ ի սահմանս անտիոքու, և քակեալ աւերեաց զաշխարհն և զամուրս նորա։ Իսկ անաւրինացն պրինձ կոչեցեալ ոչ կարաց ելանել ընդդէմ նորա։ Իսկ նորա կատարեալ զկամս իւրոյ չարութեանն, կամեցաւ մտանել յաշխարհն կիլիկեցւոց, նոյնպէս կարձելով զնոսա անարիս զոլ, քանզի զայր իբրև զառիւծ զաւրաւոր և զառնայր իբրև զաղուէս տկար։ Քանզի յառաջ ասացեալ հայրապետն սուրբ Գրիգորիոս, որ ունէր զաթոռ հայրապետական սրբոյն Գրիգորի, որ և շառաւիղ գոլով նորին Լուսաւորչին Հայոց, պահպանեալ ընդ ամրածածուկ աջո

սրբութեան պարապեալ։ Եւ ապաշաւեալ մի ոմն ի թագաւորացն հռովմայեցւոց ալաման կոչեցեալ գայ մինչև ի սահմանս կիլիկեցւոց, և ոչինչ արիութիւն ցուցեալ, կատարի մահուամբ դեռասոյզ եղեալ, և զաւրին ցրուեալ բաժանեցան։ Եւ մինչ ցայս վայր ինքն բռնացեալ ունի զքաղաքն սուրբ, յառաջ ասացեալ գաղանն հաքարացի։ Եւ արդ յաւուրս, յորս ասացաւ, ստացաւղ եղեալ սրբոյ տառիս սրբազան եպիսկոպոսն տէր Կարապետն քուերորդի զոլով սրբոյ վարդապետին Պաւղոսի ընակելով առ սուրբ հայրապետին տեառն Գրիգորի, որ և արժանաւորեալ աշտիճանի եպիսկոպոսութեան, որպէս և վայել է այնմ Աստուծոյ տնտեսի։ Եւ արդ սիրող զոլով պատուիրանաց տեառն, մանաւանդ աւետարանական քարոզութեան սորին, և արդ ստացաւ զսա ի յիշատակ հոգւոյ իւրոյ և ի պարծանս եկեղեցւոյ։ Եւ գրեցաւ սա յանապատին, որ կոչի Պաւղոսական, մերձ առ ամուր դղեկի Սկատինոյ, առ....։

Մեր Վարդան-գիրքը, կամ, ինչպէս գրիչը կոչում է, «Բարոզի կամ խրատական հոգոյ շահ գիրքը» մի մեծադիր կաշեպատ փայտեայ կազմով տգեղ նօտարագրով հաստ, կոպիտ կապտագոյն թղթի վերայ գրուած ձեռագիր է, որ մենք ստացել ենք Նեսուիթայ գիւղի Ս. Կարապետ եկեղեցու. քահանայից։ Դա գրուած է մի ոմն դպիր Տէր-Մարտիրոս Աւետիքովի ձեռքով, որ գաղթականների հետ միասին Նախիջևան եկած քահանաներից մէկն է եղել։ Ձեռագրի մէջ գրուած բազմաթիւ յիշատակարաններից մէկից մենք իմանում ենք, որ այդ Տէր-Մարտիրոսը եղել է Կաֆայի բազմաթիւ եկեղեցիների դպիրներից մէկը և ձեռնադրուել է քահանայ իւր 55 տարեկան հասակում նոյն Կաֆայի Ս. Համբարձման եկեղեցու վերայ Երուսաղէմի նուիրակ Գաբրիէլ եպիսկոպոսի ձեռքով հէնց գաղթականութեան տարին։ Դա ձեռնադրուել է քահանայ Հայոց Ռմիէ (1778) թուի փետրուարի 14-ին, իսկ գաղթականութիւնը սկսուել է նոյն թուականի օգոստոսի 17-ին, այնպէս որ դա Ղրիմում քահանայութիւն է արել ընդամենը միայն վեց ամիս, և գալով Նախիջևան, կարգուել է Նեսուիթայ գիւղի քահանայ։

Թէ երբ և որտեղ է գրել Տէր-Մարտիրոսն իւր «հոգոյ շահ գիրքը», մենք չենք կարող որոշակի ասել, որովհետև ինքը գրիչն այդ մասին ձեռագրի յիշատակարանների մէջ մի քանի տարբեր թուականներ է գրել և Ղարասու, Քեֆէ, Նոր-



Նախիջևան քաղաքներն ու Նեսուիթայ գիւղն է գրուիթեան տեղ նշանակել։ Գրքի սկզբում, օրինակի համար, գրուած է. «Առաջի գլուխ ըսկըսեալս էր թվին Հայոց ՌՄԻԸ (1779) ըռուստաց գիւղն Նսուիտայ Տէր-Մարտիրոս դպիր Աւէտիքով ամենուդ ծառայ». վերջում գրուած է. «Ցիշեցէք տէր Մարտիրոս քահանայս 1799». յիշատակարաններից մէկում—. «ի թվականութեանն մերոյ հայոց ըսկըսեալըս ՌՄԻԸ (1799) վերջ լինելն ՌՄԽԵ (1796) ամսեանն Ապրիլի Ի որ զատիկ էր հայոց». մի տեղ էլ—. «Գրեցի իմով ձեռամբ անպիտան իրրը տէր մարտիրոսըս Հայոց թիւ ՌՄԽԴ (1794) ամսեանն Յունվարի մէջը ի Ղարասու քաղաքն». մի ուրիշ տեղ էլ—. «Գրեցաւ ծաղկայ նրման ժողովեալ գիրքըս ձեռամբ Անարժան մարտիրոս իրիցու ի Նորըն Նախիջևան 1796», և այլն։

Հաւանական է կարծել, որ Տէր-Մարտիրոս Աւետիքովն ինքն առաջ ապրել է Ղարասու քաղաքում և այնտեղ էլ 1779 թուին սկսել է գրել «հոգոյ շահ գիրքը», յետոյ դպրութեան պաշտօնով տեղափոխուել է Քեֆէ և այնտեղ շարունակել է իւր սկսածը, վերջապէս, նա գաղթել է Նախիջևան և այդտեղ մերթ քաղաքում, մերթ Նեսուիթայ գիւղում վերջացրել, գլուխ է հանել իւր հաստափոր գիրքը 1799 թուին։

Արժանի է ուշադրութեան այն հանգամանքը, որ մի երկու տեղ այս ձեռագրի մէջ գրչի անունը և գրելու թուականը գրուած է պայմանական նշաններով, որոնց գործածութեան մենք պատահել ենք և ուրիշ, սովորաբար նոր, ձեռագրերի մէջ։ Մի տեղ, օրինակի համար, գրուած է. «Գրեցաւ թիւ հայոց էր //// /// //··· /··· Ամսեանն ապրիլի 11 որ էր զատիկ, մի ուրիշ տեղ գրուած է. «բաւ է յիմար գրողաց և իմաստուն ընդերձողաց ////··· /····· ////··· ///· / ////··· ////··· //· ////··· ///····· ////· /····· գրեցաւ թվին հայոց //// /// //··· /··· մայիսի // /····· վերջ»։

Այդպիսի պայմանական նշանների կարդալու բանալին Հայոց այբուբենն է, որով, ինչպէս յայտնի է, գրուել ու գրրւում են մեր մէջ և թուերը։ Հայոց բոլոր այբուբենը բաժանւում է չորս խմբի՝ միաւորների, տասնաւորների, հարիւրաւորների և հազարաւորների այսպէս.

| | | | |
|---|---|---|---|
| ա | ժ | ճ | ռ |
| բ | ի | մ | ս |
| գ | լ | յ | վ |

| | | | |
|---|---|---|---|
| Գ | Խ | Ն | Տ |
| Ե | Ծ | Հ | Ր |
| Զ | Կ | Ո | Ց |
| Է | Հ | Չ | Ւ |
| Ը | Ձ | Պ | Փ |
| Թ | Ղ | Ջ | Ք |

Այս խմբերի առաջին տառերը—ա, ժ, ճ, ռ ցույց են տալիս կարգերը—առաջին, երկրորդ, երրորդ և չորրորդ, իսկ միւսները տառեր ու թուեր են։ Պայմանական նշանների մէջ խմբերի կարգերը նշանակւում են գծերով—/ առաջին կարգ, // երկրորդ կարգ, /// երրորդ կարգ և //// չորրորդ կարգ, իսկ տառերը և թուերը նշանակւում են կէտերով, որոնք դրւում են այդ կարգերը ցոյց տուող գծերի վերայ։ Եթէ կէտը մէկ հատ է և դրուած է առաջին կարգի վերայ—/, ուրեմն դա Բ տառն է, եթէ երկու կէտ է—/··, Գ տառն է, եթէ երեք—/···, Դ տառն է, և այսպէս բոլորը կարգով։

Այս կանոնի հիման վերայ կարդալով վերոյիշեալ պայմանական նշաններով գրուած յիշատակարանները, մենք կըստանանք առաջին դէպքում. «Գրեցաւ թիվ հայոց էր ՌՄԽԵ (1796) Ամսեանն Ապրիլի Լ (30.)» երկրորդ դէպքում.—«Նաւ է յիմար գրողաց և իմաստուն ընթերցողաց Տէր-Մարտիրոս է գրեցաւ ՌՄԽԵ (1796.) Մայիսի ԺԵ (15.)»։ Տէր-Մարտիրոսի Վարդան-գիրքը բաղմաբովանդակ է. նորա մի մեծ մասը բռնում են ընդհանուր և Հայոց եկեղեցու վարդապետների քարոզներն ու խրատները, որոնք սովորաբար գտնուում են և մեր միւս Վարդան-գրքի մէջ. մի մասն էլ իւր, Տէր-Մարտիրոսի խրատներն ու քարոզներն են, որոնք թէև, ըստ իւրեանց բովանդակութեան, շատ անմեղ բաներ են, բայց իւրեանց աշխարհաբառ մասերով կարող են մեզ լիակատար կերպով գաղափար տալ այն բարբառի մասին, որով մեզանից հարիւր—հարիւր քսան տարի առաջ խօսել են Ղրիմի հայերը. երրորդ մասը, վերջապէս, կազմում են զանազան պատմական հատուածներ. որոնցից յատկապէս արժանի են ուշադրութեան այն արձակ ու ոտանաւոր կտորները, որոնք վերաբերում են Ղրիմի և Նախիջևանի գաղթականութեան։

Դոցանից, այդ պատմական կտորներից, օրինակի համար, մենք իմանում ենք, թէ Կաֆան ո՞րքան և ինչ անուններով եկեղեցիներ է ունեցել, թէ այդ եկեղեցիներից իրա-



քանչիւրը թուրքերի իշխանութեան ժամանակ ո՞րքան հարկ է հատուցանելիս եղել սուլթանին, թէ Նախիջևանի գաղթականութեան ժամանակ ինչ բարոյական նկարագիր են ունեցել թէոդոսիայի քահանաները, թէ Ղրիմի հայերը ինչ նահատակներ են ունեցել, որոնք զոհ են գնացել մահմեդական թաթարների մոլեռանդութեան, և թէ, վերջապէս, ինչ բնաւորութիւն է ունեցել Նախիջևանի գաղթականութիւնը—բըռնի, թէ կամաւոր։ Ցաւոնի է, որ մինչև վերջին ժամանակները մեր մէջ Նախիջևանի գաղթականութեան մասին այն կարծիքն էր ընդհանրացած, իբրև թէ գաղթականութեան պատճառն այն է եղել, որ Հայերը Ղրիմում նեղուելով թաթարներից, ինքեանք իւրեանց յօժար կամքով խնդրամատոյց են եղել երջանկալիշատակ եկատերինէ Կայսերուհուն, որ նա առնէ նոցա իւր բարձր հովանաւորութեան ներքոյ, գաղթեցնելով նոցա Ղրիմից Ռուսաստան, և Յովհաննէս Լազարեանը և Ջովսէփ արքեպիսկոպոս Արղութեանը միջնորդ են հանդիսացել և կարողացել են, վերջապէս, յաջողեցնել այդ դժուար գործը։

Ճիշդ է, Ն. Դուբրովինի ձեռքով ու աշխատանքով վերջերումս հրատարակուած Ղրիմի Ռուսաստանի հետ միացուելուն վերաբերեալ բոլոր վաւերականները վերջնականապէս լուն վերաբերեալ բոլոր վաւերականները վերջնականապէս ջրեցին ու հերքեցին այդ կարծիքը, գաղթականութիւնը ներկայացնելով իբրև արդիւնք Ռուսաց Ղրիմի վերաբերմամբ գործ դրած քաղաքականութեան, բայց անհետաքրքրական ու անշահեկան չէ իմանալ այդ մասին և իւր, գաղթական ամբոխի կարծիքը, որ մենք գտնում ենք արտայայտուած այս Վարդան-գրքում Կաֆայի Տէր-Մարտիրոսի բերանով

Դպիր Աւետիքի որդի Տէր-Մարտիրոսը պատմելով Անուշ կործանման յաղթի դէպքերի մասին և գաղթականութեան պատմութիւնն անելով Բելլէչանինենց Յայսմաւուրքի յիշատակարանի խօսքերով, իւր կողմից, իբրև ականատես և մասնակցող, դորա վերայ համառօտաբար աւելացնում է և Նախիջևանի գաղթականութեան պատմութիւնը։ «ԴՉԼ թվին ՌՄԻԷ Ամսեանն յուլիսի մէկէն ըսկըսվեցաւ Ղրիմի եղեալ հայք և հոռոմք գընալ ի ըռուստաց երկիրն, ասում է նա այդ յաւելուածի մէջ, վասն մեր ծովացե՛լ մեղացն բարկացեալ էր Աստուած ի վերայ մեր խաբէութեամբ հանէցին քաղաքներս տունները մըլքերըս պաղ պաղճաներըս բոլորը ձքէցինք մեր

կամաւէն որդօք դրստերօք սիրելեօք և բարեկամօք խաղաղ խընդալով մէկ տարի ըռուստաց գիւղ՝քաղաք մաշեցանք այս բանէս Կատարինէ թագուհին չէր խապար. իրեն մեծամեծքն ասիլին թէ Ղրիմի միջի եղեալ թուրքն բաղում նեղութիւն կուտան տիվ և գիշեր. թագաւոր ապրած կէնաս քէզմէն ողորմութիւն կու խընդրեն կու հայցեն թէ զմեզ այս հողէս վերցնես ի հոտ բերես մենք քեզ ծառայ եմք որդոց որդիս. որովհետև զիս սէրօվ խընդրիլին. հրաման է թող նոցայ խընդիրքն թող նոցա հայցուածքն՝ կատարվի շատ բան ըլալուն ետքը եկինք ըռաստովէ հողն. թէնի քէնարն քաղաքի տեղ չաբէցին տըվին մէկ մէկ հատ միրիի տուն պարգևք արաւ թագուհին. Ծ ական ըռուպլինոց որն բատէ որն քէրբիճէ. ոմանք ուժ ունէցողը իւր բողովքն չինից մինչև Բ՚ճ ըռուպլիէն ԲՌ ԳՌ ԴՌ ըռուպլիի չինեցին. քաղաքին անունը դրին ի Նորքն Նախջիւան. առաջնորդ եղև մեղի Ցովսէփ արք եպիսկոպոսն որոյ տէր Աստուած տացէ երկար կեանք. Ամէն»։

Թէև մեծ միամտութիւն է կարծելը, թէ մեծամեծները կարող էին խաբել այնպիսի սրամիտ և ամեն բան իւր սեփական խելքով անող, ամեն բանի մէջ թափանցող թագուհուն, ինչպիսին եղել է երջանկայիշատակ Եկատարինէ կայսերուհին, բայց շատ հետաքրքրական է այդ կարծիքը ժողովրդի, որ անկարող լինելով հասկանալ՝ժամանակի քաղաքականութեան նրբութիւնները և լոկ խաբէութիւն համարելով այն միջոցները, որ գործադրել էին Ռուսաց մեծամեծները ժողովրդին գաղթեցնելու համար, աղատ են համարում այդ գործի մասնակցութիւնից մեծ կայսերուհուն և բոլոր մեղքը ձգում են մեծամեծների վերայ։ Հետաքրքրական է և գաղթականների մի կողմից «խաղաղ խընդալով» թողնելն իւրեանց «մլքերը, պաղ պաղճաները» և Ղրիմից դուրս գալը, միւս կողմից էլ նոցա մէկ տարի «ըռուստաց գիւղ քաղաք մաշուելը, մինչև որ հասնում են «թէնի»-Դոնի ափը, «ըռաստովի հողը» և հիմնարկում են Նոր-Նախիջևանը։

Այս վարդան-գրքի միջից է հանել հանգուցեալ Քերովբէ Քուշնարեանը և տպագրել 1892 թուականի «Բազմավէպի» Մայիս ամսուայ համարում յայտնի «Քէֆէ քաղաք ծովահայեաց» երգը [24]), սորա միջից ենք մենք առել և կցել մեր

[24]) Հանգուցեալ հ. Քերովբէ Քուշնարեանն իւր պատ-



«Նոր-Նախիջևանի գաղթականութեան պատմութեան» և «Կաֆայ քաղաք աննըման դրախտի» ու «Տէր-Խաչատուր եպիսկոպոս որպէս Անտոն Թէբալիղի» երգերը, որոնց բովանդակութիւնը վերաբերւում է Ղրիմի, կամ, լաւ է ասել, Քէֆէի Հայերի կեանքին։

Մեր Տաղարանը մի փոքրադիր՝ 4×5 սանտ. մեծութեամբ կաշեպատ փայտէ կազմով գիրք է, որ մենք ստացել են Նոր-Նախիջևանցի Մանուկ Մորոզովից։ Դա գրուած է մանր գեղեցիկ նօտրագրով մագաղաթի պէս լղկած փայլուն, նուրբ թղթի վերայ։ Դորա մէջ պարունակուած տաղերի խորագրերը և երգերի տների առաջին տառերը գրուած են կարմրագեղ թանաքով, իսկ իւրաքանչիւր տաղի առաջին տառերը գոյնըզգոյն գեղեցիկ գլխագրերով։ Թէ ինչ է գրուած որ ձեռքով և որտեղ այդ Տաղարանը,—դժբաղդաբար մենք որոշակի ոչինչ չենք կարող ասել, որովհետև ձեռագրի անխնամք կերպով պահուած լինելու պատճառով, դորա կազմը քայքայուել է և մի քանի թուղթ սկզբից և վերջից թափել, կորել են, որոնց հետ անկասկած ընկել, կորել է և այն թերթը, որի վերայ գրուած է եղել լիշատակարանը։ Մենք միայն նայելով թղթի յատկութեան, գլուխեան ձևին, կարող ենք հաւանականաբար ասել, թէ դա գրուած պէտք է լինի ԺԷ դարից ոչ առաջ։

Մեր միջնադարեան գրականութեան թէ արձակ և թէ բանաստեղծական ճիւղերը, ինչպէս յայտնի է, մինչև ցայսօր դեռ ոչ միայն ուսումնասիրուած չեն, այլև դոցա, այդ ճիւղերին վերաբերեալ գրուածների ու երկերի պարզ հաւաքածուներն անգամ չունինք տակաւին։ Ո՞ւր են մեր գիրք-վաստակոցները, բաղմաթիւ բժշկարանները, վարդապետական, վիճաբանական գրուածները, պատմական-կենցաղավարական լիշատակարանները, տաղերը, զանձերը, մեղեդիները, աւետիսները և այլ

մութեան մէջ կարծում է, որ իւր ձեռքին գտնուած 1787-ին Նախիջևանում գրուած «ժողովածուի» մէջ Կաֆայի եկեղեցիներին վերաբերեալ մասն առնուած է Կաֆայում 1756 թուին հեղինակուած «Պատմութիւն Անի քաղաքի ի ձեռն Աբրահամու բարունապետի» ձեռագրից, որ այժմ իբր թէ պահուում է սուրբ Էջմիածնի մատենադարանում։ Հայր Քերովբէի «ժողովածուն», ինչպէս մենք արդէն մեր 14 ծանօթաբանութեան մէջ նկատեցինք, մեր «Վարդան—գրքի» մի այլ օրինակն է եղել։

այդ տեսակ մանր, բայց բազմաթիւ գրուածները, չենք խօսում արդէն բանաւոր գրականութեան մասին, որի հաւաքելու և գրի անցնելու համար դեռ միայն թոյլ փորձեր են եղել մասնաւոր անհատների ձեռքով։ Դոցա պէտք է որոնել, գտնել զանազան հին ու նոր պարբերական հրատարակութիւնների մէջ և մինչև ցայսօր դեռ չհրատարակուած ձիշատակարանների ու հնութեան փոշով ծածկուած ձեռագրերի մէջ։

Բացառութիւն կարող են կազմել այդ դէպքում միայն մեր աղուէսագրքերը, որոնց մէջ պարունակուած առակների լիակատար և բարեխիղճ ուսումնասիրութիւնը սորանից մի երկու տարի առաջ կատարուեց ուսուցչապետ Նիկողայոս Մառի ձեռքով, որ ժամանակ և անակնկալ ու շահեկան լայտնութիւններ եղան։ Պարզուեց, որ այդ առակները, նախ, զուտ հայ մտքի ինքնուրոյն արդիւնք են, երկրորդ լոյս աշխարհ եկաւ մի նոր հեղինակի՝ վարդան Այդեկցու անուն, որ մինչև այդ ժամանակները ծածկուած էր անլայտութեան թանձր քօղով։ Ներկայումս նամանաւանդ կարևոր ու անհրաժեշտ է մեր միջնադարեան բանաստեղծութեան մի սլլ գլխաւոր ճիւղի՝ երգերի, տաղերի, դանձերի, մեղեդիների և աւետիսների մի լիակատար հաւաքածու կազմելը և մանրամասն ուսումնասիրելը, տաղերի, որոնց թիւը խիստ շատ է եղել մեր մէջ և որոնք այնքան մեծ նշանակութիւն ունին մեր աշխարհաբառ լեզուի, մեր ներքին ընտանեկան կեանքի ուսումնասիրութեան համար։ Ճիշդ է, մեր մէջ եղել են մասնաւոր անհատներ, որոնք ուշադրութեան առնելով և այդ հանգամանքը, փորձեր են արել այստեղից այնտեղից որոնելու, գտնելու և տպագրելու այդ տաղերը և դոցա հիման վերայ ուսումնասիրութիւններ կատարելու, բայց դոքա այնպէս էլ մնացել են փորձեր և երբէք լայն ծաւալ չեն ստացել։ Ամենից աւելի այդ ասպարիզում աշխատել են Վենետիկի «Բազմավէպ»-ը, Հ. Ղեւոնդ Ալիշանը, Հ. Գարեգին Սրուանձտեանը, Հ. Արիստակէս Տէվկանցը և նամանաւանդ Գէորգեան ճեմարանի նախկին ուսուցիչ ու տեսուչ պ. Կարապետ Կոստանեանը, որ, սկսած 1892 թուից մինչև 1898-ը, մանրամասն համեմատութեամբ հրատարակել է երեք պրակ հաւաքածու և երեք հեղինակի Յովհաննէս Թլկուրանցու, Մկրտիչ Նաղաշի և Գրիգորիս Աղթամարցու երեք հատորիկ գրուածները։

Մեզանում ձեռագիր Տաղարանների ու դանձարանների



թիւը խիստ շատ է և դոցա գտնելը մի մեծ դժուարութիւն չի ներկայացնում աշխատասիրողի համար. համարեա մեր ամեն մի ձեռագրերի ժողովածուի մէջ կարելի է գտնել մի քանի դանձարան, չենք խօսում արդէն Տաղարանների մասին, որոնցից ամեն տեղ կարելի է գտնել մինչև իսկ մասնաւոր մարդկանց ձեռքում։ Բայց մեզ պակասում են աշխատող մրցքեր ու ձեռքեր, որոնք այդ Տաղարանների ու Դանձարանների միմեանց հետ համեմատելու, երգերի հեղինակների անունները գտնելու, օտար և հայ գաւառական բառերի ու դարձուածների մեկնութիւնները տալու և բառարաններ կազմելու մանրակրկիտ ու տաժանելի աշխատանքին ձեռնարկէին։

Մեր Տաղարանը թէև, ինչպէս ասացինք, սկզբից և վերջից թերի է, բայց և այնպէս իւր լիակատարութեամբ, խմբագրութեան կատարելութեամբ կարող է, ըստ ամենայնի, մեր բոլոր միւս մինչև ցայսօր լայտնի Տաղարանների մէջ պատուաւոր տեղ բռնել, և, ով որ էլ լինի մեր երգերի վերջնական հաւաքածուն կազմողը և ուսումնասիրողը ապագայում, նա չպէտք է անուշադիր թողնէ դորան։ Դա ունի իւր մէջ իւր ներկայ դրութեամբ 114 Տաղ (իա ճլդ.), որոնք կամ ունին իւրեանց սեփական խորագրերը։ «Տաղ վասն ազատութեան», «Տաղ ջրի վերայ է ասացեալ», Տաղ դատաստանի վերայ», և այլն, կամ անորոշ—«Տաղ սիրոյ», «Տաղ ուրախութեան», «Տաղ գեղեցիկ», «Տաղ ազնիւ , «Գովասանք», «Մեղեդիկ», «Կանձ է», և այլն, և կամ բոլորովին վերնագիր չունին։ Դորա տաղերից շատերն էլ, ինչպէս մեր միւս Տաղարաններինը, հեղինակի անուն չունին. միայն մի քանի տաղերի մէջ վերջում կամ խորագրերի մէջ լիշուած են հեղինակների անունները։ Երգերի վերջում լիշուած են Թլկուրանցի, Թաթոս, Մարտիրոս, վարդապետ, Զպուղողլի, Կոստանդին, Յակոբ, Թորոս, Կաֆացի դարիբ Մկրտիչ, Օքսուզ Տէրտէր, Աւետիք, Տէր-Յովհաննէս, խև Յովհաննէս, Սարկաւագ Բերդակցի և Գրիգոր Աղթամարցի անունները, իսկ խորագրերի մէջ—Յովհաննէս, Թլկուրանցի, խև Յովհաննէս, Նաղաշ, Թադէոս սարկաւագ և Կիրակոս վարդապետ [26]։

---

[25]) Այս անունների մէջ Թաթոս և Թադէոս սարկաւագը մի և նոյն անձն է. մի և նոյն Յովհաննէս Թլկուրանցու անուններն են երևում և Տէր Յովհաննէս, խև Յովհաննէս և Յովհաննէս։

Մեր Տաղարանի գլխաւոր արժանաւորութիւնը, ինչպէս նկատեցինք, նորա լիակատարութիւնը և խմբագրութեան կատարելութիւնն է։ Նորա միջոցով, նախ, կարելի է ծանօթանալ մինչև ցայսօր մեզ անլայտ մի քանի տաղերի, երկրորդ, նորանով կարելի է վերականգնել արդէն յայտնի ու տպագրուած շատ տաղերի աղաւաղուած ու պակաս տեղերը։ Այդ վերջին հանգամանքը շատ կարևոր է, որովհետև մեր տաղերի մեծ մասը բերանէ-բերան անցնելով, այն աստիճան աղաւաղուել են, որ շատ անգամ չի կարելի մինչև իսկ հասկանալ նոցա միտքը, չենք խօսում արդէն ոճերի ու դարձուածների, տուների յետ ու առաջ դրուելու, բազմաթիւ յետոյ ժամանակի եղած յաւելումների և յապաւումների մասին, որոնք արդեւք են լինում ընտիր խմբագրութեամբ մի լիակատար հաւաքածու կազմելու ու ոճաբանութեան և լեզուի տեսակէտից լուրջ ուսումնասիրութիւն կատարելու կարևոր գործին։

Թողնելով մի կողմ միւս բոլոր տաղերը, առնենք, օրինակի համար, միայն Թլկուրանցու տաղերը։ Պ. Կարապետ Կոստանեանցը գտել, ճշդել ու հրատարակել է մեր միջնադարեան բանաստեղծներից այդ գլխաւորի միայն 19 կտոր տաղերը—16-ը առանձին հատորիկով, երեքն իւր «Ժողովածուի երրորդ պրակի» մէջ։ Անկասկած այդ հեղինակի երգածները թուով շատ աւելի են եղել, բայց մեր բազմաթիւ տաղերի մէջ մինչև ցայսօր դեռ անկարելի է եղել ճշդել, իմանալ, թէ այլ ևս ինչ կամ որ տաղերն են պատկանել նորա գրչին։ Մեր Տաղարանն ահա աւելացնում է նորա երկերի վերայ այլ ևս երկու երգ—«Ցանկարծակի մէկ մի տեսայ» սիրոյ երգը և «Տաղ վասն Աշալի», որոնք չեն երևում պ. Կոստանեանի Թլկուրանցու անունով հրատարակած տաղերի շարքում։ Աւելորդ չենք համարում այստեղ մէջ բերել առաջինը, որ աւելի կարճ է, քան թէ երկրորդը.

Ցանկարծակի մէկ մի տեսայ,
Որ կու ցօղայր գունն յերեսէն.
Թուլցայ, ընկայ ի տեսլենէն,
Շողայր, կաթէր լուսն ի վզէն։
Աչերն է ծով, ունքն է թուխ սմպ,
Աղն է դեղձան ոսկի թելէն.
Ունքն ճօճար զէտ զուռի ճեղ.
Հրով այրէր զերկիր ամէն։
Ճոխագնաց, մանրաքալլող,
Հոգի ի մարմնէ քակող.
Լուրթն է ծածկել զամէն աշխարհս,
Շաքար կաթէր իւր քարամէն։
Երբեմն աչերս ի քեզ դիպաւ,
Նա վառեցայ զէտ մոմեղէն.
Խելագնաց ի վայր մնացի,
Զարհուրեցայ ի տեսլենէն։
Խէվ Յովհաննէս Թուլկուրանցի,
Խիստ մի հաներ զոտքդ ի ծրէն.
Աղէկ սուրաթն երբ մեռանի,
Ցամքի, գնայ գունն երեսէն։

Բացի այդ երկու տաղից, մենք մեր Տաղարանում գտնում ենք այլ ևս մի տաղ «Հնցկուն այլով տեսեր զըմրութ», որ նոյնպէս կարելի է նոր, չհրատարակուած համարել, եթէ միայն ի նկատի չառնենք դորանից առնուած այն մի քանի տողը, որ մենք չենք հասկանում, թէ ինչպէս և ինչ ճանապարհով են ընկել արդէն իսկ հրատարակուած «Լոյս երեսացդ է խիստ փափուկ» տաղերի մէջ։ Իսկ որ «Լոյս երեսացդ է խիստ փափուկ» տաղի մէջ լինելու քանի տողը եկամուտեն, առնուած «Հնցկուն»-ից,—այդ երևում է և այն հանգամանքից, որ այդ «Լոյս երեսացդ է խիստ փափուկ» տաղը գտնուում է և մեր Տաղարանում, բայց չունի իւր մէջ այդ տողերը։—

Հնցկուն այլով տեսեր զըմրութ,
Տպաղիսն ակն ու ճօճէր.
Ինձ յանկասկած ի դէմս ելաւ,
Շունչս քաշեց, զխելքս էառ։
Զի թողի լիս համբերութիւն
Ի տունի դուրս չունիմ դադար.
Թէ շատ թէ քիչ ի լետ ձգեմ,
Տեսի, մըտացըս չի գնայր։
Քանի տեսնում, կու սարսափիմ,
Սիրտս ի փորուս կառնու գալար
Ինձ մեղադիր լէր կու լինիք,
Ով որ տեսնու, չի մնայ արդար։
Զերթ զթիթեռն ի մոմն ի մօտ
Այրումն եկեր եմ, չկայ ճար.
Ա՛յ իմ դումբրի, ես ինչ լինիմ,
Երբ այս խոցուս դեղն է դիժար։
Խէվ Յովհաննէս Թուլկուրանցի,
Զօրն ի բուն ընդ այլ մի տար.
Չմն ի սրտէդ սէր աշխարհիս,
Տէրն չի տանի զկամքդ ի կատար։

Առ հասարակ, ինչպէս երևում է, այս Տաղարանի թափած-կորած թերթերում շատ բան է եղել Թլկուրանցու երգածներից։ Ընկած, բոլոր պահպանուած թերթերից մէկի վերայ մենք, օրինակի համար կարդում ենք, մի անլայտ տաղի սկզբի հետևեալ չորս տողը, որ անկասկած նոյնպէս Թլկուրանցու գրչի արդիւնքը պէտք է համարել, որովհետև նորա վերայ իբրև խորագիր գրուած է. «Այլ բանք. յովանիսի ասացեալ է վասն սիրոյ»։—

Արեկ արեկ իմ խուպ սուրաթ։
Փառք ու պատիւ քո ստեղծողին.
Եղեմական դրախտէն կու գաս,
Անհնեալ անուն քո...

Նոյն թերթի միւս երեսի վերայ պահպանուել են մի հոգևոր տաճկախառն երգի վերջին տողերը, որ նոյնպէս Թլկուրանցու երգած է —

Ես Յովաննէս Թուլկուրանցի
Զայս բանս ասի ի վերայ Փրկչին.
Եկն կամաւ ինքն ի խաչին,
Ազատեաց զհոգիքն ի բանտին։ [26])

---

[26]) Այս տաղը, ինչպէս մենք իմանում ենք պ. Կ. Կոստանեանցի հրատարակած «Յովհաննէս Թլկուրանցին և իւր տաղերը» տետրակի յառաջաբանից, իսկապէս տաճկախառն չէ, այլ զուտ տաճկերէն և միայն վերջին—տասներորդ տունը հայերէն։ Առաջին տունը սկսուում է հետևեալ խօսքերով. «Քիմ սէյ պէնի պիլ մէզենտի»։

Մեր Տաղարանի խմբագիրը հաւաքելով իւր Տաղարանի մէջ բազմաթիւ երգեր, նոյն ժամանակ հոգ է տարել և երգիչների ձայնի սրութեան մասին։ Նա Կիրակոս վարդապետի «Արարիչ էիցս ամէնի» տաղից յետոյ գրել է և մի խրատ «վասն ձայնի սրանալոյ»։—«Առ սալորի խէժ որչափ և կամիս և դիր ի ջուրն որ դրժի. և թող չորս օր և հարբ զնա մատովդ և թող որ ռաւաղի և քաշէ յերեսացն զսաֆին և զթորթն յետ թափէ և խառնէ ի ջուրն պաղ շաքարով թող որ հալի և մասուրով խմէ որ ի յղեղտ ելնու պառկելուն ժամն. և առաւօտն որ սրանալ ձայնտ հրամանաւն Աստուծոյ. ով որ այս բանս անէ որ բանն կատարի թող հալը մեղամ ասէ Աստուած իւր հոգոյն ողորմի»։

# ՆՈՐ-ՆԱԽԻՋԵՒԱՆԻ ՀԱՅՈՑ ՀՈԳԵՒՈՐ ԴԱՏԱՐԱՆԸ

## Ա.

Մագիստրատի հաստատուելուց մի տարի յետոյ *), 1781 թուին, հաստատուում է և Հոգևոր Դատարանը։ Այդ երկրորդ հաստատութեամբ Նոր-Նախիջևանի հիմնադիր Յովսէփ արքեպիսկոպոսը նպատակ է ունենում գաղթականների հոգևոր գործերին տալ նոյն կանոնաւորութիւնը, որ տուել էր նոցա աշխարհական գործերին Մագիստրատի միջոցով։ Իսկ որ գաղթականների հոգևոր գործերը շատ անկարգ դրութեան մէջ են եղել Ղրիմում և Նախիջևանում գաղթականութեան առաջին տարին,—այդ երևում է սրբազանի Հոգևոր Դատարանի համար գրած կանոնագրութիւնից և նորան կցած յառաջաբանից։ «Բանդի պարտ է մեզ ըստ գրեցելումն, ասում է նա այդ յառաջաբանում, վկայութիւն բարի յարատաքնոցն ունել, զի մի անուանն Աստուծոյ և վարդապետութիւնն մերովս անկանոն ընթացիւք հայհոյիցի։ Որպէս տեսանեմք և լսեմք, որ ի կողմանս արևմտեան ի յիշխանութիւնս Տաճկաց զոմանս ի կարգաց սրբոյ եկեղեցւոյս մերոյ ըստ բերման ժամանակին թիւրս և թերիս և զոմանս աղճատեալս յախուռն արձակմանէ ռամկին։ Այլ և զհաս և զմուտ Աթոռոյն և վանիցն իւրոյ քաղաքի, առաջնորդարանին և քահանայիցն և այլ ժողովքարար կարգաւորաց ոչ բարւոք լեալ մինչև ցայսօր ժամանակի, որպէս և զտաւ սոյն աղճատեալ կարգս ի Ղրիմու ելեալ ժողովուրդն»։

Յովսէփ արքեպիսկոպոսն անկասկած շատ լաւ էր հասկանում, որ գաղթականների հոգևոր գործերը չէ կարելի կարգանում,

---

*) Մագիստրատի մասին տե՛ս 1901 թուի «Լումայ»-ի երկրորդ գիրքը։

գի ձգել ոչ մի «Դատարանով» և ոչ մի իմաստուն կանոնադրութեամբ, քանի որ քահանաները և եկեղեցու միւս պաշտօնեաները կենան նոյն տգիտութեան մէջ, բայց դորանով նա կամենում էր, գոնէ, մի առ ժամանակ կաշկանդել տգէտ պաշտօնեաների ձեռքերը, խիստ հսկողութեան տակ դնել նոցա գործունէութիւնը, մինչև որ պատրաստուէր այն լուսաւորութեան տաճարը, որի համար նա նոյն յառաջաբանում ասում է. «Մինչև տիւն լուսաւորեսցի և արուսեակն ծագեսցի, այսինքն զպրոցն մեր զոր հանդերձեալ եմք հաստատել Տեառն օժանդակութեամբ և խնամօք կայսերական մեծութեանն, որ արդարապէս գերազանցէ քան զարուսեակն և զարեգակն. զի զխաւարեալ միտս մարդկան լուսաւորէ»։

Սրբազանի Հոգևոր Դատարանի համար պատրաստած կանոնները կոչւում են «Կանոնադրութիւնք վասն Հոգևոր Դատարանին Նախիջևանի»՝ գոքա գրուած են 1781 թուին, այսինքն նոյն իսկ Հոգևոր Դատարանի բացման ժամանակ։ Այդ կանոնադրութիւնը, որ երկու անգամ տպագրութեամբ լոյս է ընծայուել՝ առաջին անգամ նոյն իսկ Յովսէփ սրբազանի ձեռքով ս. Խաչի տպարանում, երկրորդ անգամ Գաբրիէլ վարդապետ Այվազեանի ձեռքով «Մասեաց աղաւնի և Ծիածան Հայաստանեայց» ամսագրի 64 և 65 թուականների համարներում, կազմուած է երկու մասից՝ յառաջաբանից՝ «Բան առ բարեսէր ընթերցողս» և բուն կանոններից։ Յառաջաբանում հեղինակը, նախ, խօսում է ընդհանրապէս օրէնքների և նոցա կարևորութեան մասին, յետոյ յիշում է իւր այդ կանոնները գրելու շարժառիթի և այն նիւթերի մասին, որոնք ծառայել են կանոնների համար իբրև աղբիւր, և, վերջապէս, առաջ է բերում իւր համառօտ ազգաբանութիւնը։ Կեանքի մէջ, ասում է նա, մահկանացուների արածներից որը համաձայն է օրէնքին, միշտ յաջողութեամբ է պսակւում և արդիւնաւորւում, իսկ որն ոչ,—ընդհակառակը չէ յաջողում։ Ինչպէս որ նաւապետին նաւը յաջող կերպով նաւահանգիստ հասցնելու համար, պէտք է խոր գիշերուայ մէջ դիտել հիւսիսային բեւեռն, որ նաւորդների աստղ է կոչւում, այնպէս էլ ամեն մի մարդու կեանքի ծովի մէջ հարկաւոր է դիտել այն լուսատու աստղը վերին նաւահանգիստը հասնելու համար։ Եւ ինչպէս որ աղիւսակ լօրինողը պէտք է իւր ձեռքին միշտ քանոն ունենալ, այնպէս էլ ով որ կամենում է օ-



րէնք լօրինել, պարտական է Սուրբ Գիրքը և եկեղեցական կանոնները մտքում պահել։ Ցաւտնի բան է, եթէ մարդկութիւնը ի սկզբանէ չմեղանչէր, նորան պէտք չէր լինիլ ոչ մի օրէնք, սահման, կարգ կամ չափ, որովհետև Աստուած ստեղծելով մարդուն, դրեց նորա բնութեան մէջ չարն ու բարին ճանաչելու գիտութիւնը. բայց որովհետև նախահօր պատրանքով նա կորցրեց այդ գիտութիւնը, ուստի և հարկաւոր եղան օրէնքներ արդարութիւնը մեզ ցոյց տալու համար։

Բոլոր օրէնքները նա բաժանում է հինգ կարգի՝ Աստուածային, բնական, մարգարէական, աւետարանական և մարդկային. մարդկային օրէնքներն էլ բաժանում է երկու մասի՝ աշխարհական և եկեղեցական։ Սրբազանի կարծիքով ոչ մի օրէնք առանց հարկաւորութեան չէ կարող դրուել։ Օրէնքներից մի քանիսը հրատարակւում են ժողովրդի ցանկութեամբ, ինչպէս որ Սողոն իմաստունն իւր օրէնքները հրատարակեց Յունաց ցանկութեամբ, մի քանիսն էլ – կայսերից՝ «հարկեալք լիշխանութենէ իւրեանց»։ Այսպէս և ինքը գրում է իւր կանոնները հարկադրուած գործի օգտակարութիւնից, իւր հովուական պարտականութիւնից, «երջանիկ և սուրբ» Սիմէոն կաթուղիկոսի հրամանից և Նախիջևանի հասարակութեան թախանձանքից։ Կանոնները նա ծաղկաքաղ է անում սուրբ հայրերի նախնի կանոններից, Հայաստանեայց սուրբ եկեղեցու հովուապետների կանոնադրութիւններից այն ձևով և չափով, որ ինքը տեսել և լսել էր Հայաստանում.—«ըստ նախնական օրինակի մերում և սահմանի, մինչդեռ էաք ի մերումս աշխարհի»։

Բոլոր կանոնադրութիւնը, որ ամփոփում է իւր մէջ 126 յօդուած, բաժանուած է վեց մասի՝ ա). յաղագս կացուցման եպիսկոպոսաց և պարտաւորութեանց նոցին, բ). վասն քահանայից և կառավարութեանց նոցին, գ). վասն եկամուտ ժողովքարարաց, վարդապետաց և քահանայից, դ). վասն կառավարութեան հասարակ եկեղեցեացն, ե). վասն արդեանց լուսանկար մօրս մերոյ սրբոյ Աթոռոյն Էջմիածնի, վանից և առաջնորդին, զ). վասն կառավարութեան Հոգևոր Դատարանին և Դատաւորացն և զանազան գործոց առ նոսա պատկանելոց։

Կանոնադրութեան յօդուածների մէջ առաջին բանը, որ գրաւում է մեր ուշադրութիւնը,—այդ հեղինակի դէպի Ս. Էջմիածինը բռնած դիրքն է։ Յովսէփ արքեպիսկոպոսը, որ թէ իւր գործողութիւններով և թէ քարոզութիւններով իւր առաջ-

նորդութեան բոլոր ժամանակամիջոցում աշխատում էր բարձրացնել ժողովրդի աչքին Ս. Էջմիածնի նշանակութիւնը և սէր ու համակրութիւն ներշնչել բոլորի մէջ դէպի Մայր-Աթոռի գահակալը, Հոգևոր Գատարանի կանոնագրութիւնը գրելիս, առիթ է գտել գրաւոր կանոններով սրբագործել, օրէնքի զօրութիւն տալ իւր վերոյիշեալ գործողութիւններին ու քարոզութիւններին։ Եւ որպէս զի ժողովուրդը միայն վերացական մտքով չհասկանայ Ս. Էջմիածնի նշանակութիւնը, այլ իրական և չչափելի կերպով ըմբռնէ նորա իւր գոյութեան համար ունեցած մեծ խորհուրդը, առաջնորդն աշխատել է կապել ժողովրդի համար ամենաթանգ և ամենանուիրական նշանակութիւն ունեցող դաղթականութեան հանգամանքները Ս. Աթոռի և նորա գահակալի հետ, աշխատել է ցոյց տալ Ս. Աթոռն իբրև պաշտպան ժողովրդի շահերին, իբրև խնամակալ, իբրև գթառատ հայր։ Դաղթականները պէտք է սիրեն Ս. Էջմիածինը, ասում է նա, որովհետև նա էր, որ նոցա, Ղռիմից դուրս գալու ժամանակներից սկսած մինչև Նախիջևանի շինութիւնն, օգնեց նոցա, որովհետև ինքը ևս ամբողջ երեք տարի դեգերել է նոցա օգտի համար կայսերական մեծութեան և իշխանների դռներում միայն Ս. Էջմիածնի պատուի համար։ Ժողովրդի այդ սէրը Սրբազանը երկու տեսակ է հասկանում՝ բարոյապէս և նիւթականապէս։ Բարոյապէս ժողովուրդը պէտք է սիրէ Հայոց կաթուղիկոսին իբրև Ս. Լուսաւորչի յաջորդին, հնազանդելով նորա հրամաններին, ընդունելով նորա ուղարկած պաշտօնեաներին, երբէք հակառակ նորա կամքին աջ ու ահնակ չխոտորելով, իսկ նիւթականապէս նա պէտք է աշխատէ ամէն տեսակ օգնել նորան, եկեղեցիներում Ս. Աթոռի գանձանակին առաջին տեղը տալով և բարեգործական նպատակներով արած կտակներում նորան մաս և բաժին հանելով։

Երկրորդ ուշադրութեան արժանի հանգամանքը կանոնների մէջ է այն տեղեկութիւնները, որոնք նշանակութիւն ունին մեր եկեղեցական պատմութեան համար։ Այդ տեսակ տեղեկութիւններից նամանաւանդ նշանաւոր են երեքը։ Հեղինակը խօսելով ս. Աթոռի արդիւնքի մասին, նկատում է որ հին ժամանակները, քանի որ դեռ հայերը ցրուած չէին և համախմբուած ապրում էին իւրեանց հայրենիքում, կաթուղիկոսները, Լուսաւորչից սկսած, սովորութիւն են ունեցել երեք տարին մի անգամ շրջել Հայաստանի բոլոր վիճակները,



հաստատել խախտուած կարգերը, վերացնել նորամուտ և եկամուտ սովորութիւնները և ժողովել սահմանեալ տուրքերը Հայրապետարանի և Ս. Էջմիածնի համար. իսկ երբ որ ժողովուրդը ցրուել է զանազան կողմեր և կաթուղիկոսի անձամբ շրջագայելը ժողովրդի մէջ անհնարին է դարձել, այն ժամանակ այդ սովորութիւնն անցել է նուիրակներին։

Նուիրակների մասին խօսելով, առաջնորդը չնչտելով ասում է, որ նուիրակներ կամ ծայրագոյն նուիրակներ ուղարկել իրաւունք ունի միայն Ս. Էջմիածինը, և այդպէս էլ եղել է մինչև ՌՃՀԴ Հայոց թուականը։ Բայց այդ թուականից սկսած այդ սովորութիւնն ու կարգը այնքան խառնակուել ու խեղաշրջուել է, որ մինչև անգամ հասարակ վանքերի ժողովարարները ևս սկսել են իւրեանց կոչել նուիրակ, իսկ Երուսաղէմի Ս. Յակոբայ վանքը միանգամայն սեփականացրել է իրեն «ծայրագոյն նուիրակ» ունենալու իրաւունքը, որ յայտնի չէ, թէ ինչպէս, երբ և ով է տուել նորան։ Պատմութիւնից միայն յայտնի է, ասում է նա վշտացած, որ Հայոց ՌՃՀԴ (1725) թուին լուսահոգի Զէյթունցի (Ուլնեցի) Կարապետ կաթուղիկոսը, որ Ս. Աթոռի Պարսից և Օսմանցոց պատերազմներից վտանգի մէջ գտնուելու պատճառով օծուեց Կ. Պոլսում, իրաւունք տուեց Երուսաղէմի այն ժամանակուայ նշանաւոր պատրիարք Գրիգոր Շղթայակրին նուիրակութիւն ուղարկել ամենայն տեղ և ազատել Ս. Յակոբն այն պարտքերից, որոց տակ հեծում էր այդ նուիրական տեղը «ախտաւոր և անհաւատարիմ» առաջնորդների պատճառով։ Սակայն այդ իրաւունքը միայն այդ մէկ անգամուայ համար էր և ոչ մշտական, ինչպէս որ այնուհետև եղաւ, ուստի և ժողովուրդը պէտք է սիրով և պատուով ընդունէ միայն Ս. Էջմիածնի նուիրակին, որովհետև նա կաթուղիկոսի փոխանորդն է, նորա պատկերն է. իսկ միւս ժողովարարները պէտք է կոչուեն «ժողովարար» և իրաւունք ունենան շրջագայելու ժողովրդի մէջ և նուէրներ ժողովելու միայն Ս. Էջմիածնից ստացած կոնդակի հիման վերայ։

Խօսելով առաջնորդական արդիւնքների մասին, նա, ի միջի այլոց, ասում է, որ, ինչպէս, ըստ կանոնական հրամանի, եպիսկոպոսները պարտական են ընծայաբեր լինել կաթուղիկոսին, նոյնպէս և քահանաները պարտական են տուրք տալ իւրեանց եպիսկոպոսին։ Ինքն իւր համար քահանաներից

ստանալիք այդ տուրքի քանակութիւնը սահմանում է տարին տաս ռուբլի իւրաքանչիւրից, և հինգ տարով այդ տուրքից ազատ մնալու արտօնութիւն է տալիս քահանաներին նոցա ազգատութեան համար։

Եւ, վերջապէս, արժանի են ուշադրութեան և կանոնադրութեան այն յօդուածները, որոնց մէջ յայտնուած են կամ որոշ կերպով ակնարկուած են գաղթականների եկեղեցական գործերի և պաշտօնեաների գործողութիւնների մէջ մտած զեղծումները, որոնց մասին նա, ինչպէս մենք ասացինք, խօսում է և յառաջաբանի մէջ։ Քահանաները պատարագ մատուցանելուց առաջ հաց էին ուտում, օղի, գինի էին խմում. քահանաները, սարկաւագները և եկեղեցու միւս պաշտօնեաներն անկարգ կերպով էին կատարում ժամասացութիւնը. նոքա իւրեանց բարձր հնչմունքով և խառնափնդոր ձայներով զզուեցնում էին ժամաւորներին. նոքա խստութեամբ էին պահանջում ժողովրդից իւրեանց կատարած ծիսակատարութեան գինը. քահանաներն առանց խաչի և աւետարանի էին օրհնում տները, առանց տեսութեան հարսի և փեսայի նշան էին դնում, մկրտութեան ժամանակ թոյլ էին տալիս ժողովրդին եկեղեցում օղի ըմպել և ինքեանք ևս նոցա հետ խմում էին. նոքա ծուլանալով չէին ուսուցանում մանուկներին, մերկոտն և մերկաղոգ սուրբ սեղան էին բարձրանում, կարճ վերարկու էին հագնում, առանց վերարկուի փողոց էին դուրս գալիս և եկեղեցի գնում և թաթարների պէս կնտում էին զլուխները։ Եկեղեցիները լատուկ լուսարարներ չունէին, երէցփոխանների օրինաւոր ընտրութիւն, հաշուետուութիւն չկար, կանոնաւոր կերպով դանձանակներ չէին շրջեցնում և առհասարակ հսկողութիւնը պակասում էր։ Ժողովուրդը սովորութիւն էր արել անպատուել քահանաներին և բանի տեղ չդնել նոցա. մեռած քահանայի ծուխը շատ անգամ ժառանգում էր նորա ընտանիքը։ Բազմաթիւ ժողովարարներ՝ նուիրակներ, պարտատէրեր, դերետէրեր էին գալիս-գնում և ոչ մի հսկողութիւն չէր լինում ժողոված արդիւնքների վերայ, որոշուած չէր ոչ Մայր-Աթոռի, ոչ առաջնորդի և ոչ քահանաների և միւս եկեղեցական պաշտօնեաների արդիւնքի քանակութիւնը և տեսակները, և այլն և այլն։



## Բ.

Հոգևոր Դատարանն ունեցել է երեք դատաւոր, որոնցից մէկը համարուել է «Նախագահ», իսկ միւս երկուսը—«Անդամներ»։ Նախագահ դատաւորը վարդապետ է եղել, անդամ դատաւորները—աւագ քահանաներ։ «Ի սմին ամի (1781), ասուած է այդ մասին Սրբազանի ձեռագիր Դաւթարում, և ի յամսեանն մայիսի 9։ Հաստատեցաք ի Նախիջևան քաղաքոյս զՀոգևոր դատարանս, և եդաք ի նմա զբազում կանոնս ի շաւղաց նախնի հարցն մերոց ի կառավարութիւն նմին և ի պաշտաւութիւն եկեղեցւոյ ի փառս Աստուծոյ և ի պարծանս լուսաբուղխ ժորն մերոյ սուրբ Աթոռոյն Էջմիածնի և կարգեցաք ի նմա հոգևոր դատաւորս զմի վարդապետ և զերկուս քահանայս. պահեսցէ տէր հաստատուն և տացէ առաւել պաշտաւութիւն»։ Առաջին նախագահ դատաւորը եղել է Կարապետ վարդապետը, որին առաջնորդը կոչում է «արժանապատիւ, աստուածիմաստ վարդապետ և սիրելի որդի»։ Դատաւորները պարտական են եղել ատեան կազմել ամեն երկուշաբթի, չորեքշաբթի և ուրբաթ Հոգևոր Դատարանում և հոգալ հայեցաբակութեան բոլոր հոգևոր գործերը, միշտ աչքի առաջ ունենալով կանոնները։

Հոգևոր Դատարանը սկզբից մի բոլորովին ուրոյն հաստատութիւն է եղել և ամենևին կախումն չէ ունեցել Մագիստրատից, բայց յետոյ որովհետև յայտնի դէպքերում Հոգևոր Դատարանի անդամները պարտական են եղել մասնակցել քաղաքային Դումի նիստերին և փոխադարձաբար Մագիստրատի դատաւորները Հոգևոր Դատարանի ատեանին, ուստի և առաջ է եկել նոցա մէջ մօտ յարաբերութիւն և վերջինը իբրև աւելի հզօր սկսել է ազդել առաջնի վերայ. խառնուելով այն գործերի մէջ, որ իսկապէս պատկանում էին Հոգևոր Դատարանի իրաւասութեան։ Թէև Յովսէփ արքեպիսկոպոսը նկատելով այդ հանգամանքը, աշխատել է ամեն տեսակ, բացի կանոնադրութեան մէջ չիշուած դէպքերից, թոյլ չտալ Մագիստրատին Հոգևոր Դատարանի գործերին խառնուելու, բայց այդ նորան չէ յաջողել։ Ժամանակի ընթացքում Մագիստրատը կամաց-կամաց հզօրացել է, իւր ձեռքն է առել հոգևոր գործերի մի մասը և սկսել է իշխանութիւն բանեցնել Հոգևոր Դատարանի վերայ։

Մագիստրատի իշխանութեան այդպէս զօրանալուն նա-

մանաւանդ նպաստել են երկու հանգամանք՝ նախ, որ Ցովսէփի Արղութեանից յետոյ նշանակուած առաջնորդները Նախիջևանում յաջորդ վարդապետ և Հոգևոր Դատարանի նախագահ նշանակելու սովորութիւնը բարձի թողի են արել և կառավարել են Դատարանը միայն քահանաների ձեռքով, որոնք կախում ունենալով քաղաքի իշխաններից՝ Մագիստրատի դատաւորներից, հեշտութեամբ ինքեանք ենթարկուել են նոցա իշխանութեան և իւրեանց հետ միասին ենթարկել են Մագիստրատի իշխանութեան և Հոգևոր Դատարանը, և, երկրորդ, նոյն առաջնորդների «Աթոռակալութեան» պաշտօն հաստատելը և այդ պաշտօնի քաղաքագլուխներին յանձնելը։ Աթոռակալ քաղաքագլուխները օգտուելով այն հանգամանքից, որ ինքեանք իւրեանց պաշտօնի զօրութեամբ իրաւունք են ունեցել հսկելու եկեղեցիների գրամական մասի վերայ և իւրեանց ձեռքով գանձել աթոռային և առաջնորդական արդիւնքները, մեծ իշխանութիւն են ձեռք բերել։ Նոքա սկսել են անցաթուղթ տալ հոգևորականներին, իրանց են սեփականացրել պսակի, մկրտութեան, թաղման թոյլտուութեան տոմսակ տալու իրաւունքը, միով բանիւ, մի տեսակ առաջնորդի յաջորդի կամ փոխանորդի իրաւունքներ են ձեռք բերել։ Նոքա հրամայական ձևով թղթեր են գրել Հոգևոր Դատարանին և պահանջել են, որ իւրեանց առաջարկութիւնները անյապաղ կատարուեն, առաջադրել են, սպառնացել են։ Ձեր ձեռքին գտնուում են Աթոռակալների Հոգևոր Դատարանից գրած թղթերից երկուսը, որոնցից կարելի է եզրակացնել, թէ ինչ գրութեան ձև, ոճ և ինչ իրաւունքներ են գործ դնելիս եղել աթոռակալները Հոգևոր Դատարանի և քահանաների վերաբերութեամբ։ Թղթերից մէկը կրում է հետևեալ վերնագիրը և գրուած է այսպէս.—

«Առ Նախիջևանու Հոգևոր կառավարութիւնդ

Ի քաղաքական գլուխ և աթոռակալէ միաւորութիւն

Պարոն եղիա չածքռտեանն կնքել է յովհաննէս խալաճի ստեփանովի զաւակունքն, և ժամագոչ գաբրիէլի զաւակունքն, որ սոքայ եղեն ի միոյ կնքահօր աւազան եղբարք։ Այժմ՝ նոյն ժամագոչ գաբրիէլի որդին ստեփաննոսն կամի առնուլ նոյն յովհաննէս ստեփանովի եղբօրն կարապետ Խալացի ստեփանովի դուստրն. որ և նշանեցեալ են և այս գործին մէջն տէր յարութիւն ժամկոց Գաբրիէլովն կայր որ է Ստեփանի եղբայր, սակայ չէր պարտ յօժարիլն, և մանաւանդ մեք որ ըստ քաղաքիս հասարակութեանն խորհրդոյ և ընտրութեան. ըստ որում երէք ամեայ գլուխ եղէք. ըստ այնմ և սրբազան առաջնորդէ աթոռակալ վերակարգեցաք, որովհետև այսպիսի պաշտօնատարութիւնս յանձնառու եղէք, հարկ էր նախ քան զայս ի սրբազան առաջնորդէն առ հոգևոր կառավարութիւնդ գրութիւն դոյր յաղագս քեօլէ Ստեփանի որդոյն. և արդելումն եղեալ էր. զի միւս անգամ այնպիսի անհաս արարմանց հեռանալն. որ ըզկնի այնր. և այժմ ևս չգիտեմք թէ որով իրաւամբ հասոյց զսոյն աւազան եղբարսն ի ամուսնութիւն միմեանց, զայսմանէ ուրոյն-ուրոյն ծանուցանել մեզ՝ եղև 1824 դեկտեմբերի 29 ումն. Գալավ Գէորք մարքարով»։

Թղթերից միւսը ունի հետևեալ վերնագիրը և գրուած է այսպէս.

«Առ Հոգևոր կառավարութիւն քաղաքիս

Ի քաղաքական առումէս և ի յաթոռակալէ

Ի ժամանել այսմ միաւորական գրութեանս, իսկոյն բարեհաճեսցի կառավարութիւնդ հրամանագրով սաստկօրէն պատուիրելոյ իւրաքանչիւր եկեղեցեացն քահանայից, զի մի ոք իշխեսցէ, և կամ համարձակեցի առանց մագիստրաթիս տոմսակին պսակելոյ զոմն։ Կամ թաղելոյ։ Նաև մկրտելոյ։ Թէ զիշխանս և թէ զաղքատս, միանգամայն պարտ են առնուլ ի մագիստրաթէս զտոմսակն, բայց եթէ քահանայ ոք մխեսցի յընդէմութիւն նոյն տոմսակաց և կամ հրամանի կառավարութեանդ, յայնժամ իմացեալ լինի այնպիսի քահանայն. զի նախ անպատիւս լինելոց է. եղև 1829. փետրվար 8 ումն։ Աթոռակալ Խաչատուր Խռամաճօվ»։ Այս երկու թղթի զանազան վերնագիր ունենալը մեկնւում է նորանով, որ քաղաքագլուխ-աթոռակալը մերթ ինքն էր անձնիշխան կերպով կարգադրութիւն անում և հրաման արձակում, մերթ իւր հոգևոր գործերի համար անելիք կարգադրութիւնների ժամանակ խորհրդակցում էր Դումի անդամների հետ։ Առաջին դէպքում թուղթը գրում էր իւր Աթոռակալի անունից, երկրորդում—իւր Աթոռակալի և Դումի անունից։

Հոգևոր Դատարանը մինչև 1786 թուականը գործելով Կարապետ վարդապետի և Ցովսէփ արքեպիսկոպոսի անմիջական հսկողութեան ներքոյ, այդ թուականից ենթարկուել է

Նորահաստատ Հաշտարխանի կոնսիստորիայի իրաւասութեանը, իսկ երբ Ռուսաստանի թեմը 1830 թուին բաժանուել է երկու առանձին թեմերի՝ Հաշտարխանի և Նախիջևանի — Բեսսարաբիոյ և Քիշինև քաղաքում նոր կոնսիստոր է հաստատուել, նա ընկել է այդ նոր թեմական ատեանի իշխանութեան ներքոյ։ Բանի որ Յովսէփ արքեպիսկոպոսն առաջնորդ է եղել, Հոգևոր Դատարանը իւր վերայ դրած պարտականութիւնը կանոնաւոր կերպով է կատարել, որովհետև առաջնորդը կամ իւր նշանակած յաջորդի ձեռքով և կամ ինքն անձամբ յաճախակի այցելելով Նախիջևանը և երկար ժամանակ նորաչէն քաղաքում ապրելով, միշտ խիստ հսկողութիւն է ունեցել նորա վերայ, իսկ երբ նա հեռացել է առաջնորդութիւնից, նա սկսել է հետզհետէ ընկնել ու խանգարուել։

Հոգևոր Դատարանի Յովսէփ արքեպիսկոպոսի Ռուսաստանից հեռանալուց յետոյ ընկնելու և խանգարուելու պատճառը գլխաւորապէս եղել է դատաւոր քահանաների տգիտութիւնը և Եփրեմ ու Յովհաննէս առաջնորդների կառավարութեան եղանակը։ Յայտնի բան է, քահանաների տգիտութիւնը կար և Յովսէփի ժամանակ, բայց նորա առաջն այն ժամանակ առնում էր մասամբ առաջնորդի, մասամբ էլ նորա յաջորդի անմիջական և խիստ հսկողութեամբ, իսկ Եփրեմ և Յովհաննէս առաջնորդները յաջորդ չնշանակելով, աթոռակալութեան պաշտօնը հաստատելով և ինքեանք ևս համարեա միշտ Հաշտարխանում նստելով և շատ սակաւ այցելելով իւրեանց թեմի այդ բազմահաղ կենդրոնը—Նախիջևանը, ընդարձակ ասպարէզ էին տալիս զանազան տեսակ զեղծումների սպրդելուն Հոգևոր Դատարանի գործերի մէջ։

Արդի Հոգևոր կառավարութեան հին դիւանը լիքն է այդ երկու առաջնորդի ժամանակ գրուած թղթերով, որոնցից շատերի մէջ անբաւականութիւն է յայտնուում Հոգևոր Դատարանի գործունէութիւնից, յանդիմանութիւն արուում նորա անդամներին, բայց չէ՞ որ յաճախակի անբաւականութիւն և յանդիմանութիւն յայտնելով, չէր կարելի ուղղել գործը և բարեկարգել Դատարանը։ Պէտք էր խիստ հսկողութիւն, պէտք էր անձնական աշխատանք և ղեկավարութիւն, մի խօսքով պէտք էր գործ, կեանք և կենդանութիւն։ Բայց այդ բոլորի փոխանակ վերոյիշեալ առաջնորդներն իւրեանց առաջնորդութեան բոլոր ժամանակամիջոցում ղրա-



զուած են եղել միայն պաշտօնական տեղեկութիւններ հաւաքելով, իւրեանց սեփական արդիւնքի ճշտութեամբ և ժամանակին ուղարկելու գրագրութեամբ, տգէտ տիրացուներին այս կամ այն աղալի խնդիրքով քահանայ ձեռնադրելու հրամանագիր արձակելով, այս կամ այն եպիսկոպոսին սիրով ընդունելու և չհելելու կամ պաղ ընդունելութիւն ցոյց տալու հրամանագրութեամբ։ Իսկ Յովհաննէս Դառնակերեանն այնքան առաջ է գնացել, որ Հոգևոր Դատարանը զբաղեցրել է իւր առաջ համար ընտիր բակլայ, լոբի և սիսեռ ճարելու և առաջնորդական վերարկուի համար թանկագին կերպասներ ուղարկելու գրագրութեամբ։ «Ի վայելս տան մերում է որ բանիւ բերանոյ և է որ գրաւորականաւ, ասում է նա իւր Նախիջևանի Հոգևոր Դատարանին 1824 թուականին Յունուարի 30-ին ուղղած պաշտօնական թղթերից մէկում, բազմիցս պատուիրեալ եմք վանիցդ վանահարց Վրդանէս և Յովհաննէս վարդապետաց, փոյթ ունել սերմանել ի ժամանակի զսիսեռս, զբակլայս, և զոսպս ի տարեկան պիտոյից լցուցումն թէ վասն մեր և թէ վասն վանիցդ միաբանութեան այլ ի զանց առնելն նոցա զմերովս պատուիրանաւ հարկեցաք յայնժամ վասն այսպիսեաց գրել կառավարութենդ և ի կառավարութենէդ պահանջել զսոյնպիսիս, այն է գնել և առաքել ուստի կարելի լիցի ի ձեռս բերելն, թէ ի քաղաքէ այսի՝ և թէ ի թէլղանու, և թէ ի ստաւռապոլու, որ առանց այնպիսի ուսելեաց պահոց զըժուարութիւն մեծ լինի մեզ։ Եւ որպէս ի վանահարց, նոյնպէս և ի կառավարութենէդ ի մասինս այսմիկ չունեցաք ցարդ բաւականութիւն մտաց՝ չգիտեմ չը գտանին ըստ այդր նոյնպիսիք՝ թէ գտանին և դուք անփոյթ լինիք ըստ չափ ուղև բել ի ծագիլ գարնանն ի մեծի պահոց ընդ հաւատարիմ եկաւորաց այսի. եթէ ի կողմանցն Պոլսոյ նաւք իցեն եկեալ ի Թալղան. կարելի է լաւ զէլթուն և սիսեռ բերեալ են որ թէ լիցի՝ հարկիւ պատուիրեմք գնել և առաքել, մանաւանդ սպիտակ լոսի՝ որ աստ ոչ գտանի և մեզ ախորժելի է բաւ է»։ Նոյն նիւթի մասին նա իւր մի ուրիշ պաշտօնական թղթում նոյն 1824 թուականի Յուլիսի 2 ին այսպէս է գրում. «Յետ ուղևորելոյ ի փոսդ զ№ 247 հրամանագրութեան մեր առ կառավարութիւնդ, սակս ինչ ինչ իրաց, հարկաւորեցան և այլ ինչ իրք, զորոց չեղև յայնժամ առարկութիւն։ Վասնորոյ այժմ սովիմք հրամայեմք կառավարութեանդ մերում՝ ընդ այ-

նոցիկ իրաց, զորոց պատուիրեալ եմք ի նախայիշեալ հրամանագրութեան մերում, առաքելական զերիս փութս ի յապիտակ լուբիայէ և զերեսն երկուց տեսակաց բամեայի՝ մեծի և փոքրոյ որ գտանի ի Թալղան, և որք կարի հարկաւոր են մեզ ասէն ի սերմանել. և յետ արդասաւորելոյն աճմամբ, վայելչանալ ի յարգիւնս նոցին յաւուրս պահոց զամն ողջոյն, մինչ յամառան, և միւսանի ձմերան»։ Նախիջևանի աւագ քահանայ Տէր Գաբրիէլ Տէր-Գաբրիէլեանին 1828 թուականի Յունիսի 6 ին գրած պաշտօնական թղթում «Հայոց Ռուսաստանեայց արքեպիսկոպոս Յովհաննէս» դարձեալ խօսում է իւր սիրած առարկայի մասին։ «Եւ արդ ես հարկաւորապէս զայս փութամբ ծանուցանել ձեզ. գրում է նա, զոր և պատուիրեմք սիրով՝ զի ընդ ամանել գրոյս՝ փոյթ անձին բերեալ՝ տաջիք պատրաստել վասն մեր ի չալթըր գիւղն ի սպիտակ ցորենոյ հինգ փութաչափ ձաւար՝ որ լիցի լաւ եփեալ՝ և մանր ձաւար արարեալ ի պէտս կերակրոյ և փլաւի՝ որ ինձ առաւել ախորժելի է զայն՝ քան զբրնձեղէն կերակուրս, և այնպէս պատրաստեալ՝ ընդ քահանային Մարտիրոսի կամ այլում, փութալ հասուցանել մեզ՝ առ որ լինելոց եմք չնորհակալ՝ միայն զի ցորեանն լաւ լիցի խարշեալ և լաւ ծեծեալ և ըստ պիտելոյն մանրեալ՝ այսքան ինձ շատ լիցի»։

## Գ.

Հոգևոր Դատարանի գործերը սկսում են կանոնաւորուել և նորա ընկած նշանակութիւնը սկսում է բարձրանալ միայն այն ժամանակ, երբ կազմակերպւում է «Նախիջևանի և Բեսարաբիոյ» թեմը և նորան առաջնորդ նշանակւում է նշանաւոր Ներսէս Աշտարակցին։ Ազգային գործերին նախանձախնդիր, եկեղեցական վարչութեան մէջ կարգ, կանոն, բարեզարդութիւն սիրող Ներսէսը հասնելով իւր աթոռանիստ Քիշինեւը, ցաւելով տեսնում է, որ իրեն յանձնուած այդ նոր թեմն իւր անբարեկարգ դրութեամբ մի նոր Վրաստանի թեմ է։ Նորահաստատ թեմում դեռ ամեն բան անկերպարանք էր, գործերը խառնիխուռն և վայրիվերոյ։ Պէտք էր տերութեան ցանկութեան համեմատ և Հաշտարխանի օրինակով թեմական ատեան կամ կոնսիստոր հաստատել, պէտք էր նոր վիճակի իշխանութեան ենթարկուած հայաբնակ տեղերի՝ Նոր Ռուսիոյ,



Բեսսարաբիոյ, Ղրիմի և Նոր-Նախիջևանի Հայերի դրութեան ու կարիքներին ծանօթանալ, պէտք էր կալգ, կանոն և մի պատշաճ կառավարութեան եղանակ մոցնել թեմի վարչութեան մէջ, որովհետև օրինաւորութիւն և կարգապահութիւն սիրող Յովսէփից յետոյ ամեն բան այդ տեղերում տակնուվերայ էր եղել, ամեն բան խանգարուել ու կորցրել իւր նշանակութիւնը։ Եւ Ներսէսը սկսում է գործել և գործում է այն եռանդով, որ յատուկ էր նորա կրակոտ և տենդային բնաւորութեան։

Եռանդուն առաջնորդի աչքին նորա այդ ընդհանուր գործունէութեան մէջ անկասկած չէր կարող հէնց առաջին նուազ չընկնել իւր հոգևոր գործերի անկարգ դրութեամբ Նախիջևանը, որ թեմի ամենաքաղաքաւոր վիճակն էր, նորա սրատես աչքից չէր կարող խուսափել Հոգևոր Դատարանի խանգարուած դրութիւնը։ Նախիջևանի Հոգևոր կառավարութեան հին դիւանում գտնուում են նորա բազմաթիւ պաշտօնական թղթերը նորան միայն յատուկ բնորոշ ոճով ու ձեռագրով շարադրած, որոնք բոլորը ևս բովանդակում են իւրեանց մէջ բազմաթիւ կարգադրութիւններ Հոգևոր գործերի բոլոր ճիւղերի վերաբերութեամբ։ Նոցա ընդհանուր նպատակն է վերականգնել խանգարուած կարգերը, վերացնել մտած զեղծումները և Հոգևոր Դատարանին տալ նորան վայել դիրքն ու նշանակութիւնը։ Ճիշտ է, նորա թղթերի մէջ էլ, ինչպէս նախկին առաջնորդների, պատահում են յաճախակի յանդիմանութիւններ Հոգևոր Դատարանի հասցէին ուղղուած, բայց սորա ու նոցա գրած յանդիմանական թղթերի մէջ կայ մի մեծ զանազանութիւն։ Այն ժամանակ, երբ Եփրեմը և Յովհաննէսը միայն բարկանում, անբաւական են մնում, յանդիմանում են և իւրեանց այդ անբաւականութիւններին առիթ տուող անկարգութիւնների առաջն առնելու համար ոչ մի էական միջոց չեն առաջարկում, Ներսէսն ընդհակառակը. յանդիմանելու հետ միասին և մի այնպիսի վճռական և նպատակաւորմամբ կարգադրութիւն է անում, որ իսկապէս նպաստում է գործի կանոնաւորուելուն և միւս անգամ այլ ևս չ'կրկնուելուն։

Առաջնորդի Նախիջևանի Հոգևոր Դատարանը կարգաւորելու վերաբերութեամբ արած կարգադրութիւնները ընդհանրապէս կարելի է երեք կարգի բաժանել։ Առաջին կարգին պատկանում են առաջնորդի այն կարգադրութիւնները,

որոնք վերաբերում են հոգևոր դատարանի ներքին գործերին, երկրորդին պատկանում են նոքա, որոնք վերաբերում են նորա իրաւունքների և անկախութեան պաշտպանութեան տեղական աղաների և Մագիստրատի ոտնձգութիւններից և երրորդին—նոքա, որոնք վերաբերում են տեղական իշխանութեան Հոգևոր Դատարանի վերաբերութեամբ արած ապօրինի կարգադրութիւններին և պահանջներին։ Նա իւր այդ կարգադրութիւններով վերացնում է Հոգևոր Դատարանի ներքին, զուտ կրօնական գործերի մէջ մտած զեղծումները և անկանոնութիւնները և, մանաւանդ, խիստ հակոդութեան տակ է ձգում եկեղեցիների դրամական մասը, գանձանակների արդիւնքը։ Նա խստիւ հաշիւ ու համար է պահանջում երէցփոխաններից և, նախ, առանձին յանձնաժողովի, յետոյ Հոգևոր Դատարանի ձեռքով մի մեծ գործ սկսելով ս. Աստուածածնի եկեղեցու երէցփոխ և վերաչինող՝ յայտնի Մրկրը աղա Պոպովի դէմ, որ վայելելով Մագիստրատի պաշտպանութիւնը, հրաժարւում էր հաշիւ տալ և ճանաչել Հոգևոր Դատարանի իշխանութիւնը, մի անգամից երկու նպատակի է հասնում՝ մէկ որ չախչախում է աղաների գոռոզութեան եղջ՝երը, միւս որ ստիպում է Մագիստրատին իւր կամքը կատարել և չխառնուել Դատարանի գործերին. վերջապէս, նա գրագրութիւն սկսելով Տագանրոգի քաղաքապետի, նահանգական կառավարութեան և բարձրագոյն իշխանութեան հետ, ստիպում է տեղական իշխանութիւնը պատկառանքով վերաբերուել դէպի Հոգևոր Դատարանը և ձեռք վերառնել իւր մինչև այդ ժամանակները արած ապօրինի պահանջներից, ինչպէս օրինակի համար, Ռոստովի գաւառական վարժարանի և Մագիստրատի պահանջը և առաջարկութիւնը, որ հայոց հոգևորականները Ռոստովի ուսումնարանում քննութեան ենթարկուելուց յետոյ միայն իրաւունք ստանան հայոց լեզու և գրաճանաչութիւն ուսուցանելու հայ մանուկներին։

Հետաքրքիր է սրբազանի տեղական իշխանութեան այդ պահանջի մասին Հոգևոր Դատարանի գրած թուղթը։ «Ցաղագս Ռաստովու ուեզդի ուչիլիշչալի վարժապետաց և Մագիստրատի Նոր Նախիջևանայ յառաջարկութեանցն հոգևորականաց հայոց մտանել ի քննութիւն վարժապետացն Ռաստովու և այնպէս ապա կալ յուսուցչութեան հայրենի լեզուի և վարժել զմանկունս ժողովրդականաց յընթերցումն հայկական գրաճանաչութեան, գրում է Նա այդ թղթում, գրութիւնք կառավարութեան ի յուլիսի 9 և 20, և ի սեպտեմբերի 21, համարք 194, 156 և 193, հանդերձ եղելովքն ընդ նոսին օրինակք հասեալ առիս հետզհետէ, ես աւասիկ գրեալ առ գօրոգոնաչանիկն Թականրոկու ընդ այսմ յամսոյն 13, համար—173, զօրինակն այնորիկ դնեմ ընդ այսմ յաղագս հասու լինելոյ հոգևոր կառավարութեան։ Այլ որպէս ազգեն լիս կարծիք իմ, համարիմ թէ այդ առարկութիւնք ի վարժապետաց Ռաստովու ուսումնարանին իցեն յառաջացեալ ի ներգործութեանց իրիք մերոց հոգևորականաց, զի այնպէս ազատական ինքնավարեալ յօժարամիտ փութացեալ են լիշեալ քահանայքն և այլք ընդ նոսա մտանել ի քննութիւն հայոց լեզուի անծանօթ քննողաց, առանց ակնարկութեան ի պարտուպատշաճ սկզբնաւորութիւն այնմ ըստ տնօրէնութեան հոգևոր կառավարութեան իւրեանց։ Որոց և աղագաւ զրեմ հոգևոր կառավարութեան յոյժ յոյժ խոհեմութեամբ ի զննին ելեալ առանց իրիք տարաձայնութեան, մի անհոգասցի հասու լինել իրաւանց և անիրաւութեանց այնոցիկ հոգևորականաց որք այնպէս դիւրամիտ փութացան ի բաւարարութիւն յառաջարկութեանցն Ռաստովու վարժապետաց, որք ի մանկութեանց իւրեանց էին քաջածանօթ թէ առաջին է այդ ինքեանց ի ռուսաց վարժապետաց յառաջարկութիւն և չէ ուրեք լուեալ երբեմն ոք, թէ հոգևորականք հայոց իցեն քննութեամբ ռուսաց վարժապետաց գտեալ ի պաշտօնի ուսուցչութեան ազգական լեզուի իւրեանց և եկեղեցական պաշտամանց ընդ ամենայն տեղիս զբաստանեցեալս ի տէրութեան ռուսաց աւելի քան զնարիւր ամս։ Ալեկոծութեամբ իւրաքանչիւր մտաց սանձարձակ բերմունք մերոց հոգևորականաց առ ամենայն հաճոյականս ինքեանց են նոցա վազեմի նախամեծար գերարժանութիւնք, այլ չնորհն Աստուծոյ նորա կրթութեամբ իւիք թերևս սանձեսցէ զայնպիսի ամենութիւն նոցա։ Նկատեսցի և հոգևոր կառավարութիւն ի համարան իւրոց երից գրութեանց նշանակեցելոց և զչափ առցէ իւրոցն անզգոյշ բերմանց առ այնս»։

Ներսէս արքեպիսկոպոսն թէև իւր հզօր կամքի չնորհիւ և հեռատես գործունէութեամբ կարողանում է մի 5—6 տարուայ ընթացքում վերականգնել Նախիջևանի Հոգևոր Դատարանի խանգարուած դրութիւնը, բայց, ինչպէս երևում է նորան պաշտօնական թղթերից, նա չէ բաւականանում զորանով։

Նա իւր դրած կարգերը միայն ժամանակաւոր է համարում, որովհետև համոզուած է լինում, որ ամեն մի բարեկարգութիւն, որ հաստատուած չի լինիլ նորա գործադրողների գիտակցական գործունէութեան վերայ, միշտ անհիմն և անհաստատ կլինի։ Պէտք էր լուսաւորել ժողովուրդը, զարգացնել նորա ինքնաճանաչութիւնը, որ նա հասկանայ իւր դրութիւնը և գիտակցաբար վերաբերի իրեն շրջապատող հանգամանքներին. պէտք էր կրթուած հոգևորականներ պատրաստել, որ առաջնորդների դրած բարեկարգութեան կանոնները, օրէնքները կարողանան ճշտութեամբ կատարել, որ իսկական քաջ հովիւ լինին իւրեանց հօտին և պաշտպանեն նորան գիշատիչ գայլերից։ Այս բոլորը հասկանում է Ներսէսը և ձեռնարկում է ժողովրդի մէջ ուսման գործն առաջ տանելու, ինչպէս դորանից մի քանի տարի առաջ իւր Վրաստանում առաջնորդ եղած ժամանակներն արել էր Թիֆլիսում։ Նա Նախիջևանի «Գլխաւոր վարժարանը» «Սերմնարանի» է վերածում և Սերովբէ վարժապետի որդի գիտնական Տէր Գաբրիէլ Պատկանեանին 32 թուին քահանայ ձեռնադրելով, ուղարկում է նորան կառավարելու և ուղղութիւն տալու այդ նոր դպրոցին. նա մտածում է Նախիջևանի Սերմնարանից ժամանակով մի այնպիսի լուսաւորութեան կենդրոն ստեղծել Ռուսահայոց համար, որպիսին լետոյ եղաւ Վրաստանի հայերի համար Ներսիսեան դպրանոցը։ Սերմնարանը պէտք է լինէր այն «Նորակրթութեան» կենդրոնը, որի մասին նա խօսում է մեր վերը լիշած թղթի վերջում.—«Շնորհն Աստուծոյ նորակրթութեամբ իւիք թերևս սանձեսցէ զայնպիսի ամեհութիւն նոցա»։

Ժողովրդի մէջ ուսումն և կրթութիւն տարածելու, կարգ և կանոն հաստատելու և դրուած կարգերն ապահովեցնելու գործում նա հետևող է գտնուում Յովսէփ արքեպիսկոպոսին, որ նոյնպէս իւր բոլոր ջանքերը կանոնաւորելու զաղթականների գործերը լոկ միայն կանոնադրութիւններով և զանազան խիստ միջոցներով բոլորովին ապարդիւն էր համարում, քանի որ ժողովուրդը և գլխաւորապէս հոգևորական դասը կմնային իւրեանց առաջուայ տգիտութեան խաւարի մէջ. նա նոյնպէս իւր թէ Հոգևոր Դատարանի կանոնադրութեան և թէ միւս հաստատած կարգերին ու օրէնքներին ժամանակաւոր նշանակութիւն էր տալիս, մինչև որ իրագործուէր իւր այն նուիրական բաղձանքը, որ նա լղացել էր իւր սրտում դեռ Նախիջևանը հիմնարկելու ժամանակ։ Նա միտքն էր դրել մի մեծ ուսումնարան կամ, ինչպէս ինքը անուանում է, «Համալսարան» հիմնել, բայց նիւթական միջոցների սղութեան պատճառով ստիպուած էր եղել լետաձգել նորա հաստատութեան գործը, մինչև որ ժողովուրդը մի փոքր նախապատրաստուէր այդ բանի համար և մինչև որ նիւթական օժանդակութիւն ստացուէր Հնդկաստանի հայերից և թագաւորական գանձարանից ռոճիկ նշանակուէր վարժապետներին։

Այդ իւր համալսարան բանալու դիտաւորութեան մասին երջանկալիշատակ արհին, բացի իւր Հոգևոր Դատարանի կանոնադրութեան յառաջաբանից, լիշում է մի երկու տեղ և նոյն իսկ կանոնադրութեան յօդուածների մէջ։ Քահանայից պարտաւորութիւն է մինչդեռ ոչ է հաստատեցեալ համալսարանն, այսինքն դպրոցն, ասում է նա մէկ տեղ, զմանկունս ինքեանց և ժողովրդեանն կրթեսցեն ի լուսումն»... և այլն. «Ման սմին, գրում է նա մի ուրիշ տեղ, հարկաւորի ինձ զբրել և կանոնս ոմանս վասն կառավարութեան համալսարանին, այսինքն վարժարանին, որ է դպրատուն. բայց մինչև այժմ ոչ դոյ այն. երբ Աստուծոյ ողորմութիւնն քաղցրացուցէ զսիրտ կայսերական մեծութեան, որ վասն այնորիկ և ռոճիկս սահմանեսցեն, յայնժամ եթէ եղէց կենդանի, ըստ կարգի և ըստ պարտաւորութեան մերոյ, սահմանելոց եմ զանենայն...»։

Մեզ լայտնի չէ արդեօք երջանկալիշատակ սրբազանը կարողացել է հասնել իւր նպատակին և հաստատել իւր ցանկացած համալսարանը, թէ ոչ, բայց որ կամ նորա Ռուսաստանից հեռանալուց առաջ կամ լետոյ և կամ նոյն իսկ նորա հեռանալու միջոցին մի դպրոց հաստատուել է Նախիջևանում—, այդ հաւատի կերպով կարելի է ասել. դորան ապացոյց կարող է լինել Ս. Լուսաւորիչ եկեղեցու գաւթի պատի մէջ հազցրած մարմարիոնեայ քարի արձանագրութիւնը և դաշնագրութեան թղթի ութերորդ յօդուածը, որի մէջ ուղղակի ասուած է։ «Ըստ հաճութեան Սրբազան Հօրն մերոյ՝ արասցուք դպրոց զուտնն՝ որ վասն Յովսէփ Անդրէիչին չինեցեալ, մինչև նորին Սրբութեան կառուցանելն զդպրոցն զոր ունի մեզ յառաջադրեալ, և նոյն փոքրիկ դպրոցի երկու վարպետք լիցին և կամ ուսուցիչք, հայերէն և ռուսերէն, որք ուսուցանեն մանկանց մերոց։ Հայերէնի վարձն տարեկան՝

Սրբազան Հայրն մեր ունի հատուցանել ի եկեղեցականացն. իսկ ռուսերէն վարպետին՝ պարտական եմք մեք հատուցանել»։ Ահա Յովսէփ արքեպիսկոպոսի այդ հաստատած կամ հաստատելու առաջարկած դպրոցն էր, որ կոչւում էր «Լուսաւորչեան», «Գլխաւոր վարժարան» և կամ պարզ կերպով «վարժատուն», որ և Ներսէս արքեպիսկոպոսը սերմնարանի է վերածում [1]։

[1]) «Լուսաւորչեան» այդ դպրոցը կոչուած է Ս. Լուսաւորիչ եկեղեցու զաւթի պատի մէջ հազցրած մարմարիոնեայ քարի արձանագրութեան մէջ, «գլխաւոր վարժարան»—Մագիստրատի 1819 թուականի Յունուարի 13-ին Հոգևոր դատարանին գրած թղթում և «վարժատուն —քաղաքային Դումի և Աթոռակալի կողմից 1822 թուականի Ապրիլի 29-ին Հոգևոր Դատարանին գրած թղթում։

Մագիստրատի թուղթը—«մխիթարութիւն» հետևեալն է. «Ցեսանէ մագիստրատս և հասարակութիւն քաղաքիս, նորբագոյն հայեցողութեամբն ի վերայ մանկանցն քաղաքիս, որք վարին առասպելաբար և լկտիօրէն, անխրատք ի ծնօղաց և վարժապետաց, և այնպէս խելառաբար կուշրչեն ի հրապարակս և ի բողոցս քաղաքիս, ընդանալով չանաւոլ (սահնակ) և ապրպաւոլ քալողաց էտնէն, աղաղակելով նման անասնոյ երիվարի, և էրբեմն քահանէժ լինին ի կորուստ, որ ի բազմիցս պատահեալ է գնալով տօնոյ ջուրն (Դօն գետ) առի լողանալ որպէս այսնիկ է խեղտամահ լինելն ի նոցանէ որ ամենայն ամի թէև մին տղա ոչ պակասի այնպէս ի կորնչելոյ, ուստի ցաւիմք ի վերայ նոցին, վասն զի տեսանեմք ի գիրս վասն մանկանց որ սակաւ պատկանի հոգսունակել ծնօղաց և ազգականաց, քան թէ ծերակուտի, որ է հասարակութիւն քաղաքիս։ Քանզի նոքա են մանկունք ամբոխին, և նոքա են ակնկալութիւնքն և զօրութիւնքն հասարակութեան մերում, և ոչ ևս է ժամանակ ուղղելոյ զնոսայ, որժամ լինին աւերեալք, գոլով թժվարին անժամատար անչատել զնոսայ ի չար բարուց իւրեանց երբ լինին ապականեալք, ուստի լուժ բարդ է ընդ առաչել չարին քան թողուլ ժամանել արժանաւորութեան պատժոյ։ Հասարակութիւն է հայր ամբոխին ի ներ քաղաքին իւրոյ, և մանաւանդ առաւել յատկապէս հայր ամենից մանկանց և երիտասարդաց որ են ծաղիկք աղգիս, ըստ որում պտուղք ոչ այլ ինչ պատրաստին եթէ ոչ ի ծաղիկս, ուրեմն ոչ զանց առնու հասարակութիւն քաղաքիս և մագիստրատս մեր ի հսկել և տալ հսկել այլոց ի վերայ կրդութեանց, որ տվեալ լինին մանկանց, որ առ այս գրեալ էր մագիստրատս անցեալ 1809 թվումն սկսմբերի ամսոյ 3-ին, համարիւն 172, այժմ ևս նոյնոյ սարասի գրէ մագիստրատս առ հոգևոր կառավարութիւնդ՝ բարեհաճիլ և գրել հրամայելով ի վերայ «Գլխաւոր վարժարանին» մերս քաղաքի, և ի վերայ քահանայից և սարկաւարքաց որք կարքեալ են ուսուցանել և դաստիարակել զմանկունս չանձնեցեալս ինքեանց, նոյնպէս գրել հրաման ի վերայ դասագլուխս քահանայից, զի խրատեսցեն զժողովուրդս եկեղեցւոյ իւրեանց, զայս և զկանայս առ ի խրատել զորդիս և զդուստերս իւրեանց աղաչս պարկեշտութեան, որպէս մագիստրատս մեր առ այս ունի առաւել հոգացողութիւն, որոյ վասն գրեալ է և գրէ առ քաղաքական բօլիցու մասին, որ ունկամբ ոչ լսոցն թիկամբ խրատել, այլ վասն մունետիկաւ հրատարակեալ ևս լինելոց է։

Առաջին դատաւոր Մանուէլ Մկրտչեան
Երկրորդ դատաւոր Օվանէս Խաղիզեն
Երկրորդ դատաւոր Գաբրիէլ Խաչատուր
Երկրորդ դատաւոր Խաչատուր Խոմանցով
Երկրորդ դատաւոր Պետրոս Ղեպալզարով։

«Քաղաքական ատամի» և Աթոռակալի թուղթը հետևեալն է. «Գիտութիւն լիցի կառաւարութեանդ, որ յայսմ աւուր մագիստրատի Անդամոք, և ընդ հանուր ընտրեցեալ հոգաբարձուօքն մերովք խորհուրդ առեալ կարգաւորելով ի բաց բարձաք զդրամոք աղջկունս առնուլ կամ տալն, քանզի արարմունքս այս յոյժ ընդդէմ և վատթար երևեցաւ բոլոր քաղաքիս, վանորոյ և կառաւարութիւնդ մեր. ի ստանալ սոյնոյ հրամայեսցէ ամենայն եկեղեցեացն քաղաքիս դասագլուխս քահանայից, զի ի վազիւն յամենայն եկեղեցւոջ յոյժ պարզ ծանուցումն արասցեն միանգամայն ի լուր բոլոր ժողովրդոցն,



Նախիջևանի վիճակի վերաբերութեամբ արած իւր բազմաթիւ զեղեցիկ և բեղմնաւոր կարգադրութիւնների չարքում Ներսէսն իւր առաջնորդութեան վերջին տարիներում դժբաղդաբար և մի անլաջող կարգադրութիւն է անում. նա նորից վերականգնում է Յովհաննէս Գառնակերեանի մահից յետոյ թափուր մնացած և համարեա թէ վերջացած աթոռակալութեան պաշտօնը։ Մենք ասում ենք «դժբաղդաբար և անլաջող», որովհետև այդ աթոռակալութեան պաշտօնն է լինում պատճառ այն մեծ խռովութեան, որ բացւում է Նախիջևանում Ներսէսի կաթուղիկոս ընտրուելու պատճառով Ռուսաստանից հեռանալուց յետոյ, և յայտնի է լինում «Խալիբեան և Հայրապետեան» կուսակցութիւններ անունով։

Հոգևոր Դատարանը Յովսէփ արքեպիսկոպոսի կանոնադրութեամբ և նորանից ստացած կազմակերպութեամբ գոյութիւն է ունենում մինչև Յովհաննէս Կարբեցու կաթուղիկոսու-

թեան չորրորդ տարին։ 1836 թուին հրատարակւում է տէրութեան Ռուսահայոց եկեղեցու կառավարութեան համար կազմած «Սահմանք տեսչութեան Հայաստանեաց եկեղեցւոյ ի Ռուսիա» կոչուած կանոնադրութիւնը (Положеніе) և Նախիջևանի Հոգևոր Դատարանը Ռուսահայոց միւս բոլոր հայկական հոգևոր ատեանների հետ միասին ընդունելով նորան և նորահիման վերայ նոր կազմակերպութիւն ստանալով, կոչւում է «Նախիջևանի Հայոց Հոգևոր կառավարութիւն»։

---

զի այսուհետև մի ոք իշխեսցէ փողիւ աղջիկ առնուլ կամ տալն, զայս ևս ծանիցեն եթէ ոք յանդգնեսցի և գաղտօրէն տայցէ, յայնժամ այն փողն որոյ գումարիւ ևս իցէ առեցեալ լինելոց է ի ձեռացն ըստացողի, և զերիս բաժինս առնելով տրեցելոց է. մինն քաղաքիս. երկրորդն «վարժատանն». և երրորդ մասն աղքատաց։ Այլ և պարտի քահանայիցն ևս սաստկապէս հրամայելով, պատուիրել, եթէ պատահիցի նշանախօսութիւն ուրեք, նայ պարտ է լաւապէս քննելով իմանալ, և թէ այսպիսի փողիւք իցէ իսկոյն ծանուցանել կառավարութեանդ ի գիտութիւն տումիս, և բնաւ չհամարձակեսցի նշանել և պսակել զայնպիսիսն, այլ եթէ քահանայ ևս ոմն յանդգնիցի և ի ծածուկ ներգործեսցէ այսպիսի դրամօք նշան կամ պսակ, իմացի որ վրէժխնդիր եմք նմայ, և տուժելոց է վասն անլսողութեան. զորմէ և զդուշացի։ Քաղաքական գլուխ Վարթերէս հալճօվ»։

# ՅՈՎՍԷՓ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԱՐՂՈՒԹԵԱՆ ԵՒ Ն. ՆԱԽԻՋԵՒԱՆԻ ՀԻՄՆԱՐԿՈՒԹԻՒՆԸ

Նոր-Նախիջևանցիք իւրեանց հոգևոր առաջնորդ Մարկոսեան Պետրոս վարդապետի և Ռուսաց զօրավար «Ենարալ Պօռոմիկ» Ալէքսէյ Վասիլիչ Սուվորինի առաջնորդութեամբ 1778 թուականի Օգոստոսին դուրս գալով Ղրիմի Քաֆա, Բախչիսարայ, Ղարասու, Գեօզլեւ քաղաքներից և նոցա չբրջակայ գաւառներից, մտնում են Ռուսաստանի նախկին Աղովի նահանգը և հասնում են Դօն գետի ափը, այժմուայ իւրեանց բնակութեան տեղը միայն 1780 թուականի Յունուարի 14-ին [1]։ Գաղթականների այսքան երկար ժամանակ ճանապարհորդելու պատճառը, բացի ճանապարհի երկարութիւնից և բազմատեսակ դժուարութիւններից, որոնք առհասարակ տեղի են ունենում ամեն մի գաղթականութեան ժամանակ, լինում է այն, որ նոքա դուրս են գալիս իւրեանց նախկին բնակութեան տեղերից դեռ Ռուսաց տէրութիւնից խոստա-

---

[1]) «Յամի ծննդեան Տեառն մերոյ և Փրկչին՝ 1778, և Հայոց ՌՄԻԷ թուին, և յամսեանն յՕգոստոսի, գրում է այդ մասին Յովսէփ արքեպիսկոպոսը իւր ձեռագիր «Դաւթարում», ի Ղրիմ երկրոջ եղեալ բոլոր Լուսաւորչական ազգն հայոց, հրամանաւ մեծ կայսերուհոյն և ինքնակալուհոյն ամենայն ռուսաց Եկատարինէ Ալէքսիոնային երկրորդի, ելին անտի՝ ի չորս քաղաքաց, այսինքն՝ ի Կաֆայու, ի Բաղչիսարայու, ի Ղարասուլու, ի Գօզլովու և ի շրջակայ գաւառաքէից և գիւղօրէից նոցին յետ մեծի յաղթութեան սուլթանին Օսմանցւոց յորժամ զխռիմ արձակեալ ի լիշխանութենէ նորին, և տուեալ ի խանն Թաթարաց ինքնագլուխ արար զնա։ Բայց զազգն քրիստոնէից, հայոց և հոռոմոց, սեպհականեաց ռուսաց։ Զորս և ի ձեռն զօրավարին և ռուսաց ենարալ պօռոմիկ Ալէքսէի Վասիլիչ Սուվորովին հանեալ անտի՝ երեր ի յերկիրս ռուսաց։ Մերայինս ազգին առաջնորդ գոլով յայնժամ՝ պուրսայեցի Պետրոս վարդապետ ոմն։ Եւ ի սմին թուոջ եկին ի գաւառն Աղովու»։

ցուած արտօնութիւնների հրովարտակը չստացած։ Նոքա դեռ մի որոշուած բնակութեան տեղ չունենալով, ստիպուած են լինում ամբողջ երկու տարի և չորս ամիս թափառել վրաններով Կատարինասլաւի և Նորա Սամար [2]) կոչուած տեղի շրջակայքում և ենթարկուել ամեն տեսակ նեղութիւնների։ Նոցա ծեծում է անձրևը, տանջում է ցուրտը, հալածում ու անհանգիստ են անում գողերը, աւազակները, նեղացնում են շոգը, ձիւնը և զանազան տեսակ վտանգաւոր և վարակիչ հիւանդութիւնները. նոցա իջևանած տեղերում ամբողջ դերեզմանոցներ են գոյանում, որովհետև շատերը նոցանից, նամանաւանդ երեխաները և ծերերը, չկարողանալով դիմանալ նեղութիւններին, մեռնում են ճանապարհին [3])։ Գաղթականների թիւը զգալի կերպով պակասում է, որովհետև, բացի բազմաթիւ մեռնողներից, շատերն էլ զղջալով իւրեանց դուրս եկածի վերայ և յիշելով իւրեանց թողած տուն ու տեղը, իւրեանց սուրբ եկեղեցիներն ու վանքերը, նորից փախչում, վերադառնում են Ղրիմ։ Ճիշտ է, նոքա դեռ Ղրիմում հոգացել էին ձեռք բերել գաղթելու համար կայսերական հրովարտակ և դորա համար իւրեանց երևելիներից ուղարկել էին Պետերբուրգ երկու պատգամաւոր՝ փառակեցի Իգնատիոսի որդի մահտեսի Յարութիւնին և փառակեցի Տէր-Ոսկանի որդի պարոն Կարապետին, բայց նոքա տեղական լեզուին և կարգ ու կանոնին անծանօթ լինելով, չէին կարողացել հասնել իւրեանց նպատակին և հրովարտակ ստանալու գործն ուշացել էր, նամանաւանդ որ պատգամաւորներից մէկն էլ՝ Տէր-Ոսկանի որդի Պարոն Կարապետը մեռել էր Մայրաքաղաքում։ Գաղթականների միակ յոյսն ու ապաւէնը մնացել էր նոցա հոգևոր առաջնորդ Պետրոս վարդապետը։ Նորա հետ էր Ռուսաց տէրութիւնը ի սկզբանէ անտի բանագնացութիւն արել գաղթելու համար, նորա բերանով էր խոստացուել գաղթականներին զանազան արտօնութիւններ. նա էր նոցա կրած նեղութիւնների մէջ մխիթարում նոցա, յոյս տալիս, քաջալերում, նա էր նոցա ներկայացուցիչը. նորան էին դիմում նոքա իւրեանց բողոքներով, նորանից էին նոքա սպասում և իւրեանց ցաւերի ճարն ու դարմանը, իւրեանց աստանդականութեան վախճանը։ Սակայն գաղթականների կուր բաղից այդ վերջին յոյսն էլ չուտով կտրւում է. Պետրոս վարդապետը 1779 թուականի Յունուարին մեռնում և թաղւում է Սամար կոչուած տեղում [4])։ Գաղթականները մնում են բոլորովին անտէր-անտիրական, խեղճ, աղքատացած և օտարների մէջ ցրուած։ Դրութիւնը յուսահատական էր, հանգամանքները վհատեցուցիչ։ Այդ դժուար դրութեան մէջ թշուառ ժողովրդի աչքերը դառնում են դէպի այդ ժամանակուայ Ռուսաստանի Հայոց առաջնորդ Յովսէփ արքեպիսկոպոս Երկայնաբազուկ-Արղութեանը, որի մօտ նոքա դեռ Պետրոս վարդապետի կենդանութեան ժամանակ պատգամաւորութիւն էին ուղարկել և խնդրել, որ նա գործ դնէ իւր ազդեցութիւնը և նպաստէ հրովարտակը ստանալու գործին։ Յովսէփի գործունէութեան բարի համբաւը հասել էր նոցա ականջը դեռ նոցա Ղրիմում եղած ժամանակ։

Յովսէփ արքեպիսկոպոսը Հայաստանի Գուգարաց նահանգի Տաշրաց գաւառի Սանահին գիւղաքաղաքից էր. նա Հայոց Արղութեան-Երկայնաբազուկ իշխանական մեծ տոհմից էր և ծնուել էր Թիֆլիզում 1734 թուին։ Նորա հօր անունն էր Շիօշբէկ, մօր անունը—Բէթեան։ Շիօշբէկը սպանուելով լեկզիներից, թողել էր չորս արու զաւակ՝ Յովսէփ, Մովսէս, Փարսադան և Բէժան, և երկու դուստր՝ Ռուսուդան և Մարիամ։ Մովսէսը մեռել էին երիտասարդութեան հասակում։

[2]) Սամար կոչուած տեղը Սամար գետի ջրաբաշխն է, որ գաղթականները սկզբից խնդրել և որտեղ իշխանութեան հաւանութիւնն էին ստացել բնակութիւն հաստատելու։ Պ. Լէօն սխալւում է, երբ «Սամար» քաղաքի անուն կարծելով, ասում է. «Գաղթականները երկար ժամանակ մնացին առանց հաստատութեան օթևանի։ Նրանք ապրում էին վրանների մէջ Եկատերինոսլաւ և Սամար քաղաքներում ու շրջականերում»։ Տես »Հովսէփ կաթողիկոս Արղութեան» էջ 55.

[3]) Գաղթականների քաշած նեղութիւնները հետևեալ կերպով է նկարագրում Յովսէփ արքեպիսկոպոսն իւր ձեռագիր «Գաւթարում». «Յամս երկուս, վրանաւ պանդխտեցան ժողովուրդքն մեր՝ ի Սամար և ի Կատարինէսլաւ և ի շրջակայս նոցին, և վնասեցան բազում մարդիկ պէս պէս նեղութեամբ, արևու և անձրևու և ի գողից, և բազումք ի կսկծութեամբ, մեռան քահանայք և ժողովուրդք։ Առաւել ծերքն, լիշելով զծննդեան տեղիս իւրեանց, զվանօրէյսն և զեկեղեցիսն»։

[4]) «Ի 1778 թուին փրկչի և ի յամսեանն յունվարի, ասում է Յովսէփը իւր «Գաւթարում», վախճանեցաւ ի Սամար նոյն Առաջնորդ Պետրոս վարդապետն և անդ թաղեցաւ»։

Արղութեան-Երկայնաբազուկներն իւրեանց «Արղութեան» ազգանունը սերած են համարում Արղութ անունով մեծ իշխանից, որ իւր Մոնղոլ-թաթարներին մատուցած մեծ ծառայութիւնների համար 1287 թուին մեծ պատիւներ է վայելել թաթարաց Արղուն խանից, իսկ «Երկայնաբազուկ» մականունը նոքա յառաջ եկած են համարում Պարսից Արտաշիր Լոնգոման կոչուած թագաւորից, որի ցեղը իբրև թէ Պարսից տէրութիւնն Աղեքսանդր Մակեդոնացուց կործանուելուց յետոյ, տեղափոխուել է Հայաստան։ Ինքը Ցովսէփ արքեպիսկոպոսն իւր համառօտ կենսագրութեան մէջ, որ նա գրել է Նախիջևանի Հոգևոր Դատարանի կանոնագրութեան յառաջաբանում, ասելով, որ ինքեանք առաջ կոչուում են եղել Երկայնաբազուկ, իսկ յետոյ Արղութեան, չէ յիշում, թէ ինչպէս են առաջ եկել այդ ազգանունները, այլ իւր ազգաբանութիւնը հանում է Սարգիս իշխանի որդի նշանաւոր Զաքարէ սպասալարից, որ, ինչպէս յայտնի է, իւր ժամանակին մեծ իշխանութիւն է ունեցել թէ Հայոց և թէ Վրացոց վերայ։ «Ցիշեցէք, ասում է նա այդ յառաջաբանում, զմարմնաւոր ծնողն իմ զՇիօչբէգն՝ զսպանեալն յանօրէն լէհզեաց ի տարապարտուց, և զպարկեշտագնաց մայրն իմ Բէթևան, և զհանգուցեալ եղբարսն իմ զվաղաթառամ զխորհրդակորոյս Մովսէս բէգն և զՓարսադանն, և զկենդանի եղբայրն իմ պարոն Բէժան բէգն, և զքորսն իմ Ռուսուդան և զՄարիամն և զամենայն զարմս և զաւակս նոցին. որք ի յեօթներորդ դաւառէն Հայոց ի Նահանգէն Տայշրաց և Լօռուզոր այժմ վիրք ունին. և յիշխանանիստ գիւղաքաղաքէն Սանահնու, և յազգէ մեծ սպարապետին Հայոց և վրաց՝ Զաքարիա իշխանին, որգուոյ Սարգսի իշխանի, զորմէ պատմէ պատմիչն Կիրակոս։ Որք և ի հնումն կոչէաք Երկայնաբազուկ, իսկ այժմ կոչիմք Արղութեանց»։

Ցովսէփ իշխանն իւր մանկութեան տարիներն անցկացնելով իւր ծնողների տանը և այնպիսի դաստիարակութիւն ու կրթութիւն ստանալով, որ սովորաբար ստանում էին այդ ժամանակուայ հայ մեծատունները, հակումն է զգում կրօնաւորութեան և գնում է Ս. Էջմիածին։ Այդտեղ այդ ժամանակ մեծ կեանք ու կենդանութիւն կար։ Երջանկայիշատակ Սիմէօն կաթողիկոսի ազդեցութեան ներքոյ մեծ ճիգ էր թափւում բարձրացնելու հայր աթոռի ընկած նշանակութիւնը։ Ամենկողմեր օրհնութեան կոնդակներ էին ուղարկւում, այխատանք էր լինում պաշտպանելու Աթոռի իրաւունքները, նուիրակների ձեռքով քաջալերւում էր ցրուած, վհատած ժողովուրդը և քարոզւում էր վանքի քայքայուած նիւթական դրութիւնը. պատրաստութիւն էր տեսնւում վերաբանալու Փիլիպպոս Հաղբակեցու և Մովսէս Սիւնեցու ժամանակները հաստատուած բայց նոցա յաջորդների ժամանակ խափանուած «ժառանգաւորաց դպրոցը» և Պոլսից Ցակովբ Նալեան պատրիարքի օրով հաստատուած դպրոցից աւարտած ուսուցիչներ էին հրաւիրւում. թղթի գործարան էր շինւում և ջանք էր լինում տպարան բանալու և ամենաանհրաժեշտ գրքերի տպագրութեան ձեռնարկելու։

Երիտասարդ իշխանը մանում է ժառանգաւորաց դպրոցը, որդեգրւում է, դառնում է գործունեայ կաթուղիկոսի սիրելի և ձեռնասուն աշակերտներից մէկը և ձեռնադրւում է սարկաւագ։ 1765 թուին նա աւարտելով իւր ուսման ընթացքը և կատարելագործուելով, ձեռնադրւում է վարդապետ. 1771 թուին օծւում է եպիսկոպոս, իսկ երկու տարուց յետոյ, 1773-ին արժանանալով վեհափառից արքեպիսկոպոսութեան մեծ աստիճանին, նշանակւում է նորահաստատ Ռուսաստանի Հայոց թեմի առաջնորդ և ծայրագոյն նուիրակ։

Մենք Ռուսաստանի Հայոց թեմը կոչում ենք նորահաստատ ոչ թէ նորա համար, որ մինչև այդ ժամանակ այդ թեմը չկար, այլ որովհետև մինչև այդ ժամանակները Մայր-Աթոռի և Ռուսաց արքունիքի մէջ պաշտօնական յարաբերութիւն և թղթակցութիւն չէին եղել, կայսերական հրովարտակ չէր հրատարակուել, պաշտօնապէս Ռուսաստանում հայկական թեմ չէր կազմուել և նորա վերայ չէր ճանաչուել Ս. Էջմիածնի աթոռակալների իրաւունքը։ Զուզալեցի և ուրիշ տեղերի Հայերը վաճառականական գործերով բաւական հին ժամանակներից երթևեկելով Ռուսաստան, ԺԶ դարի վերջերից արդէն սկսել էին հաստատ բնակութիւն հաստատել Ռուսաց զանազան առևտրական կենդրոններում։ Հայերի թիւը նամանաւանդ շատացել էր ԺԷ դարի սկզբից, երբ սկսուել էին Ղարաբաղի Հայոց մէլիքների և Աղուանից կաթուղիկոսների քաղաքական յարաբերութիւնները և բանագնացութիւնները Ռուսաց արքունիքի հետ, հրատարակուել էին Հայերի վերաբերութեամբ Պետրոս Մեծի ողորմածութեան հրովարտակները և, Ռուսաց

զօրքի Պարսից Կասպից ծովի ափերում գտնուած գաւառները բռնելու պատճառով, խմբովին գաղթականութիւններ էին եղել դէպի Ռուսաստանի սահմանները։ Գաղթականութեան այդ հոսանքը շարունակուել էր և Պետրոս Մեծի յաջորդների ժամանակ և հետզհետէ կազմուել էին Հաշտարխանի, Ղզլարի, Ս. Խաչ քաղաքի, Մոզդոկի և մայրաքաղաքների հայ գաղութները, որոնց բոլորին Ռուսաց տէրութիւնը սիրով ընդունելով առանձին հրովարտակներով եկեղեցիներ և վանքեր շինելու, իւրեանց ազգային և կրօնական ծէսերը ազատ կերպով կատարելու, ազատ կերպով վաճառականութիւն անելու և մինչև անգամ իւրեանց օրէնքներով և սովորութիւններով դատարան ունենալու իրաւունք էր տուել։ Ս. Էջմիածինը Ռուսաստանի Հայերին ևս, ինչպէս և միւս երկրների գաղթական Հայերին «Նուիրական վիճակ» համարելով, մինչև Երևանցի Սիմէոն կաթողիկոսը կառավարել էր իւր նուիրակների ձեռքով, Ս. Միւռոնը բաշխելով, ձեռնադրութիւններ անելով և հոգալով գաղթականների բոլոր կրօնական և եկեղեցական գործերը։ Սակայն Ղազար ջահկեցի կաթուղիկոսի ժամանակներից Ս. Էջմիածնի և Ռուսաստանի Հայերի այդ յարաբերութիւնները սառել ու դադարել էին։ Դորա պատճառն եղել էր Ղազար կաթուղիկոսի Բարսեղ նուիրակը, որ մի կոպիտ և խռովարար վարքի տէր մարդ լինելով, գժտութիւն էր ձգել գաղթականների մէջ և այնքան սառեցրել էր նոցա սիրտը Ս. Էջմիածնից, որ նոքա թողնելով Մայր-Աթոռը, մտել էին Աղուանից կաթուղիկոսի իրաւասութեան ներքոյ, ընդունել էին Աղուանից կաթուղիկոսից ձեռնադրուած Ստեփաննոս եպիսկոպոսի իշխանութիւնը և թագաւորական հրաման բերել տալով, 1749 թուին արգելել էին Ս. Էջմիածնի նուիրակների մուտքը Ռուսաստան։ Այդ արգելքը վերացնելու և Մայր-Աթոռի իրաւունքները Ռուսաստանի Հայերի վերայ նորից հաստատելու համար, երջանկայիշատակ Սիմէոն կաթուղիկոսը 1768 թուին մի պատգամաւորութիւն էր ուղարկել Եկատերինէ Բ. Կայսերուհու մօտ, որի վերայ պարտականութիւն էր դրել պարզել հիւսիսային դշխոյի առաջ գործի հանգամանքները։ Երջանկայիշատակ կայսերուհին սիրով ընդունել էր կաթուղիկոսի պատգամաւոր Դաւիթ եպիսկոպոսին և նորա ուղարկած սրբերի մասունքները և նոյն թուին հրովարտակ էր հրատարակել, որով ճանաչել էր Արարատեան Աթոռի իրաւասութիւնը Ռուսաստանում ապրող բոլոր Հայերի վերայ և հրամայել էր նոցա հնազանդել միայն Ս. Էջմիածնի կաթուղիկոսին [5])։ Անա այդ



---

[5]) Դնում ենք այստեղ Եկատերինէ Բ կայսերուհու 1781 թուականի Յունիսի 30-ին արձակած հրովարտակի պատճէնը։ „Честнѣйшему Патріарху Симеону и всѣмъ прочимъ честнымъ Юсъ-Башамъ и управителямъ и всему честному Армянскому народу Наша Императорская милость и поздравленіе, объявляемъ чрезъ сію Нашу милостивую грамоту, что пребывающій въ Великой Арменіи въ градѣ Вагаршапатѣ Симеонъ патріархъ всего Армянскаго народа, чрезъ своего нарочно присланнаго въ царствующій градъ Москву Архимандрита Давида, письменно насъ всенижайше просилъ, чтобъ пожаловать Его патріарха Высочайшею Нашею Императорскою грамотою, дабы оная содержима быть могла въ тамошнемъ Престольномъ его храмѣ на вѣчную память милости и благоволенія Нашего; а какъ напредъ сего Высокіе предки Наши, блаженныя я вѣчныя славы достойныя памяти, Ихъ Величества Государь Императоръ Петръ Великій и Государыня Императрица Екатерина Алексѣевна честный Армянскій народъ, ради христіанства, въ особливой своей Императорской милости содержать благоизволили, о чемъ и грамотами Ихъ Величествъ въ 1724 и 1726 годахъ къ тогдашнимъ Патріархамъ Исаю и Нестору, къ Юсъ-Башамъ и управителямъ и ко всему честному Армянскому народу отправленными засвидѣтельствовано, то и мы въ послѣдованіе высокоупомянутымъ своимъ Предкамъ, равномѣрно соизволяемъ, какъ настоящаго честнѣйшаго Патріарха Симеона, такъ и будущихъ Преемниковъ Его Патріаршаго престола, такожде Юсъ-Башей и управителей и весь честный Армянскій народъ въ Нашей Императорской милости и благоволеніи содержать, такожде соизволяемъ Мы помянутаго Патріарха Симеона и Преемниковъ его Патріаршаго престола обрѣтающихся въ Нашей Россійской Имперіи, Армянскаго народа и закона людей по духовнымъ обстоятельствамъ и церковнымъ обрядамъ имѣть въ своемъ вѣдомствѣ, какъ то и прежде сего было, и для того, когда оные требовать будутъ, присылать къ нимъ Армянскаго Архіепископа, или другаго сана изъ духовныхъ персонъ съ письменнымъ отъ него патріарха свидѣтельствомъ, безъ котораго оные инако въ Нашей Имперіи приниманы не будутъ; о чемъ отъ Насъ пограничнымъ Нашимъ командирамъ и указы даны, впрочемъ Мы помянутаго честнѣйшаго Патріарха Симеона и честныхъ Юсъ-Башей и управителей со всѣмъ Армянскимъ народомъ, а особливо въ Россійской Имперіи пребывающимъ,

հրովարտակի հիման վերայ էր, որ կազմուել էր մի նոր կտնտնաւոր եպիսկոպոսական թէմ, որին Մինաս արքեպիսկոպոսից յետոյ, ինչպէս վերն ասացինք, նշանակուել էր առաջնորդ և միանգամայն ծայրագոյն նուիրակ Յովսէփ Երկայնաբազուկ Արղութեանը։

Հասնելով իւր առաջնորդանիստ Հաշտարխան քաղաքը, Յովսէփը շուտով ծանօթանում է բոլոր գործերին և իրան շրջապատող հանգամանքներին։ Իւր նուրբ ու թափանցիկ խելքով, իւր խոհեմ ու հաճելի բնաւորութեամբ, իւր առատաձեռն ու քաղցր վարեցողութեամբ, ճարպիկ և հեռատես քաղաքականութեամբ և եռանդուն ու տենդային գործունէութեամբ նա կարճ միջոցում ձեռք է բերում ահագին ազդեցութիւն իւր խնամքին յանձնուած ժողովրդի վերայ և դրաւում է ոչ միայն իւր ընդարձակ թեմի բոլոր նշանաւոր հոգևոր և աշխարհական իշխանաւորների սէրն ու համակրութիւնը, այլ և մինչև անգամ իւր վերայ է դարձնում և Եկատերինէ կայսերուհու ուշադրութիւնը։ Սակաւ չեն նպաստում առաջնորդի վարկի բարձրանալուն արքունիքում և արքեպիսկոպոսի մտերիմ բարեկամ նշանաւոր Պատեմկինը, որ ինչպէս յայտնի է, այդ ժամանակները մեծ դեր էր խաղում տէրութեան գործերում և կայսերուհու ամենահաճելի մարդն էր, և հայազգի ականաւոր Նազար Նազարեանի Յովհաննէս, Մինաս, Յովակիմ որդիները, որոնք մեծ փառք ու պատիւ ունէին մայրաքաղաքներում և վայելում էին կայսրուհու բարեհաճութիւնը։

Այդ ժամանակները Ռուսաց քաղաքականութիւնը այլ

---

обнадеживаемъ Нашею Высочайшею Императорскою милостію и покровительствомъ; а притомъ даемъ знать, что присланныя къ намъ отъ Патріарха Симеона съ Архимандритомъ Давидомъ мощи Святаго Предтечи и Крестителя Господня, Святыя Мученицы Рипсиміи и Святаго Великомученика Георгія, да часть Ковчега Ноева, съ особливымъ Нашимъ благоволеніемъ приняты, якоже и помянутый Архимандритъ Давидъ обратно отсюда къ Патріаршему престолу съ сею Нашею Императорскою грамотою отпущенъ, и можетъ изустно обнадежить весь честный Армянскій народъ о Нашей къ нему Императорской милости и благоволеніи, съ коими Мы пребываемъ. Дано въ столичномъ Нашемъ царствующемъ градѣ Санктъ-Петербургѣ за Нашею Государственною большою печатью, Іюня 30 дня 1768 года».



էր. աշխատանք էր լինում հայերին Ռուսաց կողմը գրաւելու, զանազան քաղաքական ծրագրեր էին կազմուում Հայաստանի վերաբերութեամբ, Վրաստանը պաշտպանելու, Հայերին մահմեդականների ձեռքից ազատելու պրոէկտներ էին յօրինուում. Հայոց առաջնորդի և մեծամեծների կարծիքներին կարևորութիւն էր տրուում, նոցա դիտողութիւնները, իբրև Ռուսաստանի շահերին նպատակայարմար առաջարկութիւններ, ի կատար էին ածում։ Թէև պատմութեան հաստատուն աղբիւրներից չէ ճշտուում այն կարծիքը, որ մինչև ցայժմ տարածուած է մեր մէջ, որ իբրև թէ Ղռիմի գաղթականութեան պատճառը Յովսէփ Արղութեանը և Լազարեաններն են եղել, բայց անհերքելի է այն, որ նոքա մատն են ունեցել այդ գործում, համակրել են գաղթականութեան և իւրեանց խորհուրդներով դրդել ու ընթացք են տուել այդ գործին։ Լազարեանները և Յովսէփ արքեպիսկոպոսն աշխատել են ամենատեսակ մահմեդականների ձեռքի տակ գտնուած հայերին համախմբել քրիստոնեայ Ռուսաստանին պատկանած երկրներում, ապահովութիւն տալ նոցա բարեխնամ ինքնակալների հովանաւորութեան ներքոյ։ Առաջնորդն գաղթականութեան գործի այդ համակրելուն պէտք է վերագրել այն սիրալիր ընդունելութիւնը, որ նա անում է գաղթականների իւր մօտ եկած պատգամաւորներին, նորան պէտք է վերագրել և այն մեծ աշխատանքը, որ նա գործ է դնում հրովարտակը ստանալու համար։

## Գլուխ Բ

Գաղթականների ուղարկած պատգամաւորները՝ կապիտան պարոն Յովհաննէս Աբրահամեանը, Փառակեցի Պետրոսի որդի պարոն Մկրտիչը, Մատեոսի Դանիէլը և միւսները պատահում են առաջնորդին այն ժամանակ, երբ նա դուրս գալով Հաշտարխանից, ճանապարհ էր ընկել գնալու Մոսկուա։ Պետերբուրգի Հայոց նորակառոյց եկեղեցու շինութիւնն այդ ժամանակ արդէն վերջացել էր. նա գնում էր օծելու։ Պատգամաւորները ներկայանում են նորան, յայտնում են իւրեանց վիշտն ու ցաւերը և խնդրում են նորա աջակցութիւնը հրովարտակը շուտով ստանալու համար։ Առաջնորդն ընդունում է նոցա գուրգուրալով, քաջալերում, սիրտ է տալիս և խոստանում է նոցա համար անել ամեն բան, ինչ որ

միայն իւր ձեռքից կգար։ Նա նոցա իւր հետ առնելով, տանում է Մոսկուա, այնտեղից էլ Պետերբուրգ։ Այդ ժամանակից է իսկապէս սկսւում Յովսէփի նախիջևանցւոց հովուելու գործը, որովհետև թէև դեռ պաշտօնապէս ոչ կաթուղիկոսից, ոչ էլ տէրութիւնից լանձնուած չէ լինում նորան գաղթականների հոգսը, բայց նոցա բոլոր գլխաւոր գործերը՝ արքունիքի հետ գաղթականների վերաբերութեամբ բանաձևացութիւններ անելը, խնդիրներ մատուցանելը և հրովարտակ ստանալը նա է կատարում։ Ինքը Յովսէփ արքեպիսկոպոսն իւր ձեռագիր «Դաւթարում» խօսելով իւր Պետերբուրգ գնալու և պատգամաւորների ընդունելութեան մասին, չեշտելով ասում է, որ այդ ժամանակից գաղթականներին հովուելու ու խնամելու գործն ընկել է իւր վերայ։ «Յալամ ամի, ասում է նա, մինչ մեք ի Հաշտարխանու ելեալ գնացաք ի Մոսկով, գնալ ի Սանկթ-Պետերբուրգ վասն օգութեան զչքնաղաշէն եկեղեցւոյն նորին, զոր կառուցեալ էին Ջուղայու դաշտի Եղիազարեանց Եղիազար Ազնիւ Աղայի որդիքն, Ազնիւ Աղայ Յովհաննէսն, Աղայ Մինասն, և Աղայ Յովակիմն. անկաւ լուծ հովուութեան նոցին ի վերայ մեր։ Եկին առ մեզ և ի հասարակութենէ նոցին, անձինք երևելիք. որք էին կապիտան պարոն Յովհաննէսն Աբրահամեան, Փառակեցի Պետրոսի որդի և մեր զանձապետ և վէքիլ պարոն Մկրտիչն, մահտեսի Դանիէլն և այլք։ Եւ յառաջ քան զնոսա, ի Ղռիմու երկու զէֆութթաթ ևս էին առաքեալ Փառակեցի Իգնատիոսի որդի մահտեսի Յարութիւն, որ անդէն վախճանեցաւ ի Պետրպօլք և Փառակեցի Տէր Ոսկանի որդի պարոն Կարապետն» [6]։

1779 թուականի նոյեմբերի 14-ին պատգամաւորների հետ միասին աղերսական խնդիր մատուցանելուց յետոյ, վերջապէս, առաջնորդը կարողանում է յաջողեցնել գործը, և Պատեմկինի ու Յովհաննէս աղայ Եղիազարեանի միջնորդութեամբ ստանում է ցանկալի հրովարտակը [7]։ Նա իսկոյն հրովարտակը յանձնում է պատգամաւորներին և ուղարկում է նոցա Կատարինասլաւ և Նորա գաւառը, պատուիրելով, որ շտապեն ժողովել գաղթականներին և տանել նոցա հրովարտակում նշանակած տեղը, իսկ ինքը մնում է Պետերբուրգում աւարտելու այն գործը, որի համար եկել էր—օծելու նոր բակառոց եկեղեցին [8]։ Պատգամաւորները շտապում են կատարել սրբազանի հրամանը. նոքա հասնում են գաղթականների ցրուած տեղերը և իմանալով Պետրոս վարդապետի մահուան մասին, ինքեանք են գործին գլուխ կանգնում։ Նոքա հաղթելով ժողովում են գաղթականներին և տանում են նոցա դէպի Դոնի ափը։ Զարչարուած, տանջուած ժողովուրդը տեսնելով պատգամաւորներին և նոցանից իմանալով հրովարտակի ստացուելու մասին, կարծես, մի առ ժամանակ մոռանում է իւր կրած նեղութիւնները, իւր աղքատութիւնը, տնանկութիւնը. նա խրախուսում է և մի վերջին անգամ էլ ճիգ թափելով, հաւաքում է իւր ունիմ-չունիմը և հասնում է այն տեղը, որ կոչւում էր «Ռաստով սրբոյն Դեմետրի» 1780 թուականի Յունուարի 14-ին [9]։

---

[6]) Թէև Յովսէփ արքեպիսկոպոսն ասում է, թէ գաղթականների Ղռիմից Պետերբուրգ ուղարկած «զէֆութթաթներից» մեռել է Փառակեցի Իգնատիոսի որդի մահտեսի Յարութիւնը, բայց այդ ճիշտ չէ. մեռնողը եղել է միւս «զէֆութթաթը»՝ Փառակեցի Տէր-Ոսկանի որդի պարոն Կարապետը։ Մինչև ցայսօր դեռ Նախիջևանում ապրում են Կարապետի սերունդից ծերմարդիկ, որոնք հաստատ կերպով ասում են, որ Պետերբուրգում մեռնող պատգամաւորն եղել է իրենց նախնին-Կարապետը։

[7]) Յովսէփի և պատգամաւորների Պետերբուրգ գնալու և հրովարտակը ստանալու մասին «Դաւթարում» գրուած է. «գնացեալ մեր ի Սանկթ Պետերբուրգ, և գտեալ մեր զ Նորին ի կայսերական մեծութենէն և ի պայծառափայլ իշխան Գրիգոր Ալէքսանդրիչ Պոտեմկինէն, որ էր Տեղակալ մեծ թագուհոյն, և խնամակալ ազգի մերում, զաղերս մատուցաք վերոյ իշխանաքն ի ձեռն Ազնիւ Աղայ Յովհաննիսին Եղիազարեանց, ընկալաք զկատարումն խնդրանաց մերոց՝ զամենաողորմածաւորեալ հրովարտակ և զյատուկ տեղ և բնակութիւն, զտեղին որ կոչեն ռաստով սրբոյն Դիմետրի, որ է ի վերայ գետն որ կոչեն ռաստով սրբոյն զքաղաքն մեր Նախիջևան»։

[8]) «Ի սմին ամի 1779 և ի նոյեմբերի 14։ Զեռնարկեալ եղև հրովարտակն մեր ի կայսերական Մեծութենէն, զոր առեալ իշխանացն այնոցիկ, դնացին ի հասարակութեան մեր ի Կատարինէսլաւ և ի գաւառս նորին»։ («Դաւթար»)։

[9]) «Ի 1780 թուին փրկչի, հրովարտակն մեր և ամենայն ժողովուրդքն, եկին ի չնորհեցեալ տեղին, յունուարի ԺԴ։ Եւ սկսան այնուհետև և զչինուածս չինել, և զբիրաւարանն որ կոչի մագիստրատ Հաստատեալ» («Դաւթար»)։ Կայսերական հրովարտակի մէջ գաղթականների բնակութեան համար նշանակուած տեղը այսպէս է որոշուած՝ «վասն յարմարագոյն բնակ-

Գաղթականների բնակութեան համար նշանակուած տեղը մի դաշտավայր էր, որ տարածւում էր Դօն գետի երկու ափի վրայ. նորան արևելքից սահմանափակում էին «զազախ» զինուորների հողերը, արևմուտքից՝—Դեմետրի ամրոցի սահմանները, հիւսիսից՝—ընդարձակ դաշտը և հարաւից՝ Դօնի հովիտը։ Դա մի անապատ տեղ էր, որ սկսուելով Դօնի ափերից, դէպի հիւսիս բարձրանում էր, դէպի հարաւ ցածանում։ Ընդարձակ տափարակ տարածութեան վերայ ոչ մի չէնք, ոչ մի թուփ չէր երևում. այստեղ բնութիւնը. կարծես, մեռած էր, այստեղ նոցա հայրենիքի կեանքն ու կենդանութիւնը չկար։ Տաղտկացած և հիասթափուած աչքով են նայում գաղթականներն իւրեանց այդ նոր բնակութեան տեղի վերայ։ Նոցա աչքը սովոր էր բարձրաբերձ սարեր, կանաչ դաշտեր, անտառոտ հովիտներ և փրփրադէզ ալիքներ տեսնել, իսկ այստեղ միայն հարթութիւն էր, տաղտկալի, միատեսակ հարթութիւն, որ աւելի ևս տաղտկալի էր երևում, որովհետև եղանակը ձմեռ էր և չորս կողմը, մինչև անգամ «դանդաղահոս» Դօնը, ևս, ծածկուած էր ձիւնի սպիտակ սաւանով։

Ա. հաստակ Ռուսաստանի այդ մասը ԺԸ դարի վերջերում մի անշէն երկիր էր. բնակութիւնը սակաւ, քաղաքների գիւղերի և աւանների թիւը շատ քիչ, ընդարձակ դաշտերն ամայի, անմշակ. բնութիւնն էլ իւր կողմից, կարծես, նպաստում էր երկրի այդ անշէնութեան, ամայութեան։ Հողը, որի արտաքին շերտը կաւային և աւազոտ էր, իսկ ներքինը-տեղ-տեղ կաւիճ, տեղ-տեղ հատաքար, կրաքար կամ աւազաքար, թէև աջողութեամբ էր բոցնում հացահատիկները, բայց ամենևին չէր նպաստում ծառերի, թփերի աճելուն, որովհետև արգելք էր լինում ծառերի արմատներին խոր թափանցելու գետնի մէջ և ամրանալու։ Օդը խստաշունչ էր. թէև շատ ձիւն չէր գալիս, բայց ցուրտը հասնում էր 30 աստիճանի և յաճախակի բուք էր անում, մրրիկ ու փոթորիկ էր բարձրանում։ Փետրուարի վերջերում և Մարտի սկզբներում վերջանում էր ձմեռը և սկսւում էր գարունը, ցուրտ, անախորժ, անձրևային քամոտ և ցեխոտ գարուն. ձիւնները սկսում էին հալուել և կաւախառն հողը փափկելով [համարեա մինչև իւր տակի ամուր

— — —

կութեան ձերոյ ի գաւառին ազովոյ զ՝ատեալ այլոց բնակչացն տալ ձեզ ի շրջանակին ամրոցին սրբոյն Դեմետրեայ ռաստովսկուն...։



շերտը, դառնում էր թանձր հեղուկ. ամեն կողմից մութ, պղտոր ջրերը առուակներ ու գետակներ կազմելով, հոսում էին նեղ, երկայն ձորակների միջով և կարում էին ամեն տեսակ հաղորդակցութիւն։ Ամառը սկսւում էր անակնկալ կերպով, միանդամից. անձրևներին իսկոյն յաջորդում էին տաքն ու խորշակը, որոնք շուտով չորացնում էին դաշտի սեզը և անապատային բնաւորութիւն էր տալիս երկրին. երկիրը շատ տեղ ճաքճքում էր, անտանելի փոշի էր բարձրանում, որ ծառերի և առհասարակ բուսականութեան սակաւութեան պատճառով անտանելի էր անում բնակիչների կեանքը։

Ահա հարաւային Ռուսաստանի այդ ամայի, անշէն անկիւններից մէկն էր գաղթականներին տուած տեղը. նոքա պէտք է մշակէին նորան, շէնցնէին. պէտք է շէնք ու շինութիւններ ձգէին, քաղաք ու գիւղեր շինէին այնտեղ, որտեղ մինչև այդ ժամանակ միայն խաշնարածներն և վրանաբնակներն էին թափառել, որտեղ ձկնորսներն էին իւրեանց խղճուկ տաղաւարները կանգնեցրել. նոքա պէտք է թթենու պարտէզներ տնկէին այնտեղ, որտեղ միայն եղէգն, փուշն ու տատասկն էին բսնում։ որտեղ մինչև այդ ժամանակ միայն բորբասը և խորշակն էին փչում։

Գաղթականները տեսնելով, որ ձմեռուայ պատճառով անկարելի է շինութիւնների ձեռնարկել, որոշում են սպասել գարնան, ուստի և նոցա մի մասը տեղաւորւում է զազախների գիւղերում, միւս մասը Տեմերնիկ գետի վերայ գտնուած գիւղերում, մի մասը Պոլուդենկա կոչուած աւանում, իսկ երրորդ մասը բնակում է ուղղակի բաց դաշտում վրանների տակ։ Դժուար, շատ դժուար է անցնում նոցա համար այդ երեք-չորս ամիսը. աղանդաւոր զազախները թշնամաբար են նայում նորեկների վերայ և ոչ միայն չեն օգնում նոցա, այլ և ամեն տեսակ աշխատում են վնասել. ձիւնը, ցուրտը, քամին սաստիկ նեղում են. վառելիքի դժուարութիւն կար, որովհետև այդտեղի միակ վառելիքը եղէգն ու քակորն էր, դոցա պատրաստութիւնն էլ առհասարակ ձմեռուայ սկզբից էր տեսնւում։ Բայց ժողովուրդը չէ վհատում. նա լի յոյսերով սպասում է գարնան, սպասում է տէրութեան խոստացած օժանդակութեան և սրբազանի օգնութեան։

Մինչ գաղթականներն այսպիսի ցաւով ու դառնութեամբ են անցկացնում առաջին օրերն իւրեանց նոր բնակութեան

տեղում, Պետերբուրգում մեծածախ և չքեղ հանդէսներ են կատարւում։ Յովսէփ արքեպիսկոպոսը Փետրուարի 18-ին մեծ հանդիսով օծում է մայրաքաղաքի Հայոց Նորաշէն եկեղեցին յանուն ս. Կատարինէ կուսին։ Եկեղեցու օծման հանդիսին ներկայ են գտնւում արքունիքի համարեա բոլոր նշանաւոր պալատականները, նախարարները և մեծամեծները։ Սրբազանն այդ առթիւ քարոզ է խօսում և դրուատում թէ եկեղեցին շինող լաղարեաններին և թէ կայսերուհի Եկատերինէին, որ այնքան հովանաւորութիւն էր ցոյց տալիս Հայերին։ Քարոզը նախապէս թարգմանուած է լինում ռուսերէն և բաժանուած հանդիսականներին, որ նոքա հասկանան նորա իմաստը։ Մի օրինակ էլ այդ թարգմանութիւնից յատուկ պատրաստուած է լինում կայսերուհու համար, որ Պատեմկինի ձեռքով մատուցւում է նորան. նա էլ հաճութեամբ ընդունելով, շնորհում է արքեպիսկոպոսին թանկագին քարերով զարդարած պնակէ և պարանոցի խաչ [10]։ Եկեղեցին յանուն ս. Կատարինէ կուսին օծելը մի երախտագիտութեան զգացմունքի արտայայտութիւն էր, որ Լազարեանները և առաջնորդը, իբրև հայ ժողովրդի ներկայացուցիչներ, ցոյց տուին Եկատերինէ կայսերուհուն այն բոլոր բարիքների համար, որ նա մինչև այդ ժամանակները արել էր Հայերի համար և ապագայում ևս խոստանում էր անելու։

Այդ փառաւոր հանդէսներից յետոյ, առաջնորդը պատրաստւում է գնալ գաղթականների մօտ հոգալու նոցա քաղաքի հիմնարկութեան, շինութեան և կառավարութեան գործերը, որովհետև արդէն թէ մարմնաւոր և թէ հոգևոր իշխանութեան կողմից նորան էր յանձնուել գաղթականներին հովուելը։ Այդ մասին արդէն կայսերական հրովարտակ էր հրատարակուել և Պատեմկինի ձեռքով հրաման էր արձակուել Ազովի նահանգի նահանգապետ Զերտկովին, որ նորեկ Հայերը ևս, ինչպէս և Ռուսաստանի բոլոր Հայերը, պէտք է ենթարկուեն Արդութեանի առաջնորդութեան իրաւասութեան [11]։ Ստացուել էր և երջանկայիշատակ Սիմէոն կաթուղիկոսի կոնդակը [12], որով նա պատուիրում և յորդորում էր իւր սիրասուն աշակերտին երթալ գաղթականների բնակութեան տեղը և ստանձնել նոցա խնամելու գործը։ Դորա հետ միասին հոգատար կաթուղիկոսը կոնդակ էր ուղարկել և գաղթականներին և մխիթարել, քաջալերել և յոյս էր տուել իւր հեռու ընկած և թշուառացած հոտի մի մասին, յայտնելով միանգամայն և այն տառապանքների մասին, որոնց այդ ժամանակ

---

[10]) «Ի սմին թուոջ և ի Փետրվարի ԾԸ յաւուր երեքշաբթի օծաք մեծաւ հանդիսիւ Սանկթ Պետերբուրխու եկեղեցին յանուն սուրբ կուսին Կատարինէի եկին ամենայն նախարարքն և յոյժ հաւանեցան ամենայն արարողութեանց մերս սուրբ եկեղեցւոյ և բազում գայթակղութիւնք բարձան։ Ի նոյն աւուր ասացաք զքարոզ Հայերէն. զոր յառաջագոյն թարգմանեալ էին ի բարբառ ռուսաց և տպեալ, որ ի ժամ ասութեան քարոզին, բաժանեցին անդ իշեալ իշխանացն. և զմինն զոր գեղեցիկ կաղմեալ էաք, ետուք վերոյ քնեազ Պոտեմկինին տալ կայսերուհոյն՝ զոր յատուկ շնորհիւ իւրով ընկալեալ, զփոխարէնն ի ձեռն պայծառափայլ քնեազ Գրիգոր Ալէքսանդրովիչ Պոտեմկինին՝ շնորհեալ էր մեզ զպնակէ և զիսաչ պարանոցի. զարդարեալ ակամբ պատուականօք. յոյժ մեծագին»։ («Դաւթար»)։



[11]) «Ի սմին թուոջ և ի մարտի 10։ Պայծառափայլ իշխանն Գրիգոր Ալէքսանդրովիչ Պոտեմկինն, հրամանաւ կայսերական մեծութեան ռուսաց, գրեաց վասն Առաջնորդութեան մերոյ բոլոր երկրիս ռուսաց ազգին հայոց, առ Ազովու զաւառապետ Վասիլ Ալէքսէիչ Զերթկովին» «(Դաւթար)»։

[12]) «Ի սմին թուոջ Մեծ կաթուղիկոսն ամենայն հայոց Սիմէոն և ծայրագոյն պատրիարգն լուսանկար մօրն մերոյ սուրբ Աթոռոյն Էջմիածնի, և յատուկ ծնողն իմ 'ի Քրիստոս գիր յորդորանաց գրէր մեզ, ելանել և գնալ առ տարագրեալ ազգն մեր և մխիթարել զնոսա։ Եւ գրէր նոցա մխիթարութիւն մեծ։ Ի սմին թուոջ և ի յուլիսի Զ. ի տօնի վարդավառին, հանդեալ էր ի Քրիստոս քրտնաջան մշակն և մեծ վաստակաւորն եկեղեցւոյն Քրիստոսի սուրբ հայրապետն Սիմէոն, ծնողն իմ հոգևոր և սուգ մեծ թողեալ ի վերայ բոլոր եկեղեցւոյն և ազգին հայոց։ Եւ ի սմին թուոջ և ի յոգոստոսի 8, ընտրեալ և օծեալ էին ի կաթողիկոսութիւն, զԿարնեցի Ղուկաս սրբազան Արք Եպիսկոպոսն համաստաբարոյ։ Յետին թուղթ օրհնութեան սուրբ հայրապետին հանդուցելոյ և նորապսակի անդրանիկ օրհնութիւնն, յոյժ անագան հասին մեզ, և կսկիծ մեծ ունեցան հասարակ ժողովուրդքն ի վերայ մահուան երջանիկ Հայրապետին, բայց ի յետին չունէին իւր, զետին օրհնութիւն իւր և շնորհաւորութիւն նորոգ քաղաքիս և հնգեքին գիւղօրէիցն գրեալ էր, հանդերձ պէսպէս խրատիւք և օրինակօք։ Ընդ նմին և զկիրս Հայաստան աշխարհին, որք ի յարշաւանէ զօրացն վրաց կրեալ էին և համարեա թէ՝ մեծ մասն երկրին գերեալք» («Դաւթար»)։

ենթարկուել էր Հայաստանը և Մայր-Աթոռը թշնամիների յարձակմունքից։

1780 թուականի Մայիսի 9-ին Յովսէփ արքեպիսկոպոսը Յովհաննէս աղայ Լազարեանի հետ ներկայանում է «Յարսկի Սելօյ» ամարանոցում կայսերուհուն և թագաժառանգին. նա շնորհակալութիւն է մատուցանում իւրեան շնորհած պարգևների համար և մնաս բարեաւի հրաժեշտ տալով, պատրաստութիւն է տեսնում շուտով ճանապարհ ընկելու դէպի Նախիջևան [13]։

Սակայն նա ի նկատի առնելով, որ դեռ ևս մի քանի ժամանակ կարող է ուշանալ, իւր Պետերբուրգից դուրս գալուց առաջ մի թուղթ է գրում Նախիջևանցւոց և կապիտան պարոն Խաչերեսի ձեռքով ուղարկում է նոցա։ Այդ թուղթը, որ մի կոնդակաձև գրութիւն է, պարունակում է իւր մէջ տեղեկութիւններ նոքա մայրաքաղաքում այդքան ուշանալու, կայսերուհուն ներկայանալու և կատարած գործերի մասին և մի քանի կարգադրութիւններ գաղթականների մասին։ Նա Պետերբուրգում իւր այդքան երկար մնալը մեկնում է նորանով, որ կայսերուհին մայրաքաղաքում չէ և ինքը չնայելով իւր ջերմ ցանկութեան շուտով գտնուել գաղթականների մէջ, ստիպուած է սպասել, նամանաւանդ որ Հայոց խնամակալ Պայծառափայլ իշխանը ևս խորհուրդ է տալիս սպասել, ասելով, թէ առաւել բարի լինելոց է քեզ։ Նա այդ միջոցում կարողացել է իւր մի քանի մանր խնդիրները գաղթականների մասին կատարել տալ։ Նա խօսք է առել Պայծառափայլ իշխանից, որ Նախիջևանցւոց շնորհած հողին կից զանուած տեղը մօտ ապագայում նոցա տրուի, իրաւունք է ստացել, որ հանդուցեալ Պետրոս վարդապետին յարքունուստ շնորհած խաչն ընծայուի Նախիջևանցւոց և պահուի նորաշէն քաղաքի եկեղեցիներից մէկում իբրև յաւիտենական լիշատակ Նորին Կայ-

[13]) «Ի սմին թուոջս և ի մայիսի 9, գնացաք առ մեծ կայսերուհին ի Յարսկի Սելօյ և արժանաւորեցաք համբուրել զձեռն և խօսել ընդ նմա, Աղնիւ Աղայ Յովհաննիսիւն։ Եւ ի յունիսի 14. առ ժառանգն Նորին, մեծ իշխան Պաւլ Պետրովիչն գնացաք, որք սիրով ընկալան զմեզ և խօսեցան ի սմին թուոջ և ի նոյեմբերի 14 մտաք մեք ի նորաշէն քաղաքս Նախիջևան մեծաւ հանդիսիւ, զոր արկեալ են ի կաղէթ ազգն ռուստաց, բոլոր հանդէսն եկեղեցական, զոր յառաջ մեր բերին» («Դաւթար»)։



սերական մեծութեան ողորմածութեան, Ազովի հանդգապետի անունով երկու «օրդր» է ձեռք բերել—մէկը, որ ինքն իւր մօտ է պահել անձամբ յանձնելու «գուբէռնաթին», հոգևոր գործերի մասին է, իսկ միւսը, որ ինքն առանձին գրութեամբ կապիտան Խաչերեսի ձեռքով ուղարկում է, գաղթականների մարմնաւոր գործերի մասին է։ Նա Թոխաթցի Տէր Յովհաննէսին և հանդուցեալ Պետրոսի որդի պարոն Մկրտչին կարգում է իրան տեղապահ, վէքիլ կամ գործակալ և պատուիրում է նոցա, որ նոքա ծերունի Սիմէօն աստուածմատաստ վարդապետի հետ միասին «սիրով և հեզութեամբ» կառավարեն ժողովուրդը մինչև իւր գալը և վայելեն այն բոլոր հոգևոր իրաւունքները, որոնք իւրեան են պատկանում. ժողովրդին էլ հրամայում է հնազանդ լինել նորան, ինչպէս իրան և, բացի «հասարակին» և իշխանների իրաւասութեան պատկանած գործերից, ոչ մի հոգևոր գործի ձեռնամուխ չլինեն։ Նա պարտականութիւն է դնում գործակալների վերայ մի հաշուեգիրք պահելու և նորա մէջ ուրոյն ուրոյն նշանակել Ս. Աթոռի և առաջնորդի օգտին եղած բոլոր նուէրները, պարտականութիւն է դնում նոցա վերայ նոյնպէս քահանաների միաբանութեան համար բնակարան պատրաստել, որ նոքա միմեանցից հեռու չընակեն, իւր համար էլ հրամայում է մի թեթև տուն առնել, որ գալուն պէս տեղ ունենայ իջևանելու և այլն [14]։

[14]) Դնում ենք այստեղ առաջնորդի Նախիջևանցւոց ուղղած այդ առաջին թուղթը։ «Սրբոյ Աթոռոյն էջմիածնի, ծայրագոյն նուիրակ և ըռուստաց երկրի եղեալ բոլոր Հայոց ազգին Առաջնորդ նուիրակ Յովսէփ Արքեպիսկոպոս. Յորմէ ժամանեսցի ողջոյն և օրհնութիւն ի վերայ սիրելի և կարօտեալ որդւոցդ մերոց, որք զետեղեալ կայք 'ի տիրապահ նոր քաղաքդ Նախիջևան. վարդապետաց, քահանայից, երից փոխաց, իշխանաց և առհասարակ ժողովրդեանդ ամենից խնդալ 'ի Քրիստոս Յիսուս 'ի լոյսն բնաւից միշտ և հանապազ. Ամէն։ Եւ ընդ Աստուածային օրհնութեանս ծանուցումն լիցի կարօտեալ և սիրելի վշտակիր ժողովրդեանդ մերոյ, զի թէպէտ ցանկամ տեսութեան ձերոյ որպէս ի մեռելոց յարուցելոյ, և լայտ իսկ է ինձ ներկայական հարկաւորութիւն իմ լինել ի միջի ձերում, սակայն իղձն և փափաքն իմ ի ներկայումս ոչ առնու կատարումն, վասն զի՝ որպէս և լուեալ էք կայսերուհին Մեծ. իւրայնովքն գնաց լայլ ուրեք, և մեր խնամակալ պայծառափայլ քնեազն հրամայեց մեզ մնալ մինչև յետ դառնալն մեծ թագուհոյ, խոստանալով թէ՝ առաւել բարի է լինելոց քեզ։ Եւ

## Գլուխ. Գ.

Գաղթականներն օգտուելով գարնան և ամառուայ եղանակներից, այդ միջոցում արդէն ժողովուել էին քաղաքի և գիւղերի շինութեան համար նշանակուած տեղերում և ձեռնարկել էին շինութեան։ Քաղաքին յատկացուել էր, ինչպէս հրովարտակում նշանակուած էր, Նախիջևան անունը, իսկ գիւղերին, որոնց թիւը վեց էր,—այն անունները, որ կրում էին նոցա գիւղերը Ռուսիում՝ Սալա, Սուլթան-Սալա, Նիսուիթայ, Զալթիր և Թոփտի։ Վեցերորդ գիւղը, որի բնակիչների թիւը

---

ի յունիսի 24 ին, գալոց են աստ, վասն որոյ՝ սոյն յուսով սպասեալ մնամք։ Ի ներկայումս ևս՝ քանի մի խնդիրս արարաք վասն ձեր, բոլորն կատարեաց և որդի գրեաց գուբէռնաթին. մինն առ մեզ մնաց, որ հարկաւոր և հաւատոյ բան է և մեք պարտիմք զայն ընդ մեզ բերել և տալ իւրն, իսկ միւսն ահա ընդ մեր սիրելի որդի կապիտան պարոն Խաչերեսին առաքեցաք առ ինքն գրով մերով։ Խնդրեալ էաք ի պայծառափայլ քնեազէն, որ այն խաչն որ մեծ կայսերուէին յուսաւորեալ հոգի Պետրոս վարդապետին էր շնորհեալ, տացէ մեզ, որ մնասցէ ի յեկեղեցիս Նախիջևանու քաղաքիդ, յաւիտենական յիշատակ կայսերական ողորմութեան։ Ահա օրդի գրեաց գուբէռնաթին որ տայ մեզ, և մեք գրեցաք իւրն, տայ մեր որդի կապիտան պարոն Խաչերեսին, բերել և յանձնել ի մէջ իշխանացդ և հասարակ ժողովրդոցդ գործակալացն մերոց, Թօխաթլի տէր Յովհաննէսին և հանգուցեալ Պետրոսի որդի պարոն Մկրտչին, զորս և կարգեմք ի մէջ ձեր՝ ինձ տեղապահ և վէքիլ ընդ ծերունի Սիմէօն ածիմաստ վարդապետին, որ մինչև ցդալն իմ առ ձեզ, ամենայն հոգևոր բանի որ մեզ պատկանի, սոքա լինիցին կառավարիչք և կատարող և առանց սոցա, քահանայք և աշխարհականք մի խառնեսցին ի բանս ինչ, բաց յայնմանէ, որ հասարակին և իշխանացն պատկանին, սիրով ընդունողքն դոցին մեզ են ընդունողք և հնազանդք։ Եւ նորոգ գործակալացդ մերոց պատուիրեմ, զի հեզութեամբ և սիրով լինիջիք կառավարիչք գործոցն ձերոց, մեզ պատկանելոց։ քահանայիցդ և իշխանացդ և հասարակ ժողովրդեանդ պատուիրեմ սիրով ընկալնուլ զդոսա և պատուել ըստ արժանւոյն։ Եւ գործակալքդ ի մէջ ձեր դէֆթար պահեսջիք և զոր ինչ ըստ բերման ժամանակին ուղարկեսջիք։ Աթոռոյն և Առաջնորդիցն, ի նմա գրեսջիք ուրոյն ուրոյն։ Եւ միաբանիցն պատշաճաւոր տեղ և բնակութիւն շինեսջիք առ ի միասին լինիցին. և վասն մեր ևս մէկ թերթ տուն առջիք, մինչև մեք եկեսցուք, յուսամ յԱստուած, որ ամենայն ինչ բարի լինիցի։ Ով ոք գայ յայդի յազգէ ռուսաց, առաջի



շատ սակաւ էր, առանձին գիւղ չէր կազմել, այլ մնացել էր քաղաքի հետ միասին, պահելով իր իրաւունքներն իրան շնորհած հողի վերայ։ Գաղթականները մեծ սիրով և ոգևորութեամբ են ընդունում իւրեանց խնամակալին. բոլոր ժողովուրդը եկեղեցականների և մեծամեծների հետ միասին ընդ առաջ է դուրս գալիս և մեծ պատուով ու յարգանքով առաջնորդում է նորան դէպի քաղաքը, որ դեռ բոլորովին անչէն էր և միայն այստեղ ու այնտեղ բնակութեան ժամանակաւոր տնակներ և խրճիթներ էին երևում։ Առաջնորդը տեսնելով ժողովրդի այդ ոգևորութիւնը, ուրախանում է. նա աշխատում է ամեն տեսակ այդ ոգևորութիւնը վառ պահել նորա մէջ, խրախուսում և միխիթարում է նորան և ճիգ է թափում կարճ միջոցում մոռացնել տալ նորան գաղթելու ժամանակ քաշած նեղութիւնները, տանջանքները։ Նա ինքը սկսում է աշխատել և իւր անձի եռանդուն գործունէութեամբ կենդանի օրինակ է լինում ժողովրդի համար։ Իսկ աշխատելու, գործելու, շինելու համար մեծ ասպարէզ կար։ Ժողովուրդը զբաղուած էր իւր կեանքի առօրեայ յարմարութիւնը կարգաւորելու գործով՝—բնակարաններ էին շինում, ուտելիքի և վառելիքի պաշար էին ժողովում, խանութներ և արհեստանոցներ հաստատելու պատրաստութիւն էին տեսնում։ Բոլոր հոգևոր և եկեղեցական գործերը, պիտոյքները, քաղաքի և գիւղերի կառավարութեան բոլոր գործը ծանրանում էր առաջնորդի վերայ։ Նա պէտք է եկեղեցիներ շինէր, զարդարէր նոցա և եկեղեցական կարգ ու կանոններ սահմանէր. նա կրօնական պահանջներին բաւականութիւն

---

քնեազին գովն զձեզ, և քնեազն մեծ խնամք ունի ի վերայ ձեր։ Ձեր կցեալ տեղոյ յաղագս ևս խնդրեցի, խոստացաւ որ ըստ ժամանակին տալոց է մեզ։ Մինչդեռ աստ եմք, եթէ թեթև խնդիր ինչ ունիք, շուտով խնդրեցէք։ Եւ եթէ յատուկ մարդ իցէք առաքելոց, խաչն ևս ընդ նմա առաքեսջիք, եթէ ոչ՝ մնասցէ։ Կնիքն պատրաստ է որպէս և պարոն Խաչերեսն ասելոց է ձեզ, միայն թագուհին պարտի տեսանել և ապա տալ մեզ, յուսամ որ ընդ մեզ բերցուք։ Մայիսի 3-ին գնացաք առ մեծ թագուհին շնորհիւ մեր քնեազին. և յոյժ ողորմածաբար ընկալաւ զմեզ, որպէս պատմելոց է ձեզ պարոն Խաչերեսն։ Թէպէտ յամենամբ փոքր ինչ, սակայն իմ յետանալն, բոլորն է ի օգուտ ձեզ և քաղաքիդ ձերոյ։ Ողջ երուք շնորհիւ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի։ Ամէն։ Գրեցաւ ի 1780 ամին, և ի մայիսի 14։ Ի Սանկթ-Պետերբուրգ»։

տալու համար, բացի եկեղեցիներից, և մի վանք պէտք է չինէր. նա պէտք է հրովարտակում լիշուած Մագիստրատը հաստատէր, Հայոց դատաստանի կարգ ու կանոնը դնէր. նա պէտք է հոգևոր գործերը կառավարելու համար, Հոգևոր Դատարան քահանայ և հասարակութեան տնտեսական քայքայուած դրութիւնը բարւոքելու հոգսերը հոգար և, վերջապէս, նա պէտք է ժողովրդի կրթութեան գործի վերայ մտածէր, դպրոցներ, ուսումնարաններ հաստատէր։

Նա իւր գալու առաջին ամիսները զբաղուելով ընթացիկ, առօրեայ մանր, բայց անհրաժեշտ գործերով, իւր գլխաւոր գործունէութիւնը սկսում է 1731 թուին Ապրիլին։ Նա, նախ, զատկի տօնին, որ այդ տարին պատահել է Ապրիլի 14-ին, ժողովրդին անմխիթար չթողնելու համար, մի փոքրիկ փայտեայ եկեղեցի է չինում և օծելով նորան յանուն Ամենաօրհնեալ Ս. Կուսին, կոչում է նորան «խնդրակատար Ս. Աստուածածին», որովհետև ինչպէս որ քաղաքը կոչուած էր Հայաստանի առաջին քաղաքի անունով, այնպէս էլ նա ցանկանում էր, որ նորա մէջ չինուած առաջին եկեղեցին ևս կոչուի Հայոց Եդեսիայում չինած առաջին եկեղեցու անունով։ Յետոյ նոյն Ապրիլի 21-ին նա պատարագ է մատուցանում այդ նորաշէն եկեղեցում, քաղաքի հիմնարկութեան համար չորս քար է օծում չորս Աւետարանիչների անունով և նոյն օրը մեռոնթափ անելով, բոլոր հոգևոր դասի հետ, շրջապատուած քաղաքացի և գիւղացի ժողովրդի բազմութեամբ, շրջում է քաղաքի չորս կողմը, օծած քարերը հաստատում է քաղաքի չորս անկիւններում, խաչով, աւետարանով և սրբոց մասունքներով անդաստան է անում, օրհնում է ջուրը, երկիրը, բնակիչները։ Քաղաքի հիմնարկութեան հանդէսն այդպիսի շքեղութեամբ կատարելը երկու նպատակով է լինում՝ մէկ որ զորանով Յովսէփ արքեպիսկոպոսը կամենում է քաղաքը պաշտօնապէս հիմնարկուած և հաստատուած հրատարակել, երկրորդ, շքեղ եկեղեցական հանդէսներով նա կամենում է մխիթարել ժողովրդին, մոռացնել տալ նորա անցրած տխուր օրերը։ «Եղև, ասում է նա այդ մասին իւր ձեռագիր «Դաւթարում», ի մխիթարութիւն բազում, ամենայն սրտից տարակուսելոց։ Եւ մեք ալսու գեղեցիկ արարողութեամբ, կամեցաք մոռացուցանել ի մտաց սոցին զեգիպտական սոխն և զսխտորն որպէս երբեմն Մովսէս իսրայէլացւոցն ի սմին» [15])։ Այնուհետև նա քաղաքի կառավարութեան գործն իւր ձեռքն է առնում, անձամբ սկսում է հսկել քաղաքի և գիւղերի չինութեան վերայ և հաստատում է Մագիստրատը և Հոգևոր դատարանը։ Նա քաղաքի չինութեան համար ընտրելով Դօնի աջ, բարձր ափը, հրամայում է նորա յատակագիծը քառակուսի ձևով կազմել։ Այդ քառակուսի հրապարակի միջից ձգտելով երկարութեամբ և լայնութեամբ լայն և ուղիղ փողոցներ, նա հրամայում է տները կանոնաւոր կերպով չինել փողոցների երկարութեամբ, սկսելով արևմուտքից Դօնի ափի ճիշտ այնտեղից, որտեղ այժմ գտնւում է ս. Նիկողայոս եկեղեցին։ Նա նախօրօք նշանակում է կառուցանելիք եկեղեցիների տեղերը և հետզհետէ հիմնարկում է նոցա, օծելով, նախ, ս. Նիկողայոս և ս. Համբարձումն եկեղեցիների հիմքի քարերը, յետոյ ս. Աստուածածին, ս. Լուսաւորիչ ս. Թորոս և ս. Գէորգ եկեղեցիներինը։ Ղռիմից բերած խաչքարերը նա հրամայում է եկեղեցիների պատերի մէջ դնել։ Եկեղեցիների այդ անունները նա առնում է Քաֆայի, Գեօզլեւի, Բաղչիսարայի և Ղռիմի միւս եկեղեցիներից, որովհետև կամենում է, որ գաղթականները միշտ լիշեն իւրեանց նախկին սրբութիւնները, որոնց լիշատակը մնացել էր նոցա մտքում հաւանականաբար դեռ

---

[15]) «Ի 1781 թուին և յամսեանն յապրիլի. ի Նախիջևան քաղաքումն նախապէս փայտեայ՝ եկեղեցի մի չինեցաք. և ի զատկին, որ էր տօն սուրբ յարութեան Քրիստոսի և յապրիլի 14, օծաք զնա յանուն ամենաօրհնեալ սուրբ Աստուածածնին և անուանեցաք զնա, խնդրակատար սուրբ Աստուածածին. Զի նախկին եկեղեցին աշխարհի, որ կառուցաւ ի լեղեսեայ, այսինքն՝ ի յուրմայ՝ ի Թադէոսէ Առաքելոյ, էր յանուն սուրբ Աստուածածնին։ Ի սոյն թուականս և ի յապրիլի ԻԱ, մատուցաք ի սմին եկեղեցւոջ պատարագ, և օծաք զչորեսին հիմանցաք ի սմին եկեղեցւոջ պատարագ, և օծաք զչորեսին հիմանցաք ի սմին քարինսն քաղաքիս, յանուն չորից սրբոց Աւետարանչացն, և ի նմին օր մեռոնթափ արարաք, և մեծափառ հանդիսիւ և ամենայն ժողովրդովք զդեստաւորեալք ամենայն եկեղեցական պատրաստութեամբ, շրջապատեալ զբոլոր քաղաքաւն, եղաք զհիմունս քաղաքիս ի չորս կողմունս սորին՝ յորդարուխ արտասուօք և բերկրալից ցնծութեամբ. և թափորիւ անդաստան արարեալ օրհնեցաք զհող և զջուր բնակութեանս մերոյ, խաչիւք, Աւետարանօք և սրբոց մասամբք, որք գոյին ի ձեռս քոլոր վարդապետացն և քահանայից» («Դաւթարում»)։

Հայաստանից։ Ս. Լուսաւորիչ եկեղեցին առաջնորդը հիմնարկում է քաղաքի միջավայրի մեծ հրապարակում, որի չորս կողմը քաղաքացիք արդէն սկսել էին խանութներ շինել։ Նա կարգադրում է, որ ապագայում այդ եկեղեցու գաւթում առաջնորդարան շինուի և առաջնորդն այդտեղ նստի։

Երբոր եկեղեցիների շինութիւնը վերջանում է, նա հետզհետէ օծում է նոցա և եկեղեցական սպասաւորներ և պաշտօնեաներ նշանակելով, հրամայում է այնուհետև կանոնաւոր կերպով ժամասացութիւն կատարել։ Իսկ որպէս զի կարողանայ զարդարել եկեղեցիները հարկաւոր սպասներով, ս. պատկերներով, զորգերով, կապերտներով և եկեղեցական զգեստներով, նա բերել է տալիս իւր մօտ Ղռիմի եկեղեցիներից բերած իրեղէնները, որ մինչև այդ ժամանակները մնում էին այն մարդկանց մօտ, որոնք նոցա բերել էին։ Առաջնորդի առաջ բերում են Կաֆայի երաշխաւոր Ս. Աստուածածին վանքի, Ս. Սարգիս, Ս. Ստեփաննոս, Ս. Յովհաննէս, Ս. Քառասունք, ս. Աստուածածին, ս. Օգսենտ, ս. Յակոբ, ս. Նիկողայոս, Ս. Հրեշտակապետ, Ս. Գէորգ, Ս. Խաչ, Ս. Համբարձումն, Ս. Յարութիւն, Ս. Թորոս և Ս. Լուսաւորիչ եկեղեցիների, Բաղչիսարայի Ս. եկեղեցու, Աղ-Մեչիդի եկեղեցիների, Բամանի Ս. Աստուածածնի, Ղարասուի Ս. Փրկչի, Հին Ղռիմի Ս. Փրկիչ և Ս. Խաչ վանքերի, Գեօզլեվի Ս. Նիկողայոս եկեղեցու և Բալուխլուի Ս. Յովհաննէսի իրեղէնները։ Նա կոչում է քաղաքի իշխաններին և նոցա առաջ բանալով արկղները, որոնցից մէկը կնքուած էր հանգուցեալ Սիմէօն վարդապետի կնքով, իսկ միւսը հանգուցեալ Պետրոս վարդապետի, ցուցակագրում է մի առ մի բոլորը։ Իրեղէնները կազմուած են լինում եկեցական պղնձեղէն և արծաթեղէն անօթներից, սրբոց պատկերներից, զորգերից, կապերտներից, կոտրած արծաթեղէններից, զգեստներից և ձեռագիր ու տպագրուած մատեաններից։ Նա այդ իրեղէններից ընտրում է նորերը և նոցանից մի մասը յատկացնում է քաղաքի և գիւղերի նորաշէն եկեղեցիներին, միւս մասն ուղարկում է Մոզդոկի, Ղզլարի և Մոսկուայի եկեղեցիներին, երրորդ մասն էլ Կարապետ վարդապետի ձեռքով նորից ուղարկում է Ղռիմի եկեղեցիներին, որովհետև նոքա գաղթականների դուրս դալուց յետոյ, բոլորովին առանց սպասների էին մնացել։ Հին չապիկները, զորգերը, կապերտները «քիլիմները» նա բաժանում է աղքատներին և



չքաւորներին, որոնք ցրտից անպատսպար լինելով, հիւանդանում ու մեռնում էին։ Կոտրած արծաթեղէնը նա ծախում է և ստացուած փողը գործ է դնում եկեղեցիների պակասութիւնները լրացնելու։ Իսկ ինչ որ վերաբերում է գրչագիր մատեաններին,—նա նոցա խնամքով ժողովում է միասին, ցուցակագրում է և հրամայում է պահել առանձին արկղների մէջ, իբրև թանկագին լիշատակարաններ, Ս. Լուսաւորիչ մայր եկեղեցում, որտեղ պահւում էին և վանքին յատկացրած իրեղէնները, մինչև նորա շինութեան աւարտելը։ Եւ այս բոլոր կարգադրութիւնները նա անում է իշխանների համաձայնութեամբ և խորհրդով, որպէս զի ապագայում ոչ ոք իրաւունք չունենայ ասել, թէ առաջնորդն եկեղեցական իրեղէնները վատնել է կամ իրան է սեփականացրել։

Ղռիմի եկեղեցիներից հաւաքած և նախիջևան բերած իրեղէնների քանակութիւնը, ինչպէս երևում է, աւելի շատ է լինում, քան թէ ստանում է առաջնորդը, բայց և այնպէս նորա ստացածն էլ այնքան շատ է լինում, որ, բացի նորանից, որ նոցանով հոգացում է բոլոր նորաշէն եկեղեցիների ամենակարևոր պէտքերը, հարկաւորութիւնները, այլ և աւելորդ էլ է մնում։ Ահա այդ աւելորդից է լինում, որ նա ընծայ է ուղարկում իւր թեմի ուրիշ հայաբնակ քաղաքների եկեղեցիներին, այդ աւելորդից է լինում և այն հինգ արկղ իրեղէնները, որ նա կնքելով, դնում է Մագիստրատի պահարանը և պահում ապագայի համար։ Պահեստի դրուած արկղները երկար, շատ երկար ժամանակ մնում են պահուած Մագիստրատում։ Վերջապէս, Մանուկ Ալաջալեանի քաղաքագլխութեան օրով վաթսնական թուականներին Մագիստրատի կառավարութեան ցանկութեամբ նոքա տեղափոխում են Ս. Լուսաւորչի պահարանը։ Ուղարկելուց առաջ արկղները բաց են անում Հոգևոր կառավարութեան անդամ Խաչիկ Տէր-Պողոս քահանայի ներկայութեամբ, որպէս զի իմանան, թէ իսկապէս որքան և ինչ իրեղէններ են նոցա մէջ պահուած, և տեսնում են, որ արկղներից մէկին իսպառ դատարկ է, մէկը կոտրած արծաթեղէնով է լցուած, երեքն եկեղեցական անգործադրելի, բայց բաւականին հին և ճարտարարուեստ ձեռքով շինուած անօթեղէն է պարունակում։ Թէ ինչպէս էր պատահել, որ արկղներից մէկը բոլորովին դատարկուել էր,—այդ ոչ ոք չէ կարողանում բացատրել։ Երկար ժամանակի մի-

ջոց էր անցել, բազմաթիւ քաղաքագլուխներ, դատաւորներ և կառավարիչներ էին փոխուել. որ մէկին կարելի էր պատասխանատու համարել։ Բայց որ արկղները բացուած էին և նոցա միջից իրեղէնները հանուած,—այդ անկասկած էր, որովհետև անկարելի է կարծել, որ Յովսէփ արքեպիսկոպոսը դատարկ արկղը փակէրյն դնէր Մագիստրատ պահելու։ Ս. Լուսաւորչում արկղները պահւում են մինչև 1868 թ., երբ երջանկայիշատակ Գէորգ Դ կաթուղիկոսն այցելում է Նախիջևանը։ Նա լսելով, որ շատ հին, նոյն իսկ Յովսէփ արքեպիսկոպոսի ժամանակներից իրեղէններ կան պահուած եկեղեցում, պահանջում է իւր մօտ բերել նոցա, և տեսնելով, որ արժէք ունեցող հնութիւններ են, հրամայում է ուղարկել Ս. Էջմիածին թանգարանի համար [16])։ Իսկ կոտրած արծաթեղէնը դեռ Այվազեան վարդապետն իւր Նախիջևանի և Բասարաբիոյ առաջնորդ եղած ժամանակ հրամայել էր այն ժամանակուայ քաղաքագլուխ Սիմաւոն աղայ Ալաջալեանին գործ դնել մայր եկեղեցու զարդարանքի համար, բայց նա այդ պատուէրը չէր կատարել և տուել էր նախկին քաղաքագլուխ Կարապետ Հայրապետեանին, որ նորից հրամայել էր տանել Մագիստրատ, և յետոյ, ըստ պահանջման Հոգևոր կառավարութեան, յանձնել էր նորան։

[16]) Մագիստրատում պահուած իրեղէնների համառօտ պատմութիւնը մենք գտնում ենք Հոգևոր կառավարութեան 1866 թուի Հոկտեմբերի 3-ին Նախիջևանի քաղաքագլուխ Սաղաթիել Քալալեանցին ուղղած թղթի մէջ։ «Ի հին ժամանակայ հետէ, գրուած է այդ թղթում, ի քլադավօյի քաղաքական դումին քաղաքիս պահպանէին հինգ արկեղք, զորս ի ժամանակի քաղաքագլխոյ Մանուկ աղայի Ալաջալեանց ի ներկայութեան անդամոց կառավարութեանս, Պօղոս քահանայի Խաչեանց, բացեալ գտեալ էին լերիս յայնոցիկ արկեղաց զեկեղեցական անօթս ի մրում անգործածելի արծաթս, իսկ զհինգերորդ արկղն բոլորովին դատարկ, զորս և հանեալ յայնմ ժամանակի ի Տումէն, տարեալ էին վասն պահպանութեան ի Ս. Լուսաւորիչ Աւագ եկեղեցին քաղաքիս։ Բայց ապա ըստ կայգաւորութեան նախկին տեղակալի առաջնորդութեան վիճակիս Գաբրիէլ վարդապետի Այվազեանց այնոքիկ անգործածելի արծաթքն ի միում պարկի յանձնեալ էին քաղաքագլխոյ, Սիմէօն աղայի Ալաջալեանց յաղագս ի գործ ածելոյ զայնս վասն եկեղեցական անօթաց, բայց նա չկարացեալ ի կատար ածել զյանձնարարութիւն նախկին տեղակալ վարդապետին, յանձնեալ է զայնս յիւրմէ կողմանէ նախկին քաղաքագլխոյ Կարապետ աղայի Հայրապետեանց։ Կարգաւորեցին։ Զվերոգրեալս ամենից յայտնելով ձերոյին յարգելապատութեան խոնարհաբար խնդրել զի զվերոյիշեալ պարկն հանդերձ գտանեցեալ ի նմ ն անգործածելի արծաթովք, առաքեսջիք ի հոգևոր կառավարութիւնս, զի սա գրեսցէ զայնոսիկ ի տոմարին յանձնելոյ նորին բարձր սրբազնութենէ կառավարչէ թեմիս ի Տ՚ր Եղիազար Արքեպիսկոպոսէ ի չարս զարդուց և անօթոց եկեղեցեաց»։



## Գլուխ Դ.

Եկեղեցիների շինութեան հետ միասին բաւականին յաջող և արագ կերպով առաջ է գնում և քաղաքի շինութեան գործը, միայն ժամանակի ընթացքում շինութեան յատակագիծը իւր սկզբնական ձևով չէ մնում, այլ մի փոքր փոփոխութեան է ենթարկւում։ Քաղաքը, փոխանակ բոլորովին քառակուսի ձև ընդունելու, սկսում է աւելի երկարել արևելքից դէպի արևմուտք։ Դորա պատճառը լինում է այն հանգամանքը, որ դետափում արդէն շինուած տները չուտով քանդւում և տարւում են ուրիշ տեղեր, իսկ շինուելիք բնակարաններն այլ ևս այնտեղ չեն շինւում, այլ քաղաքի միւս կողմերում։ Մեզ այդ հանգամանքի պատճառները ճիշտ, գրաւոր աղբիւրներից յայտնի չեն։ Այժմ քաղաքի ծերունիներն երկու տեսակ են պատմում։ Ոմանք ասում են, թէ Ղռիմի հովասուն և մաքուր օդին սովոր հայերը չեն կարողանում դիմանալ դետեղրեալ խոնաւ և ճահճոտ օդին և յաճախակի տենդ ու ջերմ են ստանում, հիւանդանում ու մահանում։

Պէտք է առհասարակ նկատել, որ Դոն գետն ամեն տարի գարնանը դուրս է գալիս ափերից և ծածկում է այն հարթ և ցած տարածութիւնը, որ գտնւում է ուղիղ Նախիջևանի դիմաց դէմ։ Գետի լճացած ու ծովացած ջրերն ամբողջ երկու-երեք ամիս ծածկելով գետինը, կազմում են եղէգնուտներ, որ ամառուայ տօթերից նեխուելով, ապականում են օդը, լցնելով շրջակայքը անթիւ, անհամար մոծակներով, մժեղներով, և վնասակար գոլորշիքով։ Ոմանք էլ ասում են, որ այդ հանգամանքն առաջ է եկել ոչ թէ ճահիճներից, այլ այն բազմաթիւ աւազակութիւններից, յափշտակութիւններից և սպանութիւններից, որոնք առաջին անգամները տեղի են ունեցել Նորաշէն քաղաքի հէնց գետափնեայ մասում։ Ճահիճների ազդեցութիւնը, ասում են դոքա, տարածւում է ոչ թէ միայն գե-

տեղրեալ տեղերի վրայ, այլ և մօտակայ բոլոր փողոցների վերայ ևս, ուրեմն եթէ այդ պատճառով բնակիչները տեղափոխուելու լինէին, պէտք է տեղափոխուէին ոչ միայն գետափնեայ բնակիչները, այլ և գետին մօտ գտնուող բոլոր փողոցների բնակիչները։ Դետի ձախակողմեան ափն այն ժամանակ շատ ընդարձակ տարածութեամբ բոլորովին անմարդաբնակ է եղել. նա իւր ամայութեամբ և եղէգնուտներով միշտ ապահով ապաստանարան է եղել ամեն տեսակ արկածախնդիր մարդկանց համար։ Ձմեռը սառոյցների վերայով, իսկ մեւ ժամանակները նաւակներով նոքա միշտ հեշտութեամբ են կարողացել կատարել իւրեանց յարձագործութիւնները գետափում ապրող խաղաղ Հայերի տներում ու ծածուկ մնալ ոստիկանութեան հսկողութիւնից։ Մի քանի այդպիսի դէպքերից և մանաւանդ մի դէպքից յետոյ, երբ մի ամբողջ ընտանիք առաւօտեան սպանուած են գտել իւրեանց բնակարանում, բոլորի աչքը վախ է ընկել. փախչող փախչողի է եղել և գետափնեայ մասը բոլորովին դատարկուել է բնակիչներից։

Քաղաքի այդպէս յաջող և արագ կերպով չէնանալուն նպաստում է գլխաւորապէս Յովսէփ արքեպիսկոպոսը, որ ամեն տեսակ աշխատում է փութով շինել քաղաքը, բնակիչների համար փութով բնակութեան տուն ու տեղ պատրաստել։ Դորանով նա կարճ միջոցում կարողանում է առնել այն մեծ աղքատութեան առաջը, որի մէջ գտնուում էր ժողովուրդը և որ սպառնում էր նորա գոյութեան ապագայում, որովհետև գաղթականներն ապրելու մի անկիւն ունենալով, կամաց-կամաց սկսում են պարապել իւրեանց գործերով և կարողանում են հայթայթել իւրեանց աւուր պարէնը։ Վաճառականները սկսում են իւրեանց սովորական առևտուրն անել քաղաքի հրապարակի չորս կողմը շինած խանութներում, արհեստաւորներն իւրեանց արհեստները բանեցնել։ Այդ դէպքում գիւղացիք քաղաքացիներից բաղդաւոր են լինում, որովհետև նոքա, իբրև երկրագործներ, հէնց գաղթականութեան առաջին տարին սկսում են վար ու ցանք անել և դորանով կարողանում են, գոնէ, իւրեանց ուտելու հացը ձեռք բերել։ Քաղաքացուց դեպքում էր ապրանք բերել, յարմարուել տեղական վաճառականութեան և արհեստագործութեան հանգամանքներին, ընտելանալ շրջակայ բնակիչների վարք ու բարքին, յաճախորդներ ձեռք բերել։



Իսկ գաղթականներն առաջին ժամանակները, ճիշդ որ, մեծ կարօտութեան մէջ են լինում։ Նոքա, իրաւ է, իւրեանց նախկին բնակութեան տեղերում ևս շատ բարեկեցիկ չէն լինում, որովհետև թուրքերի մշտական հալածանքները և նամանաւանդ Ղռիմի թերակղզում նոցա այնտեղից դուրս գալուց առաջ մղուած անվերջ պատերազմները, եղած խռովութիւնները և անկարգութիւնները բոլորովին աղքատացրել էին նոցա, այնպէս որ գաղթելու ժամանակ նոքա պարտքի մէջ են լինում և Ռուսաց տէրութիւնը նոցա պարտքի մի մասը գանձարանից հատուցանելով է միայն կարողանում խանից իրաւունք ստանալ նոցա գաղթեցնելու, բայց ինչ և իցէ նոքա այնտեղ ունենում են սեփականութիւն՝ տուն տեղ, այգիներ, պարտէզներ և ուրիշ անշարժ կալուածներ, որ նոցա մի յայտնի ապահովութիւն էին տալիս։ Գաղթելիս նոքա զրկում են և այդ անշարժ կալուածներից, որովհետև գնող չէ լինում, ծախուածներն էլ չնչին գներով են ծախում, և դուրս են գալիս միայն իւրեանց շարժական ստացուածքն առնելով, որովհետև Ռուսաց տէրութիւնից կարգադրուած է լինում առնել իւրեանց հետ միայն այն, ինչ որ կարելի էր տանել։ Ճիշդ է, նոցա տեղափոխութիւնը կատարւում է արքունի գանձարանից դորա համար նշանակուած գումարով և տէրութեան կողմից հողացողութիւն է լինում սիրով ընդունել ու գաղթականներին և ամեն տեսակ յարմարութիւններ տալու նոցա նոր երկրում, բայց այդ չէ օգնում, որովհետև նոքա դեռ հրովարտակը չստացած դուրս եկած լինելով, ուրեմն և բնակութեան մի յայտնի տեղ չունենալով, ստիպուած են լինում ամբողջ երկու տարի թափառել, որից առաջ է գալիս այն հանգամանքը, որ նոքա կորցնում են և իւրեանց վերջին ունեցածը, այնպէս որ երբ նոքա, վերջապէս, հասնում են իւրեանց բնակութեան տեղը, օրական հացի կարօտ աղքատներ են լինում։ Գաղթականների իւրեանց այդ սարսափելի աղքատութիւնից կամաց-կամաց դուրս գալուն և ոտքի կանգնելուն նպաստում են՝ նախ, իւրեանց սեփական հայկական աչքաբացութիւնը և աշխատասիրութիւնը, երկրորդ, տէրութեան ցոյց տուած օժանդակութիւնը և, երրորդ, Յովսէփ արքեպիսկոպոսի օրինակելի եռանդն ու գործունէութիւնը։

Հայ ժողովուրդն իւր գոյութեան սկզբից մինչև վերջը մի լաւ օր չէ տեսել. նա իւր թէ անկախութեան և թէ դերու-

թեան ժամանակ միշտ նեղութեան, վշտի և տրտմութեան մէջ է անցկացրել իւր օրերը, իւր կեանքը։ Հայոց թագաւորութեան ժամանակ նա չարչարուել ու տանջուել է ազնուական դասակարգի ձեռքին, իւր քրտինքի աշխատանքով, վաստակով կերակրելով բազմաթիւ նախարարութիւնը, իսկ օտարների իշխանութեան ժամանակ նեղուել, տառապել է նոցա ձեռքին իբրև հպատակ, գերի և ստրուկ ժողովուրդ։ Պատմութեան այդ թշուառ հանգամանքները մաշելով հայերի կեանքը, բարոյապէս ճնշելով, ընկճելով նորան, նուազեցնելով նորա թիւը և նիւթականապէս աղքատացնելով նորան, ունեցել են սակայն և մի լաւ կողմ նորա համար։ Նոքա նորան սովորեցրել են համբերող լինել և ամեն տեսակ նեղութիւնների դիմանալու ընդունակութիւն են տուել նորան։ Մշտական չարքաշ կեանքից նոքա ամրապնդուել են, նոցա մէջ կազմակերպուել է ամեն դժուարութիւնների դէմ մաքառելու ընդունակութիւն, յամառութեամբ իւր գոյութիւնն աշխարհիս երեսին պահպանելու յատկութիւն, որի հետևանքն է անկասկած և նոցա աշքաբացութիւնը և օրինակելի աշխատասիրութիւնը։ Նախիջևանի գաղթականները հայութեան փոքրիկ հատուածներից մէկը լինելով, բոլորովին անմասն չեն եղել ընդհանուրի այդ լաւ յատկութիւններից։ Նոքա կարողացել են թաթարմոնղոլների անասելի բռնութիւններին դիմանալ, և միաւժամանակ ապրելով նոցա հիմնած մեծ խանութեան սահմաններում՝ Հաշտարխանի և Ղազանի մէջ գտնուած «Ախտարայ» կոչուած տեղում, դեռ այնքան զօրութիւն են ունեցել, որ զէնքի զօրութեամբ պատերազմելով նոցա հետ, կարողացել են յաղթանակով դուրս գալ նոցա միջից և բնակութիւն հաստատել Ղռիմի թերակղզում Ջանովացւոց իշխանութեան ներքոյ՝ նոքա Ջանովացւոց իշխանութեան տակ գտնուած Ղռիմի անապատ և անշէն տեղերը շէնացրել, ծաղկեցրել են և ինքնանք այն աստիճանի բարօրութեան են հասել, որ Եւրոպացի տեղացիների հետ, ըստ ամենայնի, հաւասար իրաւունքներ են վայելել թէ զինուորական թէ քաղաքացիական և թէ մտաւոր կեանքում. նոքա կարողացել են նեցուկ լինել Ջանովաւի խախուտ իշխանութեանն, երբ դէպք է եղել, իրեանց սեպհական արիւնով պաշտպանել են իրեանց այդ նոր հայրենիքը Թաթարներից ու Չաճիկներից. նոքա, երբ բոլոր Ղռիմն ընկել է Թաթարների և Ցաճիկների ձեռքը, կարողացել



են պաշտպանել իրեանց գոյութիւնն անհաւասար պատերազմում և յարգելի են եղել մահմեդական բռնակալների աչքին։ Իսկ երբ սկսել է Ռուսաց քաղաքական յարաբերութիւնը Ղռիմի հետ, նոքա այնքան քաջութիւն են ունեցել, որ, ահաւոր բռնակալների աչքի առաջ, հոգւով, սրտով անցել են բարեխնամ քրիստոնեայ տէրութեան կողմը և ամեն տեսակ նպաստել են խաչի յաղթանակին լուսնի վերայ։ Ահա մի այդպիսի ժողովուրդ քրիստոնեայ, բարեգութ տէրութեան իշխանութեան ներքոյ անկասկած երկար ժամանակ չպէտք է խարխափէր չքաւորութեան և աղքատութեան ճիրաններում. նա պէտք է անշուշտ չուտով դուրս գար իւր խեղճ դրութիւնից, պէտք է մի յայտնի աստիճանի ծաղկած դրութեան հասնէր և չէնցնէր այն երկիրը, որ չնորհուած էր նորան բնակութեան համար։ Տէրութիւնը օժանդակում է ժողովրդին, արքունի գանձարանից հոգալով նորա գաղթականութեան ծախսերը, տաս տարի չարունակ ազատ պահելով նոյան զանազան պարտականութիւններից և հարկատուութիւնից, տաս տարի չարունակ աղքատների ամենակարեոր պիտոյքը հոգալով և գիւղացիներին սերմացու բաժանելով և անասուններ տալով ապագայում վերադարձնելու պայմանով և, վերջապէս, ձրիապէս բոլորին շինութիւնների համար քար, փայտ և զանազան նիւթեր մատակարարելով։

Ժողովրդի աղքատութիւնից դուրս գալուն, բացի իւր աչքաբացութիւնից, աշխատասիրութիւնից և տէրութեան ցոյց տուած օժանդակութիւնից, ոչ սակաւ նպաստում է, վերջապէս, և Յովսէփ արքեպիսկոպոսը։ Նա չէ խնայում գործ դնելու նորա օգտին իւր հեղինակութիւնը, իբրև բարձր հոգևորական անձն և վիճակաւոր առաջնորդ, իւր սեփական արդիւնքի միջոցները, իւր արքունիքում և կայսերուհու մօտ ունեցած ազդեցութիւնը, նշանակութիւնը, իւր անձնական ծանօթութիւնն երկրի կառավարիչների հետ, իւր մտերմութիւնն իշխան Պատեմկինի և ուրիշ մեծամեծների հետ, իւր սեփական ճիգն ու աշխատութիւնը, իւր մտաւոր և բարոյական կարողութիւնները։ Նորա ձեռքով են պատգամաւորները ստանում արտօնութիւնների հրովարտակը, որով հաստատ բնակութեան տեղ է որոշւում գաղթականների համար և վերջ դրւում նոցա կարոտաբեր թափառականութեան. նորա միջնորդութեամբ են նոքա ընդունում տէրութեան նշանակած օժանդակութիւնը

թիւնները, որոնք միջոց են տալիս նոցա հեշտութեան բնակարաններ շինելու, իւրեանց ամենաանհրաժեշտ պիտոյքները հոգալու, վարուցանք անելու և այդպիսով առաջին ժամանակներն իւրեանց գոյութիւնը պահպանելու. Նորա բարեխօսութեամբ են չափւում նոցա չնորհուած հողերը, որոշւում նոցա սահմանները, որով և առնւում է այն բազմաթիւ վէճերի, անբաւականութիւնների առաջը, որոնք առաջին նուազ տեղի են ունենում գաղթականների և դրացի զինուոր գիւղացիների մէջ հողերի սահմանների անորոշութեան պատճառով. Նորա անձնական բարեխօսութեամբ է, որ իշխան Պատեմկինը միջնորդում է կայսերուհու առաջ աւելացնելու գաղթականներին չնորհած հողերի քանակութիւնը և բաշխելու տաս տարուայ ընթացքում գաղթականների վերայ ապաւիկ մնացած անգին գումարը, որով ժողովուրդը մի կողմից մի նոր հարստութեան աղբիւր է ձեռք բերում, միւս կողմից շատ թեթեւանում է պարտքերից Նորա անձնական աշխատանքով, շատ անգամ և սեփական արդիւնքով են շինւում եկեղեցիները, վանքը. Նորա հսկողութեամբ է կազմակերպւում և գործում Մագիստրատը, հաստատւում Հոգևոր դատարանը և գրւում Նորա կանոնադրութիւնը. Նորա հեռատեսութեամբ է լինում, որ երջանկայիշատակ Եկատերինէ կայսերուհու մահից յետոյ, Նորապսակ Պօղոս կայսրից իսկոյն վերահաստատւում է արտօնութիւնների հրովարտակը, որով և առնւում է պէս-պէս պատահմունքների առաջը. Վերջապէս, Նորա ազդեցութեամբ է լինում գլխաւորապէս, որ անխախտ կերպով իրագործւում են հրովարտակի յօդուածները, որովհետև տեղական իշխանութիւնը ի նկատի չառնելով Հայերին չնորհած արտօնութիւնները, յաճախակի այնպիսի պահանջներ էր անում նոցանից, այնպիսի հարկեր ու պարտականութիւններ էր դնում նոցա վերայ, որոնք բոլորովին հակառակ էին նոցա չնորհած կայսերական հրովարտակի և՛ մտքին և՛ բովանդակութեանը.

Նա տեղական իշխանութեան այդ ապօրինի պահանջները մէկ անգամ ընդ միշտ կարճելու և բարձրագոյն չնորհած հրովարտակի զօրութիւնը նոցա հասկացնելու համար, 1798 թուին դիմում է բարձրագոյն իշխանութեան և վեց առանձին յօդուածների մէջ ամփոփելով բոլոր մինչև այդ ժամանակ եղած ապօրինի պահանջները, խնդրում է հրամայել վերջացնել նոցա։ Այդ բողոքը և նորա մէջ լիշուած յօդուածները, որի



առթիւ փոխանակուած գրագրութիւնները մինչև ցայսօր դեռ պահպանւում են, շատ հետաքրքիր են, որովհետև ցոյց են տալիս, նախ, թէ տեղական իշխանութիւնը չիմանալով, չհասկանալով կամ չկամենալով հասկանալ բարձրագոյն իշխանութեան կամքը, ինչպիսի անտեղի և ապօրինի կարգադրութիւններ էր անում Հայերի վերաբերութեամբ և, երկրորդ, թէ ինչպէս կարող էին տուժել խեղճ գաղթականները, եթէ չունենային Յովսէփ սրբազանի պէս արթուն հովիւ, հզօր տէր և խնամակալ։ Ծերակոյտը ստանալով առաջնորդի բողոքագիրը և քննելով Նորա մէջ եղած փաստերը ու համեմատելով նոցա գաղթականներին չնորհած արտօնութիւնների հետ, հրամայում է Նովորոսսիյ նահանգական կառավարութեան՝ ա.) Զրաժանել Նախիջևանի հայ գիւղերը քաղաքի կառավարութիւնից և չենթարկել նոցա Ռաստովի գաւառանի իրաւասութեան (Ростовскій нижній земскій судъ), ինչպէս որ կարգադրել էր արքունի պալատը, այլ թողնել նոցա Նախիջևանի հայկական Մագիստրատի կառավարութեան և իրաւասութեան ներքոյ. բ) Քաղաքից և գիւղերից Ս. Դեմետրի ամրոցի համար եղէգն չպահանջել, չառնել զինուորական հիւանդանոցների համար քաղաքացիներից տաս-տաս կոպէկ, գիւղացիներից հինգ-հինգ կոպէկ հարկը, որ նշանակել և առնում էր տեղական իշխանութիւնը, զինուորներ չբնակեցնել Հայերի տներում և չբանեցնել նոցա զօրանոցներ-շինելու ժամանակ. գ) Նահանգական կառավարութիւնն իրաւունք չունի պահանջելու և ստիպելու, որ Հայերն իւրեանց պատկանած հողի վերայ փոստի երթևեկութիւն հաստատեն և նորա ծախսերը հոգան. դ) Արքունի պալատն իրաւունք չունի Հայերից, բացի հոգալին հարկից, որ նոքա հատուցանումեն, և գլխահարկ առնել. ե) Զօրագնդի և թնդանօթների համար Հայերը պարտական չեն տասներեքական կոպէկ հարկ տալու. զ.) Բարձրագոյն հրովարտակով Հայերին չնորհած հողերին ոչ ոք իրաւունք ունի կպչել։ Թէ Հայերին չնորհած հողերին ոչ ոք իրաւունք ունի կպչել։ Թէ ինչպէս կարող էին տուժել խեղճ գաղթականները, եթէ չունենային Յովսէփ սրբազանի պէս արթուն հովիւ, հզօր տէր և խնամակալ։ Ծերակոյտը ստանալով առաջնորդի բողոքագիրը և քննելով Նորա մէջ եղած փաստերը ու համեմատելով նոցա գաղթականներին չնորհած արտօնութիւնների հետ, հրամայում է Նովորոսսիյ նահանգական կառավարութեան՝ ա.) Զրաժանել Նախիջևանի հայ գիւղերը քաղաքի կառավարութիւնից և չենթարկել նոցա Ռաստովի գաւառանի իրաւասութեան (Ростовскій нижній земскій судъ), ինչպէս որ կարգադրել էր արքունի պալատը, այլ թողնել նոցա Նախիջևանի հայկական Մագիստրատի կառավարութեան և իրաւասութեան ներքոյ. բ) Քաղաքից և գիւղերից Ս. Դեմետրի ամրոցի համար եղէգն չպահանջել, չառնել զինուորական հիւանդանոցների համար քաղաքացիներից տաս-տաս կոպէկ, գիւղացիներից հինգ-հինգ կոպէկ հարկը, որ նշանակել և առնում էր տեղական իշխանութիւնը, զինուորներ չբնակեցնել Հայերի տներում և չբանեցնել նոցա զօրանոցներ-շինելու ժամանակ. գ) Նահանգական կառավարութիւնն իրաւունք չունի պահանջելու և ստիպելու, որ Հայերն իւրեանց պատկանած հողի վերայ փոստի երթևեկութիւն հաստատեն և նորա ծախսերը հոգան. դ) Արքունի պալատն իրաւունք չունի Հայերից, բացի հոգալին հարկից, որ նոքա հատուցանումեն, և գլխահարկ առնել. ե) Զօրագնդի և թնդանօթների համար Հայերը պարտական չեն տասներեքական կոպէկ հարկ տալու. զ.) Բարձրագոյն հրովարտակով Հայերին չնորհած հողերին ոչ ոք իրաւունք ունի կպչել։ Թէ

գիստրատի և քաղաքագլխի բերանով նորից բողոքում է բարձրագոյն իշխանութեան, միայն մասամբ բաւականութիւն է տրւում նոցա, այն էլ գործը բաւականին ժամանակ ձգձգելուց յետոյ։ Նոցա այդ անգամ արդէն վճռական կերպով հակացնում են, որ թէև նոցա շնորհած արտօնութիւնների մէջ որոշուած են տրուելիք հարկերը, բայց կան այնպիսի բաներ, որ թէև հրովարտակում չեն լիշուած, ինչպէս, օրինակի համար ճանապարհներ չինելը, կամուրջներ չինելն և պահպանելը, բայց անշուշտ հարկաւոր են և առանց նոցա Նախիջևանի հասարակութիւնը գոյութիւն ունենալ չէ կարող, ուստի և Հայերը պարտական են առանց հակաճառելու ընդունելու նոցա։

Բացի վերոյիշեալ բոլոր միջոցներից, որ Յովսէփ արքեպիսկոպոսը գործ է դնում դաղթականներին նպաստելու դիտաւորութեամբ, նա նոցա դրամական օժանդակութիւն հասցնելու նպատակով դիմում է և մի ուրիշ միջոցի. նա նամակներ է գրում այն ժամանակուայ հարուստ Հայերին, յայտնում է նոցա դաղթականների խղճալի դրութիւնը և խնդրում է օգնել նոցա։ Սրբազանի այդ թղթակցութիւններն անհետևանք չեն մնում։ Հնդկաստանում ապրող Զուղայեցի Յոհաննէս Դէրաքեան ազան 1790 թուին մի որոշեալ գումար է յատկացնում Նախիջևանում Ս. Լուսաւորչի անունով մի դպրոց հաստատելու համար. Համադանցի Մառքի Բաբաջանեանը 1794 թուականի Մայիսի 31-ին գրած կտակով թողնում է 31 հազար 250 ռուբլու արժէք ունեցող անշարժ կալուածք Նախիջևանում դպրոց, որբանոց, աղքատանոց և անկելանոց պահելու պայմանով. Կեսարացի Եղիա մահտեսի Յակոբեանը 1799 թուի Մայիսի 9-ին գրած կտակով թողնում է Նախիջևանի դպրոցներին 3,125 ռ. արժ. (5000 սիալ ռուփի). կալկաթացի Խոջամալեան տիկինը նոյն նպատակով կտակում է 1461 ռուբլի, Սարգիս Ծատուրը կտակում է 80 հազար հուն (200 հազար ռուբլի) Նախիջևանի դպրոցներին և տպարանին։

Վերջապէս Հնդկաստանցիք լսելով դաղթականների օգտին նուիրատուութիւններ ժողովելու համար Նախիջևանից Հնդկաստան գնացած քահանաներից մէկի յորդորներին, իւրեանց մէջ ժողովում են շատ «Հնդու ապրանք»՝ բամբակեայ, բրդեայ և մետաքսեայ թանկագին կտորեղէններ և ուղարկում են Նախիջևան դաղթականների առաջին և ամենահրաժեշտ պիտոյքը հոգալու համար։ Բայց դժբաղդաբար այդ կտակներից



և նուիրատուութիւններից մի քանիսը, ժամանակին նոցա տիրութիւն անող չլինելու պատճառով, ամենևին չեն ստացւում, ինչպէս Յակովբեանինը և Ծատուրինը, մի քանիսն էլ շատ ուշ են ստացւում, ինչպէս Խոջամալեանինը, Բաբաջանինը և «Հնդու ապրանքը»։ Մասնաւորապէս Հնդու ապրանքի ուշ ստացուելու պատճառը լինում է այն հանգամանքը, որ ճանապարհին այդ ապրանքի արկղները բռնւում են տէրութեան մաքսատանը։ Սկսում է մի երկար գրագրութիւն Յովսէփ արքեպիսկոպոսի և տէրութեան մէջ, գործի քննութիւնը լանձնւում է մի առանձին լանձնաժողովի և, վերջի վերջոյ, խընդիրը պարզւում է և, սրբազանի կայսեր ներկայացրած խնդրի հիման վերայ, թոյլատրութիւն է ստացւում արկղները, առանց նշանակուած մաքսը վճարելու, տէրութեան սահմաններից անցկացնել իբրև բարեգործական նպատակով ուղարկուած իրեղէններ։ Բայց դորանից յետոյ էլ դեռ արկղները շուտով չեն հասնում Նախիջևան, որովհետև, նախ այդ ժամանակ դաղթականները արդէն շատ էլ կարօտութիւն չեն ունենում այդ ապրանքին, երկրորդ, ինքը Յովսէփ սրբազանն էլ զբաղուած լինելով Գրիգորուպոլի հիմնարկութեան գործով, միջոց չէ ունենում ապրանքը վաճառելու և փողը Նախիջևանցւոց հասցնելու։ Արկղները մնում են Գրիգորուպոլում լանձնաժողովի հակողութեան ներքոյ մինչև Ռուսաստանի Հայոց երկրորդ առաջնորդ Եփրեմը, որի հրամանով, վերջապէս, արկղները տարւում են Ղռիմ և ապրանքը ի վաճառ է հանւում։ Սակայն լանձնաժողովի գնահատութեամբ նշանակուած գների թանգութեան պատճառով անհնարին է լինում ծախել նոցա Ղռիմում, ուստի և առաջնորդը ստիպուած է լինում 1809 թուի Մարտի 22-ին գրած առանձին թղթով լանձնել նոցա Նախիջևանցւոց, հրամայելով վաճառել նոցա և գոյացած փողը, որ գնահատութեան հաշուով պէտք է անէր 16 հազար 8 հարիւր 28 ռուբլի և գնել քաղաքի արկղը չահաւէտ գործածութեան համար։ Բայց, ինչպէս գործից երևում է, նախ, լանձնաժողովը բոլոր ապրանքը այդ ժամանակ չէ լանձնում Նախիջևանցւոց, այլ միայն մի մասը, երկրորդ, արկղները լանձնաժողովի հրամանի ներքոյ դրուելուց առաջ էլ բացուած են լինում և ապրանքի մի մասն էլ Բեսսարաբիոյ Գրիգոր վարդապետի ձեռքով վաճառուած է լինում։ Այդ իսկ պատճառով Եփրեմ սրբազանը դիմում է տէրութեան և խնդրում է, որ հրաման

լինի յանձնաժողովին յանձնել իրան ապրանքի մնացեալ 900 կտորը և դորա հետ միասին և այն 25 հազար ռուբլին, որ տէրութիւնը տուել էր Ցովսէփ սրբազանին Գրիգորուպոլում Հայոց եկեղեցի և վանք շինելու համար, բայց այդ նպատակի համար չէր գործադրուել։ Սրբազանի այդ խնդրի պատասխանը ստացուում է 1809 թուի սեպտեմբերի 31-ին, երբ արդէն նա ընտրուած լինելով կաթուղիկոս, պատրաստուում է ճանապարհ ընկնել Պետերբուրգից և Նախիջևանի վերայով գնալ Ս. Էջմիածին։ Այդ պատճառով էլ նա բոլոր գործը յանձնում է Գրիգորուպոլի յաջորդ Մանուէլ վարդապետին, տեղեկացնում է այդ մասին Քերսոնի և Տաւրիկեան նահանգների զինուորական նահանգապետ Էմմանուէլ Օսիպովիչ Դիւկ-դէ-բրիչիլեոլին և ինքը ստանալով իւր հաստատութեան «զրամատը», ճանապարհ է դուրս գալիս։ «Ի 11 նոյեմբերի, գրում է նա այդ մասին Պետերբուրգից Նախիջևանց։ոց, գրեալ եմք բարեկարգ Մաղիստրթիդ՝ եթէ վասն հնոու ապրանաց զինչ ունի վճռեալ ինՀստրանին կալէզն։ Թէպէտ և ի նմին խոստացեալ էաք զնորին վճռոց օրինակն հանդերձ հաւերէն թարգմանութեամբ յղել, ի զանազան զբաղանս գոլով՝ հաղիւ թէ այժմ ձեռնհաս եղաք յղել զնոսին ի սմին։ Եւ մեք ևս ահա գլխովին ի վերայ ճանապարհորդութեան գոլով, և հանդերձելով յայս քանի աւուրս ելանել աստի, առաքեմք զՄանուել վարդապետն ի Գրիգորեպոլ, և պայծառ դուքին ևս ունիմք գրել զթուղթ վասն իրացս, և ի ստանալն մեր ի նմանէ զպատասխանին, տեսեալ թէ զինչ պարտէ մեզ գրել, և ձեզ առնել, գրելոց եմք»։ Տէրութիւնը երջանկայիշատակ վեհափառի պահանջն իրաւացի համարելով, որոշել էր վաճառուած ապրանքի պատասխանատուութիւնը ձգել Գրիգոր եպիսկոպոսի վերայ, իրաւունք էր տուել դատարանով պահանջել Ցովսէփ սրբազանի ժառանգներից 25 հազար ռուբլին և մնացեալ ապրանքը հրամայել էր յանձնել կամ վեհափառին, կամ Գրիգորուպոլի վերակացուներին և կամ Նախիջևանցոց։ Մանուէլ վարդապետը կաթուղիկոսին Նախիջևանից ճանապարհ ձգելուց յետոյ, գնում է իւր յաջորդութեան տեղը և ձեռնարկում է կաթուղիկոսի յանձնարարութիւնը և «ինՀստրանին կալէգից» ստացուած որոշումը ի կատար ածելու։ Բայց տեսնելով, որ գործը շատ խճճուած է և դատավարութիւնը մեծ աշխատանք է պահանջում, հրաժարւում է այդ գործից, պատճառ բերելով, թէ



անվայել է հոգևորականներին «այդպիսի մանրաքննին դատաստանք և հաշուապահանջութիւնք»։ «Որ ինչ հարկաւորքն էին գիտելիք առ ձեզ վասն հաշուապահանջութեան և հնոու ապրանաց, գրում է նա այդ մասին 1810 թուի Յունուարի 2-ին Նախիջևանցոց, զայն ամենայն սրբազնակատար վեհապետ տէրս մեր՝ հանդերձ կոբեալիք լիովին ծանուցեալ է յարգութեան ձերում, միայն մնայ ինձ յայտնել աստանօր զապառնի հոգացողութիւն, ըստ որում ինՀստրանի կալէկն առաջարկեալ է պայծառ դիւքին, մնացեալ պահանջողութիւն ի Գրիգոր վարդապետէ՝ և ի քնեալ Արդութեանցն ֆորմի սուտով հարցանել՝ և զկայս նոցին պոդ արկղդ առնել։ Արդ յայտ է գերապատուութեան ձերում, թէ այդպիսի մանրաքննին դատաստանք և հաշուապահանջութիւնք ոչ վայել են մեզ հոգևորականաց՝ ուստի ես ինքս հաստատապէս՝ զհրաժարիլն իմ յայդմանէ առաջարկեալ եմ՝ սրբազնակատար վեհապետ տեառնս՝ որ ի սկզբանն թէ նորին սրբազնութենէ և թէ ի Քրիստոս հանգուցեալ Աղայ Մրնասի հրամանաւն՝ ձեռնամուխ եղէալ էի, որոց մինն վախճանեալ՝ և միւսն հեռացեալ գնալ՝ և գործդ այդ ի զանազան զբաղանս գոլով՝ զով ունիմ կամիք յատկացուսջիք լինել հետեւոզ գործոյդ այդմիկ՝ և որ ինչ հարկաւոր գրութիւնք կան առ իս՝ ի գրելն ձեր մեզ՝ ունիմք յանձնել նմա» [17])։

---

[17]) Թէ այնուհետև ինչ վախճան է ունենում այդ գործը, —մեզ յայտնի չէ, որովհետև ոչ ձեռքում գտնուած գրագրութիւնը այդ մասին միանգամայն լռութիւն են պահպանում։ Եւ առհասարակ «Հնդու ապրանքի» հանգամանքները շատ մութն են. յայտնի չէ, թէ ի սկզբանէ ընդամենը որքան ապրանք է եղել, ինչու համար յանձնաժողովը ապրանքի մի մասը չէ յանձնել Նախիջևանցոց, ծախել են արդեօք Նախիջևանցիք իւրեանց ստացած ապրանքի մասը, որքան փող է գոյացել և ինչի վերայ է ծախսուել այդ փողը, Նախիջևանի քաղաքագլուխը և դատաւորները արդեօք ընդունել են Մանուէլ վարդապետի առաջարկութիւնը, թէ ոչ և այլն։ Աւելորդ չենք համարում դնել այստեղ «ինՀստրանի կալէգից» ստացած թղթի պատճէնը, որ մասամբ պարզաբանում է այդ խնդիրը։

«Եղեալն ի վերայ ընակելոց ի ռուսաստան հայոց Արք եպիսկոպոսն Եփրեմ, որ այժմ բարձրագոյն հրամանաւ հաստատեալ է յարժանաւորութիւն պատրիարգութեան Էջմիածնի յայտարարութեամբն իւրով առ թագաւորական ինՀստրանի

Ահա այս երեք նպաստեցուցիչ հանգամանքների շնորհիւ իւրեանց աչքաբացութեամբ և ջանասիրութեամբ, տէրութեան ցոյց տուած օգնութեամբ և Յովսէփ արքեպիսկոպոսի գործակցութեամբ գաղթականները վերջ ի վերջոյ կարողանում են վերացնել իւրեանց առաջ եղած արգելքները և յաղթող հանդիսանալ իւրեանց շրջապատող բոլոր աննպաստ հանգամանքների վերայ։ Համեմատաբար կարճ միջոցում այնպէս շինւում ու ընդարձակւում է քաղաքը, այնպէս չէնանում ու բարեկարգւում են գիւղերը, որ նոքա ամեն բանով թէ շինութիւնների ընդարձակութեամբ ու գեղեցկութեամբ և թէ դաշտերի լաւ մշակութեամբ սկսում են զանազանուել բոլոր շրջակայքում

---

գործոց կալէկն 19 անցեալ Օգոստոսի առաջարկեաց զի հաստատեալն ըստ բարձրագոյն նորին կայսերական Մեծութեան հրամանի ի քաղաքն Գրիգորիապօլ գոմիսան վասն վերահասութեան հայոց պահանջողութեան համարելով զառաքեալն առ հանգուցեալ Յովսէփ պատրիարգն ի Հնդկաստանի հայոց հասարակութեան վասն օգտակար առաջարկութեանց յաղագս նոցին մ ահաւասիկ բնակելոցն ի Ռուսաստան ապրանքն և փոխն իբրև անձնական կալք նոյն պատրիարգին ոչ տալ զմնացեալ ապրանքն 900 կտորն, ոչ նմա պատրիարգին Եփրեմի, և ոչ վերակացուաց Գրիգորիապօլու և Նախիջևանու հայոց վասն նախանշանակեալ գործառնութեանց առաջարկելով յապացուցութիւն զ25 հազար ռուպլին որք շնորհեցեալ են ի հանգուցեալ կայսերէ վասն կառուցանելոյ ի Գրիգորիապօլ զԱւագ եկեղեցի, և զվանք, և որք իբր թէ չիշեալ պատրիարգաւ Յովսէփայ գործածեցուցեալ են յոր պիտանաւորութեան, որ արք եպիսկոպոսն Գրիգոր վասն պակասեալ նոյն ապրանաց յորքանութենէն, նմանապէս և առ ձեռն բերեալ ի վաճառեալ ապրանաց դրամոց մինչև ցայժմ ոչ տալ զհայիւն հեռացուցանելով զինքն յայնմանէ զանազան կերպիւ, և խնդրէ նախ զի մնացեալ ի նոյն ապրանաց 900 կտորն տրեցեալ լիցին ինքեան պատրիարգին կամ վերակացուացն Գրիգորիապօլու և Նախիջևանի հայոց յաղագս նախանշանակեալ գործոց, երկրորդ զի արք եպիսկոպոսն Գրիգոր վասն պակասեալ քանակութեան նոյն ապրանաց նմանապէս և վասն ի ձեռս բերեալ ծախեալ ապրանաց փոխն պատկանեալ ճշմարիտ հաշիւն, և երրորդ զի ի չիշեալ ժառանգաց պատրիարգին քնեազ Արղութեանց երկայնաբազուկի կամ ի նոյն արք եպիսկոպոս Գրիգորէ պահանջեալ լիցի 25 հազար ռուպլին, որ շնորհեցեալ էր վասն կառուցմանց եկեղեցոյ և վանքի օրինաւոր տոկոսիւքն յորմէ լինելութեան վասն այմ բարձրագոյն ուքազին և նախ քան զայն ժամանակն ալգիլումն գնել ի վերայ կալից նոյն ժառանգաց հանգուցեալ պատրիարգին կամ ի վե-



եղածներից։ Նախիջևանը իւր գիւղերով կարճ միջոցում դառնում է մի օվասիս լայնատարած և անչէն անապատի մէջ։ Հայ գիւղացիք շուտով ձեռք են բերում լուրջ, գործ հասկացող և հմուտ երկրագործների հռչակ։ Նոցա արդիւնաբերած ցորենը և միւս հացաբոյսերը անուն են ստանում և աւելի թանգ են գնահատւում, քան թէ բոլոր շրջակայքինը։ Հայ քաղաքացիք հմուտ և ճարպիկ վաճառականներ են դառնում։ Նոքա մի կողմից առևտրական յարաբերութիւն են կապում հարաւային Ռուսաստանի վաճառական կենդրոնների հետ, միւս

---

բայ անձնական կալից լիշեալ արք եպիսկոպոսի Գրիգորի եթէ նոյնն գտանիցի և ճանաչիցի առ այն բաւականին։ Բայց որպէս կալէկի արարեալ վերահասութեամբն երևի նա զի վասն ի ներս թողելոյ լիշեալ ապրանաց ըստ ծանուցման սոյն կալէկի տրեցեալ եղև բարձրագոյն հրովարտակ յանուն վաճառականաց կալէկին առաջին կառավարիչ սոյմանովին ի 30 աւուր մարտի 1799 թուին, յորում գրեալ է։ «Ըստ խնդրոյ արք եպիսկոպոսին հայոց Յովսէփի Ամենաողորմածաբար հրամայեմք զի ապրանքն առաքեցեալ ի հնդու տեղւոյն հայոց հասարակութենէ վասն վաճառեցման յօգուտ զանազան Աստուածահաճոյ գործառնութեանց յաղագս նոցին մի երկրացի հասարակութեանց ի ռուսաստան եղելոցն որ ընդ այսմ եղեալ թէֆթէրով թողեալ լիցին ի դամժնայէն առանց առնելոյ մաքսի։ Եւ երկրորդ զի վասն գումարի շնորհեցեալ յաղագս կառուցման ի Գրիգորիպօլ Աւագ եկեղեցւոյ և վանքի տուեալ էր բարձրագոյն ուքազ ստորագրութեամբ Նորին Կայսերական Մեծութեան խսկական ձեռամբն առ դայնի սավէթնիկ և թագաւորական կազնաչէյ պարոն Վասիլուն ի 25 աւուր նոյեմբերի 1797 թուին, յորում կերպաւորեալ է։ «Համեմատ պահանջողութեան հայոց Գրիգոր վարդապետի, հրամայեմք վասն շինութեան ի Գրիգորիապոլ հայոց Աւագ եկեղեցւոյ և վանքի, թողուլ 25 հազար ռուպլի, վերահասութեան նոյն վարդապետին, ըստ որում նա սոյն գրամով կապակցի բոլոր զայն շինութիւն կատարել», որ ի սոյնպիսեաց երևի զի ապրանքն և գրամքն առաքեցեալք առ հանգուցեալ պատրիարգն Յովսէփ ի Հնդու բնակչաց անդանօր հայոց վասն զանազան օգտաւէտ գործածութեանց յօգուտ միաբանատից իւրեանց ի ռուսիոյ եղելոցն պատկանին ի գործածութիւն նախանշանակեցեալ պիտանաւորութեանց, որ և պարտ է լինել մինչնորդութեամբ նոցին գլխաւոր հովուապետի կամ վերակացուաց Գրիգորիապօլու և Նախիջևանու հայոց, և որ վասն այն պատճառի չէ պարտ յայնցանէ ի բաց առնուլ զ25 հազար ռուպլին շնորհեցեալն վասն կառուցման եկեղեցոյ և վանքի, և որ վասն խարճելոյն զնոյն 25 հազար ռուպլին պարտ են պա-

կողմից սկսում են երթևեկել Կոստանդնուպոլիս, Անատոլիա և Սիբիրիա։ Նոքա են լինում հարաւային Ռուսաստանի տոնավաճառների ամենալաւ յաճախորդները, նոքա են լինում բրդի, մորթու և կաշուի ամենամեծ գնողները և վաճառողները, նոքա են լինում Սիբիրիոյ իւղի բերողները, Պոլսի տաճկական ապրանքների և արևելեան վաճառքների Դոնի և Ազովի ծովի կողմերում տարածողները և, վերջապէս, նոքա են լինում առաջինը, որ առևտրական յարաբերութիւն են սկսում Եւրոպայի հետ, ցորեն վաճառելու կենդրոնական դրասենեակներ են հաստատում Տագանրոգում։ Եւ պէտք է նկատել, որ այդ դէպքում Հայերը լինում են ոչ միայն հասարակ վաճա-

---

տասխանատու լինել կամ հանգուցեալ Յովսէփ պատրիարգն կամ Գրիգոր արքեպիսկոպոսն Գրիգորիապոլու հասարակութեան ի յօգուտ որոյ չնորհեցեալ էր նոյն գումարն։ Եւ վասն միւս գումարից որ ձեռնարկեալ էր ի վաճառել յիշեալ ապրանացն, նոյնպէս և վասն պակասորդ ապրանաց պարտ է յատուկ պատասխանատու լինել հասարակութեան նոյն արքեպիսկոպոսն, որոյ աղագաւ ինօսարանի գործոց կալէին ծանուցանելով վասն ամենայնի ալսոցիկ մանրամասնութեանց ձերոյ պայծառութեան յանձնէ տեղւոյդ ձերոյ վերատեսչութեան եթէ գատելոց էք պատշաճ վասն վերջացուցանելոյ սոյն գործոյ հրամայել առ որ պատկանի։ Նախ յիշեալ Հնդու ապրանքն 900 կտորն տալ Արքեպիսկոպոսին, որ ալժմէ պատրիարգ Եփրեմ, կամ վերակացուացն Գրիգորուպոլու և Նախիջևանու հայոց՝ յորոց առնելով զձեռագիր։ Այլ յազգաս 25 հազար ռուպլոց չնորհեցեալ վասն կառուցման եկեղեցւոյ և վանքի, և միւս գումարաց վաճառեալ ապրանաց պարտ է պատասխանատու լինել նոյն Գրիգորն, կամ ժառանգքն յիշեալ պատրիարգին քնեազ Արղութեանց Դոլգորուկովին, վասնորոյ և թողուլ նոցա հետեւել ֆորմի սուգով ուր օրինօք պատկանի։ Եւ վասն տնկասկածութեան այսպիսի պանջողութեան գնել արեստ (այսինքն սրգելումն) ի վերայ կալից որպէս ժառանգաց պատրիարգին քնեազ Արղութեանց Դոլգորուկովին, նոյնպէս և արքեպիսկոպոսին Գրիգորի»։

Գրիգորուպոլի յաջորդ Մանուէլը այն Մանուէլ վարդապետն է, որ Ռուսաստանի հայոց երրորդ առաջնորդ Յովհաննէս Գառնակերեանի օրերով երկար ժամանակ վարել է Ղրիմի «Ս. Խաչ» վանքի վանահայրութեան պաշտօնը և յայտնի է մեր մէջ «Գիւմուշխանցի» մականունով։ Գիւմուշխանցուց մեր ձեռքը հասել է մի ձեռագիր տաճկաբարբառ և հայատառ «վեցքը հասել է մի ձեռագիր տաճկաբարբառ և հայատառ «վեցհազարեակ» որ ունի հետեւեալ հետաքրքիր յիշատակարանը՝ «Կիւմուշխանցի Մանուէլ վարդապետ ի Ղրիմու սուրբ վանքի



առականներ, միջնորդներ գնողի և արդիւնաբերողի մէջ, այլ և յաճախակի նոքա հանդիսանում են և իբրև արդիւնաբերողներ։ Հայերն են առաջին անգամ սկսում Դոնի շրջանում եղած ածխահանքերը մշակել, նոքա են առաջին անգամ կաշուի գործարաններ բաց անում, Կովկասեան և արևելեան ձևի ու ճաշակի արծաթեղէն արհեստագործում, ցորենի չտեմարաններ հիմնում, ճարպի գործարաններ հաստատում, մեծ քանակութեամբ բուրդ, կաշի և մորթի արտասահման արտահանում [18])։ Նախիջևանն այդպիսի հանգամանքներում

---

հաղորդ եւ մահման նորա ես Մարգար Մաղաքովս Նախիջևանցի նորայ փոքրաւորը ըլալովս ինձ մնաց այս է տասնըչորս տարվան աշխատանաց տէրս լուսաւորէ հոգին ամէնուն վեց հազարեակ կասեն ես չէմ հասկընար»։

[18]) Թէև գաղթականների նիւթական միջոցները չատ սուղ են լինում, ասում է Մկրտիչ Մառոզովը, խօսելով Նախիջևանցւոց առևտրական գործունէութեան մասին, բայց և այնպէս քաղաքի շինութիւնը արագ կերպով առաջ է գնում։ Համեմատաբար դանդաղ է առաջ ընթանում հայերի առևտրական գործունէութիւնը, որովհետև նոքա դեռ տեղական լեզուին ու կարգ ու կանոնին ընտելացած չլինելով, ստիպուած են լինում չարունակել իւրեանց նախկին առևտուրը Կոստանդնուպոլսի և Անատոլիայի հետ, երթևեկելով այն կողմերը փոքր և խախուտ նաւերով և նաւավարութեան գործին անհմուտ մարդկանց ղեկավարութեամբ և յաճախակի կորցնելով իւրեանց ստացուածքը, մինչև անգամ մահ ես գտնելով անհիւրնկալ Ազովի և Սև ծովի ալիքների մէջ։ Բացի լեզուին և տեղական հանգամանքներին անծանօթ լինելը, հայերի առևտրական գործունէութիւնը ոչ սակաւ դանդաղեցնում է և 1795 թուականը, որ սովորաբար կոչուում է «Օչակովի տարի»։ Այդ թուականի ձիւնաշատ, բքաբեր և մրրկալից ձմեռը բազմաթիւ խաշինք և արջառ կոտորելով, մեծ հարուած է տալիս հայ վաճառականներին։ Բայց նոքա կամաց-կամաց ընտելանալով հանգամանքներին, իւրեանց առևտրական գործին տեղական բնաւորութիւն են տալիս և դորանով կարողանում են առաջ գնալ։ Նոքա առևտրական յարաբերութիւն են սկսում Մոսկուայի հետ և ծանօթանում են ձեռագործ ապրանքների արդիւնաբերութեան պայմաններին. նոքա սկսում են յաճախել նշանաւոր Մակարիայի տօնավաճառը և այդ տեղից մեծ քանակութեամբ ապրանք տեղափոխելով Սև ծովի և Ղուբանի շրջանները, առևտրական յարաբերութիւն են կապում լեռնորդիների հետ։ Նոքա Մակարիայի պատրաստի ապրանքը տարածելով զանազան տեղեր, փոխարէնը ժողովում են տեղական արդիւնաբերութեան հում նիւթերը և տանում վաճառում են նոցա Ռուսաստանի

դառնում է մի առևտրական շուկայ, մի արդիւնաբերութեան կենդրոն, որ իւր մշտական եռանդուն գործունէութեամբ կենդանութիւն է տալիս բոլոր շրջակայքին և կեանքի, շարժման և աշխատանքի աղբիւր է լինում բոլորի համար։ Անապատը սկսում է չէնանալ, երկիրը ծաղկել և առաջ գնալ...

---

տօնավաճառներում։ Տագանրոգը իւրեանց համար արտասահմանեան առևտրի կենդրոն ընտրելով, հայերը ուղարկում են Տաճկաստան հացահատիկ, իւղ, երկաթ, ճարպ և բուրդ։ Եւրոպայի հետ առաջին անգամ առևտուր սկսողները լինում են Նախիջևանցի Խաթրանեան և Օգարաչեան վաճառականները, իսկ առաջին անգամ Տագանրոգում Եւրոպական ձևով առևտրական տան հաստատողը լինում է Նախիջևանցի Մկրտիչ Պոպովը։ Տագանրոգը, որ մինչև հայերի Դոնի ափը գալը մի անյայտ քաղաք էր, նոցա շնորհիւ դառնում է Ազովի ծովի վերայ գտնուած նաւահանգիստներից ամենաբանուկը»։ Մկրտիչ Մորոզովի մասին տես մեր «Նոր-Նախիջևանի Ս. Խաչ վանքը» էջ 13, 7 ծանօթութիւն։

---

## Գլուխ Ե.

Յովսէփ արքեպիսկոպոսը սկզբից ստանձնելով գաղթականների կառավարութեան գործն իբրև առաջնորդական պարտականութիւն, կաթուղիկոսի հրաման և տէրութեան յանձնարարութիւն, յետոյ ժամանակի ընթացքում կամաց-կամաց կապւում է նոցա հետ, մտերմանում և սիրում է նոցա։ Եւ ուրիշ կերպ լինել էլ չէր կարող. նորա ձեռքով ստացուեց հրովարտակը, նորա աշխատանքով հիմնարկուեց, նորա հսկողութեամբ շինուեց քաղաքը, կառուցուեցան եկեղեցիները, վանքը, նորա խորհրդով և անձնական ջանքով հաստատուեցան Հոգևոր դատարանը, քաղաքային դումը, կարգաւորուեցաւ Մագիստրատը և բոլոր բարեկարգութիւնների հիմքը դրուեց։ Նախիջևանն իւր գիւղերով նորա սիրասուն զաւակն էր, նորա մեծ աշխատանքի արդասիքը, պտուղն էր. նա գուրգուրում զգուում էր նորան, նա իրան ուրիշ կերպ չէր կոչում, բայց թէ «նուաստ Յովսէփ արքեպիսկոպոս Ռուսաց երկրի ամենայն հայոց ազգին, և հիմնադիր նորաշէն քաղաքին Նախիջևանայ»։ Սակայն նա գուրգուրալով, սիրելով գաղթականներին, նոյն ժամանակ կառավարում էր նոցա վերին աստիճանի ինքնիշխան կերպով. ամեն բան նորա կամքով, նորա ցանկացածի պէս պէտք է լինէր. ամեն բան նորա խորհրդով պէտք է կատարուէր։ Գաղթականների ցոյց տուած ամենաչնչին հակառակութիւնը անգամ վշտացնում էր նորան, նոցա ամենափոքրիկ ընդդիմութիւնը նորա կամքին գրգռում էր նորա զայրոյթը, բարկութիւնը։

Թէև ժողովուրդն էլ փոխադարձաբար սիրում ու պատուում էր նորան, սիրով հնազանդելով նորա հրամաններին, աշխատելով հակառակ նորա կամքին ոչ մի բան չբռնել և քաղաքի հիմնադիր և բարերար կոչելով նորան, բայց նոցա մէջ կային այնպիսիները, որոնց սրբազանի ինքնիշխան կառավարու-

թիւնը շատ էլ դուր չէր գալիս։ Դոքա գաղթականների այն իշխանները, աղաները և նշանակութիւն ունեցող մարդիկն էին, որոնք կամենում էին դեր խաղալ ժողովրդի մէջ, բայց չէին կարողանում, որովհետև նոցա բոլոր ազդեցութիւնն ու նշանակութիւնը խոնարհում և ոչնչանում էր սրբազանի հզօր կամքի, անձնիշխան բնաւորութեան և անսահման հեղինակութեան առաջ։ Սկզբից, յայտնի բան է, այդ անբաւականութիւնը մեծ ծաւալ չէ ունենում, անբաւականների թիւն էլ շատ սահմանափակ է լինում, բայց յետոյ, ժամանակի ընթացքում, աճում է դժգոհութիւնը և դոքա հետ միասին աճում է և դժգոհների թիւը և, վերջի վերջոյ, բանն այն տեղն է հասնում, որ բոլոր ժողովուրդն, երկու կուսակցութեան է բաժանւում։ Հակառակ կուսակցութեան ղլուխ անցնում են զինուորական աստիճանաւորները և նա մանաւանդ նոցա մէջ մէկը՝ «պոդպոլկովնիկ և կավալեր» Իվան Աբրամովիչ Աբրամովը, որի անունով և կուսակցութիւնը կոչւում է «Աբրամովի», հակառակ միւս կուսակցութեան, որ կոչւում էր «Սրբազանի։ Այդ հայ զինուորական աստիճանաւորների և աղնուականների թիւը շատ չէ եղել, այլ մի 8-9 հոգի. նոքա փոքր աստիճանի տէր են եղել՝ «պոդպորուչիկ, պորուչիկ և պոդպոլկովնիկ, և առաջ են եկած եղել գաղթականների մէջ կամ նոյն իսկ գաղթականութեան ժամանակ և կամ գաղթականութիւնից առաջ, նոցանից մի քանիսը իւրեանց աստիճանը ստացել էին գաղթականութեան գործին նպաստելու համար, մի քանիսն էլ ռուսաց տէրութեան Ղռիմում Շահին-Գիրէյ խանի ժամանակ ցոյց տուած ծառայութեան համար։ Աբրահամեան կուսակցութեան ամրապնդուելուն և հետզհետէ հզօրանալուն նպաստում է այն հանգամանքը, որ 1787 թուականից արքեպիսկոպոսը յաճախակի և երկար ժամանակամիջոցներով սկսում է քաղաքից բացակայել։ 1787 թուին նա գնում է ճանապարհորդելու Ղռիմ և ճանապարհին ներկայանում է կայսերուհուն, որ այդ ժամանակ կատարում էր իւր նշանաւոր ճանապարհորդութիւնը դէպի Տաւրիկեան թերակղզին։ [19]) 1788 թուին գնում

[19]) Յովսէփ սրբազանի դէպի Ղռիմ արած ճանապարհորդութիւնը և կայսերուհուն ներկայանալը այսպէս է նկարագրուած նորա ձեռագիր «Դաւթարում»։ «Թիւն 1787. ողորմած



է Բեսսարաբիա և մնում է այնտեղ համարեա ամբողջ չորս տարի, գործածելով 88 թուականի մայիսի 5-ին սկսուած Տաճկաց պատերազմի ժամանակ տէրութեան նուաճումներին և Գրիգորիոպոլիս քաղաքը հիմնարկելով. 1793 թուին նա գնում է Պետերբուրգ չնորհակալութիւն մատուցանելու կայ-

---

թագուհին ելեալ ի Սանկթպետերբուրգու և եկեալ ի քիով և ի յազովի գուբերն ի քաղաքն Կրմէնչուկ և անտի գնաց ի Ղռիմ ընդ եմիերատորին, վասն տեսութեան տեղեացն Ղռիմու. ի դառնալն անտի ի Կրմէնչուկ, ընդ առաջ ելաք մեք ի Կրմէնչուկ մահտեսի պարոն Աստուածատուրին և տեսեալ մեր անդ զպայծառավայել քնեազ Գրիգոր Ալէքսանդրովիչ Պոտեմկինն, յարգմամբ ընկալեալ զմեզ. ի յունվարի 6. մետասան ժամուն տարաւ զմեզ առ թագուհին, որ ձեռքն համբուրելոյ արժանաւորեցաք և խօսելոյ ընդ մեծութեան Նորին յետ գնալոյ Կայսերուհոյն, պայծառավայել քնեազն պահեաց զմեզ առ ինքն զի ի միասին ի Ղռիմ գնասցուք, ըստ որում մեք չէաք տեսեալ։ Ի միջոցի անդ զքանի խնդիրս էաք տուեալ նմա վասն հասարակութեան մերոյ՝ որ մեր տեղն, այսինքն գետինն փոքր էր, խոստացեալ էր շուրջ զքաղաքաւն և զգիւղօրէիւքն մերովք մեզ չնորհել, նաև ի Կատարինեալաւ եղեալ ազգն մեր ի Ղռիմ առաքել և մեր տօնլուղն չնորհել. խոստացեալ նայր զբոլորն կատարել։ Ապա ի միջոցի աստ բացեալ եղև կռիւն թուրքաց. ինքն ոչ ևս կարաց գնալ ի Ղռիմ, այլ մեր չորս տարեկան ռոճիկն տուեալ և վասն ապագայն առնելոյ ևս՝ հաստատեալ ի Ղռիմ ստանալ յամէ յամ ի յալբանցկի սումէն, ապա իւրով յատուկ յանձնարարութեամբն, ուղևորեաց զմեզ ի Ղռիմ առ պարոն գուբէռնաթ Վասիլ Վասիլիչ Կախովսկին։ Ի սեպտեմբերի 28 ելեալ ի Կրմէնչուկու, հոգտեմբերի 2 մտաք ի Ղռիմ և ի յաղմէջիթ, ընկալեալ և անդ զպատիւս՝ ըստ հրամանի պայծառավայել քնեազին, ուղևորեաց զմեզ, չրջիլ յամենայն ուրեք. ի Ղարասու, ի քէֆէ, ի սակի Ղռիմ, ի վանքն մեր սուրբ խաչ և ի Սուդակ, ի Բաղչասարայի, ի յախիար՝ որ է Սեաստապոլիս, ուր նաւքն կանգնեալ կան, և ի Գոզլով, տեսեալ մեր զամենայն և կրկին դարձեալ ի յաղմէջիթ. Նոյեմբերի 3. ելաք անտի։ Զգալի եղև մեզ յոյժ տեսանելն զաւերութիւն քաղաքացն և եկեղեցեացն և վանորէիցն մերոց։ Ի արտամբ դարձաք անտի ի Նախիջևան ի Նոյեմբերի 24. քաղաքն ամենայն ընդ առաջ ելին դրօշակաքն արհեստաւորաց և ամենայն պատրաստութեամբ, և սեծաւ փառաւորութեամբ ընկալան զմեզ ի ներս հանդերձ հոգևորական հանդիսիւ։»

Կայսերուհու Ղռիմի ճանապարհորդութեան մարշրուտը ի սկզբանէ այնպէս է կամուած եղել, որ նա պէտք է իջևանի եղել և Նախիջևանում։ Մինչև անդամ այդ նպատակով

սերուհուն այն բարիքների համար, որ տէրութիւնը ցոյց էր տուել Բեսսարաբիոյ Հայերին, և այլն և այլն։ Սրբազանի հակառակորդները օգտուելով նորա բացակայութիւնից, աշխատում են ամեն տեսակ զօրացնել իւրեանց կուսակցութիւնը, գրաւելով իւրեանց կողմը բոլոր այն մարդկանց, որոնք մի որ և է անձնական անբաւականութիւն ունէին առաջնորդի դէմ։ Նոքա Աբրամովի գաղտերէցութեամբ լաճախակի ժողովներ և գաղտնի նիստեր են կազմում, զանազան ծրագիրներ ու ամբաստանագրեր են լորինում և այսպէս կազմուելով ու պատրաստուելով, սպասում են մի պատեհ րոպէի, որ արձակ-համարձակ մաքառումն սկսեն նորա դէմ և տապալեն նորան։ Վերջապէս, այդ պատեհ րոպէն էլ ներկայանում է։ 1797 թուին մի Մանուկ Դերիջանեան ազգանունով մարդ սաստիկ ոխ և անձնական թշնամութիւն ունենալով առաջնորդի դէմ, համաձայնում է իւր վերայ առնել տէրութեան բողոք տալու գործը։

---

Նախիջևանում թեմական դպրանոցի այժմուայ շինութեան տեղում, որտեղ եղել է Յովսէփ արքեպիսկոպոսի բնակարանը, նորա համար շինուել է մի ժամանակաւոր փայտեայ պալատ ևս, որ տեղացիներից կոչուել է «կոնակ» կամ տեղական արտասանութեամբ «խոնախ»։ Մարդրուտը փոխուելուց յետոյ, «կոնակը» այլ ևս պէտք չէ եկել. նա մի առ ժամանակ մնացել է թափուր և տնգործարելի, մինչև որ կայսերուհու հրամանով նա ընծայուել է Յովսէփ արքեպիսկոպոսին։ Մեզ անյայտ պատճառով այդ շինութիւնը ժամանակ անցնելուց յետոյ, դարձել է մասնաւոր մարդու սեփականութիւն և քանդուելով, տեղն այժմուայ քարէ շինութեան հիմքն է ձգուել։ Սակայն «խոնախ» անունը չէ կորել. նա մնացել է առաջ քարէ շինութեան վերայ, յետոյ անցել է այդ շինութեան մէջ երկար ժամանակ զետեղուած քաղաքային դպրոցի վերայ։ Մեր ձեռքին գտնուում է այն պաշտօնական թղթի պատճէնը, որով «կոնակը» բարձրագոյն հրամանով ընծայուել է Յովսէփ սրբազանին։ Նորա մի երեսի վրայ գրուած է հայերէն «դիվերէցն պաղչէված քիրնէ» ծանօթութիւնը, իսկ միւսի վերայ հետևեալ պաշտօնական զեկուցման պատճէնը՝ «Графъ Платонъ Александровичъ! Пріемля за благо представленія ваши отъ 28 истекшаго декабря, соизволяемъ Мы, какъ навсегдашнее пребываніе въ дубесарахъ обремененнаго лѣтами митрополита Кирилла, съ производствомъ тамо пожалованной ему пенсіи, такъ и на возвращеніе архіепископу армянскому Іосифу обращеннаго въ путевый дворецъ дома его въ Нахичеванѣ. безъ взысканія съ него употребленныхъ на перестройку онаго казенныхъ денегъ двухъ тысячъ рублей.



Իսկոյն և եթ Աբրամովի տանը ժողով է կազմուում և խմբագրուում մի ամբաստանագիր, որի մէջ յօդուած առ յօդուած արձանագրուում են այն բոլոր զեղծումները, որ, նոցա կարծիքով, թոյլ էր տուել գործելու առաջնորդը։ Եւ որովհետև նոքա գիտէին, որ առաջնորդն այնքան մեծ ազդեցութիւն ունի, որ հասարակ մեղադրանքներով նորան չէ կարելի տապալել, ուստի և նոքա իւրեանց ամբաստանագրին այնպիսի ձև են տալիս որ մի կողմից նա չահասէր և գող է դուրս գալիս, միւս կողմից տէրութեան դէմ գործող և ապստամբ։

Դերիջանեանը Պետերբուրգ գնալով, այդ ամբաստանա-

---

Пребываемъ вамъ благосклонный. На подлинномъ подписано собственною ея императорскаго величества рукою тако: Екатерина. Генваря 4 дня 1794 года въ Санктпетербургѣ».

«Графу Платону Александровичу, ваше благородіе, декабря 28-го истекшаго прошенія, соизволяемъ Мы, какъ навсегдашнее пребываніе въ дубесарахъ обремененнаго лѣтами митрополита Кирилла, съ производствомъ тамо пожалованной ему пенсіи, такъ и на возвращеніе архіепископу армянскому Іосифу обращеннаго въ путевый дворецъ дома его въ Нахичеванѣ. безъ взысканія съ него употребленныхъ на перестройку онаго казенныхъ денегъ двухъ тысячъ рублей. Пребываемъ вамъ благосклонный. На подлинномъ подписано собственною ея императорскаго величества рукою тако: Екатерина. Генваря 4 дня 1794 года въ Санктпетербургѣ».

«Կոմս Պլատոն Ալէքսանդրովիչ, ձեր անցեալ Դեկտեմբերի 28-ից արած առաջարկութիւնը լօժարութեամբ ընդունելով, մենք բարեհաճում ենք չնորհել մեր համաձայնութիւնը որպէս ծերունի Կիւրեղ մետրոպոլիտի իրան յատկացրած թոշակով Դուբասարում մշտական կեցութիւն ունենալու մասին, նոյնպէս և Նախիջևանում գտնուած և ճանապարհորդական պալատ դարձրած Հայոց Յովսէփ արքեպիսկոպոսի տունը նորան վերադարձնելու մասին, առանց նորա (պալատի) վերայ ծախսուած արքունի երկու հազար ռուբլին նորանից յետ պահանջելու։ Մնում ենք բարեհաճ դէպի ձեզ։ Իսկականի վերայ նորին Կայսերական Մեծութեան սեփական ձեռքով ստորագրած է այսպէս՝ Եկատերինէ։ 1794 թուի Յունուարի 4-ին Սանկտպետերբուրգում»։

Սրբազանի 1793 թուականի ճանապարհորդութիւնը նկարագրուած է Ս. Խաչի տպարանում տպագրուած Սրևանցի Խորագրուած Ս. Խաչի տպարանում տպագրուած Սրևանցի Խոջենց Մարգարի «Տելեմաքի» թարգմանութեան վերջաբանում։ Տես էջ. 363 - 369։

Բացի 1787, 88 և 93 թուականների ճանապարհորդութիւնից, Յովսէփ սրբազանը 1781 թուին արել է և մի ճանապարհորդութիւն դէպի Պետերբուրգ Եկատերինէսլաւի, Պոլտաւայի, Կիևի և Մոսկուայի վերայով, որի հետաքրքրական նկարագրութիւնը թողել է նա մեզ իւր ձեռագիր «դաւթարում»։ Եկատերինոսլաւում նա հիմնարկել է ս. Աստուածածին եկեղեցին այնտեղ մնացած Հայերի համար. վրանի տակ պատարագ է մատուցել և ձեռնադրել է Մարտիրոս անունով մէկին նոցա քահանայ։ Եկատերինասլաւի Հայերը Ղրիմի գաղթականութեան մի փոքր մասն էին. նոցա մեծամասնութիւնը կաթոլիկ էր, փոքրամասնութիւնը—լուսաւորչական։ Կաթոլիկներն եկել էին ընդհանուր գաղթականութեան ժամանակ իւրեանց առաջնորդ Խաչատուր վարդապետի հետ և իւրեանց բնակու-

գրից մի օրինակ ներկայացնում է կայսեր, միւսը գեներալ-պրոկուրորին և երրորդն ուղարկում է Ռաստովի դատարանին։ Ամբաստանագիրը, բացի իւր, ամբաստանողի անձին վերաբերեալ զանազան դովասանքներից, պարունակում էր իւր մէջ 8 մեղադրական կէտ սրբազանի դէմ՝ ա.) Արքեպիսկոպոսը իւր համախոհների հետ միասին գողացել է Ղրիմից բերած եկեղեցական իրեղէնները և սեփականացրել է Նախիջևանի եկեղեցիներում հաւաքուած փողերը. բ.) Նա թոյլ չէ տուել վաճառականներին խանութներ չինել քաղաքի միջավայրում գտնուած հրապարակում, ասելով, որ այդ հրապարակը պատկանում է եկեղեցուն, իսկ եկեղեցին իւրն է. գ.) Նա ցանկանալով անձնիշխան լինել, աշխատել է ոչնչացնել քաղաքային դումը և նորա կանոնադրութիւնը և համոզել է այդպէս անել և միւս Հայերին, ոմանց սպառնալով, ոմանց էլ աղնուականութիւն տալ խոստանալով. դ.) Անիծել է այն կանոնադ-

---

թեան համար տեղ էին ստացել Եկատերինոսլաւում, որ այն ժամանակ նոր մարդ չէնանում ու քաղաք էր դառնում։ Կաթոլիկ Հայերի հետ բնակութեան տեղ ու հող էին ստացել Եկատերինոսլաւում և մի քանի տուն լուսաւորչական Հայեր, որոնք չէին կամեցել մեծամասնութեան հետ գալ Նախիջևան։ Առ հասարակ բոլոր դաղթականներն էլ իւրեանց կամքի հակառակ, չուզենալով էին դուրս եկել Ղրիմից. նոքա չէին հաւանում իւրեանց նոր հայրենիքին և յարմար բոպէ էին որոնում նորից վերադառնալու իւրեանց նախկին բնակութեան տեղերը. շատերը նոցանից տեսնելով, որ արդէն դժուար է թոյլտուութիւն ստանալ վերադառնալու, մինչև անդամ ինքնակամ թողնում, փախչում էին Ղրիմ։ Վերադառնալու ձգտումը նամանաւանդ բուռն է լինում Եկատերինոսլաւի Հայերի մէջ. նոքա հէնց սկզբից խնդրամատոյց են լինում տէրութեան թոյլ տալու նոցա վերադառնալու, բայց դաղթականների այդ ձգտումը տէրութեան շատ էլ հաճոյ չլինելու պատճառով դործը ձգձգւում է ու երկարում։ Վերջապէս, տէրութիւնը զիջանում է Եկատերինոսլաւցոց բուռն ցանկութեան և դաղթականները 12 տարի Ռուսաստանում մնալուց յետոյ, վերադառնում են իւրեանց նախկին բնակութեան տեղը, գլխաւորապէս Ղարասուբազար։ Ինչ ասել կուզի, որ այդ դէպքում շատ օգնում է նոցա, նախ այն հանդամանքը, որ Ղրիմի թերակղզին այդ ժամանակ արդէն անցել էր Ռուսաց ձեռքը, երկրորդ, Խաչատուր վարդապետը և մանաւանդ Յովսէփ արքեպիսկոպոսը, որ իւր 81 թուի ճանապարհորդութեան ժամանակ տեսնուել էր Պատեմկինի հետ և առանձին կերպով խընդրել էր այդ մասին։



թիւնը և Դումը և իրեն Դերիջանեանին, որ աշխատում էր ընդունել տալ և հաստատել Դումը. ե.) Տէրութեան տուած քաղաքային կանոնադրութեան տեղ նա կազմել ու տպագրել է իւր սեփական կանոնները, քաղաքի կառավարութեան համար 24 հոգաբարձու կարգելով. զ.) խառնուել է քաղաքի կառավարութեան դործերին և փախստական Հայերին իւր կողմից անցաթուղթ է տուել. է.) Գնացել է Օչակով իշխան Պատեմկինի մօտ հասարակութեան կողմից խնդրելու, որ հասարակութեան ապառիկները չպահանջուեն, և այդ բանի համար ծախսել է 11 հազար ռուբլի ու հաշիւ չէ տուել, այլ միայն մի քանի մարդու և իւր կառապան Անդրէասի համար աստիճան է ձեռք բերել և ը.) ծեծելով արտաքսել է տուել իրան, Դերիջանեանին Դումից և այնպէս նեղել է առևտրական դործերի մէջ, որ ինքը 1200 ռուբլու պարտքի տակ է ընկել։ Իսկ ինքը, ընդհակառակը, աշխատել է ամեն բանում յոգուտ տէրութեան և քաղաքին դործել՝—հաստատել է Դումը և ինքն անդամ է ընտրուել. թարգմանել է հայերէն քաղաքային Դումի կանոնադրութիւնը, քաղաքի եկամուտը 450 ռուբլուց հասցրել է 4 հազարի, դաստիարակել ու կրթել է հայ մանուկներին, այլն և այլն։

Եթէ ամբաստանագրի այդ մեղադրական կէտերի մէջ կայ մի ճշմարտութիւն,—այդ միայն այն էր, որ առաջնորդը դործերը կառավարում էր անձնիշխան կերպով և խառնուում էր քաղաքային դործերին. սակայն այդ ևս մեղադրանք չէր կարելի համարել։ որովհետև ինքը տէրութիւնն էր յանձնել նորան դաղթականների ընդհանուր տեսչութիւնը։ Յայտնի է, որ իշխան Պոտեմկինը 1780 թուին բարձրագոյն հրամանով ծանուցանելով նահանգապետ Ձերտկովին բոլոր Ռուսաստանի Հայերին սրբազան Յովսէփ արքեպիսկոպոսի իրաւասութեան ենթարկելու մասին, առաջարկել էր յայտնել նոցա, որ այնուհետև նոքա իւրեանց կեանքի բարեկարգութեան վերաբերեալ բոլոր դործերում դիմեն սրբազանին, իբրև անսակաւոր հոգևորականի և ամեն տեսակ յարդանքի արժանի հօտի տապետի։

Ռաստովի դատարանը ձեռնարկելով դործի քննութեան, հրաւիրում է Աբրամովին, քաղաքագլխին, Մագիստրատի դատաւորներին, 24 հոգաբարձուներին և 300-ի չափ մարդ քաղաքացիներից վկայութիւն տալու և պարզելու խնդիրը։ Աբ-

բամովը, բացի նորանից, որ հաստատում է Դերիջանեանի ասածները, այլ իւր կողմից ևս աւելացնում է հետևեալ մեղադրական կէտերը՝ ա.) Ս. Խաչ վանքը կառուցուել է ոչ թէ սրբազանի ծախքով, ինչպէս որ նա ասում է, այլ հանգուցեալ Սիմէօն վարդապետի կտակած, հասարակութեան տուած և եկեղեցիներում հաւաքուած փողերով. բ.) Մայր եկեղեցում 16 տարուայ ընթացքում հաւաքուած փողը ընչի՞ վերայ է գործ դրուել,—յայտնի չէ, և հասարակաց արդիւնքով հիմնարկուած մայր եկեղեցու շինութիւնը վերջ չունի. բ.) Հնդկաստանից դպրոցներ չինելու համար ստացուած մեծաքանակ գումարները յայտնի չէ, թէ ինչ բանի համար է գործ դրուած, որովհետև քաղաքը դեռ դպրոց չունի. դ.) Սրբազանը Նախիջևանից Ռուսիա փախած Հայերին անցագրեր է տուել և ինքը ևս նպաստել է նոցա փախչելուն։ Իսկ ինքը ծառայել է տէրութեան, անձամբ մասնակցելով պատերազմներին և իւր ծախքով կամաւորներ պատրաստելով. ծառայել է և քաղաքին, օգնելով աղքատ Հայերին, տէրութեան Հայերին պարտք տուած 243,754 ռուբլի մեծ գումարի նոցա ընծայելու գործին նպաստելով և քաղաքին չնորհած հողի քանակութիւնն աւելացնելու գործի համար աշխատելով։

Բաղաքացուները, գատաւորները, հոգաբարձուները և քաղաքացիները համարեա թէ միաբերան հերքում են Դերիջանեանի և Աբրամովի ասածները և վկայում են, որ ինքեանք բացի լաւութիւնից, ոչինչ վատութիւն չեն տեսել իւրեանց առաջնորդից. նա նոցա բարերարն է և պաշտպանը, նա ոչ թէ միայն չէ սեփականացրել իրեն հասարակութեան ստացուածքը, այլ և յաճախակի ինքն իւր ունեցածն է ծախսել եկեղեցիների և վանքի վերայ. նա նոցա միշտ սովորեցրել է սիրել Ռուսաց օրէնքները և հնազանդել նոցա. իսկ եթէ Դերիջանեանը և Աբրամովը սրբազանի դէմ են գնում,—այդ ոչ այլ ինչ է, եթէ ոչ միայն նոցա անձնական վատ յարաբերութիւնից և անհանգիստ բնաւորութիւնից։

Դատարանի կատարած մանրամասն քննութիւնից պարզւում է՝ ա.) Բուսթիւն անող Դերիջանեանը անձնական թշնամութիւն և ոխ ունի Սրբազանի դէմ այն բանի համար, որ նա նորան բանտարկել է տուել հանգուցեալ Սիմէօն վարդապետի վանքի օգտին կտակած 500 ռուբլի գումարը սեփականացնելու համար։ Նա առաջ կամեցել է բանտում թունաւորուել, յետոյ բանտից դուրս գալով, սկսել է ամբոխի մէջ սուտ լուրեր տարածել արքեպիսկոպոսի մասին, իբրև թէ նա զողացել է եկեղեցական փողերը և սեփականացրել է եկեղեցական իրեղէնները. նա իրան հովանաւորող Աբրամովի տանը թուղթ է կազմել և հասարակութեան կողմից հաշիւ է պահանջել արքեպիսկոպոսից և ստացել է, բայց ոչնչացրել է նորան. Բ.) Բաղաքի միջավայրում գտնուած հրապարակը, նորա չորս կողմը խանութներ չինելուց յետոյ, վաճառականները, իբրև իւրեանց համար անպէտք գտին, յանձնել են սրբազանին մայր եկեղեցու համար։ Առաջին նուագ այդ տեղի վրայ չինուել է փայտէ եկեղեցի, իսկ յետոյ արդէն հիմնարկուել է գոյութիւն ունեցող քարէ շէնքը. Գ.) Սրբազանը արգելք չէ եղել 1785 թուականին հրատարակուած կանոնագրութեամբ Դումի հաստատուելուն Նախիջևանում։ Եկատերինէսլաւի նահանգական կառավարութեան հրամանով 1788 թուին բացուել է դումը, բայց յետոյ Հայերի Ռուսաց լեզուին ծանօթ չլինելու պատճառով, փակուել է և նորա տեղը հրատարակուել «Դաշնագրութիւն միաբանութեան» թուղթը և հաստատուել է 24 հոգաբարձուների կառավարութեան կարգը, որ բոլորովին համապատասխանում է Հայերին չնորհած հրովարտակի հինգերորդ յօդուածին. Դ.) Դերիջանեանը զանազան մարդկանցից երեք հազարի չափ փող է ժողովել, խաբելով, որ իբր թէ նա կարող է նոցա համար ազնուականութեան իրաւունք ձեռք բերել, բայց այդ փողից, առանց հետևանքի, ծախսել է 1290 ռուբլի և, ի միջի այլոց, այդ մարդկանց համար Հայոց պատմութիւնից սուտ ազգաբանութիւն է կազմել. Ե.) բոլոր վկայութեան կանչուած քաղաքացիներից միայն մի Բաթի Կարապետով ազգանունով արհեստաւոր է ցոյց տուել, որ ինքն իբր թէ լսել է, թէ ինչպէս արքեպիսկոպոսը Դերիջանեանի մասին եկեղեցում ասել է՝ «Ես թող անիծեալ լինի նա և իւր Դումը». Զ.) Արքեպիսկոպոսը հասարակութեան գործերին չէ խառնուել, այլ միայն իւր Ղռիմում եղած ժամանակ երեք հալի, որոնց անցագրերի ժամանակը անցել կացած եղել, տոմսակ է տուել. սակայն նոքա չուտով դուրանից յետոյ վերադարձել են Նախիջևան. Է.) Օչակով գնալու համար սրբազանին տրուած է եղել ոչ թէ 11 հազար ռուբլի, այլ ինը հազար։ Հասարակութիւնը երբէք չէ կամեցել և չի պահանջել այդ փողի հաշիւը արքեպիսկոպոսից, գոհ լինելով

որ իւրեանց ցանկացածը իրագործուել է. իսկ ինչ որ վերաբերում է աստիճաններ տալու գործին,—իշխան Պոտեմկինն է վարձատրել մի քանիսին նոցա տէրութեան ցոյց տուած ծառայութեան համար, նահանգապետի և Մագիստրատի տուած վկայականների հիման վրայ։ Անդրէասն էլ սրբազանի կառապանը չէ եղել, այլ անձնական քարտուղարը. Ը.) Դերիջանեանին քաղաքացիք 1796 թուին արտաքսել են Դումից ոչ թէ սրբազանի յորդորանքով, այլ իւրեանց կամքով, զզուած լինելով նորա անհանգիստ, ստահակ և ըմբոստ կեանքից ու բնաւորութիւնից։ Դերիջանեանն առհասարակ չէ ունեցել, որ կարելի լինէր նեղել նորան վաճառականական գործերում. նա մի չքաւոր մարդ է եղել և առաջ ծառայել է Մագիստրատում իբրև պահապան, յետոյ Աբրամովի միջնորդութեամբ և բարեխօսութեամբ միայն Դումի անդամ է ընտրուել։

Մի երկու հոգի են միայն նորան նպաստաւոր վկայութիւն տուել։ Դոցանից մէկն ասել է, որ իբր թէ ինքը լսել է, թէ ինչպէս սրբազանը ասել է՝ «եթէ Դերիջանեանին չարտաքսեն, ինքը Նախիջևանում չի մնալ». իսկ միւսը իբր թէ տեսել է, թէ ինչպէս քաղաքագլուխ Սահակեանը Դերիջանեանին Դումից դուրս անելու ժամանակ մէկ անդամ զարկել է նորան։ Եւ առհասարակ ամբաստանագրի մէջ լիշուած գովասանքները Դերիջանեանի մասին ոչ մի բանով չեն ապացուցուում։ Այն երկու գովասանական թղթերը, որ նա ներկայացրել է իբրև ապացոյց իւր արածներին, ամենևին նշանակութիւն չունին, որովհետև նոցանից մէկը կրում է միայն Աբրամովստորագրութիւնը, ուրեմն մի այնպիսի մարդու ստորագրութիւն, որ հովանաւորում է Դերիջանեանին և անձնական թշնամութիւն ունի սրբազանի դէմ, իսկ միւսը, թէ և կրում է 117 մարդու ստորագրութիւն, բայց նոքա բոլորեքեան այնպիսի տգէտ և անդրագէտ մարդիկ են, որ հրաժարւում են իւրեանց ստորագրութիւնից, ասելով, որ ինքեանք հարբած լինելով չեն իմացել, թէ ինչ են ստորագրում։

Դատարանն իւր այդ քննութեան արդիւնքը 1798 թ. Սեպ. 18-ին ներկայացնում է Սելեցկի նահանգապետին, նա էլ նոյնն իւր կողմից համարեա առանց փոփոխութեան, միայն աւելացնելով այն, որ Աբրամովի ցուցմունքները, իբրև սրբազանի անձնական թշնամու ասածներ, նշանակութիւն ունենալ չեն կարող, ներկայացնում է գեներալ պրոկուրոր Լապուխինին։ Դերիջանեանը իմանալով, որ թէ Դատարանի քննութեան արդիւնքը և թէ նահանգապետի կարծիքն իւր համար նպաստաւոր չեն, նոյն թուի նոյեմբերի 18-ին նորից բողոք է ուղարկում կայսեր անունով, այս անգամ արդէն ամբաստանելով նահանգապետին և Դատարանը, իբրև թէ առաջինը 26 հազարի արժողութեամբ ընծաներ կաշառք է ստացել սրբազանից և քաղաքագլխից, երկրորդն իբրև թէ ուշացնելով և ժամանակին չկսելով քննութիւնը, վնասել է իւր գործին։ Այդ բողոքի հիման վրայ ծերակոյտը բարձրագոյն հրամանով նոյն թուականի Դեկտեմբերի 17-ին մեկնութիւն է պահանջում նահանգապետից և դատարանից։ Նահանգապետն իւր վրայ արած այդ ամբաստանութիւնից արդարանում է նորանով, որ ապացոյց է տալիս, թէ Նախիջևանը չէ գարող իբրան 26 հազար ռուբլու կաշառք տալ, քանի որ ամբողջ քաղաքն այդ գումարի տասներորդ մասի չափ եկամուտ չունի, և վշտացած խնդրում է պաժել իւր վրայ այդպիսի քսութիւն անող Դերիջանեանին. իսկ Դատարանը պատասխանում է, որ ինքը, ճիշտ է, գործի քննութիւնն ուշացրել է, բայց նա արել է այդ նախ, իրանից բոլորովին անկախ պատճառներով, երկրորդ, որ գործի այդպէս ուշի մնալն ամենևին չէ վնասել և չէր էլ կարող վնասել Դերիջանեանին։ Դերիջանեանը պահանջել է, որ Դատարանը բոլոր քաղաքացիներին հարց ու փորձ անէ, բայց Դատարանը այդ հնարաւոր չէ համարել, որովհետև այդ կնշանակէր մի կողմից բոլոր քաղաքը բաւականին երկար ժամանակամիջոցով դատապարտել անգործութեան, միւս կողմից մի եթէ ոչ անիրագործելի, գոնէ, մի տաժանելի և ապարդիւն աշխատանքի ձեռնարկել։

Դատաստանական գործն երկարում է և քաղաքացիք ուղղակի տուժում են այն նիւթական և բարոյական զրկանքներից, որ նոքա անընդհատ կրում էին Դերիջանեանի քսութիւններից։ Նիւթականապէս նոքա տուժում են, որովհետև մշտապէս դատաստանական գործերի մէջ լինելով, վատնում են և՛ իւրեանց ժամանակը և՛ փողը, բարձի թողի են անում իւրեանց գործերը. իսկ բարոյապէս նոքա զրկւում են, որովհետև հետզհետէ նոցա անձնական յարաբերութիւնները լարւում, հետզհետէ թշնամութիւնը, ատելութիւնը, ոխը թոյն է դնում նոցա գերդաստանների մէջ, որովհետև դրացի օտարների առաջ կամաց-կամաց նոքա կորցնում են իւրեանց խա-

զաղասիրութեան վարկը, որովհետև նոքա անդադար ամբաստանում են իբրև ապերախտ մարդիկ, որ չճանաչելով իւրեանց բարերար եպիսկոպոսի անգնահատելի երախտիքը, դատաստանի և քննութեան տակ են ձգում նորան, և այլն և այլն։ Այդ բոլոր զրկանքներին վերջ տալու համար, վերջապէս, քաղաքացիք և գիւղացիք քաղաքագլխի, աստիճանաւորների, քաղաքացիների, ծերերի և տանուտէրների ստորագրութեամբ մի համախօսական են կազմում և արձանագրելով նորա մէջ Դերիջանեանի բոլոր արածները, ուղարկում են 1799 թուին զեներալ-պրոկուրորին և խնդրում հանել, արտաքսել նորան իւրեանց միջից։ Գործի քննութիւնը վերջանում է միայն 1800 թուին։ Դերիջանեանը յանցաւոր է ճանաչւում և դատապարտւում տաժանակիր աշխատանքի, յանցաւոր է ճանաչւում և դատապարտւում և Աբրամովը, զրկուելով իւր ունեցած պաշտօններից և միւս անգամ մի որ և է պաշտօն ունենալու իրաւունքից։

Եկատերինէսլաւի նահանգական կառավարութեան կարգադրութեամբ Ռոստովի ոստիկանապետը գալիս է Նախիջևան, բռնում է Դերիջանեանին և հրապարակով շղթայելով և մտրակահար անելով, ուղարկում է Սիբիրիոյ Ներչինսկ քաղաքը։ Շատ ծանր տպաւորութիւն է անում այդ պատիժն ու դատապարտութիւնը ժողովրդի վերայ։ Ցաւոնի բան է, բոլորեքեան էլ համոզուած են լինում, որ տէրութիւնը կը պատժէ Դերիջանեանին և Աբրամովին, բայց ոչ ոք չէր սպասում, որ պատիժն այդպէս խիստ կլինէր։ այդ առաջին անգամն է լինում, որ տէրութիւնն այդպիսի խիստ միջոցի է դիմում գաղթականների վերաբերութեամբ։ Ժողովրդի սիրտը սաստիկ ան է ընկնում, բոլորեքեան թողնում, անցնում են առաջնորդի կողմը և Աբրամովի կուսակցութիւնը իսպառ քայքայւում և ոչնչանում է։ Աբրամովի հետ մնում են միայն ամենալամառները։ նոքա թէև այնուհետև քաշւում են գործելու ասպարիզից, բայց ցոյց տալու համար, որ իւրեանց դատը արդար էր և Մանուկը զուր տեղը միայն զոհուեց, նահատակ են հռչակում նորան ժողովրդի մէջ և ուրիշ կերպ չեն կոչում նորան, բայց թէ «Երանելի Մանուկ»։ Սակայն կամաց-կամաց Աբրամովի կուսակցութեան այդ վերջին բեկորներն էլ մօտենում են սրբազանին և հաշտւում նորա հետ։ Ինքն Աբրամովը էլ տեսնում էր որ զրկուեց իւր առաջուայ ունեցած բոլոր յարգանքից և պատիւներից և բոլորի աչքից ընկաւ, ծածկելով սրտի խորքում իւր իսկական զգացմունքները, սկսում է իրան տրամադիր ցոյց տալ հաշտուելու և միայն յարմար րոպէի է սպասում վճռական քայլ անելու։ Այդ յարմար րոպէն էլ շուտով ներկայանում է։ 1800 թուականի Օգոստոսի վերջին Ցովսէփ արքեպիսկոպոսը Պետերբուրգից գալով, մի վերջին անգամ էլ այցելում է իւր հիմնարկած Նախիջևանը։ Մենք ասում ենք «վերջին անգամ» որովհետև այդ ժամանակ արդէն երջանկայիշատակ Պօղոս կայսրը նորան ճանաչել էր կաթուղիկոս ամենայն Հայոց և փառքով ճանապարհ էր ձգել դէպի Ս. Էջմիածին, խոստանալով նորա յետեից հասցնել և նորա հաստատութեան կայսերական հրովարտակը։ Ահա այդ հանգամանքից օգուտ է քաղում Աբրամովը և քաղաքի մեծամեծներին միջնորդ ձգելով, ձգտում է հաշտուել առաջնորդի հետ և արժանանալ նորա ներողութեան։ Մեծամեծները նորա արտաքին խոնարհութիւնը և թախանձագին աղաչանքները զղջալու և ապաշաւելու նշան համարելով, քանիցս միջնորդում և խնդրում են արքեպիսկոպոսից, որ նա ընդունէ Աբրամովին և ներէ նորա յանցանքները, բայց նա աւելի լաւ ճանաչելով այդ փառասէր և ըմբոստ զինուորականի բնաւորութիւնը, սատանուում է կատարել նոցա խնդիրքը և միջնորդութիւնը, ասելով, որ Աբրամովը մի այնպիսի փոփոխամիտ և անհաստատ բնաւորութեան տէր մարդ է, որ երբէք չէ կարելի հաւատալ նորա զղջման արտայայտութիւններին։ Սակայն որպէս զի և մեծամեծների խնդիրքը գետին ձգած չլինի և իւր հոգևորական պարտականութիւնը կատարած լինի, նա համաձայնում է ներել նորան, միայն թէ պայման է դնում, որ այդ ներողութիւն խնդրելու գործողութիւնը կատարուի հանդիսաւոր կերպով, հրապարակօրէն բոլոր ժողովրդի առաջ մայր եկեղեցում։ Նշանակած օրը որոշեալ ժամին ժողովրդի բազմութիւնը խռնւում է եկեղեցին, եկեղեցու դաւիթը, բակը և հրապարակը։ եկեղեցում չքեղ դահի վրայ բազմում է կաթուղիկոսը, իսկ Աբրամովը սպիտակ շապիկ հագած չոքէչոք գնալով, հրապարակով մտնում է եկեղեցի, համբուրում է կաթուղիկոսի աջը և ներողութիւն է խնդրում։

Պատիժն անկասկած շատ խիստ էր և մի փոքր էլ չէր համապատասխանում մեր բարձր հոգևորականներին յատուկ ներողամտութեան, բայց Ցովսէփի համար շատ թանգ էր նո-

բաշէն քաղաքի հանգստութիւնը և խաղաղ զարգացումն. նա տեսնում էր, թէ որքան նիւթական և բարոյական վնաս կրեց քաղաքը Աբրամովի արածներից, և կամենում էր իւր այդ խստութեամբ միանգամ ընդ միշտ գաղթականներին օրինակ ցոյց տալ, որ նոքա այնուհետև զգուշանան նորա շաղով ընթանալու, նորա բռնած ընթացքին հետևելու և սովորեն ջոկել իւրեանց համար սեր սպիտակից, սովորեն ճանաչել իւրեանց չարն ու բարին։ Քաղաքը դեռ նոր էր հիմնարկուել, հայ հասարակութիւնը դեռ նոր էր սկսել կազմուրուել, նոր էին դեռ կազմակերպուել նորա բոլոր հաստատութիւնները. պէտք էր ամեն կերպ զգուշանալ, որ կանոնաւոր ճանապարհի վրայ դրուած գաղթականների կեանքի զարգացումն ոչ մի արգելքի չհանդիպի, աջ ու ձախ չչեղուի։ Աբրամովները վատ օրինակ էին. պէտք էր անպատճառ նոցա արմատախիլ անել։ Այդ էին պահանջում գաղթականների հալական կեանքի շահերը։

Ցովսէփի գուշակութիւնները Աբրամովի վերաբերութեամբ շուտով արդարանում են։ Նա, որ իւր իսկական զգացմունքները սրտի խորքում պահելով, ապաշաւել ու ներողութիւն էր խնդրել միայն երևանց իւր առաջուայ դրութիւնը ձեռք բերելու համար, կաթուղիկոսի Նախիջևանից հեռանալուց յետոյ, նորից սկսում է գործ դնել իւր առաջուայ չարութիւնները, որով և նորից վրդովում է ժողովրդի խաղաղութիւնը։ Վերջապէս, բոլորեքեան այնպէս զզուում են նորանից, որ քաղաքալխի, դատաւորների, հոգաբարձուների, պատուաւոր քաղաքացիների և գիւղերի գլխաւորների ստորագրութեամբ 1802 թուին 32 մեղադրական կէտերից բաղկացած մի համախօսական կազմելով, յատուկ պատգամաւորների ձեռքով ուղարկում են Պետերբուրգ և խնդրում են հեռացնել նորան իւրեանց միջից։ Այդ համախօսականի մեղադրական կէտերից մէկը վերաբերում է մեր վերը յիշած Ցովսէփ սրբազանի վերջին անգամ Նախիջևան գալու և Աբրամովի ներողութիւն խնդրելու պատմութեան։ «Եւ երբ որ սրբազանն մեր Ցովսէփն իւր արժանաւորութեանն կաթուղիկոսութեան գնալու յէջմիածին սոյն ժամանակին եկաւ քաղաքս մեր, ասուած է այնտեղ, և գնալովն նորա, պարոն Ապրահամովի ի մեղանից առաջի անցանացն խնդրեացն թէ բարեխօսութիւն անեն վասն իւրեան և նոցա առաջի անցանացն ի նորին սրբազնութենէն խընդրածներն թէ ամենայն կերպիւ և անզգամութեամբ զուր տեղն



ընդէմ նորին սրբազնութեանն արարողութեան թողութիւն չնորհելոյ, և յետոյ տանելովն նորա, պարոն Աբրամովին ասաց յեկեղեցին մերում շատ ժողովքիս առաջի սրբազնութեանն բոչիմանելով թողութիւն խնդրելն, և նա օրհնելով և թողութիւն տալով պատուիրեաց նմա, թէ հաշտութեամբ և հանգըստութեամբ կենալ այսուհետև քաղաքումս և ի հետ ժողովրդոցըն մերում բնակողացն, այս ասա երկրորդ ոմն է որ վասն դիշ չէր այս առաջի պատիժն, այնպէս երևեցաւ մեզ որ ինչ այսուհետև նա հանդարտ կուկենա առաջի արարմունքներէն տէլին, միայն թէ այն ժամանակին նա սրբազան կաթողիկոսն հաւատացուցեալ էր թէ նա չի մոռանալ իւր արարմունքն տէլի, որ ինչ նա, պարոն ապրամովն ընդ այն իւրում անբարոյականութեամբն չի կարողանալ հանգստութեամբ բնակել, այժմ եղեալ է հաստատութեամբ։ Թէ ինչ հետևանք է ունենում այդ համախօսական խնդիրքը, —մեզ յայտնի չէ. մենք միայն գիտենք, որ Աբրամովը մինչև իւր կեանքի վերջը մնացել է Նախիջևանում և մեռնելով թաղուել է ս. Նիկողայոս եկեղեցու բակում։

## Գլուխ Զ.

Մենք ասացինք, թէ Ցովսէփ սրբազանը 1800 թուի Օգոստոսին մի վերջին անգամ էլ այցելեց Նախիջևանը։ Այդ այցելութիւնը լինում է նախիջևանցիների ցանկութեամբ, որոնք յանելով, որ իւրեանց քաղաքի հիմնադիրն ընտրուել է կաթուղիկոս և հաստատուել է կայսրից, ցանկանում են մի վերջին անգամ էլ նորան իւրեանց մէջ տեսնել և նորա օրհնութիւնն առնել։ Այդ նպատակով նոքա թուղթ են գրում վեհափառին և հրաւիրում են Նախիջևան, խոստանալով տալ նորան հազար ռուբլի ճանապարհածախս, հազար էլ աշնամբոյր։ Կաթուղիկոսի հաճութիւնը ստանալուց յետոյ, նոքա Օգոստոսի 5-ին քաղաքային Դումի նիստ են կազմում և կարգադրում են վեհափառի համար իջևանելու տեղ պատրաստել «խօնախում» և բոլոր լինելիք ծախսերը հասարակութեան վերայ առնել։ «1800 ամին և ամսեանն օգոստոսի, 5-ին մեք ի ներքոյ ձեռագրեալքս, Նախիջևանու հայոց հասարակութեան հոգաբարձու անձինքս, ասուած է այդ նիստի արձանագրութեան մէջ, յետուք այս ձեռնագիրս Նախիջևանու հա-

ից հասարակութեան տումի, պարոն կլաւայ աղայ Կարապետ Օվանէսովին, որ մեք մեր խորհրդիւն Նորին բարձր սրբազնասուրբ կաթուղիկոսն Մոսկով էղած ժամանակին գրով խընդրեալ էաք թէ քաս, Նախիջևան օրհնութիւնն ձեր չնորհեսցես հասարակութեան մերոյ ևս մեք մեր մէջն խորհուրդ արած էինք թէ որքան, ուտելիքի և կամ խմելիքի մեծի սրբազնասուրբ կաթուղիկոսի, խոնարհումն խարճ երդանը հասարակութենէ մերմէ խարճենք տէյին։ Որ ահա ձեռագիրս այս ետուք պարոն կլաւայ աղայ Կարապետ Օվանէսովին որ երբոր սրբազնասուրբ կաթողիկոսն մեր քայ Նախիջևան քաղաքս, մինչի նորա աստի գնալն որքան խարճ և մասրաք լինինը, նայ աղայ Կարապետ Օվանէսովն թող խարճէ հասարակութեան փողէս որ մեզ ընդունելի է»։

Որ Նախիջևանցիք խոստացած են լինում տալ կաթուղիկոսին, եթէ նա բարեհաճէր այցելել Նախիջևանը և իւր չնորհաբեր օրհնութիւնը տար կարօտեալ ժողովրդին, երկու հազար ռուբլի և հատուցանում են այդ գումարը Նորին Վեհափառութեան—, այդ երևում է նոցա Դումի երկրորդ որոշումից, որ տեղի է ունենում նոյն օգոստոսի 15 ին, երբ արդէն վեհափառը Նախիջևանումն է լինում։ «1800 ամին և ամսեանն օգոստոսի 15 ին մեք ի ներքոյ ձեռագրեալքս Նախիջևանու քաղաքի հասարակութեան հոգաբարձու անձինքս, գրուած է Դումի այդ երկրորդ նիստի արձանագրութեան մէջ ետուք այս ձեռագիրս հայոց Նախիջևանու հասարակութեան պարոն կլաւայ Կարապետ Օվանէսովին, որ այսմէ առաջ պատուական հայրապետն մեր սրբազնասուրբ կաթուղիկոսն ամենայն հայոց տեղս չէր և մեք հոգաբարձու անձինքս ընդ կլաւայիւն և ընդ դատաւորքն մեր խորհուրդ արարաք և նորին սրբազնասուրբ կաթուղիկոսին խնդիրք գրեցաք, որ նորայ քալոյն տեղս Նախիջևան խնդրեցաք, և խոստացաք նորայ սրբազնասուրբ կաթողիկոսին բոչի փողն տալ հինգ հարիւր ռուբլի ևս վասն ճանապարհի խարճի տալ ևս հինգ հարիւր ռուպլի, ևս իրեանն ընծայ տալ հազար ռուպլի։ Այժմ նայ սրբազնասուրբ կաթողիկոսն մեր եկաւ քաղաքս մեր Նախիջևան, և մեր հասարակութեանս պարոն կլաւայ Կարապետ Օվանէսով ի հասարակութենէ մերմէ վերոյիշեալ երկու հազար ռուպլի փողն պէթկէ որ գտնու, տայ նորին սրբազնասուրբ կաթողիկոսին մերոյս բարերարին և բազմերախտին, որ այն նորայ տրվէլու երկու հազար ռուպլի փողն մեր ամենեցունցս պարտկն է, որ մեր խորհրդովն էրիտ նա պարոն կլաւայ աղայ Կարապետ Օվանէսովն որ մեք ի ներքոյ ձեռագրեալքս մեր կամաւն գրել ետուք ձեռագիրս այս և ի ներքոյ տորայ ստորագրեալ ետուք նմայ աղայ Կարապետ Օվանէսովին։ Որ մեզ ընդունելի է»։



Նախիջևանում կաթուղիկոսը մնում է երկու շաբաթից աւելի և ճանապարհ է ընկնում դէպի Հաշտարխան, ուր և ժամանում է Սեպտեմբերի 12-ին։ [20]) Այդ երկու շաբաթուայ ժամանակամիջոցում երջանկայիշատակ կաթուղիկոսը, բացի Աբրամովին բարոյապէս պատժելու գործից, որի մասին մենք անցեալ գլխում լիշեցինք, մի քանի ուրիշ կարգադրութիւններ էլ է անում, որոնք մի կողմից ցոյց են տալիս այն մեծ հոգացողութիւնը, որ հանգուցեալ արհին միշտ ունեցել է Նախիջևանի գաղթականների վերայ, միւս կողմից էլ ձգտումն նրա ցանկութիւն վերջնականապէս կարգի դնելու իւր հիմնարկած քաղաքի գործերը։ Այդ կարգադրութիւնների մէջ նամակի գրաւում են մեր ուշադրութիւնը երկուսը՝ Ս. Լուսաւորիչ եկեղեցու շինութեան գործը և 24 հոգաբարձուների կանոնադրութեան կամ «Դաշնագրութիւն միաբանութեան» թղթի վերահաստատութիւնը և բարեփոխութիւնը, որոնց մասին նա երկու կոնդակ է տալիս։ Ս. Լուսաւորիչ եկեղեցին, որի քարէ շինութեան հիմքը շատ ժամանակ էր որ ձգուած էր քաղաքի մեծ հրապարակի մէջ, տակաւին չէր վերջացել մասամբ փողի սակաւութեան, մասամբ էլ սրբազան նորայ տրվէլու երկու հազար ռուպլի փողն մեր ամենեցունցս պարտկն է, որ մեր խորհրդովն էրիտ նա պարոն կլաւայ աղայ Կարապետ Օվանէսովն որ մեք ի ներքոյ ձեռագրեալքս մեր կամաւն գրել ետուք ձեռագիրս այս և ի ներքոյ տորայ ստորագրեալ ետուք նմայ աղայ Կարապետ Օվանէսովին։ Որ մեզ ընդունելի է»։

Նախիջևանում կաթուղիկոսը մնում է երկու շաբաթից աւելի և ճանապարհ է ընկնում դէպի Հաշտարխան, ուր և ժամանում է Սեպտեմբերի 12-ին։ [20]) Այդ երկու շաբաթուայ ժամանակամիջոցում երջանկայիշատակ կաթուղիկոսը, բացի Աբրամովին բարոյապէս պատժելու գործից, որի մասին մենք անցեալ գլխում լիշեցինք, մի քանի ուրիշ կարգադրութիւններ էլ է անում, որոնք մի կողմից ցոյց են տալիս այն մեծ հոգացողութիւնը, որ հանգուցեալ արհին միշտ ունեցել է Նախիջևանի գաղթականների վերայ, միւս կողմից էլ ձգտումն նրա ցանկութիւն վերջնականապէս կարգի դնելու իւր հիմնարկած քաղաքի գործերը։ Այդ կարգադրութիւնների մէջ նամակի գրաւում են մեր ուշադրութիւնը երկուսը՝ Ս. Լուսաւորիչ եկեղեցու շինութեան գործը և 24 հոգաբարձուների կանոնադրութեան կամ «Դաշնագրութիւն միաբանութեան» թղթի վերահաստատութիւնը և բարեփոխութիւնը, որոնց մասին նա երկու կոնդակ է տալիս։ Ս. Լուսաւորիչ եկեղեցին, որի քարէ շինութեան հիմքը շատ ժամանակ էր որ ձգուած էր քաղաքի մեծ հրապարակի մէջ, տակաւին չէր վերջացել մասամբ փողի սակաւութեան, մասամբ էլ սրբազան

---

[20]) Պ. Աղէքսանդր Երիցեանը իւր «Ամենայն Հայոց կաթողիկոսութիւնը և Կովկասի Հայք XIX դարում» աշխատասիրութեան առաջին մասում խօսելով Ցովսէփ կաթուղիկոսի ուղևորութեան մասին Պետերբուրգից Հաշտարխան, մի քանի տեղ չփոթում է ամսաթուերը։ Նորա ասելով կաթողիկոսն Օգոստոսի 4-ին դուրս է գալիս Պետերբուրգից, մօտ երեք շաբաթ մնում է Մոսկուայում և ժամանում է Հաշտարխան Սեպտեմբերի 12-ին, ուրեմն դուրս է գալիս, որ կաթուղիկոսը Օգոստոսի 25—26-ին է կարողանում միայն դուրս գալ Մոսկուայից։ Այն ինչ հանգուցեալ արհին Օգոստոսի 15-ին արդէն Նախիջևանումն է եղել և մնացել է այնտեղ, գոնէ, մինչև Սեպտեմբերի 2 ը, ինչպէս ցոյց են տալիս Դումի երկրորդ նիստի արձանագրութիւնը և Նախիջևանում Օգոստոսի 26-ին և Սեպտեմբերի 1 ին տրուած կոնդակները, որոնք գրուած ու արձակուած են Նախիջևանում։

նի այդ միջոցներում յաճախ քաղաքից բացակայելու պատճառով։ Երջանկայիշատակ կաթուղիկոսը ցանկանում էր մայր եկեղեցու շինութիւնը շուտով վերջացնել, որովհետև, նախ, դորա հետ կապ ունէր և միւս հոգևոր հաստատութիւնների առաջնորդարանի և հոգևոր դատարանի շինութեան գործը, որ պէտք է սկսուէր նորա շինութեան աւարտելուց յետոյ նորա բակում, երկրորդ, նա դորանով կամենում էր շուտով առաջն առնել այն թեր ու դէմ խօսակցութիւնների, զրոյցների և բամբասանքների, որ Աբրահամեանք տարածում էին հասարակութեան մէջ նորա մասին։ Եկեղեցու շինութեան կոնդակը, որ արձակուած է 1800 թուի օգոստոսի 26-ին, տրուած է պարոն Աստուածատուրի, գլխաւոր պարոն Կարապետ Յովհաննիսեանի, պարոն Կարապետ Սահակեանի, պարոն Յարութիւն Տէր Մկրտչեանի, պարոն Յարութիւն Ղաթրանեանի և պարոն Յովհաննէս Սարգսեանի անունով։ Կաթուղիկոսը դոցա յանձնելով եկեղեցու շինութեան աւարտելու գործը, մի քանի կարևոր կարգադրութիւններ էլ է անում։ Նա հրամայում է նոցա մի առանձին մատեան կազմել և շինութեան բոլոր ծախսերը մանրամասնաբար գրել նորա մէջ, որպէս զի յետոյ հեշտ լինի իմանալ, թէ որքանով է գլուխ եկել բոլոր շինութիւնը։ Նա յորդորում է նոցա աշխատել այդ բարեպաշտութեան գործի համար և ուրիշներին ևս համոզել նուիրաբերութիւններ անել. նա խոստանում է յանձնել նոցա իւր ձեռքում գտնուած վեց ոսկէ խաչերը և այլ կոտրտուած արծաթեղէն, պատուիրելով հալել նոցա և ծախել և գոյացած փողը գործ դնել շինութեան վերայ, մինչև որ ինքը կարողանայ հաւաքել և հասցնել նոցա շինութիւնն աւարտելու համար հարկաւոր բոլոր փողը։

Դաշնագրութիւն միաբանութեան թուղթը, որ գրուած էր 1795 թուին և որի հիման վերայ կազմակերպուած էր քաղաքի տնտեսական կառավարութիւնը կամ «Քաղաքային Դումը», այդ ժամանակներում արդէն խանգարուել ու կորցրել էր իւր առաջուայ նշանակութիւնը։ Դորա պատճառն էր, նախ, այդ թղթի կամ կանոնագրութեան թերի ու անկատար լինելը, երկրորդ, Աբրամեանց խռովութիւնը։ Մի քանի չար և պղտորիչ մարդիկ իւրեանց գլուխ ունենալով վերոյիշեալ Աբրամովին և օգտուելով սրբազանի բացակայութիւնից, պատրել էին պարզամիտներին և թիւրել էին նոցա ուղիղ ճանապարհից։ Երջանկայիշատակ կաթուղիկոսն ի նկատի առնելով քաղաքի տնտեսական կառավարութեան այդպէս խանգարուելուց ապագայում հայ հասարակութեան գլխին գալիք պատահարները, կոնդակով 11 յօդուածից բաղկացած մի նոր կանոնադրութիւն է տալիս նոցա, որ թէև ընդհանրապէս միևնոյն քնաւորութիւնն է կրում, ինչ որ 1795 թուականինը, բայց մասնաւորապէս շատ է զանազանուում նորանից։ «Դաշնագրութեան թուղթը» հոգաբարձուների թիւը սահմանում էր 24, նոր կանոնադրութիւնը նոցա թիւը հասցնում է 36-ի։ Դաշնագրութեան թուղթը Դումի նպատակը և հոգաբարձուների պաշտօնի որպիսութիւնն ընդհանուր խօսքերով էր որոշում, նոր կանոնադրութիւնը թէև աւելի հակիրճ կերպով է խօսում այդ կէտի մասին, բայց աւելի ճշտութեամբ է որոշում Դումի և հոգաբարձուների ինչ լինելը։ Դաշնագրութեան թուղթը, բացի հոգաբարձուների ժողովներից, թոյլ էր տալիս և հասարակութեան ժողովներ, նոր կանոնադրութիւնն ոչ միայն արգելում է հասարակութեան ժողովները, այլ և թոյլ չէ տալիս մինչև անգամ մասնաւոր ժողովները։ Դաշնագրութեան թուղթն ընդհանուր կերպով էր որոշում Դումի իրաւասութեան պատկանելիք գործերը, նոր կանոնադրութիւնն ուղղակի մատնացոյց է անում այդ գործերի վերայ։ Դաշնագրութեան թուղթը գիւղացոց ներկայացուցիչների Դումի նիստերին և հասարակութեան ժողովներին մասնակից լինելու մասին ամենևին չէր լիշում, նոր կանոնադրութիւնն ուղղակի չեշտում է, որ գիւղացոց ներկայացուցիչներն էլ պէտք է մասնակցեն Դումի նիստերին, որովհետև նոքա էլ հայ հասարակութեան անդամներից են։ Դաշնագրութեան թուղթը քաղաքի կարգերը խանգարողներին, անհնազանդներին և ապստամբներին հոչակում էր անբարիշտ և անօրէն և արտաքսում էր հասարակութիւնից, նոր կանոնադրութիւնն այդ տեսակ անձնաւորութիւններին ուղղակի կամ տեղական ոստիկանութեան ձեռքն է յանձնում կամ նահանգական իշխանութեան տնօրէնութեան։ Դաշնագրութեան թուղթն ատենական օր Դումի նիստերի համար նշանակում էր շաբաթ օրերը, նոր կանոնադրութիւնը նոյն նպատակի համար սահմանում է ուրբաթ օրերը։ Եւ առհասարակ հին կանոնագրութիւնն աւելի ներողամիտ էր դէպի քաղաքացիների և գիւղացիների թուլութիւնները ու պակասութիւնները և աւելի հասարակային ու ժողովրդական հոգ-

ւով էր կազմուած, քան թէ նորը, որ աշխատում է սեղմել, կենդրոնացնել իշխանութիւնը և քաղաքի կառավարութիւնը մի քանիների ձեռքում և յաճախեցնել ոստիկանութեան և նահանգական իշխանութեան միջամտութիւնը հասարակութեան ներքին գործերում։

Քաղաքի կառավարութեան ձևի և իշխանութեան այդ սեղմումն ու կենդրոնացումն հետևեալ կերպով է արտայայտուած նոր կանոնադրութեան մէջ. «Նախ՝ զի հոգաբարձութիւն ոչ այլ ինչ է եթէ ոչ վերակացութիւն հասարակութեան համայն ժողովրդեան քաղաքի իւիք, որք գործվագութ խնամօք կառավարելով զժողովուրդն, ի բաց վանել ի նոցանէ զամենայն ամբոխական խռովութիւնս և արգելուլ զիսառնիճաղանճս ի հաւաքմանէ զուեհչուկ ամբոխեաց սակս հասարակութեան խորհրդոց ինչ, այլ զպտրտս նոցա ինքեանք ընկալեալ ի թիկունս իւրեանց ջանացօղս լինիցին պահել զնոսա ի խաղաղութեան և ի բարեկարգութեան, որպէս զքաղաքիս. 2) Այլն հոգաբարձուքս պարտաւորին ունել ի մէջ իւրեանց՝ զսէր կատարեալ՝ զճշմարիտ խաղաղութիւն և զմիաբանութիւն, որով լինել հայր և այցելու քաղաքին, աչք կուրաց, ոտք կաղաց, մխիթարութիւն բովանդակ ժողովրդեան. 3) Ունել զհաւատարմութիւն առ Աթոռն ամենաողորմած Մեծի Կայսերն Մերոյ և թագաւորի, և զանձինս ձեր՝ զոհ առնել ի վերայ նորին ըստ քրիստոնէական պարտաւորութեան և երդման ձերոյ, ոչ միայն ի քաղաքիս այսմիկ և ի մէջ թագաւորութեանցս, այլ և արտաքոյ յայսմ տէրութենէ յամենայն ուրեք. 4) Պատուիրեալ սաստկապէս՝ ի զայֆախանայսն, մի երբէք խօսել ի վերայ թագաւորութեան և հասարակութեան բանն, զի մի անզգուշ անձանց և տգիտաց՝ յառաջասցի արատիք ինչ քաղաքիս, որոյ վասն սուր մեծ զոյ ի թագաւորէն, յաղագս այսպիսեացն. 5) Արգելուլ զհասարակութիւն ի յանկարգ ժողովոց և ի հաւաքմանէ, զի մի տգեղութիւն ինչ և քեկումն անուան պատահեսցի ի նոցանէ այսմ քաղաքի որպէս ուսուցեն նոցա չարքն, որոյ վասն կրեցիք դուք յոյժ. զի ի խառնիճաղանճ ամբոխից բարի ինչ ոչ յառաջանայ և օրէնքն կայսերական՝ զնոսա արգելու։ Այլ եթէ սակս հասարակութեան օգտի և հարկաւորութեան խորհուրդ ինչ հարկաւորիցի բաւական են այսոքիկ երեսուն և վեց անձինքս՝ որք երդմամբ ընտրեալք են ի հոգաբարձութիւն հասարակութեան



ձերոյ։ Եւ եթէ այնպէս խորհուրդ լինիցի որ պատկանիցի և գիւղացւոցն, յայնժամ հարկաւորի գլուխն, կոչել ի նոցանէ և զոմանս ի խորհուրդ, յամենայն գիւղիցն մի անձն և կամ եթէ նոքա հաճեսցին՝ զմի ոք նշանակել յատկացուցանել վասն խորհրդոց ի կողմանէ գիւղացւոցն, զի և նոքա անդամք են հասարակութեան ձերոյ՝ հարկ է զնոսա ոչ որոշել ի միաբանական խորհրդոց, զի չահեսցի ի մէջ ձեր, սէր և միաբանութիւն, իբրև զմի հասարակութիւն, ոչ արհամարհել զնոսա որպէս զգիւղացիս, այլ պատուեալ որպէս զանդամս այսմ հասարակութեան. 6) Արտաքոյ այսմ որ ինչ ժողով լինիցի ի տունս ի խանութս և ի զայֆախանայս և ի հրապարակս ուր արգելեալ են օրինօք, հրամայել ի Մաղիստրատէն պօլիցին ըմբռնել զխռովիչսն և հրապարակաւ պատժել, և եթէ Աստիճանաւոր ոք իցէ ի մէջ նոցա, արտաքսել ի հասարակութենէ որպէս հատեալ անդամ և գրել ի գուբէռնական կառավարութիւն պատժել զչարաճիկն այն, որպէս զպղտորիչ տէրունի ժողովրդեանս այսմիկ. 7) Ցամենայն ուրբաթու ժողովեալ այն ընտրեալ անձանցս ի Մաղիստրատէն, ի յութ ժամէն մինչև ցտասն և երկու ժամն ընդ գլուխն և դատաւորացն, ի միասին խորհիլ վասն հարկաւորութեանցն քաղաքիս խօսել հանաւէտութեանցն և արդիւնաւորութեանցն ի վերայ վաճառականութեան գործոց. գիտել և քննել թէ յորում քաղաքի ինչ ապրանք վաճառի և որպիսի ապրանք կարէ արդիւնաւորել զքաղաքն, և յետ խորհելոյ զկերպն վաճառականութեան ծովու և ցամաքի. ապա ընթեռնուլ տալ զկազէթս՝ և լսել թէ ի յոր աշխարհի ինչ ներգործի կռիւ կամ հաշտութիւն և կամ վաճառականութիւն, զի զօրութիւն կազէթին մեծապէս սրէ զմիտս վաճառականաց ձերոց, և մերձեցուցանէ զձեզ ի ծանօթութիւն և ի գիտութիւնս այլ աշխարհաց և վաճառականաց, քան զոր չիք ինչ ըղձալի մարդկային մտաց, քան լսել զնորագոյն ինչ. 8) Պարտաւորութիւն է գլուխն, դատաւորացն և հոգաբարձուացն, զորք մանկունս ընկալնուլ ի գթութիւնս իւրեանց։ և զկայս նոցա պահպանել ի լաւիչսակողաց զմանուկն տալ բարի անձանց սնուցանել զնոսա խրատիւք և ուսմամբ և զկայս մնացեալս ի ծնողաց նոցին, յանձնել հաւատարիմ առն, զգուշութեամբ պահպանել մինչև ի զարգացումն որբին այնմիկ, ապա թէ ի կատարեալ հասակի յանձնել նմա, և զնա առնել պիտանի անդամ հա-

սարակութեան, օրհնեալ է հոգաբարձուն այն՝ որ գորովա-
գթութեամբ՝ ընկալնու զորբս, և ծնողական պարտաւորութիւն
ի վերայ ընկալնու, որպէս զի կարիցէ որբ մանուկն այն ա-
սել հայր իմ և մայր իմ թողին զիս. իսկ հոգաբարձուքս այ-
սոքիկ՝ Աստուծոյ, նմանեալ ընկալան զիս։ Եւ զինչս նոցա
պահպանել ի ցեցոյ ի փտութենէ և ի ժանկէ, չարժականքն
միշտ կարեն ծախել հոգաբարձուքն, իսկ անշարժքն անծախք
են մինչև ի զարդացումն կատարեալ հասակի որբին այնմիկ։
9) Գանձապետացն աղքատաց՝ յամենայն ամի սոքա վերահասու
լինիցին պահպանել և կամ աղքատացն մատակարարել զար-
դիւնս նոցին ընդ հոգևոր դատաւորացն. 10) Սոքա լինիցին
վրէժխնդիր այնոցիկ՝ որք հայհոյեսցեն զտուրբ հաւատն քրիս-
տոնէական, զթագաւորս՝ զՀայրապետս՝ զեպիսկոպոսունս՝
զքահանայս և զխորհուրդ եկեղեցւոյս. և մինչ այսպիսի մեղք
քրէականք են և անթողելիք, գլաւայն պարտաւորի ի գուպէռ-
նական կառավարութիւն ծանուցանել և նովաւ պատժել զմե-
ղաւորն. 11) Զգոյշ լինիցիք ի պահպանել զդեռին չնորհե-
ցեալս Մեզ ի Ամենողորմած Թագաւորէն Թարց գլաւայի և
մաղիստրաթի գիտութեան մի ոք համարձակեսցի ինքն տիրել
և կամ այլոց տալ. որպէս յառաջ առնէին, այլ այն ամենայն
կախի ի բարեկարգութենէ վերոյ անձանցն և ուր պատշաճ
տեղիք դատնիցին այգեաց, բաժանեսցեն այնց՝ որք ունեն
զհանութիւն զայդիս և զտունկս աճեցուցանելոյ։

Ամեն բանից երևում է, որ այս կանոնները լուսահոգի
հայրապետը գրել է Աբրահամեանց խառվութիւնների աղդե-
ցութեան ներքոյ։ Նա ինչպէս երևում է, կարծել է, որ հին
կանոններն իրեանց ներողամիտ հոգւով և ազատամիտ ուղ-
ղութեամբ եթէ խառվութիւններ ի բուն պատճառը չեն եղել,
գոնէ, շատ նպաստել են նոցա զարգանալուն և լայն ծաւալ
ստանալուն, ուստի և նա մտածել է իւր նոր կանոններով
ապագայում պատահելիք դոյնանման խառվութիւնների առաջն
առնել։ Նա արգելել է հասարակութեան ժողովները և իշխա-
նութիւնը կենդրոնացրել է քչերի ձեռքում, որովհետև հասա-
րակութեան ժողովներին մասնակցող խառնիճաղանճ ամբոխն
ենթարկուելով Աբրամովի և Դերիջանեանի պէս չար և իւ-
րեանց անձնական շահերին հետևող անձնաւորութիւնների աղ-
դեցութեան, աղմուկ, խառվութիւն ու շփոթ է հանում եղել։
Նա արգելել է տներում գումարուող մասնաւոր ժողովները,



որովհետև այդպիսի ժողովներում են յաճախակի խմբագրում
ու կազմում եղել զանազան կեղծ ու պատիր խնդրագրեր
քարձրագոյն իշխանութեան անունով, ինչպէս որ դորանից ա-
ռաջ Աբրամովի տանը խմբագրուել էր Դերիջանեանի քսու-
թեան թուղթը. նա թոյլ չէ տուել հրապարակներում, խա-
նութներում և սրճարաններում յաճախակի տեղի ունեցող «հա-
ւաքումը», որովհետև հէնց այդ տեսակ «հաւաքմունքներում»
էին կազմուում զանազան աննշան մարդկանց իբր թէ զոր-
ծած հասարակօգուտ սխրագործութիւնների ջատագովութեան
դիմումները, որոնցից մի երկու օրինակ ներկայացրել էր իշխա-
նութեան Դերիջանեանը. վերջապէս, նա պատուիրել է «պղտո-
ռիչ, գռեհկաբարոյ և չարաճճիկ» մարդկանց արտաքսել հասա-
րակութիւնից, հրապարակաւ պատժել կամ նահանգական իշ-
խանութեան ձեռքը յանձնել, որովհետև տեսնում է եղել, որ
քաղաքի մէջ մինչև այդ ժամանակներն եղած բոլոր խառվու-
թիւնների պատճառը հէնց այդ կարգի մարդիկն են եղել։

Որ նոր կանոնները կաթուղիկոսը գրել է Աբրահամեանց
խառվութիւնների ազդեցութեան ներքոյ,—դորանում կասկած
լինել չի կարող։ Դորան ուղղակի ապացոյց կարող են լինել
բացի կանոնների ընդհանուր հոգուց, և այն ակներև ակնարկ-
ները և աշկարայ մատնացուցումները, որոնց մենք պատահում
ենք թէ կանոնների յառաջաբանում և թէ տեղ-տեղ նոյն իսկ
յօդուածների մէջ։ «Ծանուցումն լիցի Նախիջևանու սրտադիւր
և սիրելի ժողովրդեանդ իմոյ, ասուած է յառաջաբանում, զի
սահմանեմ զսոյն կանոն հոգաբարձութեան որ է քաղաքական
տնտեսութիւն։ Ոչ իբրև պակասաւորք սոյնոյ բարեխնամա-
տարական տնտեսութեանց, այլ զ1795 ամի կանոնեցելոցն
իմոց նուիրեմ զվերանորոգութիւն և զհաստատութիւն, զոր ի
սակաւիկ ինչ հեռանալն իմ ի ձէնջ ըստ կայսերական բարձ-
բագոյն հրամանի, յարեան ի մէջ ձեր արք չարք և պղտորիչք,
որք զպարզամիտս պատրեալ, առ յորսալոյ զազանութիւն և
զփառս վասն ինքեանց, թիւրեցին զձեզ ի յուղիղ կանոնաց՝
և ի բարի սահմանադրութեանց, որք սահմանեցեալք էին
Մեօք ըստ ձերդ հաճութեան և խնդրոյ։ Իսկ այժմ այն ամե-
նայն կանոնք ոչ երևին ի մէջ ձեր զի չարքն անհետս են ա-
բարեալ գբարի սերմունսն մեր, զի զորոմս ապականիչս ըն-
դարձակ սերմանել մարթասցին ի սիրտս պարզամիտ ժողո-
վրդեանդ իմոյ։ Բայց Աստուած՝ որ սրտագէտ է ամենայնի և

Մարդասէր, եգիտ զսիրտս բազմուց անմոլարս և ոչ երկրպա-
գանօղս դիցն անօրինեցելոցն, չարժեաց զսիրտ Ամենաբարե-
պաշտութեամբ և Արդարադատութեամբ լցեալ Օգոստափառ
Մեծի կայսերն Պօղոսի, կործանեաց զբագինս կռոց նոցա, և
զչար խորհուրդս նոցին եղծեալ քակեաց. արդարութեամբ պատ-
ժելով և դատապարտելով զնոսա։ Ուստի՝ իբրև զալիս ծովու
վրդովեալ քաղաքս մեր, խաղաղացուցեալ եթող այսուհետև
զգաստանալ և լինել որդիք Աստուծոյ խաղաղութեամբ և բա-
րեպաշտութեամբ, և հաւատարիմ հպատակք կայսերութեանս
խորագոյն հպատակութեամբ և օրինացն նորին պահպանու-
թեամբ։ Արդ՝ եկեալ իմ այժմ ի քաղաքս այս Աստուածապ-
զտի զամենեսեանդ համեմատ կամաց նորին կայսերչա-
մեծութեան, և ի բազմավաստակ Քահանայապետիս հերոյ։
Վասնորոյ՝ գթութեամբ իջեալ ի խնդիր և յաղաչանս ձերոյ
հաստարակութեան, վերանորոգեմ զկանոն հոգաբարձութեան և
տնտեսութեան որ ըստ զօրութեան կայսերական շնորհեցեալ
Պրվէլէկին կարողաջիք վարել ըստ հնագոյն բարւոք կանո-
նաց ծիսի և սովորութեան Ազգի և ժողովրդեան մերոյ կեր-
պաւորելով երկրիս կայսերական օրինաց և կանոնաց։ Եւ ըստ
այսմ ընտրեալ եղեն ի ձէնջ արք բարիք թուով՝ 36, զորս
երդուեցուցեալ խաչիւ և սուրբ Աւետարանաւ, անուանեցաք
զնոսա զամենեսեան Հոգաբարձուս Նախիջևանու քաղաքիս»։

## Գլուխ Է.

Նոր կանոնների մէջ առանձին կերպով չեշտուած են
նամանաւանդ նոցա երեք կէտերը, որոնց մասին հին կանոն-
ները կամ բնաւ չեն խօսում, կամ հարեանցի են անցնում։
Դոքա կայսերական օրինաց հնազանդութեան, գլուղացւոց իրա-
ւունքների պաշտպանութեան և կայսերաշնորհ հողերի սեփա-
կանութեան պահպանութեան և չահաւէտ գործածութեան կէ-
տերն են։ Յայտնի է, որ Յովսէփ սրբազանը իւր առաջնոր-
դութեան հէնց առաջին օրից հոգւով ու սրտով կապւում էր
ռուսաց արքունիքի հետ և իւր սրտի բոլոր համոզմունքով
սկսում է սիրել ու յարգել մեծ թագուհուն և նորա յաջորդ
երջանկալիշատակ Պօղոս կայսեր. նա հէնց սկզբից համո-
զուած է լինում, որ տառապեալ հայ ժողովուրդը կարող է
միայն հանգիստ գտնել Ռուսաց ինքնակալների հզօր գալիսո-



նի հովանաւորութեան ներքոյ, ուստի և նա ոչ միայն իւր
բոլոր գործողութիւնները համաձայնեցնում է իւր այս ներքին
համոզմունքին, այլ և թէ գրով և թէ խօսքով աշխատում է
այդ իւր համոզմունքը ներշնչել իւր առաջնորդութեան տակ
գտնուած ժողովրդի սրտի մէջ։ Մեր ձեռքին գտնուում է սրբ-
բազանի իւր հօտին ուղղած առաջնորդական անդրանիկ շրջ-
ջաբերականը, որ այնպիսի զեղուն ու թաթախուն զգացմուն-
քով է առլցուած դէպի կայսերուհին, Ռուսաց տէրութիւնը
սիրելու և նորա ինքնակալներին յարգելու այնպիսի անկեղծ
ու սրտանց խրատներ և յորդորներ է պարունակում իւր մէջ,
որ, կարծես, այլ ևս ոչ մի կասկածի տեղ չէ մնում նորա չա-
փազանց երախտագիտութեան, սիրոյ դէպի կայսերական
տունն ընդհանրապէս և դէպի կառավարող կայսրը մասնաւո-
րապէս։ [21]) Սակայն Աբրահամեանք, որոնք իւրեանց նպա-

---

[21]) Յովսէփ սրբազանի այդ անդրանիկ շրջաբերականը
մեծադիր թերթի վերայ գրած մի կոնդակաձև գրութիւն է. նա
տուած է Նախիջևանի յաջորդ Կարապետ վարդապետի անու-
նով Պետերբուրգում 1798 թուի Մարտի 25-ին և իւր ճակա-
տին կրում է սրբազանի կայսերաշնորհ ընծաների նկարնե-
րով զարդարուած եպիսկոպոսական կնիքը, որի տակ կիսաբո-
լոր ձևով գրուած է՝ «Կնիք Յովսէփայ արքեպիսկոպոսի հայոց
ընկալեալ զպարգևս ի կայսերուհոյն ամենայն ռուսաց. 1793»։
Շրջաբերականի մէջ հանգուցեալ սրբազանը հանդամանօրէն
խօսելով Հայերի կրած նեղութիւնների մասին, նմանեցնելով
նոցա դրութիւնը Բաբիլոնի Հրէից գերութեան և Ռուսաց ինք-
նակալներին Հայոց ազատիչ և մի նոր Կիւրոս ներկայացնե-
լով, կանգ է առնում երջանկալիշատակ Եկատերինէ կայսե-
րուհու Սիմէոն կաթուղիկոսին շնորհած բարձրագոյն հրովար-
տակի և ընծաների վրայ, ինքը կայսերական մաղթանքի հա-
մար գրուած աղօթքի խօսքերով բարեմաղթութիւններ է ա-
նում և հրաւիրում է իւր հօտին նոյնը անել ամբողջ կայսե-
րական տան համար։ «Ժամ է մեզ ահա, ասուած է կոնդակի
վերջում, փոխարինել՝ անչափ և անհասանելի այսմիկ գթու-
թեան կայսերն մերում Մեծի և Ամենագթածի, բայց զինչ տա-
ցուք բարերարութեան նորա ըստ Դաւթի՝ եթէ ոչ զանուն
Տեառն կարդալով՝ զնա որ ամենակարողն է՝ կոչեսցուք ի
փոխարինել՝ ասելով թէ՝ որ ի բարձրութենէ զհոլիցն իւրոց
զիջեալ՝ զանկեալս կանգնեաց՝ և զխոնարհեալս բարձրացոյց
ևս դու ի յԱստուածային Աթոռոյ քումմէ, և զկանգուն և ըզ-
բարձր զԱթոռ թագաւորութեան կայսերն մերոյ, բարձրագոյն
և հաստատուն արասցես, որ զարտմեալ սիրտ ազգի մերոյ
միխիթարեաց՝ սրբելով զարտասուս ի դիմաց մերոց, միխիթար

տակներին հասնելու համար միջոցների խտրութիւն չէին անում, աշխատել էին առաջնորդի մինչև անդամ և այդ զգացմունքը և ուղղութիւնը տէրութեան աչքին կասկածաւոր երևեցնել։ Նոքա չչատանալով, որ իւրեանց քսութեան թղթի մէջ գող էին դուրս բերել նորան, այլ և ճգնել էին հաստատել, որ նա օրինազանց է, որովհետև ծածկաբար անցաթղթեր է տուել Ղռիմ փախչող Հայերին, և ապստամբ է, որովհետև չէ ընդունել 1785 թուին հրատարակուած քաղաքային դումի կայսերական կանոնադրութիւնը։ Արքեպիսկոպոսը, որ «Դաշնադրութեան թղթի» մէջ էլ չէր մոռացել պատուիրել իւր սիրեցեալ հօտին սիրել և հաւատարմութեամբ ծառայել ամենաողորմած թագուհուն և հնազանդել նորա տուած փրկարար օրէնքներին, այժմ նոր կանոններում առանձին կերպով չեշտում է այդ կէտը, կամենալով դորանով իսպառ կարկել իւր թշնամիների բերանը և մի անդամէլ բարձրաբարբառ վկայել իւր դէպի կայսերական տունը ունեցած հաւատարմութիւնը։

Գիւղացիք, ինչպէս մենք տեսանք Մագիստրատի կազմակերպութիւնից, սկզբում քաղաքացւոց հետ միասին կազմում էին մի հայկական շրջան և մի հասարակութիւն. նոքա էլ

---

պահեսցես զսիրտ նորին Ամենագթած՝ երկարութեամբ կենաց իւրոց, և իւրն կայսերական սերնդոց՝ որ զհաւատս մեր յարդեաց՝ յայցելանելով եկեղեցեաց մերոց, և կախելով զբարեկարգութիւն նոցա ի կամաց և ի Տնօրէնութենէ սրբազան վեհապետին և մեր, որ զոյս մեր հաստատեաց բարձրագոյն Հրովարտակաւն շնորհեցելով սրբոյ Աթոռոյն՝ և յատնելով զայն ի վիճակի իւրում գաւառապետաց իւրոց և կուսակալաց, և որ զսէր իւր առ մեզ աճեցուցց կայսերական ձրիւք իւրովք, ընդ հաւատոյն յարդութեան՝ Հայրդ երկնաւոր զօրհնեալ գլուխ նորին օրհնեսցես, ընդ յուսոյն հաստատելոյ՝ որդիդ միածին քանդ Աստուած՝ զսերունդ նորա կայսերական և զաղգ ընտանիս նորա օրհնեսցես, և ընդ սիրոյն ձրիւքն ցուցելոյ, Հոգիդ սուրբ ճշմարիտ՝ զկալուած նորա և զժառանգութիւն թագաւորութեան օրհնեսցես՝ յազգաց յազգս՝ և յորդւոց յորդիս՝ մինչև ի կատարած աշխարհիս պատուիրեմք ահա որդւոցդ մերոց և սիրելեաց՝ ընդ ընկալնուլն զայս թուղթ օրհնութեան Ժողովեսջիք ի տաճար Տեառն Աստուծոյ և զկնի Աստուածային պատարագին՝ ընթեռնլով զՀրովարտակն բարձրագոյն նորին Մեծութեանն հայերէն և ռուսերէն և զօրինակն ևս գրեցելոց հրամանացն, որ առ կուսակալսն տէրութեան իւրոյ, կատարեսջիք ապայ՝ զմաղթանս Աստուածահանդէս ըստ ծիսի, և զնդրուածս Աստուածահայցս... և այլն։



կառավարութեան գործերի մէջ նոյնքան մասն ունէին, որքան և քաղաքացիք, նոքա էլ մասնակցում էին հասարակաց ժողովներին, նոքա էլ իրաւունքի տէր էին և ձայն ունէին։ Սակայն ժամանակի ընթացքում քաղաքացիք ամեն բան իւրեանց ձեռքն են հաւաքում և սկսում են բռնաբարել գիւղացւոց իրաւունքները, ըստ քմայ, հրաւիրելով կամ չհրաւիրելով նոցա ժողովներին, որից և գիւղերի ու քաղաքի մէջ մի տեսակ սառնութիւն է ընկնում։ Սրբազանը, որ Դաշնադրութեան թղթի մէջ ի նկատի չէր առել այդ հանգամանքը, տեսնելով, որ այդ սառնութիւնը գնալով աւելանում է, և գուշակելով, որ ապագայում դորանից շատ վնասակար բաներ կարող են ծագել, իւր նոր կանոնների մէջ անհրաժեշտ է համարում չեշտելով յիշել, որ գիւղացիք էլ պէտք է մասնակցեն Դումի նիստերին, որովհետև նոքա էլ հասարակութեան անդամ են։ Արժանի է ուշադրութեան այն հանգամանքը, որ սրբազանն իւր այդ կարգադրութեամբ կամեցել է երկու նպատակի հասնել՝ նախ, պաշտպանել գիւղացւոց իրաւունքները և նոցա ու քաղաքացւոց մէջ երևեցած սառնութեան առաջն առնել, երկրորդ, միջոց տալ գիւղացիներին չահուել քաղաքացիների խրատներից և խորհուրդներից. Դժբաղդաբար սրբազանի այդ երկու ակնկալութիւնը ևս չեն իրագործուում. քաղաքացիք յամառում են իւրեանց գոռոզութեան մէջ և սառնութիւնը հետզհետէ խոր արմատ բռնելով, փոխուում է ատելութեան ու թշնամութեան։ Ցետագայ հանգամանքները չեն նպաստում այդ գժտութեան ու ատելութեան պակասելուն կամ նուազելուն. ընդհակառակն առաջ են գալիս նոր, զուտ չինական և քաղաքային չահեր, մէկզմէկու իրաւունքների բռնաբարութեան դէպքեր, որոնք կամաց կամաց գործն այն տեղն են հասցնում, որ հայ հասարակութիւնը պառակտուում է երկու թշնամական բանակի՝ գիւղացւոց և քաղաքացւոց։ Քաղաքի աղայական դասակարգը, որ յետագայ ժամանակներում հայ հասարակութեան կառավարութեան բոլոր գործերն իւր ձեռքն է ձգում, բացի նորանից, որ հեռացնում է գիւղացիներին կառավարութեան գործերից, այլ և սկսում է նոցա վերայ նայել արհամարհական աչքով ճիշտ այնպէս, ինչպէս մի ժամանակ հայ սեպուհներն ու նախարարները նայելիս են եղել իւրեանց կալուածներում ապրող գիւղացիների վերայ։ Աղանելի այդ հայեացքը կամաց կամաց ընդհանրանալով, տարած-

ւում է և բոլոր քաղաքացիների մէջ, առաջ բերելով մինչև ցայժմ դեռ գիւղացիների վերաբերութեամբ գործածուող «մոքոց և իւղոտ գլուխ» մակդիրները, որոնք բացի նորանից, որ բնորոշում են գիւղացուց անտաշ լինելը և գլուխները իւղքսելու սովորութիւն ունենալը, այլ և մի տեսակ արհամարհական նշանակութիւն էլ ունին։ Գիւղացիներն էլ յանձնուած լինելով իւրեանց բաղդին, չունենալով առաջնորդող ոյժ, զրկուած լինելով հայ հասարակութեան շահերի չարն ու բարին ճանաչելու ամենատարրական հասկացողութիւնից, սնուում ու մեծանում են կոչտ, կոպիտ, բիրտ կեանքի մէջ։ Նոցա մէջ հետզհետէ արմատանում է այն համոզմունքը, որ քաղաքացիք թշնամի են իրանց, որ ինքեանք նոցանից իւրեանց համար լաւ բան չպէտք է սպասեն։ Դորա հետեանքը լինում է այն որ նոքա սկսում են ամեն բանում քաղաքացիներին հակառակ գործել, որով և, յայտնի բան է, անդիտակցաբար վնասում են հայ հասարակութեան ընդհանուր շահերին... Դեռ քանի գոյութիւն են ունենում Հայոց արտօնութիւններն այդ երկու հակառակ բանակի անտոգոնիզմն այնքան աչքի չէ ընկնում, որովհետև նոքա կապուած լինելով արտօնութիւններով, ստիպուած են լինում կամայ-ակամայ գործել միասին, բայց երբ որ նոքա վերջանում են և նոցա փոխանակում են տէրութեան ընդհանուր կարգերն ու օրէնքները, այդ անտոգոնիզմն երևան է գալիս իւր բոլոր զօրութեամբ։ Առաջ է գալիս, օրինակի համար, «զեմստվոների» խնդիրը և քաղաքացիք կամենում են և յոյս են ունենում իրաւունք ստանալ Նախիջևանից և նորա հայ գիւղերից բաղկացած մի առանձին «զեմստվո» ունենալ։ Գիւղացիք, փոխանակ ինքեանք ևս իւրեանց կողմից նպաստելու այդ գործին, անտարբեր են մնում, կամ, լաւ է ասել, կամք չեն տալիս, և ստիպուած են լինում յայտնի բան է, միանալ դրացի զեմստվոյին։ Հրատարակուում է ընդհանուր զինուորագրութեան կանոնադրութիւնը և Նախիջևանից ու նորա հայ գիւղերից, իշխանութեան կարգադրութեամբ, կազմուում է մի զինուորագրութեան շրջան։ Գիւղացիք անբաւական են մնում դորանից և հակումն են ցոյց տալիս բաժանուել Նախիջևանից և միանալ Ռաստովի զինուորագրութեան շրջանին, պատճառ բերելով, որ քաղաքացիք զանազան միջոցներով աշխատում են ազատել իւրեանց որդիներին զինուորութիւնից, և ինքեանք ստիպուած են լինում նոցա տեղը զինուոր դնալ, և այլն և այլն։



Յայտնի է, որ քաղաքին 1779 թուականի բարձրագոյն հրովարտակով շնորհուած էր 12 հազար օրավար հող։ Այդ հողի վերաբերութեամբ հէնց սկզբից առաջ են գալիս երեք խնդիր՝ հողերի մի մասի փոխելու և նոցա քանակութիւնն աւելացնելու խնդիր, հողերի տեղական իշխանութեան ձեռնմխութիւններից պաշտպանելու խնդիր և, վերջապէս, նոցա շահաւէտ գործածութեան խնդիր։ Հողերի մի մասի փոխելու և նոցա քանակութիւնն աւելացնելու խնդիրն առաջ էր եկել այն հանգամանքից, որ շնորհուած հողերի մի մասը բոլորովին անպէտք էր վարուցանքի համար։ Գաղթականները դեռ 1780 թուին, ինչպէս մենք այդ տեսանք, այդ թուին առաջնորդի Պետերբուրգից նոցա գրած թղթից, խնդրել էին և խոստումն էին առել Պատեմկինից, որ Նախիջևանի հողերին կից գտնուած գետինը շնորհուի նոցա։ 1787 թուին կայսերուհու Ղրիմի ճանապարհորդութեան ժամանակ նոքա նորից իւրեանց ներկայացուցիչ մահտեսի պարոն Աստուածատրի և առաջնորդի բերանով վերանորոգել էին Կրեմէնչուկում իւրեանց խնդիրը նոյն բանի մասին իշխան Պատեմկինի առաջ։ Նոյն նպատակով առաջնորդը 1791 թուին առաջ պատգամաւոր էր գնացել Օչակով պայծառափայլ իշխանի մօտ և յետոյ ճանապարհ էր ընկել Պետերբուրգ և ամբողջ հայ հասարակութեան կողմից աղերսագիր էր մատուցել տէրութեան իշխան Պատեմկինի անունով։ Այդ բոլոր աղերսագրերի, խնդրագրերի և պատգամաւորութիւնների հետեանքը, վերջ ի վերջոյ, եղել էր այն, որ բարձրագոյն հրաման էր հրատարակուել և կատարուել էր գաղթականների երկու ցանկութիւնը՝ ընծայուել էր նոցա 243,162 ռուբլի 58 կոպէկ ապառիկ գումարը և շնորհուել էր նոցա ցանկացած գետինը, որով և քաղաքի հողերի քանակութիւնը 12 հազարից բարձրանալով, հասել էր 20 հազար օրավարի [22])։ Հողերի տեղական իշխա-

---

[22]) Այդ բարձրագոյն հրամանը մենք չկարողացանք գտնել. նորա մասին մենք տեղեկութիւն ունինք Դերիջանեանի քննութեան գործի դատաստանական քննութիւնից։ Դատաստանի քննութեան 7 յօդուածում ասուած է՝ «Дано было архіепископу не одинадцать, но десять тысячъ рублей, на проѣздъ въ Очаковъ къ покойному князю Потемкину, для испроше-

նութեան ձեռնմխութիւններից պաշտպանելու խնդիրը առաջ էր եկել այն հանգամանքից, որ տեղական իշխանութիւնն ի նկատի չառնելով բարձրագոյն հրովարտակով Հայերին շնորհած արտօնութիւնները, ի միջի այլոց, ձեռնամուխ էր եղել և նոցա հողերին։ Ցայտնի է, որ առաջնորդը դեռ 1798 թուին բողոքել էր այդ մասին և ծերակուտից հրաման էր բերել տուել՝ չկպչել զաղթականների հողերին։ Բայց, ի հարկէ, այդ բաւական չէր եղել. պէտք էր եղել անընդհատ հսկողութիւն ունենալ, որ հողերը, ժողովրդի հարստութեան այդ ամենամեծ աղբիւրը սորա-նորա ձեռքը չանցնէին, անձեռնմխելի և անաղարտ մնալին իբրև հասարակութեան կալուած ու սեփականութիւն։ Վերջապէս, հողերի շահաւէտ գործածութեան խնդիրն առաջ էր եկել այն հանգամանքից, որ հողերը շնորհուած էին Հայերին երկու նպատակով՝ մէկ, որ նոցանով նոքա ապահովուած լինին, երկրորդ, որ նոքա նոցա վերայ մշակեն հասարակօգուտ բոյսեր՝ քնջիթ, խաղող, թթենի և շերամապահութեան սկիզբը դնեն, այն ինչ մի քանի կարող մարդիկ սովորութիւն էին արել իւրեանց սեփականացնել հողերի գաղանդան մասերը, գործածելով նոցա իւրեանց մասնաւոր շա-

---

нія ходатаиства его къ покойней Государынѣ Императрицѣ о прощеніи помянутой недоймки, къ перемѣнѣ неудобной земли, коей объ отводѣ и остановкѣ взысканія были княжія предписанія, а потомъ послѣдовало всемилостивѣйшее прощеніе въ денгахъ и удовлетвореніе въ землѣ». Աւելացրած հողի քանակութիւնը և տեղը ճշտութեամբ որոշուած են այն աղերսագրի մէջ, որ սրբազանը 91 թուին Պետերբուրգում ներկայացրել է Պատեմկինին։ Նորա մէջ սրբազանը 243,162 ռուբլի տպառիկ գումարը ժողովրդին ընծայելու պատճառաբանութիւնը բերելուց և խնդրելուց յետոյ, ասում է՝ «Они же, այսինքն՝ Հայերը, просятъ о переменѣ состоящей въ ихъ владѣніи земли которая отведена имъ по обеимъ сторонамъ Дона и на лежащей противу Нахичевана сторонѣ со всемъ не удобна и безполезна. А по сему сія земля соединяется съ землями донскихъ козаковъ то и отдаютъ оную имъ, а на место его просятъ прибавитъ въ состоящей уже на нахичеванской сторонѣ въ ихъ владѣніи до речки мокраго чалтыря: Еще отъ селенія ихъ несветай по речкамъ Тузлому, санбеку а отъ устя оной по дону до самаго мокраго чалтыря гдѣ сей впадаетъ въ Донъ и гдѣ естъ ихъ земли нынешній рубежъ».



հերի համար և մոռանալով հասարակաց օգուտները։ Աբրամովը, օրինակի համար, բռնել էր Սամբէկ գետի մօտ գտնուած հասարակաց ամենալաւ տեղերից մէկը և վերան չորս տնակ շինելով և ճորտեր բնակեցնելով, սկսել էր վարել ու փչացնել արօտատեղիները։ Եւ երբոր հասարակութիւնն արգելել էր, նա չերամապահութեան տեսչին բարձրագոյն անունով խընդիր էր ներկայացրել, ասելով, թէ ինքը կամենում է չերամապահութեամբ պարապել, բայց հասարակութիւնը, որ շատ ամեն

վարների վերայ կոչելուց յետոյ, ասում է. «վերջապէս այս ու քանի մի գլուխ հայրական խրատիւքս կարէք և զայլս գիտել կկամս Աստուծոյ, և զհաճութիւն մեր առ բարեկարգութիւն քաղաքին ձերոյ»։ Նոր կանոնները պարունակող կոնդակը հրատարակելուց յետոյ, կաթուղիկոսն իսկոյն և եթ հրամայում է հասարակութեան հոգաբարձուների ընտրութիւնը կատարել, երևի, մտածելով, որ եթէ ընտրութիւնները կատարուեն իւր ներկայութեամբ իւր վերահասութեան ու հսկողութեան ներքոյ և հաստատուեն իւր ձեռքով, նոր դրուած կարգ ու կանոնն աւելի հաստատ, աւելի յարատև կլինի։ Մեր ձեռքին գտնուում է Դումի հոգաբարձուների այդ առաջին ընտրութեան թերթն իւր, երջանկալիշատակ կաթուղիկոսի հաստատութեան ինքնագիր երկտողով և ընտրողների ստորագրութեամբ։ Դա մի կապտագոյն դրուագաւոր և եզերքը ոսկեզօծած թերթ է. նորա վերևը գրուած է հոգաբարձուների թուի, ընտրութեան և հաստատութեան համառօտ յիշատակութիւնը, մէջտեղը—ընտրուածների անունները և վերջը ընտրողների ստորագրութիւնը և կաթուղիկոսի հետևեալ երկտող հաստատութիւնը՝ «ընտրութիւն երեսուն և վեց հոգաբարձուացս Նախիջևանու և ես հաճեցայ։ Օրհնութեամբն Աստուծոյ և սուրբ Լուսաւորչին հաստատեմ զսոսա մնալ միշտ օրհնութեան աստուծոյ արժանաւոր։ Յովսէփ կաթողիկոս ամենայն հայոց և սրբոյ Աթոռոյն Էջմիածնի»։

Կաթուղիկոսի Նախիջևանում արձակած երկու կոնդակն էլ, որոնք գրուած են Յովսէփի կարճատև կաթողիկոսութեան ժամանակ արձակուած կոնդակների ընդհանուր ձևով ու ոճով, այսինքն վերը՝ Է, նորա տակը կաթուղիկոսական կարմիր կնիքը և կարմիր թանաքով գրուած «Յիսուսի Քրիստոսի ծառայ Տէր Յովսէփ կաթողիկոս և ծայրագոյն Պատրիարգ հայոց՝ առաքելական եկեղեցւոյն Քրիստոսի, նաև՝ Լուսակերտի սրբոյ Աթոռոյն Էջմիածնի» կաթողիկոսական տիտղոսը, լցուած են բացի վերոյիշեալ երկու գլխաւոր կարգադրութիւնից, այլ ևս ուրիշ մանր սիրալիր հոգացողութիւններով գաղթականների մասին։ Ամեն բանից երևում է, որ հանգուցեալն այդ վերջին անգամն այցելելով իւր հիմնարկած քաղաքը և պատրաստուելով ընդ միշտ հրաժեշտ տալու իւր սիրեցեալ հօտին, աշխատում է պակաս բան չթողնել։ Մինչև անգամ Հաշտարխանից, ուր նա ժամանում է սեպտեմբերի 12-ին, նա այնպիսի



խրատական նամակներ ու թղթեր է ուղարկում Նախիջևանցւոց, որոնք ցոյց են տալիս, որ նորա ուշն ու միտքը յետ է մնացել, որ նորան դժուար է բաժանուել նոցանից։ Նամանաւանդ նշանաւոր են նորա Հաշտարխանից Նախիջևանի քաղաքագլխին ուղարկած երկու կոնդակները, որոնցից մէկն արձակուած է 1800 թուի Հոկտեմբերի 17-ին, միւսը—1800 թուի Նոյեմբերի 15-ին։ Առաջնի մէջ կաթուղիկոսը նկատելով, որ մի առանձին հարկաւոր բան չունի գրելու, որովհետև բոլոր անհրաժեշտ բաներն արդէն գրել է քաղաքագլխին հասարակաց կոնդակում, ասում է, թէ ինքը պատրաստում է ճանապարհ ընկնել դէպի ս. էջմիածին, միայն օրէցօր սպասում է կայսերական հրովարտակին, և զարմանում է, որ մինչև այդ ժամանակը դեռ չէ ժամանել Հաշտարխան Նախիջևանի յաջորդ Կարապետ վարդապետը, որին նա միտք ունի իրանից առաջ ս. Աթոռը ուղարկել։ Յայտնում է նոյնպէս և այն աղէտների ու տառապանքների մասին, որ այդ ժամանակները Ս. էջմիածինը և նորա միաբանները կրել էին թշնամիների երեսից, և ցաւակցական ձևով ասում է, թէ ինքը չէ հասկանում Կարապետ վարդապետի այդքան ուշանալու պատճառը, որովհետև եթէ նա շուտով եկած ու ճանապարհ ընկած լինէր դէպի ս. էջմիածին, մեծ օգուտ կ'լինէր ողորմելի միաբաններին, որոնք ժամէ 'ի ժամ սպասում են կաթուղիկոսի գալուն։ Եւ, վերջապէս, պատմում է այն հանդիսի մասին, որ ինքը կատարել է Հաշտարխանում այնտեղի հայոց մայր եկեղեցում հաշտարխանցւոց ստացած արտօնութիւնների պատճառով։ «Ամսոյս 7. մեծ հանդէս արարաք, ասում է նա, վասն պրվելեկին Հաշտարխանու 'ի նորաշէն աւագ եկեղեցին, յորում էին քաղաքապետն, երկու 'ի Պետրբորքու եկեալ սենաթորքն և այլ մեծամեծ և երևելի անձինք և աստիճանաւորք ռուսաց և խուռն բազմութիւն մերազնէից. զկնի պատարագին և մօլեբինին, նոյն հանդիսաւ և նոյն բազմութեամբ յեկեղեցւոյն հանեալ զպրվելեկն հոգևոր երգօք շարականաց, զանգակահարութեամբ, լուցեալ լապտերօք, խաչուարօք և պատկերօք, հանդերձ զգեստաւորեալ եկեղեցական խմբիւք, տարաք 'ի հայոց մարմնաւոր կառավարութիւն, և օրհնեալ զդատաստանատունս նոցա հոգևոր օրհնութեամբ և յանձնեալ զպրվելեկն դատաւորացն հանդերձ խրատական և յորդորական բանիւք, բազմեցաք 'ի ճաշել անդ 'ի մէջ դատաստանատան, որք էին թուով աւելի քան զեօթան

նաւունն։ լերեկոյին ևս՝ մինչև յառաւօտ զբոլոր գիշերն լեմանացի արարաք և այսպիսի հոգևոր և մարմնաւոր ուրախութեամբ՝ զտիւն զողջոյն և զգիշերն զողջոյն անցուցաք, խնդրելով զկեանս վասն օծելոյն Աստուծոյ Օգոստափառ Կայսերն մեծի։ որպէս զայսոսիկ զամենայն երկարօրէն և լիակատար 'ի կազէթին ունիք տեսանել և ընդ մեզ ուրախակից լինել։ Գերապնիւ աղայ Յոհաննէսն ամենաբարեպաշտ իշխանն ևս՝ 'ի մէջ եկեղեցւոյն առաջի ամենայն՝ բազմութեան խոստացաւ

---

23) Դնում ենք այստեղ նոր կանոնների հման վերայ կատարուած այդ առաջին հոգաբարձական ընտրութեան թերթի պատկերը։ Թիւ Մերս Նախիջևանու հոգաբարձուացն, որք ընտրեցան հասարակութեամբ մերով, երդուեցուցմամբ սուրբ Խաչիւ և Աւետարանաւ, սակս անենդ սիրով լինելոյ առ իրեարս և խորհելոյ զօգուտս և զշահաւէտութիւնս քաղաքի և հասարակութեան մերոյ։ որք և հաստատեցան Երիցս Երանեալ և Աստուածընտիր Քահանայապետիս ամենայն Աղգիս Հայոց։ Յամի տեառն 1800, և սեպտեմբերի մուտն։

ԱՍՏԻՃԱՆԱՒՈՐՔ։

Պարոն ռօտմէսդր մահտեսի Աստուածատուր Ղազարեան։
Պարոն քապիտան Ստեփան Զալբխուշեան։
Պարոն պառուտչիկ Մկրտիչ Պետրոսեան։
Պարոն պառուտչիկ Ստեփան Տէր Ոսկանեան։
Պարոն պառուտչիկ Դանիէլ Ղարազաշեան։
Պարոն պօտ պառուչիկ Յակոբ Կիւզէլեան։
Պարոն պռապօրշչիկ Մանուէլ Շահինեանց։

ԿՌԱԺՏԱՆՔ։

Պարոն Գլաւայ Կարապետ Յովանէսով։
Պարոն առաջին դատաւոր Գէորգ Մարգարով։
Պարոն երկրորդ դատաւոր Լուսեղէն Գալուստով։
Պարոն երկրորդ դատաւոր մահտեսի Յարութիւն Ղաթրանով։
Պարոն երկրորդ դատաւոր մահտեսի Այտին Ասվատուրով։
Պարոն երկրորդ դատաւոր Ջօրայ Սահակ Պետրոսով։
Պարոն Յարութիւն Տէր Մկրտիչով
Պարոն Մանուկ Սահակով։
Պարոն Թումաս Խօճայեան։
Պարոն մահտեսի Խաչերես Հալլաճեանց։
Պարոն Գասպար Ռահաթճիեանց։
Պարոն Գասպար Սալթիկեանց։
Պարոն Սարգիս Մեսնիքեանց։
Պարոն Նիկողոս մահտեսի Գաբրելեանց։
Պարոն Կարապետ Նախաչեանց։
Պարոն Մկրտիչ Ասվատուրեանց։



որպէս մէկ հազար թուման Հաշտարխանու հայ աղքատաց, և մէկ հազար թուման ձերդ հասարակ ժողովրդոց և աղքատաց, և մէկ հազար թուման ևս գրիգորուպոլցւոց որպէս զայս ևս ունիք տեսանել 'ի կազէթին։ շատ բարուք լինի հասարա-

---

Պարոն Այտին Պարոնեանց։
Պարոն մահտեսի Նազարէթ Ախղաշեանց։
Պարոն Յովանէս Տալաճալբեանց։
Պարոն մահտեսի Գէորգ Շայնարեանց։
Պարոն մահտեսի Մանուկ Թուֆլիքեանց։
Պարոն Գէորգ Շլթեանց։
Պարոն Խաչատուր Կոկոեանց։
Պարոն տիրացու Երեմեայ Գասպարեանց։
Պարոն Մելքոն Ղարասուցի Յովակէմեանց։
Պարոն խազազ Պետրոս Յովանէսեանց։
Պարոն Յովակէմ Ալաճալեանց։
Պարոն Կայապետ Զառբխճեանց։
Պարոն Յովհաննէս Պիլեկ օղլի։

Ընտրութիւն երեսուն և վեց հոգաբարձուացս Նախիջևանու և ևս հաճեցայ։ Օրհնութեամբն Աստուծոյ և սուրբ լուսաւորչին հաստատեմ զսոսա մնալ միշտ օրհնութեան Աստուծոյ արժանաւոր։ Յովսէփ կաթողիկոս ամենայն հայոց և սրբոյ Աթոռոյն Էջմիածնի։ Մեք ներքոյ ձեռագրեալքս հայոց Նախիջևանու հասարակ անձինքս, որ վերոյ գրեալ ի հասարակութենէ մերմէ ընտրեցեալ երեսունը վեց մարդիքն վասն հասարակութեանս մերում հոգաբարձու կարգեցեալ եղեն։ Մեք ևս հաճոյացեալ ընդունեցաք։ Որ ահա ձեռագրեցաք։ Քաղաքացիքս։

Մահտեսի Սարքիս մահտեսի Զախարով
Մահտեսի Յակոբ Արութինով
Մահտեսի Պետրոս Պազասինով
Մահտեսի Խաչուռուզ Մարտիրոսով
Գաբրիէլ Տէր Գրիգորով
Լուսեղէն Նազարէթով
Մահտեսի Քաբրիէլ Ողաուբով
Մահտեսի Օվանէս Մարգարով
Թիքիճի Խաչիկ Պետրոսով
Պաղդասար Տէկերմէնճով
Վարդերես Խաչատուրով
Նիկողոս Մսորով
Քիստոստուր Պէտրոսով
Պոլոս Պէտրոսով
Լուսէղէն Եղիեազով
Խաչախպար Մանուկով
Գէորք Սակարով

կութեանդ զթուղթ շնորհակալութեան գրել նմա, զի կրկին հաստատուն լինիցի բանն, և լուսամ, որ յայս նուագ ճշմարիտ լինելոց է առանց կարծեաց»։

Երկրորդ կոնդակում յայտնելով, որ Կարապետ վարդապետին արդէն նոյեմբերի 7-ին ճանապարհ է ձգել դէպի Ս. Էջմրածին, ինքն էլ պատրաստում է Հաշտարխանից դուրս գալ մինչև նոյն ամսի 22-ը, ասում է, թէ ինքը պէտք է անցնի Ղզլարի և Մոզդոկի վերայով ուստի և խնդրում է, որ քաղաքագլուխը բոլոր Նախիջևանի «մեծահաւատ» ուխտաւորներին, որոնք ցանկանում են իրան տեսնել, պատուիրէ Մոզդոկ գալ և իւրեանց հետ բերել «զուռուշ» և «ալթմիշլուխ» կոչուած օսմանցւոց՝ փողը. ինքը պատրաստ է այդ փողի փոխարէն հատուցանել նոցա ոսկի կամ արծաթ, որովհետև, միաբանների գրածին նայելով, Հայաստանում այդ ժամանակները միայն այդ փողերն են գործածւում։

Հաշտարխանից ուղարկուած երկու կոնդակը, որքան

---

Պաղտասար Սրապեանով
Օվանէս Կիրակոսով
Մըկըրտիչ Օվանէսով
Պարոն Թորոսով
Ըստեփան Էլվազեանց
Մահտեսի Խաչերես Ծառուկով զիր չէլի խապար խընդրեցի մահտեսի Խաչկուռուզիցն որ Հալ իմ տեղս ձեռագրեաց։
Մահտեսի Խաչերես Ծառուկով։
Մկրտիչ Նազիրով
Շահէն Պարոնով
Սարգիս Բարսատանով
Մահտեսի Ասվատուր Պետրոսով
Մինաս Պապիկով
Մըկըրտիչ Ճանիկով
Պետրոս Պաղտասարով պախալ
Քրիստոստուր Պէտրոսով
Մահտէսի Օվանէս մահտէսի Ասվատուր
Սահակէմ Օվակէմով
Նարապետ Կասպարով
Սիմաւոն Թոքալ Օդոյման
Արյութիւն Սարգիսով
Միքայէլ Քիրքորով պախալ
Արութուն Աւետիքով
Մահտեսի Մկրտիչ Պետրոսով



մեզ յայտնի է, Ցովսէփի Նախիջևանցւոց գրած վերջին թղթերն են, ուրեմն և նորա վերջին հաղորդակցութիւնը նոցա հետ [24])։ Այնուհետև նա, ինչպէս յայտնի է, գնում է Թիֆլիս և դեռ իւր աթոռատեղին չհասած և ս. օծումն չընդունած, մեռնում է, անջնջելի յիշատակ թողնելով ազգի մէջ և մանաւանդ Ռուսաստանի հայոց՝ Նախիջևանցւոց, գրիգորուպոլցւոց և հաշտարխանցւոց սրտերում [25])։

---

Խաչիկ Միքրանով
Մահտեսի Սրապիոն Մանուկով։

[24]) Մեր ձեռքին գտնուած չորս կոնդակներից երկուսը—Նախիջևանում արձակուածները մեծադիր են, երկուսը—Հաշտարխանից ուղարկուածները փոքրադիր են։ Նախիջևանում արձակուածները զանազանւում են Հաշտարխանում գրածներից, բացի իւրեանց դրքի մեծութիւնից, և իւրեանց կնիքի մեծութեամբ ու ձևով։ Մեծերի կաթուղիկոսական կարմիր կնիքները մեծ են և կլորակ ձև ունին, իսկ փոքրներինը փոքր են և քառակուսի։ Մեծ կլորակ կնիքների վերայ նկարուած է Քրիստոսը, մի ձեռքին խաչազարդ գունդ բռնած, միւս ձեռքը բարձրացրած օրհնութիւն տալու ձևով, փոքր կնիքները անպատկեր են։ Մեծ կնիքների չորս կողմը գրուած է՝ «Շնորհիւն Աստուծոյ Տէր Ցովսէփ կաթողիկոս ամենայն Հայոց ՌՄԽԹ», իսկ փոքր կնիքների վրայ գրուած է՝ «Ցովսէփ կաթողիկոս Ռ.Մ.Խ.Թ.»։ Երկու տեսակ կոնդակներումն էլ արժանի է ուշադրութեան կաթուղիկոս բառի գրութեան ձևը կաթուղիկոսական տիտղոսի մէջ։ Գրուած է «թուղ» և վրան նկարուած է մի խաչազարդ կաթուղիկէ, որի երկու ծայրերը վայր իջնելով, ներփակում են իւրեանց մէջ այդ բառը և կազմում են նորա երկու կողմում «կ» տառը։

[25]) Երջանկայիշատակ կաթուղիկոսն իւր քաղցր բնաւորութեամբ և խոհեմ վարեցողութեամբ անջնջելի յիշատակ է թողնում ոչ միայն Հայերի սրտերում, այլ և ռուս մեծաւորների և մինչև իսկ ռուս բարձր հոգևորականների սրտերում։ Ալեքսանդր չենք համարում դնել այստեղ, քաղելով ձեռագիր «Դաւթարից», հանգուցեալի կոմս Ռումեանցովին և Կիեւի Պեչերսկի վանքին արած այցելութեան հետաքրքրական նկարագրութիւնը, որից երևում է այն մեն յարգանքն ու պատիւը որ ցոյց էին տալիս նորան ռուս իշխանաւորները և հոգևորականները։ «Ի սոյն թուոջս (1781) և ի յունիսի 12 ելեալ ի Կատարինէսլաւէ դէպ ի Մոսկով ի ճանապարհին հանդիպեցաք ի Բելթաւ քաղաքն առ արք եպիսկոպոսն Նիկիփոր որ էր Առաջնորդ Քերսոնու և նոր ռուսաց, իջաք ի վանսն, պահեաց զմեզ երկու օր և եցոյց զբաղում մարդասիրութիւնս։ Եւ անտի գնացաք առ գոաֆ Պետր Ալեքսանդր Ռումենցով

ՔԲԹմաշալն ի գիւղն իւր վինչիկալ, որում եղև յուրախութիւն յոյժ, էջոյց զմեզ ի վրանի զեղեցկագունի, զոր յօսմանցւոցն էր գերեալ պահեաց զմեզ չորս օր՝ և յամենայն աւուր՝ առաւօտ և երեկոյի առ մեզ գայր և զմեզ առեալ տանէր առ ինքն ի ճաշել։ Եւ չրջեցոյց զմեզ յամենայն ուրեք մեծագոյն պատուով։ Զգեստն մեր եպիսկոպոսական՝ ետես և հաւանեցաւ։ Եւ յետ բազում մարգասիրական պատուոյն, կամեցաւ առաքել զմեզ ի քիով քաղաքն յորում են բազում վանօրայք և տեղիք սրբոց, որք են հիմն հաւատոյ ռուսաց բոլոր երկրին, զի նախապէս անտի են հաւատացեալ ի Քրիստոս Փրկիչն մեր։ Եւ մեք ըստ բանի նորա յանձն առաք գնալ և տեսանել զսուրբ վայրսն։ Գրեաց գիր յանձնարարական առ սրբազան Գաբրիէլ մետրպօլիտն ծերունի, առ արքիմանդրիտն զոսիմէ, և առ կամենդանտն Իվան Ստէփանիչ Կուկիսովն, ընկալնուլ զմեզ և պատիւ ցուցանել։

Յունիսի 24, օրն հինգշաբթի մտաք ի քիով, իջաք ի տան վերոյ կամենդանտին, մերձ ի Պէչէրսկի վանքն, յորում Արքիմանդրիտն զոսիմէ նստէր, իմացեալ սոյնոյ Արքիմանդրիտիս, իսկոյն եկն առ մեզ ի տեսութիւն քանի Աբեղայիւք, զմեզ առեալ տարաւ առ ինքն ի վանք Պէչէրսկի սուրբ Աստուածածին կոչեցեալ, և չրջեցոյց ի յեկեղեցին և ի զգեստատունն։ Եկեղեցիքն էին յոյժ գեղեցիկք բոլոր նկարեալ պատկերօք տնօրինականօք՝ ի ներքին յորմէն սկսեալ, մինչև ցմիջակէտ կաթուղիկէին, ոսկէտուպ խաչկալիւք և արծաթեայ սեղանօք։ Եւ սեղանն զարդարեալ մեծամեծ ոսկեայ և արծաթեայ խաչիւք և պատկերօք։ Եւ ի նմին եկեղեցւոջն գոյր բազում անօթ ոսկեղէն սկիհք քանդակելագործ. մարգարտեայ և ակնակուռ սաղավարտք խաչիւք։ Պնակէք և խաչք պարանոցի բազում, բոլորն ոսկի և ակնակուռ։ Շուրջառք գեղեցիկք և մարգարտեայք ելուզեալք ակամբք պատուականօք։ Յետ տեսութեան զգեստուցն տարան զմեզ ի Պէչէրսկի, այսինքն ի ներքոյ գետնոյ չինեցեալ երկար շէնսն որ է ի ներքոյ վանիցն, յորում են ամենայն սուրբքն իւրեանց և նախնի հարքն և ի Քրիստոս ծնօղքն ի մէջ դագաղի եղեալ առողջ իւրեանց հանդերձիւքն և զգեստիւք, թէ եպիսկոպոս է թէ վարդապետ և թէ այլ աստիճանաւոր, թուով մինչ ԿՂ, որք առողջք են և անապական և զարմանալի տեսօղաց։ Ի նմին գետնափորի, գոն և երեք եկեղեցիք, յորս զաստուածային պատարագ մատուցանէին։

Եւ անտի ի տպագրատունն տարան և յայլ ուրեք եկեղեցեաց շէնքն և նամանաւանդ մուտն վանիցն էր գեղեցիկ։ Ընդ սրբազան Արքիմանդրիտին զոսիմէի և ընդ հասարակ միաբանիցն, բազմեցաք ի սեղան ի ճաշել հասարակութեամբ յետ աղաղակելոյն, զմեզ հրաւիրեցին ի յօրհնել, սկիզբն և վերջն, և ոմն Դիամբիոնի ընթեռնուլր զճառ ինչ։ Արծաթեայ



գեղեցիկաչէն և յոյժ մեծ ըմպանակ ինչ գոյր ի մէջ սեղանոյն լի ջրով. յետ հացին ամենեքեան մասնաւորեցան ի նմանէ։ Եւ ի մէջ եկեղեցւոջն ի վերայ սեղանոյն Աթոռ դնէին միշտ որ ի ժամ նստման, նստցուք։ Բազմադիմի ցուցեալ մեզ զմարդասիրութիւն երանելի Արքիմանդրիտն, չորս անգամ ընդ նմա ճաշեցաք և չնորհեաց մեզ զռուսերէն բազում գրեանս, և զբազում թոչակս ճանապարհի հացք և ըմպելիք։ Եւ հանապազ օր վեց ձիով կառեթն ի դրունս մեր կայր, ընդ ուրումն երամանախ, այսինքն կրօնաւոր քահանայի, որոյ անունն կոչիւր Օրիոջի կամ Գիօրկի, զոր մեզ վերակացու էին կարգեալ։ Երկու անգամ և սրբազանն Գաբրիէլ մետրպօլիտն հարկաւորեաց զմեզ ի ճաշ ի վանս սրբոյն Սոփիայի և նա բազմադիմի պատիւն և սէրս եցոյց, և մանաւանդ առ սուրբ հաւատս մեր, որ զգանձ արամեանն (°) ունելով ի ձեռին, գովէր ի մէջ հրապարակին, յորում էին հոգևորականքն և երևելի աշխարհականք թէ՝ ճշմարիտ և ուղղափառ հաւատ է Հայոց հաւատն և այլ այսպիսի բանս համարձակօրէն և սա ընկալեալ զմեզ ի սեղանն սուրբ, և յետ արձակման սրբոյ պատարագին, զնչխարս տային մեզ և զգինի։ Եւ յելանելն մեր ի յեկեղեցւոյն խառնիճաղանչ ամբոխն անկեալ ի վերայ մեր, ամենեքեան աջ առեալ զօրհնութիւն խնդրէին։ Օր մի ևս առ կամենդանտն ճաշեցաք. եղաք մեք անդ աւուրս եօթն։ Եւ չրջեցաք ընդ ամենայն վանօրայսն ի բարաթովկի մանաստէրն, յորում էր դպրոցն մեծաշէն, որոյ Արքիմանդրիտ և վարդապետ էր Կասիան։ Ի Պետրովսկի Մանաստէրն, յորում էր կառավարիչ Երօնիա Իգումէնն։ Ի Միխայելովսկի մանաստիրն, յորում գոյր սուրբ Վարվառեայ կուսի բոլոր մարմինն, ի միջակետին ի մէջ դագաղի եղեալ և ի վերայ նորա ոսկէ տուպ խորան կանգնեալ, չորիւք սեամբ, զորոյ ձեռանէն խաչալուայ արարաք մեք մերով ձեռամբ և քսեցաք խաչս մեր և ամենայն բազմութիւն, որ անդ։ Որոյ Արքիմանդրիտ է Տարասեա Պեչերսկի Նամեսնկի անունն էր։ Ի Վ.ըդուբովսկի մանաստիրն, որոյ դրութիւնն է յոյժ գեղեցիկ ի վերայ ձորոյ Արքիմանդրիտն նորին Մելքիսէթ, որ տեղապահ է մետրպօլտին։ Նիկոլսկի մանաստիրն և կանանց երկու անապատն և յայլ ուրեք» և այլն։

ТУФИСКАГО СОБРАНІЯ

# ՎՐԻՊԱԿ

Գրաշարի անհոգութիւնից այս գրքում մտել է հետևեալ սխալը. 192 երեսից յետոյ 13-դ և 14-դ ֆորմաները փոխանակ շարունակելու 193 և այլն մինչև 224 եր. սկսել է նորից հաշուել 177 երեսից մինչև 208 երես։ Խնդրում ենք ընթերցանութեան ժամանակ ի նկատի ունենալ։

Խմբագրութիւն «ՀԱՌՄԱՑԻ».

Հայաստանի Ազգային գրադարան
NL0428211

13826